XIX դարի առաջին կեսում ջրանցքը շարքից դուրս է եկել 1854—1855 թթ. պատերազմական գործուլությունների հետևանքով Ժամանակին շէր նորոյվել և Վաղարշապատի հողերից մոտ 600 հեկտար մնում էր անմշակ: Այդ նկատի ունենալով Գևորգ 4-րդ կաթողիկոսը 1867 թվականին հուլիսի 11-ի կոնդակով կարգադրում է ձեռնամուխ լինել ջրանցքի վերականգնման աշխատանքներին: Սակայն ցարական բյուրոկրատական ապարատը մի շարք խոչընդոտներ է հարուցում, որոնք տարիներ են տևում: Խրիմյան Հայրիկը մի անձնական նամակով գրում է Կովկասի փոխարքա, հայ ժողովրդի ոխերիմ թշնամի Գուլիցինին, բայց արդյունքի չի հասնում: Միայն 1912 թվականին՝ 47 տարի անց, էջմիածնին թույլ է տրվում սկսել ջրանցքի վերակառուցման աշխատանքները: 1913 թվականի գարնանը ջուրը ջրանցքով բաց թողնվեց, բայց հրաբխային շերտերում այն խոտորվեց և չհասավ գաշտերը: 1914 թվականի իմպերիալիստական պատերազմը և 1915 թ. հայ ժողովրդի ողբերգությունը դադարեցրին ջրանցքի վերականգնման աշխատանքները և այն կիսավարտ գրությամբ անցավ Սովետական Հայաստանին:

1921 թվականին, իմպերիալիստական պատերազմից և հայ ժողովրդի ոխերիմ թշնամի գաշնակների արշունոտ տիրապետությունից հետո, վերածնված հայ ժողովուրդը ձեռք վարկեց արշունաբամ, ավերակ երկրի վերականգնման աշխատանքներին:

Ղեկավարվելով մեծ Լենինի ցուցմունքով, որ «Ուսումնասիրումնից կարևորն է, այն ամենից շուտ կվերստեղծի երկիրը, կվերածնին նրան», ժողովուրդն ամենից առաջ սկսեց էջմիածնի ջրանցքի վերակառուցումը և 1923 թվականի աշնանը մոտ 2600 տարի առաջ անցկացված ջրանցքը նորից գործի դրվեց ու դարձավ Սովետական Հայաստանի բարգավաճման ու բերքատուլթյան աղբյուր և կոշիկը Լենինի անունով:

Վ. Հ. ԲԳՈՅԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ XIX ԳԱՐՈՒՄ

Հայկական գյուղական արտադրամիջոցների, աշխատանքային պրոցեսների և այլ կարևոր հարցերի մասին ազգագրական ուսումնասիրություններ տակավին չկան: Ազգագրական ամբողջ գրականության մեջ եղակի են Հովհաննես Մալխասյանի և Բենսեի ուսումնասիրությունները<sup>1</sup>: Հ. Մալխասյանը նկարագրել է Ախալքալաքի և Բենսեն՝ Հարք գավառի (Բուլանըխ) գյուղատնտեսական գործիքները: Մեր ազգագրական գրականության մեջ այդ հարցի վերաբերյալ միայն թուրքիկ ահնարկներ կան:

Ներկա գեկուցումը կազմվել է թանգարանների պակասավոր նյութերի, ինչպես նաև այն բանավոր տվյալների ու մոդելների հիման վրա, որ մենք ձևաք ենք բերել 1950-ական թթ. պիտական գործուղումների, ուղեորությունների և գիտարշավների ընթացքում:

Բրիչային երկրագործության վերապրուկները: Հողամշակման այն գործիքները, որոնք հայտնի են արոս և զուբան անուններով, բրիչային երկրագործության զարգացման հետագա աստիճանն են: Արորը, ապա և գուլթանը բրիչների կոմբինացիաներն են, բրիչների ֆունկցիաները կրողները:

Որքան էլ դա հաստատ է, այնուամենայնիվ, արորն ու գուլթանը, նախնական բրիչները շարքից պրեթև չեն հանել: Բրիչները զգալի մասը մեղ է հասել իր նախնական ֆունկցիաներով:

<sup>1</sup> Հովհաննես Մալխասյան, Հայ գեկուցուկի պրոմը. «Ազգագրական հանդես», գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 359—391, Բենսե, Բուլանըխ կամ Հարք գավառ, «Ազգագրական հանդես», գիրք Ե, Թիֆլիս, 1899, էջ 50—65:

Քրիչային երկրագործութեան աշխատամիջոցները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝ պարզունակ փայտե բրիչներ, ձեռնահարվածով աշխատող մետաղե բրիչներ և ոտնահարվածով աշխատող երկաթե գործիքներ՝ բահեր ու եղաններ:

Առաջին խմբի մեջ մտնող փայտե բրիչները ամենանախնականն են և մեզ են հասել մայրական տոհմի շրջանից: Կինը դրանցով է արմատներ հանել ու հավաքել, հող մշակել և հիմնադրել հատիկամշակման գործը:

Փայտե այդ պարզ բրիչները, նախկինում առանց մետաղածայրերի, ունեցել են 30—60 սմ երկարություն, 1,5—2 սմ տրամագիծ, մատիտաձև կամ դրաձև սրված ծայրերով: Նրանց այս շափերն ու ֆունկցիաները հայտնի էին Հայաստանում մինչև XX դարի սկզբները, և օգտագործվում էին որպես արմատներ բրող-հանող, բանջարանոցներ ու բոստաններ փորփրող-փխրեցնող, սածիլող և քաղհանող գործիքներ: Դրանք կոչվում էին տարբեր անուններով: Կարինում՝ մալուխ կամ մալուխ, Տարոնում և Բուլանըխում՝ փլունկ (համեմատել խիանի փլուկ-ը՝ ցից նշանակությամբ), Իջևանում՝ բնրավետ, Սասունում և Ռշտունիքում՝ սեխ, Զեյթունում՝ ցաց, Շամշաղինի Թովուզ գյուղում՝ ջիվս, Ալաշկերտում՝ բլունկ, այլ վայրերում մախառ (տախ. 1, նկ. 1, 2):


Այս նույն գործիքը շատ վայրերում դառնալով բահ, արոր և գութան մաքրող միջոց, ինչպես նաև լճկանների վարոց, կորցրել է իր հին նշանակությունը: Այգալիսիներից էին՝ «ծամակ»-ը և Համշենի «բիր»-ը (արոր մաքրելու գավազաններ. տե՛ս տախ. 1, նկ. 3), Բյութանիայի և Բարբերդի «մասոսա»-ն, Չինկիլերի և Սերաստիայի «մասոսա»-ն և Քզիի «մասոս»-ը երկար ձողեր էին՝ ծայրերը սուր խթանով (երկաթե ճաղով), որով վար ու ցանքի ժամանակ եղներ էին վարում և արորը սրբում (տախ. 1, նկ. 4), Արաբկիրի «մշտուկ»-ը սրածայր երկար փայտ էր (տախ. 1, նկ. 3) կամ առհասարակ ծայրը ճաղե խթան ունեցող գավազան՝ անասուններին վարելու համար (տախ. 1, նկ. 4), Արարատյան դաշտում ապրող պարսկահայերի «բիրիշք»-ը թիակաձև ծայր ունեցող գործիք էր արորը սրելու համար (տախ. 1, նկ. 5), Խարբերդի «մասոսա»-ն, թիակաձև երկաթե փոքրիկ թաթով և խթան ունեցող կոթով (տախ. 1, նկ. 6):

Այդ գործիքների շարքը կարելի է դասել նաև այն սրածայր փայտածողերը, որոնք իբրև խաղալիք, գործ էին անում երեխաները: Վասպուրականում և Օշականում դրանք հայտնի էին «ղակի» և

Ղափանում՝ «կնդի» անունով (հմմտ. «դակու» կացնաձև գործիքը, «դակուր»-ը՝ որ նույնպես կացնաձև և թագուչակաձև գործիք է):

Հետագայում մալուխ-բրիչները մեկ մետք երկարության հասնելով, դառնում են մահակաձև-նիզակաձև բրիչներ, դարձյալ սեխ-

Տես I



փլունկի ֆունկցիաներով: Նախորդների նկատմամբ այս երկար բլրերն ունենին այն առավելությունը, որ մարզը կարողանում էր դրանցով կանգնած աշխատել, ոչ միայն փորել, այլև կոշտեր ջարդել:

Այս գործիքի ֆունկցիաներն ունեն մի շարք վայրերում հայտնի «բիհի» — «բիհը» — «բհիր» կոչված գավազանաձև բիրք, որով հովիվներն ու հոտաղները արմատներ էին հանում: Ինչպես վկայում են բառագեաները<sup>1</sup>, դա զրաբարյան «բիրն» է (տախ. I, նկ. 7ա): Երևվանում, Ղարաբաղում և Թիֆլիսի հայերի կողմից օգտագործվող այս գործիքը ունեն երկաթե ծայր, որն առավել հարմար էր հող բրելու համար (տախ. I, նկ. 7բ): Ինչպես երևում է Ղարաբաղում ստացած մի վկայությունից, բհիրը «բհրավար» էր կոչվում. վերջինս ոչ միայն մշակելի հողերը փորելու, այլև շոր գետնի մեջ կարճ բհիրներ վարսելու համար անցքեր բանալու գործիք էր՝ թախի օգնությամբ (տախ. I, նկ. 8):

«Աման մարդ... թախն ու բհրավարը եր կալավ, ըլըճուկի ճպատների տեղերի տախը ծկոտեց բհրը վարավ, ճպատները տնկուտեց...»<sup>2</sup>:

Հետաքրքրական է, որ բհիրի հետ կապված աշխատանքը ևս գործիքի անունով է արտահայտվում, ինչպես, ասենք, «արորավար»-ը, «գութանավար»-ը: Ղարաբաղում, Հր. Աճառյանի վկայությամբ և մեկնություններ «բհրավար» տերմինը նշանակում է «բհիրով վարած»<sup>3</sup>: Նույն նշանակությունն ունի նաև Ղաղախի «բհրուցի տալ» արտահայտությունը, այսինքն՝ բհիրը գետին վարսելով՝ նրանով գետնից մի բան հանել: Բհրով գուրս տալ, արմատով միասին հանել<sup>4</sup>:

Այս վկայությունները հաստատում են բհիրի երկրագործական հնագույն գործիք լինելու հանգամանքը:

Շիրակի մի առածն ասում է. «Բհիրի դեմ բահ էլ ունեմ ու փետաա էլ»<sup>5</sup>, որը մեր համոզմամբ բրող գործիքի էվոլյուցիան է ցույց տալիս, բհիր-բիրի ֆունկցիայի անցումը բահ ու քլունգին:

Կոտայքում<sup>6</sup> և Աշտարակում բիհր-բիհի էին կոչվում նաև գետնին վարսվող, գլուխ ունեցող կարճ փայտերը, 25—30 սմ երկարությամբ, որոնց կապվում էին անասուններին զսպող կապերը:

1 Հր. Աճառյան, Գավառ. բառ., 192 և ուրիշներ:

2 «Ձորանն ու նշանածը»: Գրեց Ուստա Գեորգ Բարխուդարյանց, Թիֆլիս, 1896, էջ 26:

3 Հր. Աճառյան, Գավառ. բառ., էջ 195:

4 Նույն տեղում և Սո. Մալխասյանց, Հայերեն բացարարական բառարան, Ա հատ., էջ 375:

5 «Էմինյան Ազգագրական ժողովածու», հատ. Ա, էջ 147:

6 Խ. Արոլյան, Երկեր, Մոսկվա, 1897, էջ 145—146:

Բրոնզի և երկաթի դարաշրջաններում սեխ-բլրունքները զար-  
դացման մի նոր աստիճանի են հասնում: Դրանց ծայրերն ունեն  
մետաղե մասեր, որոնք ավելի են դյուրացնում բրելու, արմատներ  
հանելու, հողը փխրեցնելու և բանջարներ հանելու գործը:

Ինչպես ցույց են տալիս Հայաստանի ֆեոդալական շրջան-  
ներից հասած տերմինները և առկա գործիքներն իրենց բնույթով,  
գրանք մետաղյա մաս ստանալու շնորհիվ մի մասով մնում են բըլ-  
րունքային հողամշակման ֆունկցիաների սահմաններում և մյուս  
կողմից ստանում են նոր ֆունկցիաներ: Այդ պատճառով փոխվում  
են նաև անունները:

Այդ ֆունկցիաներն են. ա) բանջար քաղելու—հանելու, բ) բրե-  
լու, արմատներ հանելու և ավելի ուշ՝ հողագործական գործիքներ՝  
բահեր, արոր—գութաններ սրբելու լրացուցիչ ֆունկցիա, որպիսին  
ունեին նրանց նախորդները:

Այս ֆունկցիոնալ բաժանումը մասամբ պայմանական է այն  
հասկանալի պատճառով, որ երբեմն նույն գործիքը կատարում է  
նաև ուրիշ ֆունկցիա: Նույնիսկ Սասունում սրանով քաղհան էին  
անում, ընդ որում բրում-փորփորում էին ուրագով տաշելու ձևով:

Բանջարբաղ գործիքները 20—25 սմ երկարություն, 3—4 սմ  
լայնություն ունեցող, երկաթե տափակ, գրածե, սուր բերանով գոր-  
ծիքներ էին, 12—15 սմ երկարությամբ փայտե կոթով (տախ. 1,  
նկ. 9): Սրանք Աշտարակում կոչվում էին բանջարաքաղի<sup>1</sup>, Շիրա-  
կում՝ «բանջարխի» կամ «բանջրբաղ»<sup>2</sup>, Ռշտունիքում՝ «կանգե-  
խան»<sup>3</sup>, Ալափարտում՝ «շրզրիկ», Սասունում՝ «շեղպ» և այլն:

Շղրիկով այժմ հնուացնում են կոճղարմատավոր և ծլարմա-  
տավոր մորախոտերը:

Աշխատանքն ըստ սեռի բաժանելու եղանակում առկա է մի  
զարմանալի օրինաչափություն. երբ փայտե բրիչը կարճ է, կանաչի  
է: Նույնատիպ երկար գործիքով միայն տղամարդն է աշխատում:  
Մալուխները կանաչի էին. կանաչի մնացին նաև բանջարքաղիներ-  
ը: Բիր-բհիրը և դրա նմանները, որ բավական երկարություն ու-  
նեին կանգնած աշխատելու համար, տղամարդու աշխատամիջոց-  
ներն էին: Դրանք երկաթե ծայր ստանալուց հետո էլ մնացին  
տղամարդու սեփականությունը: Այդ են ապացուցում բոլոր բրոզ-  
ձող գործիքները, որոնք ծառայում էին արմատներ հանելուն և

1 Պ. Պոսյան, Կովածաղիկ, 1878, 276:

2 «Փշրանք Շիրակի ամբարներից», նույն տեղում, էջ 707:

3 Ս. Ամատունի, Հայոց բոս ու բան, էջ 89:

գործիքները վար ու ցանքի ժամանակ սրբելուն: Այդպես էին ինչպես բիրերը, այնպես էլ գրանք՝ երկաթե ծայրերով, ընդ որում թե՛ մեկը և թե՛ մյուսը, ծայրամասում բահի նախնական ձևեր ունեւ: Փորելը՝ բրելը կատարվում էր ձեռքի ուժով, ճնշմամբ:

Այդ գործիքներն ունեն երկար կոթ, երկաթից պատրաստված թաթ, 10—15 սմ երկարութամբ: Երկաթե թաթերի ձևերը երկուսն էին՝ եռանկյունաձև և մոտավորապես քառանկյունաձև (տախ. I, նկ. 5, 6, 10): Բահի նախնական ձևի և ֆունկցիայի տեսակետից ուշագրավ է Արարատյան դաշտին հայտնի «ոսղա» կամ «ըռըղա» անունը կրող գործիքը, որի երկաթե թաթի երկարությունը հասնում է 19 սմ և նույնքան էլ բերանի լայնությունն է (տախ. I, 11): Այս գործիքը բահի ձևով արմատախիլ էր անում մոլախոտերը՝ ձեռքի ճնշմամբ: Այն դեռևս ոտքով չէր աշխատում<sup>1</sup>:

Սրանք, ինչպիսի ասվեց, Բաբերդում, Բալուում, Խարբերդում և Բյութանիայում կոչվում էին «մասսա»<sup>2</sup>, Չենկիլերում, Սեբաստիայում<sup>3</sup> և Զեյթունում՝ «մասրսո», Քղիում «մասոս»<sup>4</sup>, էջմիածնի շրջանում՝ «բահքերիկ» կամ «բահքերիչ»<sup>5</sup>, Բաբերդում՝ «խաղնակիչ» (արորի խոփը մաքրող)<sup>6</sup>, Արտաշատում՝ «քիրիչը» (բահի, արորի, դոթանի սրբիչ), Իջևանում՝ «քուրուչ», Կարինում՝ «լապուղա» (երկաթե թաթի անունն է)<sup>7</sup>, Խիանում՝ «լապուտ» (թաթաձև է, կոթը չի հիշատակվում)<sup>8</sup>:

Ձեռքի ճնշմամբ աշխատող նկարագրված տարրական գործիքները, լինեն դրանք միակտուր փայտեր թե երկաթածայր բիրեր, ձեռնահարվածով և ոտնահարվածով աշխատող գործիքների նախատիպերն էին: Մասնավորապես «մասսա»-ները բահի իսկական նախատիպերից էին Հայաստանի ամբողջ տերիտորիայում:

Հնագիտական նյութերի բաղմանկողմանի համեմատությունները, — կապացուցեն դրանց և մեր օրերի վերահիշյալ գործիքների

1 Տե՛ս պատմության թանգարանի Ստ. Լիսիցյանի անվան ազգագրական լամնի զույրացուցակ, № 5394:

2 Բարջանե՛ դյուդ. «Համայնպատում». Խմբագրեց Մանուկ պ. Մկրտն, Բոստոն, 1938, էջ 190, Հառուբյուն Բեն. Սարգիսյան, Բալու, Գահիրե, 1932, էջ 483, Հր. Աճառյան, Գալ. բառ. 755:

3 Հր. Աճառյան, Նույն տեղում, էջ 755:

4 Նույն տեղում:

5 Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, 84:

6 Հր. Աճառյան, Նույն աշխ., 445:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում:

երկաթե մասերի անհերքելի աղերսը: Որքան հին են նետասլաք-ները, նույնքան հին են եղել նաև դավազանաձև դործիքների մե-տաղե մասերը: Մինչև օրս հետազոտված չեն նետերի և բրիչների ծայրերը: Այս կապակցությամբ օրինական հարց է առաջանում, թե արդյո՞ք նետասլաք համարվածների մի մասը, հատկապես մասուսաձև—բահաձև նետասլաքները որպես բրիչի ծայր չե՞ն ծառայել: Իսկ նիդալածայրերի նույնպիսի ծառայությունը, ինչպես հով-վական ցուպը, անվիճելի է:

Ջեռքի ճնշմամբ աշխատող դործիքներից են գոյացել հետագա-յում դարգացած, բայց միայն ձևերի և ոտքի ուժով աշխատող դոր-ծիքները, որոնք դարձել են բարդ կառուցվածք ունեցող և քաշող ուժով աշխատող դործիքների նախատիպերը:

Ոտնահարվածով աշխատող և ամենատարածված դործիքը բահն է: Մեզ հասած հայկական բնաշխարհի մի քանի բահատե-տակների մեջ կա երկու ցայտուն տիպ: Դրանցից մեկն ունի լայն ու-սեր, երկար ու խիստ կորամեջ թաթ: Կոթառը սովորաբար ծալվում է գեպի վեր այն հաշվով, որ կոթը բահի երեսի կողմում լինի, փորե-լուն շխանդարի (տախ. II, նկ. 4 ա.): Մյուս բահատեսակն ունի մոտավորապես քառանկյունի ձև (տախ. II, նկ. 4 բ.): Սրա կենտ-րոնի կորույթունն աննշան է. կոթառը ծալվում է թե՛ վերև և թե՛ ներքև (որ դանազան դործածությունների նշան է):

Ամենահնազույն, սրածայր բահը, որ գտնված է Կարմիր բլուրում<sup>1</sup> (տախ. II, նկ. 1) ուրարտական ծագում ունի: Իրենց հնու-թյամբ հայտնի են բուն հայկական ծագում ունեցող մի քանի բա-հեր, որոնք մեզ են հասել կամ նյութական վիճակում և կամ քան-դակապատկերների ու մանրանկարչության միջոցով: Բերենք երկու օրինակ, որ VII դարին են պատկանում: Մեկը քանդակված է Զվարթնոցի պատի վրա (տախ. II, նկ. 3), նրա կառուցող վար-պետ-ճարտարապետ Հովհանի ձեռքում<sup>2</sup>, իսկ մյուսը գտնված է Դվինի պեղումների ժամանակ<sup>3</sup> (տախ. II, նկ. 2):


Ինչպես տեսնում ենք, ուրարտականի, Դվինի, Զվարթնոցի և

<sup>1</sup> Кармир-блур, 1. Б. Б. Пиотровский. Результаты раскопок 1939—1949 гг., Ереван, 1950, стр. 40, рис. 20.

<sup>2</sup> Քարկեն Առաքելյան, Հայկական պատկերաբանականները IV—VII դարերում, Երևան, 1949, նկ. 57:

<sup>3</sup> Պատմության թանգարան, Հնագիտական բաժնի դուրամատյան, N° 1906/242:

Sh II



արդի հայկական ակոսավոր—կորամեջ բահի<sup>1</sup> (տախ. II, նկ. 4 ա) նույնութունն ակնհայտ է, այդ պատճառով դրանք պետք է դիտել որպես տեղական, ուրարտա-հայկական բահեր:

Արածայր բահի արխաիկ կառուցվածքը, մասնավորապես կոթառի, մեղեխի (կոթի) և աստարակի (բասարակ, թեճակ) հարմարեցումը հողափորման համար, ընդհանուր երևույթ է պատմական Հայաստանի բոլոր վայրերում, Կիլիկիայից մինչև Գուգարք, Ղարաբաղից մինչև Կարին: «Լաստ» տերմինը, որ հավասարապես ասվում է թե՛ բահին և թե՛ գութանի խոփին, վերաբերում է նաև դրանց քանդած հողի շերտին:

Դա հետևանք է այն բանի, որ խոփը Հայաստանում հայկական հիշյալ բահից է սերվում: Ուրեմն բահի տեղական ծագման մասին վեճ չի կարող լինել:

Այդ բահն իր հնագույն ֆունկցիաներով պահպանվեց մինչև 1920-ական թթ.: Այժմ միայն Արարատյան դաշտի և մի քանի այլ այգեգործական ու լեռնային վայրերի կոլտնտեսություններում դեռևս պահպանվում է հնագույն բահի այդ ձևը:

Պատմության թանգարանում պահպանվող հին բահի օրինակի թաթի երկարությունն առանց կոթառի, Արարատյան դաշտում հասնում էր 36 սմ, ուսերի լայնքը՝ 27 սմ, կոթառի երկարությունը՝ 9 սմ, քաշը՝ 2 կգ: Ուսերի դիմաց բահի փոսի խորությունը 5 սմ է, միջին մասում՝ 4 սմ և ծայրից 6 սմ վերև՝ 2 սմ, իսկ կոթառի անցքի տրամագիծը՝ 5,5 սմ է:

Սա Հայաստանում պատրաստվում էր հայ վարպետների ձեռքով. նրանք սակավ երկաթահանքերից հեռու էր գտնվում և սևփական արտադրություն չունեին, ապա նա բահը պատրաստի կամ կիսապատրաստի վիճակում ներմուծում էր հարևան գավառից: Ձողում—նորոգումն, անկասկած, կատարվում էր ամենուրեք:

Արարատյան դաշտում անմշակ երկաթից բահ պատրաստելու գործում հայտնի էին այժմյան Այգեստան գյուղը և մի շարք այլ գյուղեր: Այգեստանում դրա վերջին վարպետը Մուխսի Հովհաննեսն էր: Զեյթունում Զուխայաններն ունեին իրենց սևփական երկաթահանքը, որից և պատրաստում էին իրենց բահերն ու գործիքները:

Բահի հնագույն ֆունկցիաներից մնացել էին՝ այգի փորելը, ոռոգող ջրի առունների բացում-ոռոգումը, արորի համար անմատ-

<sup>1</sup> Տե՛ս պատմության թանգարանի Ստ. Լիսիցյանի անվան ազգագրական թանի գույքամատյան, № 5384:

չելն հողակտորներ փորելը, այգեթաղը և այլն: Զեյթունում գութան շկար, որովհետև դրա համար ընդարձակ հողամասեր չկային: Խամ ու խոպան, հատկապես խիստ արմատակարված, հողերը արորով փարելուց առաջ փորում էին բահով: Այս դերի շնորհիվ էր, որ բահը լեռնային-լեռնակիրճային վայրերում պահպանվում էր երկար ժամանակ, իսկ այգեգործական շրջաններում այժմ պահպանվում է նրա թևթևաքաշ տեսակը: Այս տեսակն այժմ Արարատյան դաշտում պատրաստում են տեղացի դարբինները՝ գործարանային բահը հին ձևի վերածելու նախապահով:

Քառանկյունաձև բահի (տախ. II, նկ. 4ր) վրա առայժմ կանգ չառնելով, մենք սրածայր բահին համարժեք ենք համարում երկժանի այն հաստամատ եղանակը, որոնք Հայաստանում գործածվում էին մինչև 1890-ական, իսկ որոշ վայրերում՝ մինչև 1920-ական թվականները:

Սրանց քառակող և գոլավոր ատամներն ունենին 23—25 սմ երկարություն, հիմքում՝ շուրջ 1 սմ հաստություն:

Երկժանին և եռաժանին հիմնականում ունեցել են հնձված խոտը և օրանը հավաքելու, բարձելու պաշտոն (թեև Հայաստանում մանդաղահնձի ու խուրձ կաղելու սովորության լայն տարածման հետևանքով այս ֆունկցիան մասնակի նշանակութուն ուներ): Եռաժանին և երկժանին ունենին նաև փորելու և այլ ֆունկցիաներ:

Հայաստանի նախաբնիկների մետաղյա երկժանին հայտնի էր գեոևս բրոնզի դարաշրջանում: Սեանի ավազանում հայտնաբերված բրոնզե երկժանին<sup>1</sup> (տախ. II, նկ. 5), ինչպես նաև ուրարտական երկաթե եռաժանիների տեսակները<sup>2</sup> (տախ. II, նկ. 7ա՝ դրսևված Թոփրախ-Վալիի պեղումներում, 7 բ և 7 գ՝ Վարմիր բլուրում) ոչ մի կասկած չեն թողնում, որ մետաղյա եղանակը Հայաստանում բավական տարածված են եղել նաև որպես հող փորող գործիքներ: Բացառված չէ, որ դրանց մի մասը ունենար զեկորատիվ-պաշտամունքային կամ տիտղոսը ցուցադրող նշանակութուն, կապված ամենից առաջ, հողի՝ հողագործության հետ: Հավանորեն այդպես է, օրինակ, Սեանինը (տախ. II, նկ. 5): Ինչ վերաբերում է ուրարտական եղանակին, մենք ունենք հետևյալ նկատառումները: Դրան-

<sup>1</sup> Ն. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 169, նկ. 134:

<sup>2</sup> Բ. Բ. Пиотровский. История и культура Урарту. Ереван, 1944, стр 197, рис. 55. Его же. Кармир-блур, 1, результаты раскопок 1950 г., стр. 40, рис. 20.

ցից տախ. II, նկ. 7ա և 7գ միաժամանակ թե՛ հողափորիչներ են և թե՛ կալի ու խոտի գործիքներ: Չենք բացառում սրանց երրորդ ֆունկցիան՝ զենք լինելը, մի հանգամանք, որ ակնհայտ էր նույնիսկ XIX դարում<sup>1</sup>:

Ախալքալաքում մինչև XX դարի սկզբները պահպանված «դարբնի եղան»-ը հաստամատ հրկժանի էր: Այն թեև խոտ հավաքելու համար էր, բայց հայտնի էր նաև որպես հողափոր գործիք և կռվի զենք: Այդ եղանը «ատուլ» և «կոճղեզ» արմտիկները հավաքելու համար բաճի դեր էր կատարում:

Այս եղանը անցքավոր կոթառի փոխարեն ունենր տախտակաձև կոթ, մի դամի անցքով ու օղակ-ապարանջանով, որը կոթի վրա եղանն ամրացնելու միջոց էր (տախ. II, նկ. 8)<sup>2</sup>: Իսրբնի եղան անուուն ինքնին հաստատում է դրա տեղաշարժյունը, միաժամանակ ցույց տալով, որ կան ուրիշ եղաններ և՛ «իեսե եղան», գործարանային եղաններ («բռքսի եղան»): Մեր ձեռքի տակ եղած այս եղանը պահպանվել է 1850-ական թվականներից, Մալխաս Բդոյանի տանը, որը նա նվիրել է կուտնտեսային թանգարանին:

Ճիշտ այս «դարբնի եղանի» տեսակն է XVII դարի ձեռագրերից մեկում ֆիկսացված եղանր<sup>3</sup>, որը, սակայն, ունի անցքավոր կոթառ (տախ. II, նկ. 9), որ նման է Սեանի ավազանի բրոնզե եղանի կոթառին (տախ. II, նկ. 5):

Հայ հնագույն «երեքճղի» բառը միջնագարում նշանակել է եռաժանի գործիք: Համեմատել «երկումատ», «երեքմատ»—«երեքմատնի» բառերը:

Ոտնահարվածով աշխատող եղան-րրիչների և բաճի ֆունկցիաներն անցել են «լիտր» անունը կրող եղանաձև գործիքին, որով միայն փորում էին: Ս. Հայկունու նկարագրության համաձայն

1 Գալով ուրարտական երրորդ մեծ եռաժանուն (տախ. II, 7 բ) և Գառնիի պեղումներում գտնված երկաթե փորր եռաժանուն (տախ. II, 6, տե՛ս Բ. Ո. Արաքե-լյան, Դարն, II, Результаты раскопок, 1951—1955, Ереван, 1957, стр. 48), մենք դրանք համարում ենք մտահան սպասներ: Գառնիինը, անտարակույս, գործածվելու էր տեղի պայտական կամ եկեղեցու խոհանոցում: Իսկ ավելի բան 80 սմ երկարություն ունեցող ուրարտական եռաժանին միանգամայն համապատասխան է Վարմիր բլուրում հայտնաբերված հսկա կաթնային, որով հավանորեն բանակի համար միս էր եփվում:

2 Տե՛ս Վրացական ՍՍՏ Բողղանովայի շրջանի Փորր Եանչալի գյուղի կուտնտեսային թանգարան, գույրային ցուցակ N 61: Եղանի կշիռն է 1,1 կգ, մատները երկարությունը՝ 39 սմ, կոթառախտակի երկար. 12 սմ:

3 Մասենագարանի N 349 ձեռագիր, Աստվածաշունչ, 1686, էջ 473ա:

Տրապիզոնի հայերը լեխարով արտեր էին փորում: «...Քանի որ տնկերը փոքր են, դեռ սլտուղ չեն տար՝ գյուղացին լեխարով (երկ- ճյուղանի բահ) կը լրխտրեն»<sup>1</sup>, գրում է նա:

Այս լեխարը հայտնի է հղել նաև Համշենի հայերին, որոնք այժմ իսկ այն օդտագործում են վարող գործիքներին անմատչելի հողակտորները (լանջեր, փոքր հողամասեր, անտառոտ տեղեր, քարքարուտներ և այլն) փորելու համար (Համշենի լեխարի Սու- խումիում պահպանվելու մասին առաջին անգամ հաղորդում է արել սլատմական գիտությունների դոկտոր Ս. Երևմյանը՝ 1958 թվա- կանին: Այդ լեխարը Սուխումիի գյուղերից ձեռք է բերել Ս. Բար- խուդարյանը և հանձնել սլատմության թանգարանին):

Մոտավորապես նույն ֆունկցիան է ունեցել նաև Սիրիայի Սովուլուղ գյուղի (Ալեքսանդրեկի շրջան) հայերին հայտնի «աբր- մըղ»-ը, որը քառաժանի էր: Կոթառը բահի կոթառի նման էր, բայց աշխատում էր քլունգաձև (տախ. II, նկ. 10): Օգտագործվում էր բանջարանոցներում<sup>2</sup>:

Այս է ոտնահարվածով աշխատող գործիքների ընդհանուր սլատ- կերը: Չեռնահարվածով աշխատող գործիքներն ունեն երկու են- թատեսակ. մեկը բրիչ-թոխր-քլունգը, որ գրեթե ամեն տեղ երկու «բերան» ունի և մյուսը՝ հողի ուրազը, որ միակողմանի բերան ունի: Առաջինները, որ հաստ են ու ծանր, կոշտ հողերը փորելու համար են, իսկ երկրորդները, որ բարակ, թեթև ու լայնաբերան են, փափուկ հողերը փորփրելու և հողը տեղաշարժ անելու համար են:

Հայաստանում հնագիտությանը դեռևս անծանոթ են հողի ու- րագները, իսկ երկաթե թոխր-բրիչներն արդեն հայտնի են: Անգրկով- կասում, ինչպես, օրինակ, Զվարի գյուղում, հնագետ Ս. Ավիսիս- յանի հայտնաբերած բրոնզե առարկաների թվում կա իսկական հո- ղուրագ (տախ. III, նկ. 13), որ համընկնում է հայկական արդի նույնանուն գործիքներին<sup>3</sup>: Դա նշանակում է, որ հողի ուրազը, լինի բրոնզից, սղնձից կամ երկաթից, Հայաստանում չէր կարող չլինել:

<sup>1</sup> Ս. Հայկունի, Տրապիզոնի հայ գյուղացու կյանքը, «Արարատ», 1905, № 10, էջ 938, Հմմտ. Հր. Անառյան, Գաղ. բառ., էջ 419 և Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, 245, «լեխար» բառի բացատրությունը:

<sup>2</sup> Այս քառաժանի կոչվում էր նաև «շորթ»։ Սրա միակ օրինակը 1949 թվա- կանին պահվում էր Սիրիայից հայրենադարձված Հակոբ Ա. Աղազադյանի մոտ, Վ. Արտաշատում:

<sup>3</sup> А. А. Иессен, Б. Е. Деген-Ковалевский. Из истории древней метал- лургии Кавказа, М.—Л., 1935, стр. 125, рис. 175.

Հնագիտական արժեքների, ինչպես նաև գրական հուշարձանների վիպուկությունների համաձայն բրիչ-թոխերը ծանոթ էին ոչ միայն արդեն կազմավորված հայ էթնոսին, այլև նրա նախնիներին:

Գառնիի պեղումներում հայտնաբերված՝ մեր թվագրության I—II դդ. պատկանող երկաթե մի շարք գործիքների թվում մեծ հետաքրքրություն է ներկայացնում բրիչը, որի կարճ ծայրը ուրագաբերան է, երկարը՝ կացնաբերան: Ընդհանուր երկարությունն է 20 սմ (տախ. III, նկ. 1): Պեղումների ղեկավար Բ. Առաքելյանն այդ բրիչը համարել է քարտաշի մուրճ<sup>1</sup>, այդ կարծիքը, դժբախտաբար, մենք չենք կարող բաժանել: Դա պարզապես նույնն է, ինչ հին ու նոր թոխերը: Թոխ-բրիչների գոյությունը որևէ տեղ՝ պայմանավորված է, մասնավորապես, անտառների և թիուտների գոյությունամբ, որովհետև այդ գործիքների կացնաբերանն ստեղծված է առաջին հերթին ծառերի ու թիների արմատները կտրելու, ճյուղերը մաքրելու համար, Պատահական չէ, որ ամբողջ Լոռին, Ջանգեղուքը, Ղարաբաղը, Սասունը, Տրապիզոնը, Ջեյթունը, իսկ այժմ էլ արդի Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան անտառապատ վայրերում գործ են ածում այդ նույն թոխերը:


Նույնը կարելի է ասել նաև Գոլովինոյում գտնված բրիչի մասին (տախ. III, նկ. 2), որը Հ. Մարտիրոսյանը համարել է սկյութական կացին<sup>2</sup>: Թեև այս թեզը նա չի հիմնավորել, բայց մեղ թվում է, որ Հ. Մարտիրոսյանը հիմք է ընդունել գործիքի արտաքին նմանությունը սկյութական կացինին: Այս «կացնի ընդհանուր երկարությունը հասնում է 16 սմ: Արտաքինով լիովին համընկնում է հնուց հայտնի և այժմ լիակատար գործածական այն «քուլունգ»-ին, որին հանդիպում ենք Իջևանի, Դիլիջանի, Շամշաղիի և հարևան շրջանների գյուղերում:

Ինչպես Լոռի-Ջանգեղուքի, այնպես էլ Դիլիջանի թոխ-քուլունգ-բրիչը (տախ. III, նկ. 3), ձևերով, մասամբ և շափերով համընկնում է հնագիտական հիշյալ տվյալներին, այն անկասկած, բրիչափն հողագործական գործիք է՝ տեղային հատկանիշներով:

Թոխերը մինչև XX դարի 20-ական թվականները գործ էին ածվում որպես հողագործական գործիքներ: Այժմ էլ դրանք հիմ-

1 Б. Н. Аракелян. Гарни, II. Результаты раскопок 1951—1955 гг. (античный период), Ереван, 1957, стр. 42 и табл. VII կամ պատմության թանգարան, հնագիտական բաժին, Գառնիի հուշեցիա 1965/52:

2 А. А. Мартиросян. Раскопки в Головино, Ереван, 1954, стр. 39 и табл. XV, рис. 10.



նականում ունենալով վարելահողեր մշակելու ֆունկցիա, ուրագածն ծայրով հողն են փորում, իսկ կացնաձև բերանով ծառամատները կտրատում:

Անցյալում Ղափանի Արծվանիկ գյուղում վեսկու վարի ժամանակ հարուստ ընտանիքները մարդ էին վարձում, որը թոխրով լրացնում էր պակասավոր կողմերը. փորում էր խամ խողածները, փշրում «ճումները», կտրատում արտում բուսած և վեսկու կողմից չհաղթահարված ծառարմատ-թփարմատները (համտ. «հողաբիր»-ը, «փետատ»-ը և այլն):

Այժմ գործածվող գործարանային երկրերան քլունգները (տախ. III, 4), անշուշտ, մուտք են գործել Ռուսաստանից, որոնք մատչելի

դնների պատճառով դուրս են մղել ազգայինը դեռևս անցյալ դարի երկրորդ կեսից:

Թոխերերին լիովին համապատասխանում են գրավոր տեղեկություններով մեզ հայտնի «կաղտիկ»-ը, «դակուր»-ը կամ «բրիչը»-ը: Կաղտիկ բառը, օրինակ, բացատրված է որպես «Երկաթե երկբերան գործիք, ուրազի և կացնի նման բերաններով, որով կըտրում և մաքրում են խաղողի սրթը»<sup>1</sup>:

Ծիշտ նույնն է նաև հնագույն «դակուր»-ը (հմմտ. «դակր» «դակու»: Սասունում «կաղդիգ» անունն էր կրում քաղհանի ուրազը տե՛ս տախ. III, նկ. 7):

Ազաթանգեղոսը հաղորդում է. «Արդ առեալ թագաւորին փայտատ և բահ...»<sup>2</sup> (V դար): Հովհան Մամիկոնյանը, որ քաջահմուտ էր Տարոնի կենցաղին, գրում է. «Առեալ բրիչ՝ ևս և Աղբիանոս եպիսկոպոս բրեցաբ...»<sup>3</sup>, (VII դար): «...եւ փայտատօք և մրճօք կործանեցին զգրունս նորա...», — գրում է Հովհաննես Դրասխանակերտցին<sup>4</sup> (IX դար): Մատթեոս Ուռհայեցիին ակնարկում է. «Եւ սրօք և բրօք կանխեալ ընկեցին...»<sup>5</sup> (XII դար): XII դարի պատմիչ Արիստակես Լաստիվերտցին պարզապես բացատրում է, որ վար ու ցանքը (հալանարար Բարձր Հայքի Կարնո գավառում) կատարում էին բրիչի օգնությամբ «...իսկ սորա երկաթի բրիչ ի ձեռն առեալ՝ խոնջեալ աշխարհին ի դարի սերմանեաց (ի դար սերմանեաց)»<sup>6</sup>:

Մատենագրությունից բերված օրինակները բավական են համոզվելու համար, որ ամենադարգացած հողագործական վայրերում անգամ բրիչային երկրագործության ձևերը մասամբ պահպանվում էին: Նույնիսկ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, ինչպես հավաստում է Ս. Հայկունին, տրապիզոնցի հայը, «բրչով կը սերմանն լաղուտ, լյուբիա, դդում և այլն»<sup>7</sup>:

1880-ական թ., գուցե և հետո, նույնն էր Դերսիմը:

1 Տե՛ս Հայկազյան բառարանի հավելվածը և այլն:

2 Ազաթանգեղեայ Պատմութիւն, Թիֆլիս, 1882, էջ 445:

3 Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, 101:

4 Յովհաննէս Կարողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 222:

5 Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 262:

6 Պատմութիւն Արիստակէայ Վարդապետի Լաստիվերտցոյ, Թիֆլիս, 1912, էջ 33:

7 Ս. Հայկունի, Տրապիզոնի հայ գրուղացու կյանքը, «Արարատ», 1905, № 10, էջ 938—939:

«Կտեսնեն՞ք այն կարմիրերես առույզ երիտասարդները, — գրում էր Անդրանիկը, — որ մեկ-մեկ փետհատ ուսերուն վրա դրած՝ գչուկ կլինրագառնան. դոքա առավոտյան դեռ արևը չծագած, դացեր էին լեռնային արտերը հերկելու, այսինքն փետհատով փորելու, որովհետև այն տեղերը խոփ ու արոր չեն բանիր»<sup>1</sup>:

Բրիչլային երկրագործության վերապրուկների տեսակետից տիպիկ էր Սասունը: Այստեղ մինչև 1900-ական թ. պահպանվել են մի քանի տեսակի բրիչլաձևեր՝ «մէզ պէրնէն փիղաղ»-ը<sup>2</sup>, որով փորում էին խիստ արմատակալված—սևոտու և խամ թողնված տեղերը, ուսողման առունները, «ակով» (խակ) ջարդում արտի կոշտերը (տախ. III, նկ. 5). «էրգու պէրնէն փիղաղ»-ը<sup>3</sup>, որը գլխավորապես անասնակեր «կալ» փուշը արմատախիլ անելուն էր ծառայում և օգտագործվում էր այլևայլ հողափորումների ժամանակ (տախ. III, նկ. 6). «կաղղիլ»-ը<sup>4</sup>, որով «լցնում» էին գլղի արտը, բանջարանոցները և այլն (տախ. III, նկ. 7). «շեղպ»-ը<sup>5</sup>, որով քաղհան էին անում արտերը (տախ. I, նկ. 9):

Սասունն այս գործիքները պատրաստում էր Տալվորիկի երկաթից, տեղական վարպետների ձեռքով:

Հողի ուրաղները, ինչպես ասված է, պատկանում են ձեռնահարվածով աշխատող գործիքների թվին: Հողի հատկության և գործիքաշինության տրադիցիայի տարբերության շնորհիվ այս գործիքները Հայաստանի տարբեր նահանգներում տարբեր ձևեր են ունեցել:

Ի տարբերություն թոխր—բրիչլների, որ բացառապես տղամարդու աշխատանքային գործիք էր, հողի ուրաղները հիմնականում կանացի աշխատանքային գործիքներ են մինչև մեր օրերը: Սրանք գործ էին անում և այժմ էլ գործ են անում գլխավորապես բան-

<sup>1</sup> Անդրանիկ, Տերսիս, Ճանապարհորդութիւն և տեղագրութիւն, Թիֆլիս, 1900, էջ 26—27:

<sup>2</sup> Բերանի լայնությունը 7 սմ է, երկարությունը՝ 37,5 սմ: ՏԼ՝ս Պատմության թանգարանի Լիսիցյանի անվան ազգագրական բաժնի գույքամատյան, № 5967:

<sup>3</sup> Նույն տեղում, № 5968. բերաններն ուրագաձև են, որոնցից մեկը, որ որոշ չափով բութ է, արմատներ հանելու—մերկացնելու համար հույն էր փորում, իսկ սուր բերանով արմատներն էին կտրում: Յուրբարանչուր բերանի երկարությունն է 28,5 սմ, իսկ լայնությունը՝ 7 սմ:

<sup>4</sup> Նույն տեղում, № 5982, բերանի լայնությունն է 7,5 սմ, իսկ երկարությունը՝ 17 սմ:

<sup>5</sup> ՏԼ՝ս պատմության թանգարանի Լիսիցյանի անվան Ազգագրական բաժնի գույքամատյան, № 5981, երկարությունը 33,5 սմ է:

չարարութեան-բոստանամշակման և այգեգործական վայրերում, հողը մակերեսից փորփրելու, մարգեր շինելու, ոռոգող ջուրը բաժանելու, բանջարաբոստանային բույսերն ու բամբակենին բուս-լից անելու, մուլախոտերը քաղհանելու, կալատեղերը պատրաստե-լու համար:

Քաղահանի ուրագները Հայաստանի միկենույն վայրում, ինչպես, օրինակ, Արարատյան դաշտում բազմազան դարձան միայն վերջին մեկեկես դարի ընթացքում, դանազան գավառներից ու նահանգ-ներից կատարված գաղթման-համակենտրոնացման ճանապարհով: Միայն Արտաշատի շրջանի Նովրուզլու գյուղից մենք ձեռք ենք բե-րել դրա երեք տեսակը, որոնցից երկուսը իսկական ուրագածե են (տախ. III, նկ. 9<sup>1</sup>, 10<sup>2</sup>), ունեն թակեր և հաստ սկիզբ, որ հարմար են արմատակալված հողերում աշխատելու համար. երևում է, որ տեղական շեն, այլ բերված են ուրիշ գավառներից: Երրորդը, որ հաստ թիթեղից է<sup>3</sup>, օժտված է լայն բերանով (տախ. III, նկ. 8) և հարմար է փափուկ հողերում աշխատելու համար (երևում է, որ տեղական է): Տեղական է նաև «սոխի ուրագ» կոչվածը<sup>4</sup>, որ ձեռք է բերված Վեդուց և որի մի բերանը փորելու և մյուս կողմի զույգ ճանկերը՝ հողը փխրեցնելու համար են (տախ. III, նկ. 11):

Այս են այն ուրվագծերը, որոնցով կարելի էր ներկայացնել զարգացած երկրագործության մեջ պահպանված հնագույն, բրիչա-յին երկրագործության վերապրուկների մոտավոր պատկերը:

Ինչպես երևում է, այդ վերապրուկները շափազանց կենսունակ են գտնվել և մինչև իսկ մեր օրերումն էլ դրանց մի մասը շարունակում է ապրել շնորհիվ այն հանգամանքների, որ ընձեռում են Հա-յաստանի աշխարհագրական—հողալիմայական պայմանները՝ ժամանակակից տեխնիկայի համար դեռևս չհաղթահարված բնա-գավառները:

Քաշելով վարող գործիմներ: Այսպես ենք անվանում արոռ. հարոռ ոսկի—վեսկի—վիծկի—վիցկի, շոռոց և այլ անուններ կրող

1 Նույն տեղում, № 5391, Բերանի երկարությունը 16 սմ է, լայնությունը 9,5 սմ:

2 Նույն տեղում, № 5390, Բերանի երկարությունը 16 սմ է, լայնությունը 9,5:

3 Նույն տեղում, № 5390, Բերանի երկարությունը 16 սմ է, լայնությունը 14 սմ:

4 Տե՛ս պատմության թանգարան, № 5398, Բերանի երկարությունը 9 սմ է, լայնությունը՝ 6,5 սմ:

փոքրածավալ գործիքի և ջղլա մեծ առու կամ գուրան անվանվող գործիքին, որոնք նախ մարգու, ապա՝ կենդանու ուժով քաշվելով են աշխատել:

Արոր-գուլթաններն առաջացել են ձեռքի ճնշմամբ, ձեռնահարվածով և ոտնահարվածով աշխատող գործիքներից, դրանց ֆունկցիաների սինթեզման ճանապարհով:

Պետք է ասել, որ արոր գուլթանների առաջացումը կապված է շափազանց խոր հնության հետ: Այն գոնե ցարդ մեր ձեռքում եղած նյութերի համաձայն, ավարտված է հղի հայ էթնոսը կազմող ցեղերի կողմից: Հետո միայն, երբ այդ ցեղերը միավորվելով կազմեցին հայ ժողովուրդը, իրենց հետ բերած վարելամիջոցները թե՛ սեփականացան և թե՛ շխառնվեցին, լիապես շրջահանրացան: Ամեն մի ձև իր տերիտորիայում պահպանեց ցեղային հատկանիշը կրող տարրերը: Այս է արոր-գուլթանների և՛ ձևական, և՛ անվանական տարբերությունների պատճառը: Գործիքների գենեզիսի վերաբերյալ մենք գրավոր վիպյություններ չունենք և չէինք էլ կարող ունենալ: Բայց միջին դարերի հայ գրական հուշարձաններում պահպանված հատ ու կենտ ավյալների հիման վրա արորի ու գուլթանի պարզացման ինչ աստիճանի վրա կանդնած լինելու մասին կարող ենք որոշ, ամփոփ գաղափար կազմել: Պեղածո նյութերը հաստատում են ու ճշտում այդ հաղորդումները: Պակասը լրացվում է XIX դարի վերջերի և XX դարի առաջին կեսի կենցաղում պահպանվածով:

Բազմաթիվ հեղինակներից վկայակոչելով մի քանիսին, մենք պարզ ասանում ենք, որ վարող գործիքները հնում նույն ձևով են հորջորջվել, ինչպիսիք կան այսօր: Հ. Դրասխանակերտցին հիշատակում է. «... որպէս հարօր ի վար» (IX դար<sup>1</sup>): Մ. Ուռհայեցին Արծն քաղաքի որոշ հարուստների կարողութունը ցույց տալու համար գրում է. «...ութ հարիւր վեցկի եզանց ելանկին ի տանէ նար...» (XII դար)<sup>2</sup>: Սմբատ Իշխան Գունդստարչն իր Դատաստանագրքում նշում է. «...Նւ կզին. որ լինի վաճառ... որ տանի փորձէ ի լուծ, ի արօր, ի սայլ...» (XIII դար)<sup>3</sup>:

Նվ ոչ միայն անուններն են կարևոր: Կարևոր հարցերից է քաշելով աշխատեցնելը, հետևապես քաշող կենդանիներին օգտագոր-

1 Յովհաննու կարողիկոսի Գրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 152:

2 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վազարշապատ, 1898, էջ 103:

3 «Դատաստանագիրք Սմբատ Իշխանի» (Գունդստարչի), էջմիածին, 1918, էջ 62:

ծելու հանգամանքը, թեև այդ շատ ակնհայտ փաստը վկայված է երկաթե խոփի գոյութեամբ դեռևս հայ էթնոսի կազմավորումից էլ առաջ:

Վերջին հարյուրամյակի հայկական ազգագրութեան տվյալները համաձայն մեր արտրոները կազմում են երեք գլխավոր խումբ: Կան նաև այդ խմբերի մեջ շմտնող, իրենց աիպով զանազանվող միջին տեսակները, որոնց առայժմ չենք անդրադառնում: Նախ հարավոր է, որ դրանք լինեին այլ շորտորդ խմբի բեկորները և ապա, բացառված չէ, որ այդ արտրոները լինեին տվելի համահայկական, քան երեք խմբերը, որոնք մեզ են հասել որպես առանձին ցեղախմբերի ստեղծագործություններ և քիչ են փոփոխվել:

Բնական է, հետևապես, խորամուխ լինել այն հարցի լուծմանը, թե էթնիկական տեսակետից ի՞նչ են ներկայացնում արոր-զու-թանների այն երեք խմբերը, որ մեզ հայտնի են փաստական նյութերով: Եթե դրանք պատկանել են առանձին՝ հատկապես իշխող, կուլտուրայես առավել զարգացած ցեղախմբերի, ապա վերջիններս հալ ժողովրդի կազմի մեջ մտնող ո՞ր տարրերն էին, պատմության տվյալներով և տերիտորիալ առումներով դրանք արդյոք համապատասխանո՞ւմ են հայ ժողովրդի պատմության վերջին խոսքին:

Արորախմբերից մեկն ընդգրկում է ընդարձակ մի տարածություն, որի սահմաններն են արևելքից՝ Կարմիր դետն ու Զագրոս լեռնաշղթան, հյուսիս—արևմուտքից՝ Պոնտական լեռները, հյուսիսից՝ ձորոտի ստորին հոսանքից մինչև Պաղակացիս լիճը, Ախուրյանի ու Արաքսի կազմած անկյունը, Տղմուտ գետի աջ ափերը և հարավից՝ Հայկական Տավրոսը:

XIX և XX դարերի ներգաղթների հետևանքով այս արորատեսակները տարածում դտան նաև Եիրակում, Արարատյան դաշտում, Սևանի հյուսիսային ափերում, Արաղածի շուրջը, Փամբակում, Ախալցխայում, Ախալքալաքում, Ծալկայում և այլ վայրերում:

Արորների այս խումբն ունի երկու տեսակ, ընդ որում զարգացած տեսակները տարածված են Բարձր Հայքում, Տայքում, Տուրուբերանում, իսկ հասարակները՝ Վանա լճի ավազանում:

Հաշվի առնելով Բարձր Հայքի և Վանա լճի ավազանի այս գերիշխող նշանակությունը, արորների սույն մեծ խումբը պայմանական ձևով անվանելու ենք «Վարին—Վանա արորախումբ»:

Երկրորդ արորախմբի տերիտորիալ տարածությունը, նյութերի սակավության հետևանքով, դեռևս հստակ չէ: Առայժմ մեզ հայտնի

վայրերն են՝ Փոքր Հայքի և Չորրորդ Հայքի (Մոսիք) սրոշ տարածու-  
թյունները, Սասունը, Աղձնիքը և Բաղեշի մի մասը: Արորի այս ձե-  
վը, ինչպես երևում է, հատուկ է հղել Հայկական Տավրոսի հարա-  
վային գավառներին, Հայկական Միջագետքին: Այն հետագայում  
տարածում է գտել նաև Կիլիկիայում և փոքրասիական մի քանի  
հայ գաղթավայրերում:

Արորի այս տեսակն իր ընդհանուր գծերով նման է սեմիտական  
ժողովուրդների արորներին, թեև չի նույնանում:

Հաշվի առնելով Մոսիքի գերիշխող դերը, այս արորախումբը  
կանվանենք «Մոսիքի արորախումբ»:

Երրորդ արորատեսակը, որ տարածված է Արցախում, Զանգե-  
զուրում, Լոռիում, Իջևան-Շամշադիիում, անվանում ենք «Սյունյաց  
արորախումբ»: Սա ընդհանուր գծերով նման է կովկասյան լեռ-  
նաբնակների և վրացական սրոշ արորների:

Արորի մի տեսակը, որի նախնական ձևերը մեզ հայտնի չեն,  
հայտնի է Պարսկահայքին: 1820-ական թթ. ներգաղթի միջոցին  
այս արորը տարածում գտավ Արարատյան հովտում, Վայոց ձորում,  
Սիսիանում և ուրիշ տեղերում:

Այժմ տեսնենք, թե այս երեք հիմնական արորախմբերը կա-  
ուուցվածքի և կառուցման տեսնիկայի տեսակետից ինչ գանադա-  
նություններ ու ընդհանրություններ ունեն:

1. «Կարին-Վանա» անվանված արորախումբում կան մի քանի  
ենթատեսակներ: Սրանցից երեքն սուլադայում հիմք են ծառայել  
մյուսների առաջացման-զարգացման համար: Այս երեքից ամենա-  
տարրականը, որ տարածված է հղել Վասպուրականում, երկու պարզ  
և ուղիղ ձողերի, այսինքն առատամի և համի միացումն է մաձի ու  
թրի օգնությամբ: Միացման ծայրում Վանա այս ոսկի-վիսկի կոչվող  
արորը փորվածքներ կամ կապեր չունի (տախ. IV, նկ. 1):

Երկրորդի մեջ նկատում ենք համի ձևափոխում. ուղիղ առա-  
տամի վրա հանդուլ է համի սկզբնամասի ներքանը<sup>1</sup>, որից հետո  
համն սկսում է կորանալ դեպի վեր:


Առատամն իր սկզբնամասում փորվածք-ակոս չունի, ինչպես  
հատուկ է Կարին—տարոնյան արորներին: Համն ու առատամը իրար  
կցորդողները թուրն ու մտնն են (տախ. IV, նկ. 2): Սրա հայրենիքը

<sup>1</sup> «Ներքան» բառը մենք հարկադրված ենք գործածում, սրովհետև ժողովուր-  
դը համի այդ մասի, այսինքն առատամին հանդուլ կամ առատամի ակոսի մեջ  
մտնող այդ փոքր մասի տակի համար անուն չունի:

ևս Վասպուրականն է և առհասարակ՝ Վանա լճի ավազանը: Երկու ենթատեսակներն էլ հանդիպում են Արարատյան դաշտում:

Երրորդ ենթատիպը, որի հայրենիքը Բարձր Հայքը, Տարոնն ու սրանց մերձավոր շրջաններն են, Վանա լճի ավազանի արորներից զանազանվում է առատամի սկզբնամասում ունեցած փոսորակով, որի մեջ հագցվում է համի ներբանը (տախ. IV, նկ. 3): Տարածված է նաև Շիրակում, Կարսում, Ախալքալաքում, Տայքում, Արագածոտնում, Ապարանում, Փամբակում, Սևանի ավազանում և այլն, XIX դարի 20-ական և 70-ական թթ. դաղթերի հետևանքով:

Տն IV



Թեև այս երեք արորների մեջ պարզ երևում է զարգացման ընթացքը, ընդ որում վասպուրականյան արոր-վեսիլու առաջին (տախ. IV, նկ. 1) տիպը Կարնո և Տարոնի տիպի (տախ. IV, նկ. 3) համար ամենանախնականն է երևում, այնուամենայնիվ մենք չենք կարող

Վանա լճի ավազանի արորը համարել Կարին-Տարոնի հայերի հայրենիքը: Առավել սառչդ պետք է համարել վասպուրականյան արորի և Բարձր Հայքի արորի միաժամանակյա առաջացումը, իհարկե, փոխադարձ ազդեցությունների հնարավորությամբ: Վանա լճի ավազանի արորը հետագա զարգացման նոր աստիճանի շի հասելը Կարնո արորն ընդհակառակը հասել է երկու զույգ լճկանի դիմանալու աստիճանին:

Հենվելով Ախալքսալարում և Բուլանըխում պահպանված առավել զարգացած և դեպի գութանը ձգտող մյուս արորատիպերի վրա, մենք համոզված ենք, որ Կարին-Վանա արորախմբի առավել զարգացումը տեղի է ունեցել մասնավորապես Բարձր Հայքի տերիտորիայում և Տարոնում:

Ախալքսալարի «հարոնա» կոչվող արորը վերև նկարագրված արորների՝ ավելի ուշ զարգացած տեսակն է (տախ. IV, նկ. 4):

Պետք է նկատել, որ արորից գութանին անցնելը պայմանավորված է համի, առատամի և մաճի կառուցվածքային փոփոխությամբ: Համի սկզբնածայրը մաճի հաստ հիմքում տեղավորելու եղանակը գութանին անցնելու արորի զարգացման կարևորագույն փուլն է: Այս հարոնան, սակայն, դեռևս ձևիչ շունի և զուրկ է անիվներից, օժտված է առատամի լայն ականջներով:

Բուլանըխի «անճար գութան»-ը, որի մասին Բենսեն գրում է, թե «անիվներ չունի և համը առատամի վրա կը գրվի արորի նման», վերև ներկայացված արորների առավել զարգացած տեսակն է:

Ախալքսալարի «օղլա» կոչվող նախագութանը իր կառուցման տեխնիկայով անմիջական կապ ունի հարոնայի, քան անճար գութանի հետ: Արա առատամի ականջները գրեթե առը շուռ տվող տախտակի դեր են կատարում: Համի ծայրը հարմարեցված է գոնեյին: Դեռևս զուրկ է ձևիչից և զույգ թևեր ունեցող մաճից, որը որոշում է հողը շուռ տալող տախտակի գոյությունը: Գոնեյի գոյությունը դեռևս շի որոշել խոփի ձևափոխումը (տախ. IV, նկ. 5):

Գութանը ջղլա կիսագութանի անմիջական զարգացումն ու վերջնական փուլն է (տախ. IV, նկ. 6):

Հայաստանում Կարնո այս գութանն իր մեծությամբ, դիմացկունությամբ և զարգացմամբ հայկական մյուս գութանների մեջ ամենալավն է:

«Կարին—Վանա արորախումբը» ունի բազմատեսակ ֆունկցիաներ, որոնցով օժտված չեն օրինակ՝ Սյունյաց և ծովաբյան արորախումբերը:

Խամ ու խոսպանները հերկում էր գութանը, որին լծում էին 8—12 զուլգ անասուն, ըստ որում 1—2 զուլգը՝ դամեշ: Մաճկալը, սրա օգնականը և գոնեկը վարողը տարեց, փորձված մարդիկ էին լինում: Հոտաղները՝ 12—15 տարեկան աղաներն էին: Օգնականի ֆունկցիան էր՝ ընթացքի ժամանակ մաքրել գութանի բուկը, ծանծաղ վարելիս նստել գութանի խարազանի (էշ) վրա, որ ակոսը խորանար, առավելները հասնելիս ղեկավարել լծկանների կանոնավոր շրջապտույտը և սրբիչով մաքրել գութանը (տախ. I, նկ. 5, 10):

Ջղլան (տախ IV, նկ. 5) գործ էր ածվում արորի համար անմատչելի շոր արտերը և գութանի համար անհարմար քարքարոտ արտերը հերկելու նպատակով: Սրա առատամի «դմակը» խիստ լայն կամ երկձյուղ էր լինում, որսկեսով առը լայն բանար: Լծում էին 4—6 զուլգ եղ կամ մեկ զուլգ գոմեշի հետ 3—4 լուծ եղ: Ջղլայի գոնեկի անիվները, հակառակ գութանի, երկուան էլ իրար հավասար էին, որովհետև վարած կողմինը խոր ակոսով չէր ընթանում: Սրա խոփն ունի արորի խոփի ձև, բայց նրանից 2—3 վերջով երկար է և ավելի հաստ ու ծանր<sup>1</sup>:

Միջնագարում հայտնի «մեծ արօր»-ը, ամենայն հավանականույթյամբ, ջղլայի տիպի է եղել:

Հարորը (տախ. IV, նկ. 3) հիմնականում ցանվող և ոչ թե հերկվող հողերը վարելու համար էր գործածվում: Եվ, որովհետև չէր կարող ավելի խոր վարել, քան պահանջում էր հողի յուրահատկությունը, հարորին այդպիսի դեպքերում փոխարինում էր հարոնան (տախ. IV, նկ. 4)<sup>2</sup>: Թե՛ հարորը և թե՛ հարոնան աշխատում էին 1—2 զուլգ եղով:

Նրբ պահանջ էր զգացվում ակոսը լայն բաց անելու, վասպուրականի արորների և առհասարակ հիշյալ արորախումբն ընդգրկող գավառներում առատամի և համի միացման տեղում, առատամի կամ համի սկզբնամասի աջ ու ձախ կողմերին սեպածև փայտեր էին մեխում (տախ. IV, նկ. 1): Դրվում էին նաև արհեստական ականջներ (տախ. IV, նկ. 5):

Չափազանց ուշադրով են այս արորախմբի մի քանի գավառների (վասպուրական և Կոպովիտ) հայտնի «շարքացան»-ի հարմարանքները: Այստեղ լանջային անջրդի հողերում ցանքսը կատա-

<sup>1</sup> Հովհ. Մալխուսյան, Հայ գեղջուկի սլոբոնը, «Աղագրական Հանդես», 7, էջ 379—380:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 380:

րում էին վեհապետական կոլեկտիվի մեխանիզմը և տախտակները օգնություններ: Շուրջ երեք մետր երկարությամբ այդ տախտակները պահում էին վարած հողը, շրջանակում, որ ակոսն իսկույն ծածկվի, և սերմնացանը հատիկ առ հատիկ ցորենը նետում էր բաց ակոսի մեջ: Տախտակները հեռանալիս հատիկները թաղվում էին խոր ակոսում: Այս արտը հայտնի էր «տրի խարոթ» անունով, իսկ շարացան ամբողջ սխտեմը՝ «տրի գնել» հորջորջմամբ: (այս խնդրին մենք անդրադարձել ենք առանձին հոդվածով):

2. «Մուփի արտախարթի» արտը հայտնի է «հարոթ» — «խարոթ» անունով: Բաղեկի և Տիգրանակերտի հարորները չափազանց մոտիկ փոփոխակներ են: Սրանց որոշ տեսակները (զարգացածները) հանդիպում են Կապադովկիայի և փոքրասիական որոշ հայ գաղութներում (Յուզղաթ, Պարտիզակ և այլն):

Այս խումբն ունի երկու հիմնական տիպ, որոնցից մեկը նախնական է, իսկ մյուսը առաջացել և զարգացել է սրա հիման վրա: Նախնական ենք համարում այն արտը, որ առաջացել է համի մեջ՝ տակից միակցվող և առատամի ու մաճի ֆունկցիան միաժամանակ կատարող ձողի պարզ համագործակցությամբ, Սղերդում (տախ. V, նկ. 1):

Սղերդի սույն արտի չափազանց նախնական աստիճանը հիշեցնող խոփը կատարյալ բրնձե է: Խոփի ականջներն ունեն ուղղահայաց դիրք. սրանք տակից միանում են երկաթակապին, որով և գոյանում է կոթառը, այսինքն այն անցքը, որի մեջ մտնում է առատամի գեր կատարող մաճի ստորին հաստ ծայրը: Սղերդյան հարորի այս խոփը (տախ. V, նկ. 1-բ) ունի 50—55 սմ երկարություն և ամբողջապես ծածկում է առատամի միաժամանակ կատարելով երկուսի ֆունկցիան (փորելը և ակոսն աջ ու ձախ լայնացնելը):

Սղերդի հարորի փոփոխակը Տիգրանակերտի հարորն է, որի մաճի և համի վրա ավելացված է «կամրջակ» կոչվող պնդացնող ձողը՝ որպես թրի ֆունկցիա կատարող (տախ. V, նկ. 2 գ): Միայն այս հանգամանքը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ Տիգրանակերտի հարորը Սղերդնի համեմատությամբ մի նոր աստիճան է: Սրա խոփի ականջների (տախ. V, նկ. 2բ) հորիզոնականությունը բնակիչները բացատրում են հողի հատկությամբ, արմատները դանակաձև կտրելու անհրաժեշտությամբ: Այդպես չէր, իհարկե, Սղերդինը, որովհետև, ինչպես ինֆորմատորներն են հայտնիում,

հողը ավազային լինելով, պահանջում էր լայն ակոսների բացում և առերի թեղում (դիզում):

Սղերդի և Տիգրանակերտի հարոր-խարորների զարգացման երրորդ աստիճանն է Անկարայի Յողղաթ հաչ գաղութում հայտնի հարորը (տախ. V, նկ. 3): Այս հարորը նախորդ երկուսից տարբերվում է նրանով, որ համը մտնում է մաճի և առատամի ֆունկցիաները կատարող փայտի մեջ: Այն հանգամանքը, որ համն է մտնում մաճափայտի մեջ և մաճն էլ օժտված է զույգ բռնակներով, մեղ հուշում է այս արորատիպի՝ դեպի գութանն անցնելու աստիճանը: Խոփը կրկնում է Բարձր Հայքի խոփատեսակը:

Յողղաթի արորին նման է հարբերդի արորներից մեկը, որի մոդելը պատրաստեց իջևանաբնակ ծերունի Մարգար Սեկոյանը՝ 1957-ին (նա Իջևան է դաղթել 1915-ին): Խոփը նման է Բարձր Հայքում տարածված խոփին: Մաճն ունի մի բռնակ, ինչպես հատուկ է Տիգրանակերտի արորին:

Մոփքյան արորախմբի առավել զարգացած և դիմացկուն ենթատեսակը տարածված էր Բալուում<sup>1</sup>, «հարոր» անունով (տախ. V, նկ. 4ա), Խարբերդում՝ «արոր» անունով<sup>2</sup>, (տախ. V, նկ. 5) Կարին-Ախալքալաքում՝ «չղլա» անունով<sup>3</sup>, նաև նույն Յողղաթում՝ «հարոր» անունով, Արմաշում՝ «ձախլիկ հարոր» անունով, Սասունում՝ «բոչիկ հարոր» (պոչիկ—պոչավոր արոր) անունով (տախ. V, նկ. 6):

Արորի այս տեսակներն իրենց համի ձևով բավական նման են Սյունյաց արորներին, որոնց փոխադարձ կապին առայժմ շեղանդրադառնալու:

Որքան էլ արտաքինապես սրանք հեռացած են թվում, ուշադիր աչքից շեն վրիպում այն տարբերը, որ կան նախորդ, անզարգացած արորատեսակների մեջ: Այսպես, Բալուի արորի խոփը (տախ. V, նկ. 4բ), Սղերդի և Տիգրանակերտի խոփերի (տախ. V, նկ. 1 բ և 2բ) զարգացումն է՝ իր մատնոցաձև կոթառով: Այն կանգնած է նախորդների և Կարին-Վանա խոփերի միջին աստիճանի վրա: Սասունի «բոչիկ հարորի» առատամն ու մաճը (տախ. V, նկ. 6) նույնպիսի միակտուր փայտ էր, ինչպիսին հատուկ էր Յողղաթում պահպանված արորին (տախ. V, նկ. 3): Տարբերությունն այն է, որ համը Սասունում կորացած է և մաճն ընդունել է ուղղահայաց դիրք:


1 Հաբուրյուն ԲՆՆ. Սարգիսյան, Բալու, էջ 465:

2 Բարջանճ գյուղ, էջ 199:

3 Հովհ. Մալխասյան, Հայ գեղջոկի ալբոմը. «Ազգ. Հանդես», Գ, 384—385, տախտակ III, նկ. ր.:

Սասնա խոփերը գտնվում են Բալուի խոփի և Տարոնի խոփերի միջին աստիճանում, թույլ են զարգացած, կոթաոնները կատարյալ չեն, որի հետևանքով էլ, ինչպես Բուլանըխինն է, առատամի վրա ամրապնդվում են հատուկ գամով բլիկով:

Տի V



Ահա այս է Մոփրի արորախմբի սեղմ պատկերը:

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն Չորրորդ Հայրը և ցույց տրված հարևան գավառները գուժան չեն ունեցել: Չեն ունեցել նաև այն բոլոր գաղթավայրերը, ուր տարածված էին նշված արորաձևերը: Այդ պատճառով էլ գուժանի դեր են կատարել այս արորախմբին պատկանող զարգացած տեսակի արորները:

Սասունում, օրինակ, ինչպես հավաստում էր կենցաղին լավածանոթ Եղիազար Կարապետյանը, ամենից շատ, շուրջ 90 %-ով, տարածված էր «բոշիկ հարսը»-ը: Բոլոր արմատակալված հողերը սրանով էին հերկում:

Մոփրջան արորների թույլ տեսակները առավելապես գործ էին սովորում ավազահողերով հարուստ շրջաններում, իսկ դիմացիուն տեսակները՝ դժվար հերկվող հողերում: Սովորաբար լծում էին մի զույգ եզ կամ գոմեշ, բայց երկու զույգով հերկելը կամ վարելը այստեղ ևս հայտնի էր, թեև հազվագեղ: Շոգ վայրերում, ինչպես Տիգրանակերտում, օրվա ընթացքում լծկանը հրեմն փոխվում էր. սուսլոտյան հովից մինչև շուրջ վրա հասնելը ոմանք գոմեշ էին լծում, կեսօրից հետո՝ եզներ, որովհետև գոմեշը շոգին չէր դիմանում:

Ինչպես Կարին-Վանա արորախմբի, այնպես էլ ծովափյան արորախմբի ծագման աղբյուրները թեպես նույնն են, բայց դրանք պատմական դարպացման տարրեր հանդամանքների և հողակլիմայական տարրեր առանձնահատկությունների շնորհիվ ընթացել են տարրեր ուղիներով:

Երկու խմբերի համար էլ, ինչպես երևում է, փայտե ծանոթ մալուխը, իսկ հետագայում նաև նրանից սերված հասարակ բրիչները, հողը քաշելով մշակող գործիքների հիմքն է: Մենք արդեն տեսանք, որ մալուխա—բրիչային երկրագործության հետքերը հայկական դարպացած երկրագործության պայմաններում պահպանել էին իրենց նախնական ֆունկցիաները: Ելնելով այդ տվյալներից, կարելի է տալ հետևյալ պատկերը.

ա) Մալուխ-բրիչը ամենանախնականն է, որով կանաչը նստած կամ կուացած հող էին փորում (տախ. VI, նկ. 1):

բ) Նիզակաձև կամ բիհրաձև բրիչը ծագում է մալուխից, որով մարդը (=կինը և տղամարդը հավասարապես) հողը կանգնած է բրում, բհրուց է տալիս: Ասել է, թե բհիր-բիհր բրիչը կարող էր մայրական տոհմից արդեն անցած լինել հայրական տոհմին (տախ. VI, նկ. 2):

գ) Չափագանց երկար ժամանակների ընթացքում նիզակաձև բրիչը դառնում է ճանկ (տախ. VI, նկ. 3ա), ունենալով մեկ-երկու մարդու ուժով քաշվող քարշածող, որը հետագայում կոչվելու էր,

«համ»<sup>1</sup> (տախ. VI, նկ. 3բ): Բարձր Հայքի արորի նախատիպի համար ճանկ դարձող բրիչն իր ուղղահայաց վիճակով հետագայում դառնում է արորի «մաճ» կոչվող մասը (տախ. VI, նկ. 4ա), իսկ Մոփքինը դառնում է միաժամանակ և՛ մաճ, և՛ առատամ (տախ. VI, նկ. 5ա): Երկու դեպքումն էլ նախապես մարդու ուժով քաշվող այս «Ջանկը» (որ սլայմանական բառ է), վեր է ածվում անասունների ուժով քաշվող գործիքի՝ վեսկու-հարորի (տախ IV, նկ. 1 և տախ. V, նկ. 1ա):

դ) Սրանց զարգացման հաջորդ աստիճաններում արդեն առաջանում են՝ առատամը, թուրը, համի զարգացած ձևերը, այնուհետև՝ գութանն իր բոլոր մանրամասնություններով:

Բրիչների բոլոր տեսակների և դրանց անվանումների համեմատումը արոր-գութանների բոլոր մասերի ու սրանց անվանումների հետ, ցանկալի արդյունք կտային դրանց էվոլյուցիայի շղթան գտնելու տեսակետից:




3. «Սլունյաց արորախմբի» մեջ լուր արորի ֆունկցիաներ ունեցող գործիքներին թուրը միանգամայն անժանոթ է: Կարճ ու հաստ սկիզբ ունեցող առատամի՝ մեջ, միևնույն անցքում, մտնում և ամրանում են համն ու մաճը: Համը մեծ մասամբ կազմվում է երկու կտորից: Արորների և զարգացած գութանի մրջնատիճանին հասած գործիքների զգալի մասն օժտվում է թրով (որ «Թրափետ» է կոչվում) և մեծ խոփով:

Զարգացման ընթացքը բավական հստակ է երևում, թեև կան թերի կողմեր:

ա) Կորչան: Դեռևս բանավոր տվյալները հավաստում են, թե Ղարաբաղի որոշ վայրերին հայտնի էր այս կեռափայտ գործիքը, որպես մարդու ուժով քաշվող նախարոր: Դրա դոյուլթյունը հարատեկ է մինչև XIX դարի վերջերը: Գործ էր ածվում արորի համար խիստ անմատչելի տեղերը փորփրելու համար: Սրա կառուցվածքը թեև ստույգ հայտնի չէ, բայց նմանեցվում է «վեսկու» համին (տախ. VII, նկ. 1)<sup>2</sup>:

<sup>1</sup> Մի այսպիսի «արոր» մեզ հայտնի է Չինաստանում, որ հասել է չինական փորագրողակների միջոցով, կատարված Դունխուանի քարայրային տաճարներից մեկի պատի վրա (X—XIII դդ.), Տե՛ս «Всемирная история», том III, М., 1957, стр. 280—281.

<sup>2</sup> Տեղեկությունները մեզ հաղորդել է Լեոնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղի բնակիչ Ասատուր Բարայանը, 1957-ին.



Ղարաբաղի որոշ տեղերում արորը հալանի էր «կեռ» անու-  
նով, որի աղերսը կորչանի հետ ակնհայտ է: «Կորչանն» է «կեռ»  
դարձել: Ամենանախնական շրջաններում կորչանը պետք է ենթա-  
դրել անմահ, պարզունակ գործիք: Ուշ ժամանակներում միայն, նրա  
կոր մասի վրա, որպես «սածիլ», «ծլում է» կարճ մահը, որի կյանքը  
պիտի հարատևեր երկար ժամանակ՝ մինչև «կըռը կութանի» (տախ.  
VII, նկ. 6) վախճանը:

Կորչան-կեռի համի հետագա զարգացման ընթացքում, ինչ-  
պես փաստական նյութերն են վկայում, առատամը կարող էր առա-  
ջանալ երկու ձևով՝ իբրև առանձին մաս, որ գոյանում է մահի հետ  
միասին (տախ. VII, նկ. 2) և ասլա փայտի բնական ճյուղի ձևով,  
որ դեռևս այսօր էլ գործածական է (տախ. VII, նկ. 3):

Վեսկու այս երկու ձևերն աշխատում էին 1—2 զույգ ելով,  
արորի ֆունկցիաներով: Խուփը կշռում էր 15 զրովանքա (6 կիլո-  
գրամ):

բ) Իր չափազանց դանդաղ զարգացման շնորհիվ Այունյաց  
վեսկին նույն ձևերով, բայց մի փոքր ավելի մեծ ծավալով, դառ-  
նում է այս բնաշխարհի՝ արորից դեպի գութանը ձգտող աստիճանը  
(տախ. VII, նկ. 4): Սա ունի ավելի մեծ խոփ, քան սովորական  
վեսկիները (հմմտ. Կարին-Ախալքալաբի «ջղլա»-ն, տախ. IV, նկ.  
5) և առատամի ու խոփի ավելի մեծ ականջներ: Մահը երկրոնա-  
կանի է, որովհետև 4—6 զույգ լծկանին մի ձևաբով զեկավարելն  
անկարելի էր:

Վեսկի-նախադուլթանն այժմ պահպանված է առավելապես  
Ջանդեղուրի կիրճային վայրերում, որտեղ արակտորն անկարող է  
մուտք գործել:

գ) Այդ վեսկի-նախադուլթանի առավել զարգացած ձևը, որ  
մինչև 10—12 զույգ կզներով էր բանեցվում, արդեն ուներ թուր  
(«թրափետ»), քսան զրովանքա (8 կիլոգրամ) կշռող մեծ խոփ, որ  
դարձյալ երկկողմանի ականջներ ուներ և ակոսը լայն բացող ու  
հողը թեղող զույգ տախտակներ: Վերջիններս մեխվում էին առա-  
տամի մեջ մտնող մասի երկու կողմերին՝ «ականջներ» անունով:  
Համի մեջ ձևափոխություն չի նկատվում, մահն ուղիղ ձող է՝ վերևի  
մասում խաչաձև նրան միացող մահբուսով, որի երկու ծայրն էլ  
օդադործում էին (տախ. VII, նկ. 5): Տարածված էր Գորխում,  
հնձորեակում և այլ վայրերում:

դ) Վեսկի նախադուլթանների այս տիպերին հաջորդում է ար-  
դեն գութանի ֆունկցիաներ ունեցող և «կութան» անվանվող գոր-

ծիրքը, որի երկու տեսակների վերաբերյալ փաստերը հայտնի են 1952 թ.: Գրանցից մեկը վերականգնել ենք Գորիսի ալևոր բնակիչների պատմածների ու դժադրումների հիման վրա, որ Տաթևում «կըռը կութան» անունն էր կրում (տախ. VII, նկ. 6): Այս գործիքի վրա կան թրի ու ձեռքի գոյացումները: Վեսկիներին և վեսկի-նախագութաններին հայտնի երկկողմանի (երկու ականջ ունեցող) խոփերին այստեղ արդեն փոխարինել է միակողմանի (միայն աջ կողմում ականջ ունեցող) խոփը, որ հայկական գութանի հատկանիշներից մեկն է:

Բնակչության հավաստումների համաձայն այս գութանի գոնե-լի դերը կատարում էին մաճկալի երկու օգնականները: Սրանք մեկական հաստ ձողերով կարգավորում էին վարող գործիքի ընթացքը: Խոր վարելիս օգնականները ձող-լծակները մտցնում էին համի տակ և վերցնում կամ շեղումներ կատարելիս դրանցով ուղղում էին: Այս երկու օգնականների և մաճկալի աշխատանքը ամենածանրագույնն էր Զանգեզուրում, երկրագործական բոլոր աշխատանքներում:


Այս գութանի ձևը գուցե կասկածելի թվար, եթե մենք Արծվանիկ գյուղի հին գերեզմանատանը շնկատելիք մոտավորապես XVII դարին պատկանող այն շիրմաքարը, որի հյուսիսային լանջին քանդակված է դրա հարադատ նմանակը (տախ. VII, նկ. 7)<sup>1</sup>: Արծվանիկցի ծերունի Գրիգոր Սահակյանը այս գործիքը անվանում էր «կըռը կութան», որպիսին նրա կրկնակի հավաստմամբ տարածված էր նաև Տաթևում և խիստ նման էր «կըռ» վեսկուն:

Ուշադրության է արժանի մաճի և թրի կառուցվածքի միանմանությունը, համը երկու մասից կազմված լինելը, երկուսի էլ աղերսը վեսկու հետ և դեռևս գոնե շունենալու հանգամանքը, ինչպես և առը շուռ տվող տախտակի բացակայությունը, որպիսիք «կըռը կութան»-ը վեսկուց ծաղեղու օգտին են խոսում:

և) Սլունյաց արտրախմբի դարդացման հաջորդ աստիճանը, ինչպես վկայում է գործիքը, Ղարաբաղում մինչև 1930-ական թթ.

<sup>1</sup> Վ. Արրահամյանն այս գութանի նկարը տպագրել է իր «Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ.» աշխատության մեջ (էջ 48), որտեղ գործիքը սխալմամբ «արոր» է անվանված (էջ 47, 48): Շիրմաքարը վերագրված է Սիսիանին: Հեղինակը շիրմաքարը համարում է XV դարի գործ, որպիսի կարծիքը մենք չենք բաժանում, որովհետև դա աչդրան հնություն չի պատկանում: Իսկ եթե խոսքը գութանի ձևին է վերաբերում, ուրախ ենք շատ հին անցյալի է պատկանում, քան գերեզմանաքարին ֆիկսացվելու ժամանակն է:

:(8-կզ, IIIA-թատ) մէ կող  
 -անմտն վկիտ նվկտմզ զգթ, զվկտթխտ սղմտղ մէ զտրղ նզտնտփ  
 -տէ խսջտյ կտողտտմտն ղ խսկտտթտտ նսխտ ստէ մնսջ շսսփսսթ  
 զտնտնտն շսնզղսն մվ զգնմտ ղմս մէ զ-«զտթխտկ» զտիղտնսջտն



ՏՆ. VII

Հավանորեն գուժանի այս տեսակն էր, որը Գորխում (Քարահունջ, Խոտ, Շինուհայր և այլն) կոչվում էր «ակնակութան» այսինքն՝ ակներ—գունել ունեցող գուժան, որին լծում էին 10—12 գույգ հզ:

Մեզ թվում է, որ Լուու գուժանը Ղարաբաղի հիշյալ գուժանի առավել զարգացած աստիճանն է, որն իր կատարելությունն է հասել Կարնո գուժանի ազդեցությամբ (տախ. VII, նկ. 9):

Այսուչափ արորախմբի առաջացման ու զարգացման վայրերն անտառապատ-թփապատ են: Սրա շնորհիվ այստեղ բոլոր արորներն ու նախագուժանները ծծոված են շափաղանց լայն սկզբնամաս ունեցող առատամներով: Երբեմն նախագուժան-վեսկու առատամի ականջների կամ սյուղերի միջև լայնությունը հասնում է 40 սմ (Արծվանիկ): Գրա ամենահասարակ արորատեսակի նույն տեղի միջին չափը 30 սմ է (Իջևան-Շամշաղին):

Լայնականջ առատամի դերն է՝ ակոսի հողը շրջել վարածի վրա: Այսպես է հատկապես նախագուժան-վեսկու ֆունկցիան՝ լանջերը վարելիս: Լանջի վարը կատարվում էր այն հաշվով, որ հողը շրջվեր միշտ դեպի ցած. այս դեպքում հողը շրջելու ֆունկցիան մերթ կատարում էր առատամի աջ, մերթ՝ ձախ ականջը:

Վեսկի-արորների և վեսկի-նախագուժանների ականջավոր առատամն առավելապես պիտանի էր թփուտներով հարուստ վայրերում: Ականջները խոփի օգնականներն էին. կիսով չափ կտրված արմատը լրիվ կտրվում էր ականջների օգնությամբ: Բայց միակտուր փաշախց ընտրված վեսկին, որ ավելի դիմացկուն էր, շէր ունենում նշված ականջները: Այդ պատճառով աշխատում էին ապահովել առատամի սկզբնամասի համապատասխան լայնությունը: Շամշաղինի շրջանում այս արորն ավելի հարգի էր:

Այսուչափ արորախմբում խոփերը ևս ծծոված են լայն ականջներով, դարձյալ բուսականությունն արմատախիլ անելու համար: Որոշ խոփեր պարզապես «ուսեր» ունեն, որոնք սկսվում են կոթառից անմիջապես հետո, ինչպես հայկական բահերը: Այս և առատամի հաստությունն են պատճառը, որ վեսկի նախագուժանները համարյա նույնքան քաշով ուժ են պահանջում, որքան թրով ու ձևիչով ծծովածները, որ արդեն միակողմանի մեծ խոփ ունեն:

Այսպիսով, ինչպես երևում է, անտառապատ վայրերում թեթև-վաքաշ արորները տեղի են սվել և իրենց գոյությունը շրջանումն էլ սակավ են հղել: Արծվանիկում վկայում են, թե Զանգեզուրում հզել են նույնիսկ մի մաճբուռով արորներ, որոնք շատ թեթև էին և «կրո»

անունն էին կրում: Արծվանիկի հին գերեզմանոցից գեպի հարավ ընկած բավական ընդարձակ տարածութեան վրա սովորաբար վարելիս են եղել «կըռով», ուստի մինչև այսօր էլ՝ այդ հողամասը «կըռավար» է կոչվում: Գյուղի մյուս հողամասերում պիտանի չինելու հետևանքով կըռը իր տեղը զիջում է հնագույն վեսկուն:

Վեսկիով վարելիս որոշ տեղեր, ինչպես Ղափանի գյուղերում, աշնանը երեք դույզ եզ էին լծում, իսկ դարնանը՝ չորս: Վարելահողերն անհարթ լինելու պատճառով Զանգեզուրում հոտազները լծին շէին նստում, այլ եղների արանքը մտած՝ քայլում էին խողանի վրայով և վարում: Մի բան, որ Հայաստանի մնացած վայրերում անծանոթ էր:



Մեզ հայտնի փաստական տվյալներից մնում է պարզել երկու գործիքների հարցը: Մեկը դա Արարատյան հարթավայրում բնակված պարսկահայերին հայտնի արորն է, ոսկի-վեսկի անունով (տախ. VII, նկ. 10): Դրա ծագման մասին ստույգ տեղեկություններ չունենք: Հայտնի է միայն, որ Պարսկահայքի, դավառներում ապրող հայերի արորաձևը դա է եղել: Ըստ բանավոր հավաստումների, Ատրպատականում, Ուրմիայում և այլ հայարնակ վայրերում պարսիկների արորն էլ այդ նույն ձևն ունի:

Կարելի է միայն ընդգծել այս վեսկու և կարնոհայերին հայտնի «հարոնա»-ի նմանությունը (տախ. IV, նկ. 4): Արդյոք դա որևէ ազդեցություն կրե՞լ է հարոնայից, թե՞ պարզապես, անկախ նրանից, բնական ճանապարհով, նախնական ձևերից անցում է կատարել գեպի գութանը, որպիսին երևում է նրա համի ծայրը մաճի հիմքի մեջ մտնելու հայտնի նշանից: Կարելի է ենթադրել, որ XVI դարի սկզբին, Շահ-Աբբասի վայրագ բռնազաղթի ժամանակ այս արորաձևին ծանոթ հայերի, դուցե Արարատյան հարթության բնակչության միջոցով, սույն արորատեսակը տարածում է գտել Պարսկաստանում:

Երկրորդ առեղծվածը վերաբերում է Սևանի ավազանում գրունըված և միայն լուսանկարով մեզ հայտնի արորաձև գութանին (տախ. VII, նկ. 11): Թեև դա լուսանկարված է Սևանի ավազանում XIX դարի վերջերին, բայց մենք կարծում ենք, որ այս գործիքը տեղական չէ, այլ մուտք է դործել Բուլանըխից՝ գաղթի ճանապարհով: Բենսեն ճիշտ այս նկարագիրն ունեցող գութանը Բուլանըխում

անվանում էր «անճար գութան»: Խոփը արորի է, ուստի և իրոք «անճար» է:

Եթե մեր այս ենթադրությունը սխալ է, ապա ստույգ չէ նաև թե դա Սյունյաց գութանի շղարդացած աստիճաններից մեկն է, որովհետև մի այդպիսի ենթադրության համար ևս հաստատուն փաստեր չունենք:

Ընդունել, որ այս արոր-գութանը Սևանի ավազանի սեփական գործիքն է, նույնպես սխալ է, որովհետև XIX դարի վերջերին այս ամբողջ տերիտորիայի հայտնի գութանը նույն կարնո գութանն էր:

Բրող և վարող առկա գործիքները և դրանց վերաբերյալ տվյալները շին բավարարում հայ գյուղական արտադրամիջոցների, այդ ամենակարևոր բնագավառը հետազոտողներին: Հետագա աշխատանքների շնորհիվ միայն հնարավոր կլիներ հանգել ցանկալի հետառվյուցների: Ելնելով մեր հնարավորություններից կարելի է հանգել հետևյալ նախնական եզրակացությունների.

1. Հայկական վարող գործիքներն ամենանախնական բրիչային գործիքների հետագա զարգացումն են: Բրիչային երկրագործության հետքերը Հայաստանում պահպանվում էին մինչև XIX դարի վերջերը և XX դարի սկզբները:

2. Հայկական վարող գործիքների երեք հիմնական խմբերն օժտված են անառարկելի տարրերություններով: Այդ խմբերից յուրաքանչյուրն ունի իր հաստատուն տերիտորիան, եթե նկատի չառնենք դադթավայրերը:

Ոչ մի տարակույս չի կարող լինել, որ գործիքների այդ երեք հիմնական խմբերը ներկայացնում են հայ ժողովրդի կազմավորման գործում զլիսավոր դեր խաղացած էթնիկական միավորները: Այդ խմբերի տերիտորիաները մոտավորապես համապատասխանում են հայասների, արմենների, ուրարտացիների և մյուսների բնակավայրերին, թեև պակասում են այն լրացուցիչ կովանները, որոնք թույլ կտային մեզ՝ վստահորեն ամեն մի գործիքախումբ որևէ էթնիկական միավորի կոնկրետ անունով կոչել:

Մեզ համար կարևոր է հաստատել, որ Բարձր Հայքի, Տարոնի, Ծոփքի ու նրա հյուսիսային գավառների, Վանա լճի ավազանի և Սյունիքի ու սրանց հարևան տերիտորիաների նախաբնիկները մեզ ներկայանում են իրենց՝ այն ժամանակվա համար ամենահիմնական արտադրամիջոցներով՝ արորներով ու գութաններով:

Ճիշտ նույնն են հաստատում նաև հայկական տարազի ձևերը, որոնք իրենց առկա տիպերով հիմնականում երեք գլխավոր խմբերի են բաժանվում: Պրանք են՝ Բարձր Հայքի տարազը՝ կարին կենտրոնով, Հարավային հայկական տարազը՝ վասպուրական կենտրոնով և Սյունյաց տարազը:

Ինչպես արոր-գութանների, այնպես էլ տարազի հիշյալ գլխավոր խմբերի ներսում կան բազմաթիվ ենթատեսակներ—երանդներ, որոնք, անկասկած, պայմանավորված են տոհմացեղային տարբերություններով, այն մանր ժողովրդախմբերով, որոնք հայ ժողովրդի կազմավորման շրջանում իրենց տրադիցիաներով մտնում էին նրա մեջ: Այլապես չի կարելի բացատրել, թեկուզ ամենանախնական բրիչ-բիրի անվան տարբերությունները Հայաստանի տարբեր գավառներում (բհիր-բիհի, բհրափետ, մալոխ-մալուխ, բըլրունք-փլունդ, սիխ, ցաց, մախառն, ջիլո, որոնք հետո միայն, գրական լեզվում—գրարարում արտահայտվեցին «բիր» տերմինով):

Այդպես են նաև հայկական տերիտորիալ լեզուները, իրենց խոսվածքներով:

Բերենք մի քանի օրինակներ գործիքներից, տարազաձևերից և բարբառներին:

1.

ա. Վեսիկ, ուղղաձող համով, տտանց ներբանի. թրավոր (տախ. IV, նկ. 1):

+  
բ. Ձարդերով հաղեցված երվներանց տարազ՝ մետաբյա ու բրդյա հնապուշն ասեղնադորձությամբ և երկու սևոի գլանաձև գլխարկներով:

= Վանո լճի տվադան (Ուրարտու):

+  
գ. Վանա բարբառ:

2.

ա. Հարոր, կոր պարանոց և ներբան ունեցող համով, որը թաղվում է ստատամի ակոսի մեջ. թրավոր (տախտ. IV, նկ. 3):

+  
բ. կարնո ընտիր, ոսկեհուս ասեղնադորձությամբ օժտված, եզերավոր անասունների և օձ-վիշապի տոտեմական նշաններ պահպանած տարազ:

= Բարձր Հայք (Հայասա):

+  
գ. կարնո բարբառ:

- ա. Վեսելի, կոր պաշտանոցով և երկու մասից պատ-  
րաստոված համով. անթուր (տախտ. VII, նկ. 2):
- †
- բ. Պարզ տարազ, եռափեշ վերաբերուով:
- †
- գ. Ղարարագի բարբառ:

= Սյունիք:

- ա. Հարոր-խարոր, մաճ-առատամով ու խիտ լայ-  
նականջ խովով: Անթուր (տախտ. V, նկ. 1 և 2):
- †
- բ. Պարզ տարազ, առանց ընդդեմի վարդարանը-  
ների:
- †
- գ. (Բարբառային ճշգրիտ վկայություն չունենք):

= Ծովաց աշխարհ:

Այս համեմատությունը պարզ ցույց է տալիս, որ նշված տե-  
րիտորիաներում հայ ժողովուրդն իր գյուղական արտադրամիջոց-  
ները (մասնավորապես նախատիպ արորները) և տարազի ձևերը  
պահպանել է մինչև XX դարի սկզբները: Այդպես՝ նաև բարբառ-  
ները:

Որքան էլ այդ արորատեսակներն ունեն տարբեր առանձնա-  
հատկություններ, համենայն դեպս դրանց վարդացած տեսակների  
մեջ ընդհանրությունները բավական ընդգծելի են: Եվ դա շատ հաս-  
կանալի է, որովհետև հասարակ արորներից առաջացած գործիքների  
կատարելագործումը տեղի է ունեցել հայ ժողովրդի ձեռքով, նրա  
ընդհանրության մեջ:

Բերենք մի քանի փաստեր:

Արորի թուրք, որ ուշ ժամանակի ծնունդ է, ամենուրեք նույն  
ձևն ու անունն ունի: Բացառությամբ ծովքյան խովերի, հայկական  
բոլոր խովերը նույն ձևն ու անունն են կրում: Արորը քանի դեպի  
գութանն է ձգտում, որոշ բացառություններով, նույնքան ընդհա-  
նուր է դառնում: Գութանը պարզապես համադրային բնույթ ունի  
թե՛ ձևով և թե՛ մասերի կոչումներով: Մենք հաստատ համոզված  
ենք, որ գութանի կառուցման գործում հայ ժողովրդի ստեղծագոր-  
ծական միջամտությունն ակնհայտ ու հաստատ է: Ուրարտացիներ-  
ը մեզ են հասցրել թե՛ արորի (տախտ. VI, նկ. 6) և թե՛ նախագու-  
թանի (տախտ. VI, նկ. 7) խովերը: Դրանք իրարից տարբերվում են

լոկ մեծութեամբ և ավելի նման են արորի, քան հայկական ժամանակակից գութանների խոփերին: Ուրարտացիների մոտ նախագութանի ոչ զարգացած լինելը վկայում է, որ հարևան մեծ երկրներում գութանի զարգացման աստիճանն ավելին լինել չէր կարող: Դա նշանակում է, որ մեզ հասած ուրարտական հասարակ գութանը լավագույն դեպքում կարող էր հասած լինել, ասենք, Սևանի ալագանում գտնված արորածե գութանի աստիճանին (տախ. VII, նկ. 11): Իսկ վերջինս էլ կատարյալ աստիճանի են հասցրել հայերը, ավելի քան երկու հազար տարիների ընթացքում:

Մենք, անկասկած, նկատի ունենք նաև հարևան ժողովուրդների հետ ունեցած կուլտուրական կապերը, որոնք մեծապես նպաստել են գործիքաշինության արհեստի ու արվեստի զարգացմանը:

В. А. БДОЯН

## АРМЯНСКИЕ МОТЫГИ И ПАХОТНЫЕ ОРУДИЯ В XIX ВЕКЕ

### Р е з ю м е

В статье автор пытается представить этнографические материалы по сравнению с данными археологии.

Выводы автора следующие:

1. До конца XIX в. в Армении сохранились следы мотыжного земледелия вместе со своими орудиями. В связи с горным рельефом страны соха и плуг не везде применялись, что явилось причиной использования и древнейших пахотных орудий, вплоть до мотыги.

2. Средства производства мотыжного земледелия можно делить на три основные группы: а) примитивные деревянные мотыги, используемые нажимом рук, б) ручные металлические мотыги с рукояткой, используемые ударом рук и в) металлические орудия—заступы и вилы с рукоятками, используемые ударом ноги.

3. Простые деревянные мотыги, первоначально без металлических накопечников, имели длину 30—50 см с диаметром 1,5—2 см. Использовались они для копки корней и овощей, а также как орудия для рассаживания и прополки. Эти орудия были известны под названиями *փլուկ*, *ծիբիղի*.

цац, махар и т. д. (табл. I, 1,2). В последующем во многих местах они превратились в скребки для заступа сохи и плуга и в прутья, которыми погоняли скотину (табл. I, 3, 4, 5, 6).

Более того, деревянные мотыги в дальнейшем достигли длины в 1 метр и, приняв форму копья, функционально использовались в тех же целях. В этом случае преимущество заключалось в том, что человек копал стоя и одновременно размельчал комья (табл. I, 7ш). Орудие, именуемое бир, или биби, имело металлический наконечник (табл. I, 7р).

4. В последующем первичную деревянную мотыгу заменило железное орудие с деревянной рукояткой—шехб. Эти орудия носили и другие названия (табл. I, 9 шр).

5. Простые орудия, действующие под нажимом руки, независимо от того, сделаны они из цельного дерева или имеют железные наконечники, являются предшественниками инструментов, действовавших под ударом руки или ноги.

Самым распространенным из орудий, действующих под ударом ноги, является лопата. Из дошедших до нас видов лопат Армянского нагорья имеются две яркие разновидности. Одна из них в верхней части широкая, длинная, с резко вогнутой лапой (табл. II, 4 ш); другая—почти четырехугольная, с незначительно вогнутой лапой (табл. II, 4 р).

Древнейшая лопата, найденная на Кармир-блуре, имеет урартское происхождение (табл. II, 1). Она походит на армянские лопаты, дошедшие до нас с VII века н. э. Одна из таких лопат найдена в Двине (табл. II, 2), а другая изваяна на стене собора Звартноц (табл. II, 3). Явную общность данных лопат с урартскими доказывает их местное происхождение. Использование данных лопат имело место во всех районах исторической Армении.

6. Данной лопате равноценен двузубец или трезубец с толстыми зубьями.

Аборигенам Армении металлический двузубец был известен еще в эпоху бронзы. Раскопанный в бассейне озера Севан бронзовый двузубец (табл. II, 5), древнейший железный трезубец из Гарни (табл. II, 6), а также разновидность урартских трезубцев (табл. II, 7 ш—найденный в Топрак-кале, 7 р и 7 г—на Кармир-блуре) не оставляют никакого сомнения

в том, что металлические вилы были довольно распространены в Армении как орудия для сбора сена и копки земли. По этим причинам часть их в свое время получила культовый характер.

Переселившиеся в Ахалкалаки каринские армяне до 20-х годов XX в. сохранили двузубец (табл. II, 8), прототип которого находим в одной из рукописей XVII в. (табл. II, 9).

7. Орудия, действующие под ударом руки, имеют два подвида: заступообразное орудие, известное под названием брнч или тнохр и имеющее теслообразное и топрообразное острие, землеройное тесло с односторонним острием. Первые—массивные и тяжелые, предназначены для рубки корней и копки твердых грунтов, а вторые—легкие, с широким лезвием, предназначены для копки и перемещения мягкого грунта (табл. II, 7—11).

Железные мотыги-кирки в Армении известны были еще до образования армянского этноса. Они обнаружены в Хртаноце (табл. III, 2) и Гарни (табл. III, 1). По своей форме похожи на мотыги-кирки, используемые, в частности, в северных районах Армении. В древнеармянской литературе эти орудия известны под названием кахтик, акур, дакур и пр. При наличии таких данных трудно согласиться с существующим мнением, будто найденное в Хртаноце киркообразное орудие (табл. III, 2) является топором скифского происхождения<sup>1</sup>.

С точки зрения сторонников мотыжного земледелия Сасун является для этого типичным районом. Здесь до 1900 г. сохранились тесла с одним (табл. III, 5) и двумя остриями (табл. III, 6), а также тяжелые мотыги, землеройное тесло (табл. III, 7), шехб (табл. I, 9 р) и другие средства производства, предназначенные для обработки земли.

8. В Армении тягловые пахотные орудия (соха и др.) многообразны. Каждое из них происходило от орудий, действовавших как под нажимом, так и под ударом руки и ноги, путем синтеза их функций.

Происхождение сохи-плуга в Армении имеет глубокую давность. Имеющиеся у нас материалы указывают на то, что их оформление закончилось еще до образования большой

<sup>1</sup> А. А. Мартиросян. Раскопки в Головинно, стр. 39.

племенной группы армянского народа. В последующем, когда эти племена, объединившись, образовали армянский народ, последний усовершенствовал дошедшие до него земледельческие орудия.

9. По данным армянской этнографии, за последнее столетие сохи делились на три группы. Одна из этих групп была распространена на сравнительно большей части территории Армении с границами: с востока—Кармир гет (Красная река) и Загросский хребет; с запада—Понтийские горы; с северанижнее течение реки Чорох до Палакайского озера, отсюда до точки соединения рек Аракс и Ахурян, затем до правого берега реки Тгмут; с юга—до Армянского Тавра.

Эта группа сох в своем составе имеет два основных варианта: сложные и простые. Первые распространены были в Высокой Армении, Тайке, Туруберане, а вторые—в бассейне озера Ван.

Обе эти группы условно называем «Каринно-Ванская группа сох». По-видимому, орудия, распространенные в пределах бассейна озера Ван (табл. IV, 1, 2) и Высокой Армении (табл. IV, 3), произошли и развивались одновременно и путем взаимного воздействия.

Каринская соха—харона (табл. IV, 4), по сравнению с вышеуказанными сохами, развилась позже и содержит в себе элементы плуга. Последующим ее непосредственным развитием мы считаем каринское орудие чыхла, которое фактически является прототипом плуга, имеет колёса и не имеет резака (табл. IV, 5). Лемех у него хотя и большой, но еще не приобрел форму лемеха плуга. Дальнейшее развитие чыхлы—армянский плуг (табл. IV, 6), у которого уши аратама (рабочая часть) выполняют функции доски, переворачивающей землю (табл. IV, 5).

Вторая разновидность сохи, распространенная в Карабахе, Зангезуре, Лори и Иджеванско-Шамшадинском районе, названа нами «Сюникская группа сох». Между последней, с одной стороны, и грузинской, азербайджанской и дагестанской, с другой,—имеется большая общность.

Сюникская соха не имеет стойки плуга, но в процессе перехода в плуг приобретает и стойку, и большой лемех.

Эволюция данной группы следующая:

а) Кырычан—первичная форма, которая по данным этнографических материалов тянулась руками человека.

Как простой крюк, он использовался для копки земли на недоступных для сохи местах (табл. VII, 1). В Карабахе существовала соха «кер» (происходит от названия кырычан). Результатом последующего развития дышла данного орудия является показанная на втором рисунке табл. VII соха, впоследствии изготовлявшаяся из природной древесины (табл. VII, 3).

В эту соху впрягались 1—2 пары волов.

б) Постепенно сюникская соха развивается до степени плуга (табл. VII, 4), у которого аратам (рабочая часть для переворачивания земли) имеет большие уши, а рукоятка двойная. Сюда впрягалось 4—6 пар волов.

в) Вески—более развитая форма прототипа плуга; приводилась в действие 10—12 парами волов, имела стойку и большой двухсторонний лемех весом в 8 кг. Данная соха имела пару досок для открытия широкой борозды (табл. VII, 5).

г) Вески в свою очередь сменяет срудне уже с функциями плуга, именуемое «гутан», т. е. плуг, на котором имеются зародыши стойки и резака (табл. VII, 6). Располагая свойственным плугу односторонним лемехом, этот плуг колес не имел, их функцию с трудом выполняли два человека при помощи рычагов. Впрягалось до 10 пар волов. Эту форму плуга мы видели на одном надгробном камне XVII в. в селе Арцваник Кафанского района (табл. VII, 7).

д) Следующую степень развития сюникских сох представляет существовавший в Карабахе до 1930-х годов плуг, который своим развитым лемехом, доской для переворачивания земли и рукояткой походит на каринский, хотя и намного проще его (табл. VII, 8).

Из-за недостатка материалов территориальное распространение третьей группы сох полностью не установлено. Нам пока известно, что эта группа сох находила применение в Малой Армении, Четвертой Армении (Цопк), Сасуне, Агцникке и на части территории Багеша (Битлис).

Имея в виду главенствующее расположение Цопка, эту

группу мы называем «цопской группой сох». Более развитые их виды встречаются у армян Каппадокии и Малой Азии. Данная группа имеет два основных типа сох, причем один из них довольно первобытный, а другой происходит и развит на основе первого. Первобытным считаем сгертскую соху, лемех которой сохранил форму мотыги (табл. V, 1 *р*), а также тигранакертскую, на рукоятке и дышле которой прикреплена жердь—«мостик» (табл. V, 2 *г*).

Следующей степенью развития указанных сох мы пока считаем соху, применяемую в Анкарской армянской колонии Ёзгат (табл. V, 3).

Более развитая и устойчивая подгруппа цопской группы сох была распространена в Балу (табл. V, 4), Харберде, Карине, Ахалкалаке, Армаше, Ёзгате (табл. V, 5).

В районе распространения цопской группы сох плуга не было.

10. Для карино-ванской и цопской группы сох основанием, по-видимому, явилась деревянная мотыга и происходившие от нее другие виды мотыги. Их эволюция представляется следующим образом:

а) Мотыга—«малух», являвшаяся самой первобытной (табл. VI, 1);

б) Пикообразная мотыга—развитая форма «малуха» (табл. VI, 2).

в) Пикообразная мотыга, превратившаяся в коготь (табл. VI, 3 *ш*), приводилась в действие силами одного-двух человек, тянувших за дышло, которое в дальнейшем получило название *хам* (табл. VI, 3*р*). При этом у прототипа сохи Высокой Армении коготь, стоявший в вертикальном положении (табл. VI, 4 *ш*), впоследствии превратился в рукоятку, а у цопской—одновременно и в рукоятку и в аратам (табл. VI, 5 *ш*). В обоих случаях первоначально влечимый силой человека коготь превращается в орудие, приспособленное для бычьей тяги, т. е. в соху (табл. IV, 1 и табл. V, 1).

г) На следующих ступенях их развития возникают аратам, стойка, развитые формы дышла, а в дальнейшем—плуг со всеми его частями.

11. Вообще имеющийся под рукой материал пока что не-

достаточен для того, чтобы иметь возможность всесторонне рассмотреть процесс развития мотыжного земледелия и тягловой силы орудий. Тем не менее, на основании имеющихся материалов, можем сделать некоторые выводы.

Из приведенных фактических данных видно, что все три группы развитых орудий, безусловно, различны. Каждая из этих групп имеет свою основную территорию. Не может быть никакого сомнения в том, что данные три группы орудий представляют этнические единицы, игравшие главную роль в формировании армянского народа. Территории этих групп приблизительно соответствуют местам жительства хайасов, арменов, урартийцев и других народностей, хотя нет дополнительных доводов, дающих возможность каждую группу уверенно и конкретно именовать по названию какой-либо этнической единицы.

О различии трех главных групп орудий по этническим признакам говорят также армянские формы одежды, которые делятся на четыре группы: формы одежды Высокой Армении с центром Карин, Южной Армении—с центром Васпуракан, Армянского Междуречья—с центром Цопк, Сюникскую—с центром Сюник.

Такое совпадение форм, средств производства и наречий закономерно. По этой причине в статье сопоставлены также формы одежд со своими различиями.

Данное сравнение показывает, что на указанных территориях характерные свойства своей культуры в сочетании с наречиями армянский народ сохранил до начала XX века.

Однако из сказанного нельзя заключить, что первобытная культура в армянском народе сохранилась без изменений.

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

## ԽԱՂՈՂԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջնադարյան Հայաստանի անտեսութեան մեջ կարևոր դեր էր խաղում այգեգործութիւնը, մասնավորապէս խաղողի որթի մշակումը կամ խաղողագործութիւնը: Գրավոր աղբյուրների և հնագիտական ուսումնասիրութիւնների ընձեռած նյութերը թույլ են տալիս բնութագրելու խաղողագործութեան տեղն ու դերը Հայկական լեռնաշխարհի բնակչութեան գրազմունքի և անտեսութեան մեջ՝ ուրարտական ժամանակներից սկսած:

Լայնորեն հայտնի են դարձել ուրարտական Ռեյշերայինի քաղաքի միջնաբերդում՝ Կարմիր բլուրի վրա, վերջին տարիների ընթացքում բացված գինու մառանները, որոնց մեջ գտնաւորված կարասների ընդհանուր տարողութիւնը անցնում է 400 հազար լիտրից: Գինու խոշոր մառանների և նորատունկ ընդարձակ այգիների վերաբերյալ զգալի թվով տեղեկութիւններ պահպանվել են ուրարտական թագաւորների թողած սեպագիր արձանագրութիւններում:

Խաղողագործութեան և գինեգործութեան վերաբերյալ բազմաթիւ արժեքավոր վկայութիւններ ցրված են հայկական գրավոր աղբյուրների էջերում (սկսած V դարից մինչև ուշ միջնադարը) և հայերեն վիմական արձանագրութիւններում:

Չեռադիր մատչանները և վիմական արձանագրութիւնները մեզ տվալներ են հասցրել այգիների տնկման, մշակման, հնձանների, գինի ստանալու և մառաններում՝ կտրատների ու հորերի մեջ պահելու վերաբերյալ: Շատ արժեքավոր են այգեգործութեան և գինեգործութեան հետ կապված մի շարք սոցիալական հարցերի՝ այն

է սեփականութեան իրավունքի, այգիների առ ու վաճառքի, նրանց եկամտոտից և գինու վաճառքից պանծվող հարկերի (խալա, բաժ) մասին եղած տեղեկութիւնները, որոնք հանդիպում են վիճական արձանագրութիւններում:

Խաղողագործութեան և գինեգործութեան պատմութիւնը ուսումնասիրողին բացառիկ արժեքավոր ամօլայնէր են տալիս նյութական կուտուրայի հուշարձանները՝ ճարտարապետական շէնքերի կոթողների, խաչքարերի, տապանաքարերի և այլ հուշարձանների վրա փորագրված հարուստ ու բազմազան քանդակները, ինչպէս և խաղողի վերամշակման և գինու պահպանման հետ կապված այն հուշարձանները, որոնք հայտնաբերվել են հնագիտական պեղումների շնորհիւ:

Խաղողագործութեան և գինեգործութեան պատմութեան հետ կապված հարցերի բազմազանութիւնը, մասնագիտական առանձնահատկութիւնները և աղբյուրների ցրվածութիւնը այդ հարցերով զբաղվողներից պահանջում են ուժերի միավորում և սերտ համագործակցութիւն, որին անշուշտ կնպաստի գյուղատնտեսութեան պատմութեան ուսումնասիրող Հանձնաժողովը:

Խաղողագործութեան և գինեգործութեան պատմութեան հետ կապված հարցերից մեր ներկա հաղորդման համար ընտրված թեման սահմանափակ է ու կոնկրետ: Խոսքը վերաբերում է խաղողի վերամշակման և գինու պահպանման հետ կապված այն մի քանի հնագիտական փաստերին, որոնք հայտնի են դարձել Գառնիի և Զվարթնոցի, Արուճի և այլ վայրերի պեղումների քննարկում: Այդ կապակցութեամբ կանգնողատնանք և խաղողագործութեան խաղաղած դերին:

Հանրահայտ է, որ խաղողի վերամշակման հիմնական պրոցեսը խաղողից քաղցու, ապա և գինի ստանալն է, որը մարդկութեանը հայտնի է անհիշելի ժամանակներից:

Ջրանցքների անցկացումը դաշտավայրերում, ուրարտական ժամանակներում, խոշոր շափով նպաստեց խաղողագործութեան և գինեգործութեան զարգացմանը. ուրարտական թագավորութեան տարբեր մասերում կառուցված գինու ընդարձակ մառաններում պահվող մեծ քանակութեամբ գինին այլևս չէր կարող ստացվել քարե, կավե կամ փայտե տաշտերում՝ խաղողը ճզմելու հղանակով, ինչպէս այդ արվում էր շատ ավելի առաջ, և հետագայում փոքրիկ տնտեսութիւններում: Անհրաժեշտ է դառնում պետական տրնտեսութեան մեջ, և իբրև հարկ ստացված մեծ քանակութեամբ

խաղողը վերամշակելու, և գինին պահպանելու հարմարանքների ու մասնանների ստեղծումը: Կարմիր-բլուրում գինու հսկայական մասնանների կողքին խաղող ձվմելու հնձան, դժբախտաբար դեռևս չի հայտնաբերվել, սակայն հնձանների գոյությունը այդ ժամանակաշրջանում կասկածի ենթակա չէ: Դրա օգտին են խոսում Կարմիր բլուրի մասնանները, ինչպես և երկրագործական այլ մթերքների, մասնավորապես բունջութի վերամշակման հետ կապված ավելի բարդ պրոցեսների պահանջող արտադրական այնպիսի ձեռնարկի գոյությունը, ինչպիսին էր ձիթհանը:

Հին Հայաստանում՝ Երվանդունիների, Արտաշեսյան և Արշակունյաց թագավորութայունների շրջանում ոռոգելի երկրագործութայան աճի հետ՝ աճում և զարգանում են նաև խաղողագործութայունն ու գինեգործութայունը: Հայաստանում արտադրվող գինին դեռևս Արեմենյանների ժամանակ դառնում է առևտրի առարկա<sup>1</sup>, իսկ քաղաքների առաջացումն ու զարգացումը հին (անտիկ շրջանի) Հայաստանում ավելի զարկ տվեցին դրան: Այդ հանգամանքը, ինչպես և պետական մասնավոր խոշոր տնտեսութայունների առկայությունը պահանջում էին մեծ քանակութայամբ խաղող վերամշակել հնձաններում:

Այսպիսով, հիմքեր կան ենթադրելու, թե հնձանները դեռևս հին ժամանակներում դարձել էին սովորական և տարածված երեվույթ, մանավանդ խոշոր տնտեսութայունների մեջ ու քաղաքներում, ինչպես այդ արվում էր Հին Հունաստանում և հելլենիստական աշխարհում: Սակայն այդ առթիվ հայ մատենագրութայան առաջին տեղեկութայունները վերաբերում են մեր թվականութայան երրորդ դարի վերջերին:

Ազաթանգեղոսը պատմելով Գայանե, Հռիփսիմե և մյուս կույսերի՝ Արևելյան Հռոմեական կայսրութայան սահմաններից Հայաստան գալու մասին, շարունակում է. «Յայնմ ժամանակի գային հասանէին յերկիրն հայոց, յԱյրարատ դաւառ, ի Վաղարշապատ քաղաք, դոր և Նորաքաղաքն կոչեն, նիստս թագաւորացն Հայոց: Այնուհետև եկեալ մտանէին ի հնձանայարկա այդեստանուցն, որ կան շինեալ ի հրախոյ յարեւելից կուսէ» («Այն ժամանակներում եկան հասան Հայոց երկիրը, Այրարատ գավառը, Վաղարշապատ քաղաքը, որը և Նորաքաղաք են կոչում, հայոց թագավորների նստավայրը: Այնուհետև գալով մտնում են այդեստանի հնձանահարկերը, որ

<sup>1</sup> Геродот. Herodoti. Historiarum libri IX, перевод с греческого Ф. Г. Мищенко, М., 1885, стр. 101 (I, 194).

շինված են (քաղաքի) հյուսիս-արևելյան կողմում)<sup>1</sup>: Գեռես հեթանոս Տրդատ Գ թագավորի կարգադրութեամբ փնտրում են կույսերին և գտնում Վաղարշապատ քաղաքում «ի հնձանս շինուածոցն»<sup>2</sup>:

Ագաթանգեղոսի այս վկայութիւններում «հնձանայարկ» և «հնձանս շինուածոցն» միևնույն իմաստն ունեն և նշանակում են, թե Վաղարշապատ քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, գտնվում էր խաղողի այգիներով հարուստ Այգեստանը, որտեղ եղած շինվածքների ներքնահարկերում զետեղված էին հնձանները: «Հնձանայարկ» և «հնձանս շինուածոցն» արտահայտութիւնները այլ կերպ հասկանալ չի կարելի:

Պիտի ասել, որ հին (անտիկ) ժամանակներում, ինչպես և միջին դարերում բնակելի, նույնիսկ պալատական շէնքերի ներքնահարկերում տնտեսական բաժանմունքների տեղադրված լինելը սովորական և բնական երևույթ է եղել և, ինչպես տեսնում ենք, նման տնտեսական բաժանմունքներից են եղել նաև հնձանները: Դրա վավագույն ապացույցը ունենք Գառնի ամրոցում:

Ամրոցի խորքում՝ հուշակավոր հեթանոսական տաճարից՝ ոչ հեռու գտնված մոզաիկ հատակով բազնիքին կից 1957 թ. հայտնաբերվել են պալատական կառույցների խմբի (կոմպլեքսի) մեջ մտնող մի նշանավոր շէնքի մնացորդները: Այս շէնքի պեղումները ցույց տվեցին, որ պահպանվել է նրա մի մասը՝ միայն, սակայն երևում է, որ գործ ունենք ամառանոցային-պալատական բնակելի շէնքի մնացորդների հետ: Շէնքը եղել է երկհարկանի, պահպանվել են միայն նկուղային հարկի պատերի ստորին շարքերը: Այս կառուցվածքը շինարարական տեխնիկայի առանձնահատկութիւններով հասակակից է բազնիքին, որը մոզաիկ պատկերներով և հնագիտական նշութերով թվագրվում է իրրև III դ. վերջերի հուշարձան: Նորահայտ շէնքը ունեցել է ներքին հետաքրքիր բաժանումներ, որոնցից մեկը եղել է հնձան: Դա մի փոքր սենյակ է 1,8×2,2 չափերի, որի հատակն ունի կրաշաղախի լիցքից պատրաստված ողորկ և ոչ ջրաթափանց մակերես, պատերը նույնպես ծածկված են եղել սվաղով, որի հետքերը նկատելի են: Հնձանը հարևան սենյակից անջատված է եղել մի ցածրադիր (մոտ 70 սմ բարձրութեան) պատով, որպեսզի կարելի լիներ խաղողը լցնել այդտեղ և ճզմել: Քաղցուն փոքր ինչ թեք մակարդակ ունեցող հատակից հոսելով՝

1 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիպիս, 1902, էջ 85:

2 Նույն տեղում, էջ 90:

ցածրագիր պատի տակ անցկացրած կալի փողրակով ծորում էր գեպի հարևան սենյակը և հավաքվում նրա շատ ավելի ցածրագիր հատակին դրվող անոթի մեջ: Այս երկրորդ սենյակը, ինչպես և մյուս սենյակները շատ ավելի ընդարձակ են և կարող էին ծառայել իբրև մատան:

Քն ինչ եղանակով են ճզմել խաղողը, դժվար է ասել, քանի որ մեր հնձանի կառուցվածքը թույլ էր տալիս այդ աշխատանքը կատարել, ամենապարզ եղանակով՝ օտքերով տրորելով, ինչպես և քարե ճզմիչի միջոցով:

Գառնիի պալատական շենքի ներքնահարկում խաղող ճզմելու հնձանի առկայությունը ասես կենդանի պատկերը լինի Ազաթան-գեղոսի հիշատակած հնձանահարկերի:

Գառնիում հայտնաբերված հնձանը մինչև այժմ հայտնի դարձածներից հնագույնն է (III դար), ուստի այն կարևոր նշանակություն ունի այս տիպի տնտեսական կառուցվածքները պատկերացնելու և ուսումնասիրելու տեսակետից: Այդ հնձանը ծառայել է թագավորական ընտանիքի առօրյա պահանջներին և այստեղ պատրաստվել է քաղցու և թարմ գինի:

Մի խումբ նշանավոր հնձանների մնացորդները բացվել են Զվարթնոցում՝ շուրջ հիսուն տարի առաջ, սակայն պետք է ասել, որ դրանք մինչև վերջին ժամանակներս չեն արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը:

Հայտնի է, որ Զվարթնոցում շենքեր եղել են VII դարի կեսերին, մինչև համանուն նշանավոր տաճարի կառուցումը: Զվարթնոցը հոգևորականներից բացի ունեցել է զգալի թվով բնակչություն, սրբ, Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ, օգտվում էր քաղաքային բնակչության իրավունքներից:

Պատմիչը խոսելով Զվարթնոցի շինության մասին ասում է, թե ներսես կաթողիկոսը, «կարգեալ կացուցաներ ի նմա ամբոխութիւնս երզումարդաց ըստ պայմանի քաղաքականաց...» (կարգելով բնակեցնում էր նրա մեջ երզումարդաց բաղմությունը՝ քաղաքային բնակչության պայմանի համաձայն)<sup>1</sup>:

Հարց է ծագում. ու՞մ էին պատկանում հնձանները և երբ են նրանք կառուցվել:

Այդ հարցի պատասխանը տալիս են հնձանները իրենց տիպով և տեղագրությամբ: Նրանք կազմում են մի միասնական խումբ՝

<sup>1</sup> Յովհաննէս կարողիկոս, Պատմութիւն, Երուսաղեմ, 1876, էջ 112—113:

իրար կից դասավորութեամբ և տեղադրված են տաճարը, կաթողիկոսական պալատն ու հարակից շինքերը շրջափակող պարսպի ներսում՝ հարավ-արևելյան կողմից, հիշյալ շինքերին շատ մոտ:

Եթե նրանք պատկանեին Զվարթնոցում բնակեցված առանձին բնակիչներին, ապա միևնույն շենքում, կողք-կողքի դասավորված մի ամբողջ խումբ չէին կազմի և վանքի պարսպի ներսում չէին լինի: Ուրեմն այդ հնձանները պատկանել են տաճարին, որն ունի իր սեփական տնտեսութունը և այգիները, որոնք տնկել են տաճարի կառուցումը ավարտելուց հետո: Սերեոսը պատմելով Զվարթնոցում Ներսես կաթողիկոսի կատարած շինարարութեան մասին, ասում է. «Եւ շինեաց զեկեղեցին բարձր շինուածովք և շքեաղ զարմանալեալք, արժանի աստուածային պատուոյն, որում նուիրեացն: Ած ջուր և երկր զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առապար, տրնկեաց այգիս և ծառատունկս...»<sup>1</sup>: Համարյա նույնն ասում է և Դրասխանակերտցին «...և ածեալ ջուր ի Քասաղ գետոյ՝ զամենայն առապարսիս արապար զաշտավայրն ի գործ արկանէր, տնկէր այգիս և բուրաստանս ծաղկոցաց»<sup>2</sup>: Նորատունկ այգիների ընդարձակութունը երևում է այն բանից, որ նրանք բռնել են «զամենայն վայրսն առապար» կամ «զամենայն առապարսիս արապար զաշտավայրն»: Պարզ է, որ խաղողի ընդարձակ այգիներից ստացվող բերքը վերամշակելու համար տաճարը պետք է ունենար սեփական հնձաններ, որոնք կառուցվել են տաճարի շինարարութունն ավարտելուց հետո, երբ «հայրապետն Ներսէս պարսպ անձին դեհալ. զարտաքոյս հրաշակերտ եկեղեցոյն՝ որ իւր իսկ էր շինեալ, շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ ի նմա հարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփած ու քարամբք»<sup>3</sup>:

Զվարթնոցի պեղումների շնորհիվ բացված հնձանները կազմում են մի ամբողջական կոմպլեքս, որի հարավային մասը համեմատաբար լավ է պահպանված: 56 կանգուն (29 մ) երկարութուն ունեցող շենքի այս մասում տեղադրված են երկու հնձան, շատ հարմարավետ կառուցվածքով: Յուրաքանչյուր հնձանի մեջ փորված է մեկական կլոր հոր, շարված սրբատաշ քարերով և սվաղված կրաշագախով: Սրանց մեջ հավաքվում էր քաղցուն: Յուրաքանչյուր հորի երկու կողմերում՝ զեպի արևելք և արևմուտք գտնվում են խաղող

1 Սերեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 120:

2 Յովհաննէս կաթողիկոս, էջ 113:

3 Նույն տեղում, էջ 112:

ճզմելու հարթակները, կրաշաղախով սվաղած հատակով և դեպի փոսը թևք մակարդակով: Քաղցուն հոսում էր հորերի մեջ նրանց շուրթերին հարմարեցված քարե կիսախողովակաձև նավերով:

Այսպիսով, շենքի հարավային մասում տեղավորված էին ոչ թե երկու սովորական հնձաններ, որոնք իրարից անջատվել են միջնորմով, այլ զույգ հարթակով երկու հնձան կամ արտադրական կարողության տեսակետից՝ փաստորեն չորս հնձան: Զույգ հարթակով հնձանների լայնքը 3,5 մ է, ընդհանուր երկարությունը 13,2 մ, բայց նրանք նույնպես իրարից անջատված են միջնորմով: Հարթակներից մեկը, որի մեջ տեղավորված է հորը, մյուսից երկար է ճիշտ այնքան, որքան տարածություն հարկավոր է եղել հորը կառուցելու համար, ուստի երկու հնձանների խաղող ճզմելու չորս հարթակներն էլ իրար հավասար են և նրանցից յուրաքանչյուրն ունեն 3,5 × 5,2 մ չափսեր կամ 18,2 քառակուսի մետր մակերես: Նրանք հարմարեցված են եղել մեծ քանակությամբ խաղող ճզմելու նպատակին: Քաղցուն հավաքելու հորերը բոլորակ են, ունեն 1,82 մ կամ 3,5 կանգուն տրամագիծ և նույնչափ էլ խորություն, այլ խոսքով՝ մոտ 4,7 խորանարդ մետր տարողություն, ուստի մի նվազով ճզմված խաղողի քաղցուն կաբող էր տեղավորվել նրանց մեջ:

Հնձանների կոմպլեքսի հյուսիսային մասում բացվել են նույնպես զույգ հարթակով և մի հորով (բայց ոչ թե բոլորակ այլ քառակուսի ձևի) հնձանի մնացորդները: Պատերի հետքերը այստեղ չեն պահպանվել, իսկ բացելու պահին լավ պահպանված հարթակի կրաշաղախ սվաղը այժմ քայքայված է:

Չորի քառակուսի բացվածքի կողը 1,82 մ է, այսինքն հավասար է մյուս հնձանների հորերի տրամագծին, թեև այս հնձանը քայքայված է և նրա ստույգ չափերը որոշելը դժվար, սակայն պարզ երևում է, որ դրանք լիովին համընկնում են նախորդ հնձանների չափերին: Քառակուսի ձևի շնորհիվ հորն ունի ավելի մեծ տարողություն՝ մոտ 5500 լիտր: Խաղող ճզմելու հարթակների լայնքն ու երկայնքը այստեղ էլ նույնն է՝ 3,5 × 5,2 = 18,2 մ: 1953 թ. այս թևում բացվեցին ևս երկու հնձան, 4800 և 2000 լիտր տարողությամբ հորերով:

Հյուսիսային և հարավային հնձանների միջև մնում է 6, 25 մ կամ 12 կանգուն լայնությամբ և ամբողջ շենքի երկարությունը

1 Վարազատ Հաբուրյունյան, Զվարթնոցի պալատն ու հարակից շենքերը. «Տեղեկագիր», № 12, 1962, էջ 57—60:

բռնող մի բակ կամ միջանցք, որը, ինչպես երևում է պեղված մի մասից, ավելի ցածրադիր հատակ է ունեցել և ծառայել է կամ իբրև մառան կամ խաղողով բեռնված սայլերն են մտել այստեղ: Ամբողջական կոմպլեքս կազմող այս շենքը ունեցել է 32,6 մետր երկայնք և 19 մետր լայնք:

Երկու՝ զուգ կալերով և երեք՝ մեկական կալով հնձանների այս նշանավոր կոմպլեքսը, որի հորերը կարող էին միանգամից տանել 25—30 տոննա խաղողի քաղցուն, արժանի են ավելի մանրազնին և բազմակողմանի ուսումնասիրության:

Առհասարակ ժամանակն է Զվարթնոցում հնագիտական պեղումներ ձեռնարկել այդ նշանավոր և լավ թվագրված հուշարձանի հնագիտական նյութը և նրանց շերտադրությունը պարզելու նպատակով, քանի որ եաչիկ Գաղջանը այդ հոշակապ տաճարի ավերակները բացելու շնորհակալ գործը կատարելով, տարաբախտաբար չի պահպանել հնագիտական պեղումների տարրական կանոնները և առավել նվազ ուշադրություն դարձնելով հնագիտական (ոչ ճարտարապետական) նյութերին՝ շատ բան իրար է խառնել:

Խաղողի վերամշակման հետ կապված հուշարձանների ժամանակադրորեն հաջորդ խումբը բացվել է նույնպես Գառնի ամրոցում: Առայժմ պեղված է ամրոցի մի փոքր մասը միայն, բայց արդեն հայտնաբերվել են ութ հնձանի մնացորդները, շահված անախկ շրջանի շենքի հնձանահարկը: Այս միջնադարյան հնձանները սովորաբար ունենում են նաև քաղցուն հավաքելու և դինին պահելու հորեր, բոլորովին այլ տիպի քան Զվարթնոցում, մի հնձանին կից պահպանվում էին կարասներով մառանի հետքերը:

Այս վերջին հնձանը, որը բացվել է 1952 թ. քաղկապած է երեք բաժանմունքից: Առաջինը բուն հնձանն է կրով սվաղված պատերով ու հատակով, սրն ունի թեք մակարդակ և մի փոսիկ, որտեղ հավաքվում էին քաղցուի մնացորդները: Ճզմվող խաղողի քաղցուն հատակի թեք մակարդակով հոսում էր դեպի սենյակի հյուսիս-արևմտյան անկյունը և այստեղից միջնորմի մեջ բացված անցքով թափվում երկրորդ բաժնի մեջ: Վերջինս մի փոքրիկ սենյակ է շատ ավելի ցածրադիր հատակով, որի վրա դրված անոթի մեջ հավաքվում էր առաջին բաժանմունքից պատի մեջ բացված անցքով հոսող քաղցուն: Այս երկրորդ բաժանմունքում, որը միացած է առաջինի հետ ցածրադիր պատով, հավանաբար, կարասների մեջ լցվելով պահվում էին և այն մնացորդները (չանչ կամ ճաճ), որոնք առաջանում էին խաղողը ճզմելու և քաղցուն անջատելու շնորհիվ:

երրորդ բաժանմունքում դասավորված էին հինգ խոշոր և մի կիսակարաս պատրաստի գինին, հավանաբար նաև օղին պահելու համար: Հնձանի այս երրորդ բաժանմունքը մառանն էր:

Գառնիի և այլ վայրերի հնձանների առավել բնորոշ տիպը, սակայն, հատակի տակ փորված մեծ հորերով հնձանն է: Նման հրնձաններից մեկը բացվել է 1950 թ. ամրոցի տերիտորիայի կենտրոնական մասում: Այն բաղկացած է երկու սենյակից կամ բաժանմունքից: Առաջին բաժանմունքը ծառայել է իբրև բուն հնձան, նրա հատակը սվաղված է կրաշաղախի հաստ շերտով և ունի թեք մակարդակ, որպեսզի խաղողը ձգմելիս քաղցուն հոսի դեպի հատակի ցածրագիր մասում փորված մեծ հորը, որը նույնպես սվաղված է կրի շերտով: Նույնպիսի սվաղ ունեցել են նաև առաջին սենյակի պատերը: Առաջին սենյակից դուրս տանում է դեպի երկրորդը, որը ծառայել է իբրև մառան, ըստ որում այստեղ կարող էին դասավորվել կարասներ, որոնց մեջ լցվելուց բացի գինին պահվել է նաև սենյակի հյուսիս-արևելյան անկյան մոտ հատակի տակ փորված մի մեծ հորի մեջ: Վերջինիս խորությունը 1,9 մ, տրամագիծը, լայն մասում՝ 1,4 մ, հատակի մոտ՝ 1,36 մ, քերանի բացվածքի տրամագիծը՝ 0,56 մ, հորի տարողությունն է մոտ 2200 լ: Մառանում բացվել են նույն մեծություն ևս երկու հորեր և գետնի մեջ թաղված մի փոքր կարաս: Հորերը շարված են անտաշ քարերից, բայց լավ սվաղված են հաստ կրաշերտով, նրանք ունեն կարասի ձև, բայց շատ լայն հատակ դեպի վեր նեղանալով ավարտվում են բոլորակ բերանով: Գրանք շատ ավելի խոշոր են քան կարասները: Հորերի պատերին երկու տեղով տարբեր բարձրությամբ դուրս են պրծնում շարվածքի քարերի ծայրերը, որով ոտքի հենարան է ստեղծվել հորի մեջ իջնելու և դուրս դալու համար:

Հորերի բերանը և եզրերը նույնպես սվաղված են հաստ կրաշերտով և ծածկված բաղալտից կամ տուֆ քարից շինված բոլորաձև, կենտրոնում լայն անցք ունեցող սալերով: Անցքը, որը փակվում էր տուֆ կամ բաղալտ քարից շինած լայն գլխարկ ունեցող խցանաձև կափարիչներով, խմորման ժամանակ բացվում էր, որպեսզի գազերը դուրս գան, իսկ խմորումից հետո փակվում էր: Անցքը ծառայում էր նաև հորից փոքր քանակությամբ գինի հանելու նպատակին: Գինին ամբողջությամբ դատարկելու կամ հորը մաքրելու համար վերցվում էր հորի բերանի սալը:

Երկու բաժանմունքով և յուրաքանչյուր բաժանմունքում մեկական հոր ունեցող երկու հնձան էլ բացվել են ամրոցի պարսպա-

պատի տակ՝ ներսից, այնպես, որ հորերը կպել են պատին՝ մեկը արևելյան պարիսպի երկրորդ աշտարակի մոտ<sup>1</sup>, համարյա պատի դիտին, որովհետև պատը կիսով չափ ավելված էր, իսկ մյուս հնձանը գտնվում էր հյուսիսային հինգերորդ աշտարակի ետևում՝ ներսից: Արևելյան երկրորդ աշտարակին կից հնձանի հորերից յուրաքանչյուրը ունի 2,1 մ խորություն, 1,72 տրամագիծ՝ լայն մասում, 1,66 մ հատակի մոտ, 0,86 մ եզրից, 40 սմ ցած և 0,60 մ կալմում է բերանի բացվածքը: Հորի տարողությունը հասնում է մոտ 3100—3200 լիտրի: Հյուսիսային հինգերորդ աշտարակին կից հնձանի հորերից յուրաքանչյուրն ունի 2,1 մ խորություն, 1,25—1,35 մ տրամագիծ՝ լայն մասում և 0,45 մ. կալմում է հորի բերանի քաջավածքի տրամագիծը: Հորերը ունեն մոտ 1900—2000 լիտր տարողություն:

Երկու հնձան դեռևս լրիվ չեն պիղված և նրանցից բացված է մեկական հոր, ըստ որում, եթե զույգ բաժանմունքներով և զույգ հորերով հնձանները պատկանում են ամրոցի կյանքի առավել ուշ շրջանին, այն է՝ XV—XVII դարերին, ապա դեռևս լրիվ չպիղված հնձանները հայտնաբերված են ավելի խորը շերտերում. նրանց վերին եզրերը 50—60 սմ ավելի խոր են գտնվում մյուս հնձանների հորերի վերին եզրերից: Հնարավոր է, որ այս հնձանները զույգ բաժանմունք և զույգ հորեր չունենան:

Զույգ հոր ունեցող հնձաններում հորերը թեև կառուցվածքով իրար նման են, բայց և ունեն էական տարբերություն. եթե երկրորդ բաժանմունքի հորը ունի հարթ հատակ, ապա առաջին բաժանմունքի, այսինքն բուն հնձանի հորի հատակի կենտրոնում փորված է լինում կիսաշրջանի կամ  $\frac{2}{3}$  շրջանի տեսք ունեցող մի փոս՝ հարմար, որպեսզի այստեղ հավաքվեր քաղցուի տիղմը: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, թե քաղցուն հավաքվում էր առաջին բաժանմունքի հորի մեջ և նստվածք տալուց հետո դեռևս շիմորված, բայց արդեն մաքրված վիճակում փոխադրվում էր մյուս հորի ու կարասների մեջ, որտեղ խմորվելով գինի էր դառնում:

Զույգ հորերով կառուցվածքների առկայությունը արևելյան երկրորդ և հյուսիսային հինգերորդ աշտարակների մոտ կարող էր

<sup>1</sup> Աշտարակները համարակալվում են հաջորդաբար հաշվելով մուտքից դեպի արևելք և դեպի արևմուտք, մուտքը պաշտպանում են արևելյան առաջին և հյուսիսային առաջին աշտարակները:

առաջացնել այն միտքը, թե հորերը ծառայել են իրրև շրջամբարներ ամբողջի պաշարման ժամանակ, սակայն հնձանների որոշակի մնացորդների առկայությունը այդ կետերում, ինչպես և ավելի լավ պահպանված հորերով հնձանների հայտարերումը Գառնի ամբողջի տարբեր մասերում և պարիսպ շունեցող այլ բնակավայրերում ու վանքերի բակերում տարակուսանք չեն թողնում, որ Գառնի ամբողջի հիշյալ երկու աշտարակների մոտ ևս եղել են հնձաններ: Այդ երկու հնձանները կառուցվել են ավելի ուշ ժամանակներում (XV—XVII դդ.), երբ ամբողջ ավերված էր և կորցրել էր իր դերը, ուստի և հնձանները իրենց մի մասով տեղադրված էին պարսպապատի վրա: Պարիսպը ներսից բաց անելու նպատակով անհրաժեշտ եղավ այդ հնձանների պարսպապատի վրա կառուցված հորը քանդել, որով հնարավոր դարձավ ուսումնասիրել հորերի կառուցվածքը: Նրանք շարված են անտաշ որձաքարից լցված կրաշաղախով և ներսից սվաղած դաճի տեսք ունեցող կրաշաղախի հաստ շերտով: Նման հորերը կարող էին քաղցուն կամ գինին ծծել իրենց պատերի մեջ, սակայն հին ժամանակներից ի վեր հայտնի է եղել կարասների և հորերը ներսից անասունի ճարսով կամ մեղրամոմով պատելու եղանակը, որի շնորհիվ փակվում էին կարասների կամ հորերի ներքին մակերեսի անցքերը և նրանք հեղուկ համարյա չէին ծծում: Հորերով հնձանների, ինչպես և կարասներով մառանների բազմաթիվ մնացորդներ հայտնաբերվել են նաև Գառնի ամբողջից դուրս համանուն գյուղի տարբեր թաղամասերում:

Գյուղի կենտրոնական հրապարակում լավ նկատելի են գետնի մեջ թաղված մի քանի կարասի մնացորդները՝ կողք-կողքի և քառակուսի կաղմող դասավորությամբ: Գյուղի հյուսիս-արևելյան ծայրում 1957 թ. բացվել է մառան 5 խոշոր կարասներով:

Ի տարբերություն Զվարթնոցի հնձանների, որոնք բոլորը դասավորված են միևնույն շենքում և պատկանել են խոշոր տնտեսություն ունեցող վանքին ու սպասարկել նրա պահանջները, Գառնի հնձանները կառուցված են իրարից անջատ, առանձին բնակիչների բնակարանային կոմպլեքսների մեջ և սպասարկել են նրանց ոչ խոշոր տնտեսության պահանջները:

Հասակի տակ հոր ունեցող հնձանները հատուկ չեն միայն Գառնիին: Նրանք ունեցել են լայն տարածում միջնադարյան Հայաստանում և կառուցվել են քաղաքներում, գյուղաքաղաքներում, վանքերում և այլուր: Նման հնձաններ ու հորեր մեզ հայտնի են Երևանում, Հալուց-թառում, Երվանդաշատի տերիտորիայում

դանվող միջնադարյան մի եկեղեցու բակում, Սաղմոսավանքում, Քանաքեռում, Զրվեժում և այլ վայրերում:

Հորերով հնձաններ բացվել են նաև Արուճում, ճարտարապետության թեկնածու Վ. Հարությունյանի պեղումների ժամանակ: Դրանք կառուցվել են VII դարի շենքերի ավերակների վրա շատ ավելի ուշ ժամանակներում:

Նման մի հնձան 1957 թ. բացվել էր Երևանի հյուսիս-արևելյան թաղամասում Մատենադարանի նորակառույց շենքից 200 մետր դեպի հարավ-արևմուտք, նոր կառուցվող բնակելի շենքի բակի հողը հեռացնելու ժամանակ: Էքսկավատորը արդեն քանդել էր հնձանը և հորի մի մասը. տեղում կարողացանք նկարել կրաշաղախ հատակով հնձանի մնացորդները միայն և չափադրեցինք հորը, որը կառուցվածքով և չափերով նման էր Գառնիի հնձանների առաջին բաժանմունքների (բուն հնձանի) հատակին կիսաշրջան փոսիկ ունեցող հորերին: Այդ հորի խորութունն էր 1,80 մ, արամագիծը ամենալայն մասում 1,57 մ, հատակի մոտ՝ 1,5 մ: Հորի հատակի փոսիկի խորութունը 0,3 մ էր: Աստիճանաբար նեղացող հորի վերին մասը քանդված էր<sup>1</sup>: Հնձանների և հորերի մնացորդներ բացվել են Երևանի այլ թաղամասերում ևս, օրինակ, Թումանյանի և Նալբանդյանի անվան փողոցների հատման մոտ, Աբովյան փողոցի վրա՝ պետրանիկի նոր շենքի բակում, Սարգարի պալատի մոտերքը:

• Զրվեժում հնձանի մնացորդները բացվել են այդ պուղի դաշտում գտնվող մի հին եկեղեցու ավերակների մեջ, որ պեղել է ճարտարապետ Ն. Մ. Տոկարսկին: VI դարի վերջերի և VII դարի սկզբների այդ եկեղեցին միջին դարերում ավերված է եղել և նրա ներսում փլատակների վրա կառուցվել է հնձան, որն ունի խաղողը ձգմիլու բաժին՝ փոքրիկ հորով և քաղցուն ու դինին պահելու բաժին, որի հատակին փորված են մի մեծ և մի փոքր հոր: Հորերը ծածկված են աուֆ քարից պատրաստված բլուրակ և կենտրոնում լայն անցք ունեցող սալերով ու խցանածե կափարիչներով, ինչպես Գառնիում: Գինու մառաններ հայտնաբերվել են նաև Դվին քաղաքի կենտրոնական թաղի պեղումների ժամանակ:

<sup>1</sup> Հորի խորութունը որոշված է հնձանի հատակից մինչև հորի հատակը չափելու միջոցով: Գտնվեց և հորի բերանին գրված բուրակի սալի 1/3-ը, որից երևում էր թե սալը ունեցել է մոտ 0,7 մ արամագիծ, ուստի հորի ներսի բացվածքը կարող էր ունենալ մոտ 0,6 մ արամագիծ:

Գինու հորերի (գուբ) սովորական լինելը միջին դարերում իր արտահայտությունն է գտել ժամանակի գրականության մեջ: Հովհաննես Դրասխանակերտցին, խոսելով այն մասին, որ առաջին Բագրատունիների ժամանակ արաբական ժանր լծից ազատված Հայաստանը շենանում և բարգավաճում էր, գրում է. «Թսկ աշխարհիս Հայաստանեայց յաւուրսն յայնոսիկ այց արարեալ Տեառն, և պատսպարեալ և յաջողեալ ի բոլոր բարութիւնս, բնակեցան իւրաքանչիւր սբ ի ժառանգութիւնս իւրեանց. և սեփհականեալ ղերկիր՝ տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաբոյ յիշոց և կթեցին պտուղս հարլուաւորս. ղեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հընձոց. լցան գուբք ղինւոյ ի կոթ այգեստանեայց. և լերինք ցնծութիւն ղգեցան, ղի բաղմացան ի նմա արօտականք անդեաջք արջառոցն և հօտք ոչխարաց»<sup>1</sup>:

Ստեփանոս Օրբելյանը պատմելով Սյունիքում՝ Եղեգիս իշխանանիստ դաստակերտում Սաջյան Յուսուֆ ամիրայի գործած ավերածությունների մասին ասում է, թե, երբ Սյունյաց Սմբատ իշխանը և իր մերձավորները վերադարձան իրենց տիրույթները շատ բան ավերված գտան. «տեսանէին նոքա քակեալ զարքունական ապարանսն իւրեանց, աւերեալ ղեկեղեցիս և անբնակ անապատացեալ ղմեծամեծ աւանսն և ղգեղեցիկ ղաստակերտն, ունենայնացեալ ղամբարս ցորենոյ և խորտակեալ ղգուբս ղինւոյ»<sup>2</sup>:

IX դարի երկրորդ կեսին Հայաստանում սկսված տնտեսական վերելքի՝ երկրագործության, արհեստների և առևտրի զարգացման, հին քաղաքների աճի և բաղմամբիվ նորերի առաջացման պայմաններում նոր զարկ են ստանում նաև խաղողագործությունն ու գինեգործությունը:

Մատենագրական տվյալները, վիմական արձանագրությունները և հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղողագործությունն ու գինեգործությունը ղգալի դեր են խաղացել ոչ միայն ղյուղի, այլև քաղաքի տնտեսության մեջ: Այգիներով և պարտեզներով շրջապատված էին բոլոր այն քաղաքները, որոնք գտնվում էին կլիմայական բարենպաստ պայմաններ ունեցող վայրերում: Հիշյալ աղբյուրներն ու կուլտուրայի հուշարձանները թույլ են տալիս պնդելու, որ խաղողագործությունն ու գինեգործությունը

<sup>1</sup> Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867, էջ 250—251:

<sup>2</sup> Պատմութիւն նահանգին Սիսական, տարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի, Թիֆլիս, 1910, էջ 193:

միջնադարյան Հայաստանում նախկինից ավելի բարձր մակարդակի հասան ֆեոդալական քաղաքի առաջացման և զարգացման ժամանակաշրջանում՝ IX—XIII դարերում: Գինու վաճառքը սովորական էր ոչ միայն քաղաքներում, այլև գյուղաքաղաքներում, կարավանային ճանապարհների վրա կառուցված պանդոկներում: Քաղաքներում առաջացել էին հատուկ գինետներ, որպիսիների գոյությունը գրավոր կերպով վկայված է անգամ Վասպուրականի Ոստան փոքրիկ քաղաքում<sup>1</sup>:

Հայաստանում արտադրվող գին են վաճառվում էր ոչ միայն ներքին շուկայում, այլև արտահանվում էր երկրից դուրս:

Խաղողագործությունից և գինեգործությունից զարգացումը միջին դարերում և նրանց դերը քաղաքների տնտեսությունից մեջ կարելի է պատկերացնել Գառնիի օրինակով: Մեծ թվով հնձանների և մառանների առկայությունը Գառնիում ինքնին պերճախոս փաստ է: Չէ որ մինչ այժմ հայտնի դարձած հնձաններն ու մառաններն իրականում եղածների մի շնչին մասն են փառվում: Մատենագրական և արձանագրական տվյալները նույնպես վկայում են, որ Գառնի գյուղաքաղաքը հայտնի է եղել իր այգեգործությամբ:

Ստեփանոս Օրբելյանը, պատմելով Սեանի կղզու վրա սբ. Աստվածածին և Առաքելոց եկեղեցիների կառուցման ավարտի (874) մասին, թվարկում է նաև այն գյուղերն ու կալվածքները, որոնք նվիրաբերվեցին այդ եկեղեցիներին, դրանց թվում հիշատակում է նաև «այգիս ի Գառնի և յՆրեան և յայլ տեղիս»<sup>2</sup>:

901 թ. ավարտվում է Սեանա լճի ափին գտնվող Մաքենոցաց վանքի կառուցումը և սյունյայ իշխան Գրիգոր Ստեփանը վանքին նվիրում է կալվածներ, գրամական հասույթներ ձկնորսարանների կապալից, նաև «հինգ կուղալակ յԱնի և հինգ այգի յՆրեան և հինգ հարիւր առու այգի ի դիւղաքաղաքն Գառնի և երկու այգի յՆղեղիս»<sup>3</sup>:

«Տանձո լանջի», «Թամղո տակի» և «Խակածորի» այգիները, որոնք գտնվում էին Գառնո գարավանդի վրա և ձորերում՝ հիշատակված են Գառնիի նվիրատվական արձանագրությունների մեջ:

Գառնի գյուղաքաղաքն ուներ իր արհեստագործությունը և շուկան: Այստեղ վաճառքի էին հանվում տեղական արտադրության առարկաներ, դրանց թվում մետաղյա իրեր անջնարակ և ջնարակած

1 Տե՛ս Насир-и Хосрау, Сафарнамэ, М.—Л., 1933, стр. 38.

2 Ստեփանոս Օրբելյան, էջ 174:

3 «Վիմական տարեգիր հայոց», էջ 5: Տե՛ս նաև Ստեփանոս Օրբելյան, էջ 179:

(զլաղուրած) խեցեղեն, գյուղատնտեսական մթերքներ՝ նաև գինի։ Գառնիում կալին հարկահան-տամղատարներ, որոնք հարկեր էին գանձում արհեստավորներից, ջրաղացատերերից, ինչպես և գինու վաճառքից։ Գինու վաճառքից գանձվող հարկը կոչվում էր «բաժ գինոյ»։

1291 թ. մի արձանագրության մեջ, որը փորագրվել է Գառնիի հեթանոսական տաճարի մուտքի պարակալի վրա, դեռևս տաճարի կանդուն ժամանակ Գառնո տեր խոշաք իշխանուհու և նրա որդի Ա-միր Զաբարեի անունից, ասվում է, թե նրանք վերացրել են Գառնիի բնակչությանից գանձվող եղան և ոչխարի հարկերը, ապա շարունակվում է «վերուցաք և զգինո բաժն»։

Ղազան խանի հարկային բարենորոգություններին նախորդող նման միջոցառումները Հայաստանում և Վրաստանում ինքնին պատմագիտական խոշոր արժեք ունեն, սակայն դրանք նույնքան վաղանցուկ էին, որքան Ղազան խանի ձեռնարկած միջոցառումները, որոնց նպատակն էր կասեցնել երկրի տնտեսական քայքայումը, բարձրացնել բնակչության հարկատվական ունակությունը և վերստին լցնել մոնղոլական պետության դատարկված գանձարանը։

Գառնիում վերացված գինու բաժն էլ շատ շուտով սկսեցին վերստին գանձել։ 1315 թվականին նորից արձանագրություն են փորագրում գինու վաճառքի հարկը (այս անգամ տամղա կոչված) վերացնելու մասին, բայց իրրև բացառություն, հօդուտ Գառնիի Սամպենց կոչվող վանքի, որը, ինչպես երևում է արձանագրություններից, խոշոր կալվածներ, մառաններ, ջրաղացներ ուներ և աշխույժ մասնակցություն էր ցուցաբերում այդ գյուղաքաղաքում կատարվող առևտրին։

1315 թվականը կրող այդ արձանագրության մեջ ասվում է.

«Շնորհիւն աստուծոյ ես Յոհաննէս որդի Տիրատրո և ես վանականս որդի Յովհաննիսի Գառնոյ տամղատարքս... վերացաք զՍունպենց վանիցս զհասարակաց գինո և զամենայն ցեղ վաճառի տամղա և ջրաղացի մահկանա որ սբ. Աստուածածնիս լուսացալիսի...»։

Խաղողագործության բռնած տեղի, խաղողի վերամշակման, գինեգործության ու գինու վաճառքի և հարակից սոցիալական հարցերի ամբողջությունը ավելի մեծ չափերով վերարկերում էր Դվինին, Նրևանին, Վանին, Ոստանին, Երզնկային, Նիբոկերտին և մյուս քաղաքներին, որոնք հանդիսանում էին ավելի խոշոր քաղաքային

կենտրոններ և ավելի աչքի էին ընկնում նաև իրենց այգեգործութ-  
յամբ:

Մատենադրական աղբյուրներում մանավանդ վիմական արձա-  
նագրություններում այնքան էլ սակավ չեն այնպիսի տեղեկություն-  
ներ, որոնք վերաբերում են խաղողի այգիներ տնկելուն, մշակելուն,  
հնձան և կարաս օրհնելուն, այգիները նվիրաբերելուն և վաճառե-  
լուն (գնված այգին կոչվում էր «գանձագին»), այգիների բերքից և  
դինու վաճառքից հարկեր գանձելուն: Այդ տեղեկությունները շատ  
արժեքավոր են խաղողագործության պատմության համար, բայց  
դրանց քննարկումը մեր ներկա հաղորդման նպատակից դուրս է:  
Մենք կկամենայինք ընդգծել միայն այն, որ քաղաքների աճի և  
առևտրի զարգացման հետ կապված աճում է պահանջարկը այգե-  
գործական մթերքների նկատմամբ և այգեգործությունը՝ երկրագոր-  
ծության այդ առավել սիրելի և առավել հկամտաբեր ճյուղը դառ-  
նում է ընդհանուր և հատուկ ուշադրության առարկա: Շատ այգի-  
ներ են տնկվում նոր յուրացվող հողերում, որոնք «հերկվում էին  
արտաքո փշոց» և կոչվում «նորք», բարելավվում էր այգիների  
մշակումը, հոգ էր տարվում այգիների բերքի ոչ միայն քանակի,  
այլև որակի բարձրացման ուղղությամբ՝ լավ տեսակների տնկիչների  
ընտրության, մշակման, պատվաստի և բուժման միջոցառում-  
ների նկատմամբ:

Ներսես Շնորհալին իր Էնդհանրական թղթում ասում է, թե  
նույնիսկ հոգևորականները տարվելով աշխարհիկ բարբերով,  
իրենց այգիների մասին ավելի էին մտածում, քան հոգևոր գործե-  
րի, և այս կապակցությամբ տալիս է վերին աստիճանի հետաքրք-  
րի տեղեկություններ այգեգործության վերաբերյալ: Նա գրում է.  
«Քանի որ մենք տեսնում ենք շատերին աստվածային սիրուց ցպ-  
մաքած և քանի որ մեկը մյուսից ավելի բարի նախանձով շարժված  
չէ բարձրագույն առաքինություններ ձեռնարկելու մեջ, ինչպես ա-  
ռաջին հայրերը, այլ մեր նախանձախնդրությունը հակառակ է վերա-  
բերում նրանց, այսինքն թե՛ ո՞վ քան ընկերները ավելի ընդարձակ  
տեղում և պարարտ հողում կտնկի այգի և, թե ի՞նչպես պետք է  
իմաստությամբ սնուցանե նոր տնկիչները: Եվ փոխանակ առաքի-  
նության արվեստը ուսանելու միմյանցից, այգեգործության հնարք-  
ների մեջ են վարժվում՝ անհմուտները առավել հմուտներից»<sup>1</sup>:

<sup>1</sup> Թուղթ Էնդհանրական արտրեսալ երիցս երանեսալ սք. Հայրապետին մերոյ  
տեառն Ներսիսի Շնորհալոյ, էջմիածին, 1865, էջ 29:

Այնուհետև Շնորհալին ձվում է այդ հնարներից մի քանիսը:

«Հարկավոր է, ասում են, այսքանը և այսպիսի եղանակով վաստակել եզներով և բրեկ ձեռքով՝ բրիչներով և բահերով, և անկիններին վնասակար արմատները և բույսերը արմատախիլ անել... Այլև հատանելու (կտելու) կերպը այդ իմաստունների մոտ տարբերակված է՝ ըստ տնկիների տեսակի, քանի որ մի քանիսը արմատի մոտից, մյուսները հեռվից են կտրում. մի մասի վրա քիչ ճյուղեր են թողնում իսկ մյուս կեսի վրա ավելի շատ և այս ամենը, որպեսզի այգիները ավելի շատ պտղաբերեն և դինու շափն ու քանակը ավելի ևս աճեցնեն: Էլ չեմ ասում պատվաստելու հնարների մասին՝ մեկը մյուսին՝ դերազանցում է հնարագիտությամբ, նաև աշխատելու ջերմեռանդության մասին, որովհետև ոմանք աշխատելու ժամանակի համար անգամ ցերեկը բավական չեն համարում և գիշերն էլ խառնում են տվնջյան հետ»<sup>1</sup>:

Շնորհալու ասելով մարդիկ այնպիսի ջերմեռանդությամբ են տարված այգեգործությամբ, որ «երբ հանդիպում են միմյանց այգիների տերերը, այլև այլ վայրերի կրոնավորները, ողջունից հետո ոչ հոգիների ողջութունից են հարցնում և հիվանդութունների ախտերից, և ոչ դիվական պատերազմներից ու խաղաղությունից, ոչ էլ թե ինչպես պիտի ստանանք արտասովելու շնորհք ազդեցելու ժամանակ, այլ թե այս տարի, ով եղբայր, ինչպես է քո տնկիների պտղաբերությունը, առավել է թե նվազ: Եվ նա թախծալի սրտով պատասխանում է, ինչ ասեմ (ասում է) պատահած աղետների մասին, քանի որ մի մասը ճճիներից վնասվեց, մի մասի ծաղիկները թափվեցին և մյուսներն էլ արևակեղ լինելով ողկուչդի վրա չորացան և կեսն էլ նեխությամբ ապականվեց և թե ինչ պիտի անեմ՝ չգիտեմ ելքը այս պատահած վտանգներից: Եվ ընկերը թե՛լադիբ լինելով նրան՝ խրատ է տալիս՝ մի մասը պատվաստել այն տնկիներից, որոնք պտղակորույս են լինում և մյուսները դանազան փորձված հնարքներով բուժել պատահած հիվանդութուններից»<sup>2</sup>:

Շնորհալին հզակի հեղինակը չէ, սրբ խոսում է խաղողի այգու մշակման միջոցների՝ փորելու, պարարտացման, մոլախոտերի հեռացման, էտելու և հիվանդութուններից բժշկելու մասին: Ֆրիկի բանաստեղծութուններից մեկում, լավ բերք տալու համար այգին պահանջում է այգեգործից.

<sup>1</sup> Թուղթ Ընդհանրական արարեալ երիցս երանեալ սր. Հայրապետին մերոյ տեառն ներսիսի Շնորհալույ, էջմիածին, 1865, էջ 29—30:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 30—31:

Զիս յօտէ և խոր փորէ,  
Որ ևս դարթչիմ գուարթանամ...  
Առողա յորդ վտակով,  
Որ կանչեմ և մանկանամ...  
Յիս սընոյ և դարմանէ,  
Որ ի ժամու պտուղ քեզ տամ՝:

Ներսես Շնորհալուց և Գրիկից մեջ բերված հատվածներում հաջորդաբար թվարկված են խաղողի այգու մշակման մի շարք հիմնական միջոցառումները, այն է՝ էսելը, դարնան զարթոնքի նախօրյակին այգին կամ խաղողի որթը պետք է էտել («հատանել»)՝ «յօտէլ»)՝ բնին մոտ կամ հեռու, շատ ճշուղ թողնել կամ քիչ՝ նայած նրա տեսակին և ալգետիրոջ նպատակադրմանը:

Փորել («խոր փորէ») խաղողի բարձր բերքի համար ամենուկարևոր միջոցն է այգին խորը փորելը, որով խոնավությունը պահվում է հողի մեջ և որթը կարող է մշտապես լավ սնունդ ստանալ, մոլախոտերն էլ ոչնչացվում են:

Զրել (տոռել)՝ «առողա յորդ վտակով».

Պարարտացնել («չիս սնոյ».)

Մոլախոտերը հեռացնել՝ տնկիներին վնասակար արմատները և բույսերը «արմատաքի խել».

Պատվատել՝ ըստ որում խոսվում է մեծ հնարագիտությամբ պատվաստելու մասին, որով կարելի էր բարելավել մրդի տեսակը, նրա որակը և բերքատու դարձնել հոռացած, ծաղկաթափ ու պտղակորույս լինող որթերն ու ծառերը:

Թժչել՝ որթերը և ծառերը այլևայլ ճճիներից՝ վնասատուներից և հիվանդություններից պահպանելու փորձված հնարքներով բուժելը:

Սրանք խաղողագործության մեջ անհրաժեշտ այն հիմնական ագրոտեխնիկական միջոցառումներից են, որոնց հմուտ կիրառումը այսօր էլ հանդիսանում է այգու բարձր բերքատվության գրավականը: Իհարկե, շատ բան է փոխվել և զարգացել, երևան են հիկել ագրոտեխնիկական միջոցառումներ, փոխվել են մանավանդ, դրբանց գործարության ձևերն ու եղանակները, դրանց համար անհրաժեշտ գործիքներն ու նյութերը: Սակայն ժողովրդի դարավոր փորձը այգեկործության բնագավառում ունի ոչ միայն պատմական, այլև կիրառական նշանակություն:

1 Գրիկ, Բանաստեղծություններ, էջ 66—67:

*Մեջբերված հնագիտական և մատենագրական տվյալները ամբողջի մի փոքր մասն են կազմում, բայց դրանք էլ խիստ ուշագրավ են երկրագործության պատմության համար և հաստատում են մեր եզրակացությունը՝ թե այգեգործությունն ու գինեգործությունը միջնադարյան Հայաստանում համեմատաբար ավելի բարձր մակարդակի հասան IX—XIII դարերում՝ քաղաքների և առևտրի զարգացման շնորհիվ, երբ այգեգործության վերամշակված արտադրանքը զգալի չափով սպասարկում էր շուկայի պահանջարկը:*

Б. Н. Аракелян

Переработка винограда в средневековой Армении

(Резюме)

В экономике средневековой Армении большую роль играли садоводство, в частности, виноградарство. Население Армении имело большие традиции по возделыванию фруктовых садов и виноградников. Эти традиции достаточно хорошо прослеживаются начиная с урартской эпохи вплоть до наших дней. Раскопками на Кармир-блуре открыты погребы с карасами, предназначенные для хранения огромного количества вина. До нас дошел ряд урартских надписей, свидетельствующих о насаждении фруктовых садов и виноградников, а также о строительстве винных погребов. Множество ценных сведений о садоводстве и виноделии содержат армянские литературные памятники, начиная с V в. и до позднего средневековья. Ценный материал по этому вопросу дает также археологическое изучение античных, средневековых городов, поселений и крепостей Армении.

Садоводство и виноделие было развито и в древней или античной Армении. Города и поселения древней Армении были окружены виноградниками и фруктовыми садами. Для переработки большого количества винограда, вероятно еще в урартский период, возникают так называемые һндзаны (*հնձան*)—давилни винограда. Первые письменные сведения о них встречаются в армянских источниках V века.

Историк Агафангел упоминает һндзаны в Вагаршапате,

размещенные в подвальных этажах сооружений северо-восточной части города. О распространении этого явления говорит применение термина *հնձանահարկ* (*հնձանահարկ*)—*հնձանային* этаж, равнозначного подвальному этажу.

Наличие *հնձան* в подвальных этажах получило свое подтверждение также раскопками крепости Гарни. Здесь в 1957 г. обнаружены остатки двухэтажного сооружения III в., входившего в дворцовый комплекс, в подвальном этаже которого, в числе хозяйственных помещений, имеется и небольшая *давилня* винограда—*հնձան*. Пол *давилни* размерами 1,8×2,2 м залит толстым слоем известкового раствора с исключительно гладкой поверхностью. Это помещение отделено от соседнего большого помещения—погребка стеной высотой около 0,70 м. Сок с *давилни* протекал в соседнюю комнату через гончарную трубу, вставленную в упомянутую стену, и собирался в чане или другом сосуде, поставленном на полу погребка, уровень которого гораздо ниже уровня пола *давилни*.

Эта небольшая *давилня*, размещенная в подвальном этаже дворцового сооружения в летней резиденции армянских царей, обслуживала только каждодневные потребности двора.

Другое назначение имели *давилни*, построенные в монастырском комплексе Звартноца. Здесь при раскопках еще в начале XX века обнаружены остатки целого комплекса *давилен*.

В специальном, вытянутом с востока на запад сооружении, в южном и северном его крыльях построено несколько *давилен* (в комплексе открыто всего пять *давилен*). *Давилни* южного крыла сооружения открыты полностью,—это две парные *давилни* весьма рациональной постройки. В середине каждой парной *давилни* помещается большая яма цилиндрической формы, емкостью в 4700 л. Ямы сложены из чисто тесаных камней и смазаны известковым раствором.

По восточной и западной сторонам этих ям расположены помещения прямоугольной формы, отделенные друг от друга перегородкой; полы помещений, размерами 3,5×5,2 м, залитые известковым раствором, служили собственно *давилней*. Отделившийся от винограда сок с обеих помещений стекал по

наклонной поверхности пола в яму через установленные по восточным и западным краям ямы каменные стоки. Таким образом, возле двух ям были четыре площади по 18,2 кв. метра каждый, на которых выдавливался виноград.

В северном крыле помещения открыты три непарных давильни с ямой квадратной формы, емкостью 5500 литров (яма в давильне западного конца), 4800 литров (яма центральной давильни) и 200 литров (яма давильни восточного конца).

В Звартноцских давильнях можно было за один прием выдавливать до 25—30 тонн винограда, а это значит, что они обслуживали нужды большого монастырского хозяйства. Письменные источники сохранили сведения об обширных площадях виноградников в окрестностях Звартноца, принадлежащих этому монастырю.

В период арабского владычества в Армении в VII—IX вв. хозяйственная жизнь страны в целом, в том числе также виноградарство и виноделие, потерпели серьезный урон. Но с конца IX в. в стране начинается новый экономический подъем: проводятся новые каналы, насаждаются виноградники и фруктовые сады на вновь освоенных землях. С возникновением и ростом феодального города растет потребность в продуктах, получаемых от садоводства. Виноградарство и виноделие достигают нового, до того небывалого, уровня. Садами окружаются поселения и города. Виноградарство занимает значительное место в хозяйстве крупных феодалов, монастырей, городской верхушки, мецатунов, а также горожан среднего состояния. Широкое распространение получают и һндзаны и винные погреба, которые строятся не только при больших хозяйствах, но и при жилищных комплексах в селах, поселениях городского типа и городах.

В этом отношении весьма показательны результаты археологических работ в крепости Гарни. Раскопана незначительная часть крепости, но уже обнаружены остатки восьми һндзанов. Все они входили в жилищные комплексы обитателей крепости. Одна из һндзанов—давилен состоит из трех отделений: собственно давильни, маленького среднего помещения с низким, по сравнению с давильней, полом, на котором стави-

лись сосуды для собирания стекающего сюда сока, и из погреба, в котором находилось пять больших карасов для хранения вина и один полукарас.

С IX—X вв. возникают давяльни нового типа—это *Һндзаны* с ямами. Они обычно состоят из двух отделений, в каждом из которых вырыто по одной большой яме, которые сложены из камней и хорошо смазаны толстым слоем известкового раствора. Яма первого отделения, где выдавливался виноград, отличается от ямы второго отделения—погреба тем, что на ее дне сделано углубление полусферической формы, диаметром 40—60 см и глубиной 25—35 см. Это обстоятельство позволяет полагать, что сок в этой яме оставлялся на короткое время и перемешался в другую яму сейчас же после того, как он давал осадок. Это позволяло получить прозрачное, почти свободное от осадков вино в яме и карасах второго отделения.

Ямы перекрывались каменными плитами круглой формы с широким отверстием в середине. Отверстие закупоривалось каменной «пробкой», которая снималась во время брожения, для выхода газов.

*Һндзаны* с ямами получили весьма широкое распространение и стали преобладающими. Остатки нескольких таких *Һндзанов* обнаружены во время строительных работ в Ереване, издревле явившемся крупным центром виноградарства и виноделия, в Аруче, поселении городского типа, в средние века, в Канакире, селении Джрвеж, где для давяльни были использованы развалины храма конца VII в.

Любопытно, что в Джрвеже кроме двух больших ям имеется и третья, маленькая яма, в которой, вероятно, собирали остатки выдавленного винограда—чачу, которую также в ходе работ перемещали в карасы для получения из нее водки.

С ростом средневекового города и развитием торговли вино занимает значительное место в торговле, его в большом количестве вывозят из Армении. Вино продавалось на городских рынках и кабаках (*գրինանի*). От продажи вина в городах взималась пошлина бадж (*բաժ*), что засвидетельствовано в надписях Ани и Гарни.

Благодаря развитию городской жизни и торговли любимое занятие армянского земледельца—виноградарство и вино-

делне становится источником дополнительных доходов и наживы для феодалов, монастырей, мещатунгов, имущих горожан и крестьян. Этим и объясняется, что виноградарство в X—XIII вв. становится предметом особой заботы и внимания их владельцев.

Армянский писатель Нерсес Шнорали (Благодатный), живший в XII в., в одном из своих произведений, рассказывая о том, что люди нынче озабочены больше светскими делами и наживой, чем духовными делами и верой, пишет, что каждый думает «кто в более обширной площади и на плодородной земле, чем у своих друзей, насадит сад? И о том, каким образом и мудростью следует давать питание новым саженцам. Взамен того, чтобы изучать искусство благочестия друг у друга (люди) упражняются в тайнах садоводства—неискусные (упражняются) у искуснейших»<sup>1</sup>. Рассказывая о приемах получения и насаждения саженцев, автор продолжает: «и все это для того, чтобы (саженцы) возможно больше плодов давали и чтобы намного увеличить количество вина. Уж я не говорю,—пишет Шнорали,—о приемах прививки, (когда) один превосходит другого в мастерстве (букв. «гением»), о горячем рвении в труде, даже некоторые не считают день достаточным для работы и ночь тоже объединяют с днем»<sup>2</sup>.

Говоря о том, что страсть заниматься садоводством охватывала даже духовенство, Шнорали пишет:

«Затем, когда встречаются друг друга владельцы садов, духовные лица различных мест, после приветия, спрашивают не о здравии души и о заразе болезней и не о войнах злых (девов) и мире, не о том, как получить облегчение слезами в час молитвы, а о том, какое, о брат, плодоношение твоих саженцев, большое или небольшое. И тот с грустью в сердце отвечает: что могу сказать о случившихся бедствиях? Некоторые были повреждены насекомыми, у других цветы рассыпались и другие выгорели от солнца и высохли на гроздьях, а половина испортилась гниением, и что мне следует предпри-

---

<sup>1</sup> Послание патриарха Нерсеса Шнорали (Благодатного) на древнеармянском языке, Эчмиадзин, 1865, стр. 29.

<sup>2</sup> Там же, стр. 30.

нять? Выхода не знаю от случившихся бед. И друг, подсказывая ему, увещевает: прививать те из саженцев, которые теряют плоды (преждевременно), а другие вылечить от заболеваний различными испытанными средствами»<sup>1</sup>.

В одном из стихотворений поэта XIII в. Фрика виноградник требует от садовника:

Обрежь меня, рой глубоко,  
Чтоб проснулся, завеселел,  
Полей меня бурной речкой,  
Чтоб зазеленел я, помолодел,  
Дай мне пищу и вылечи,  
Чтоб вовремя плоды я дал.

Здесь хронологической последовательностью перечислены самые основные процессы обработки виноградника, обеспечивающие его высокую доходность.

Приведенные примеры показывают, что с развитием городов виноградарство и виноделие достигли высокого уровня и занимали значительное место в хозяйстве Армении и ее жителей.

Раскопки и данные письменных источников показывают, что гидзаны или давилъни винограда в средневековой Армении получили широкое распространение, и переработка винограда для получения вина применялась в больших масштабах, так как вино стало предметом как внешней, так и внутренней торговли.

---

<sup>1</sup> Послание патриарха Нерсеса Шнорали (Благодатного) на древне-армянском языке, Эчмнадзин, 1865, стр. 30—31.

**II ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԸ**  
**МАТЕРИАЛЫ ПО II НАУЧНОЙ СЕССИИ**



## ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՆԱԽՕՐՑԱԿԻՆ

Հայ գյուղացիության տնտեսական և քաղաքական վիճակը՝ XVIII դարի վերջին և XIX դարի սկզբներին տակավին կարոտ է ուսումնասիրության: Եթե այդ շրջանի հայ-ուսական հարաբերությունների պատմությունը բավական ուսումնասիրված է, ապա գյուղացիության պատմության հարցերն անբավարար են լուսաբանված. այդ հարցին վերաբերող աղբյուրագիտական նյութերը սակավաթիվ են: Մատենադարանում պահվող որոշ վավերագրեր կցկուտոր տեղեկություններ են հաղորդում մեզ հետաքրքրող հարցերի մասին: Փաստական որոշ նյութ է պահպանվել կենտրոնական արխիվներում, դեսպանների զեկուցագրերում, եվրոպական ճանապարհորդների աշխատություններում, ինչպես նաև Շոպենի՝ Հայկական մարզին նվիրված ուսումնասիրության մեջ<sup>1</sup>:

XVIII դարի վերջում Երևանի խանությունը գտնվում էր տընտեսապես քայքայված վիճակում: XIX դարի առաջին քառորդին վերաբերող տվյալները ցույց են տալիս, որ Երևանի խանության 851 գյուղերից 310-ը ավերված էին: Բնակչության թիվը հասնում էր մոտավորապես 85—100 հազարի, որից 25 հազարը քոչվորներ էին<sup>2</sup>:

1 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852.

2 Ի. Շոպեն, նշված աշխատ., էջ 510—517: Նշենք, սակայն, որ ժամանակակից աղբյուրների տվյալներով հայերի թիվը Հայաստանում և այլ վայրերում 7 միլիոնից անցնում էր: Օրինակ, Գ. Շուրերտի տվյալներով XIX դարի առաջին քա-

Շոպենը, հետազոտելով Երևանի խանութչյան տնտեսությունը, նրա, այսպես կոչված, անշարժ հարստությունը բաժանում է հինգ խմբի. բնակեցված կալվածքներ, ոչ-բնակեցված կալվածքներ, ջրեր, խանութներ և տներ՝ իրենց բախերով, ալգիներով, ամեն տեսակ կառուցվածքներ: Բոլոր այդ ունեցվածքները ըստ Շոպենի բաժանվում էին երկու կարգի՝ մասնավոր և պետական<sup>1</sup>: Հայաստանում ագրարային հորարերությունների ստամնասիրությունը հանգեցնում է այն եղբակացության, որ այստեղ հողի մասնավոր և պետական-արքունական սեփականության գոյությունը միանգամայն ակնհայտ փաստ է: Թե՛ մեկը և թե՛ մյուսը ընդարձակում էին իրենց կալվածքները ի հաշիվ գյուղական համայնքի հողերի բռնազրավման:

Արարատյան դաշտավայրի բնակիչները հնուց ի վեր զբաղվում էին հողագործությամբ: Հացահատիկի հետ մեկտեղ այստեղ մշակում էին այնպիսի կուլտուրաներ, ինչպես՝ խաղողը, բամբակը և բանջարեղենը: Երևանը բանջարանոցային կուլտուրաների սերմեր էր մատակարարում հարևան և հեռավոր երկրներին<sup>2</sup>: Արարատյան դաշտի խաղողը թարմ, ինչպես նաև շորացրած վիճակում, արտահանվում էր տարբեր երկրներ:

Երևանի խանությունում բնակչության մի մասը վարում էր քոչվորական կյանք. զրանք քրդական և թուրքական ցեղերն էին: Նրանք խանին հարկատու էին ու որոշ դեպքերում, հատկապես սահմանամերձ շրջաններում, կատարում էին սահմանապահ զորքի պարտականությունները:

Հողատիրության ձևերը բնորոշելու համար հարկավոր է կանոնադրել մուլքի<sup>3</sup> և թիուլի պատմական զարգացման պրոցեսի վրա: Այստեղ ակնարկում ենք այն փաստը, որ պարսիկ և թուրք տիրակալները հայկական շրջաններում ձգտում էին արմատախիչ անել

որդի վերջում հաշվվում էր 1.520.000 հայ բնամիր, կամ 7.600.000 շունչ (տե՛ս Գ. Шуберт, Из обозрения армянского народа, С. Петербург, 1831).

1 Շոպեն, Նշված աշխատութ., էջ 925:

2 Մատենադարան, Կաթողիկոսական գիվան, Ողջապանակ 4, փաստաթուղթ 1:

3 Մուլք տերմինը արարական ծագում ունի Ալ-մալիք արարերեն նշանակում է տիրակալ-կառավարիչ, ալ-մուլք՝ ունեցվածք, որը գտնվում է որևէ մեկի տիրապետման կամ իշխանության տակ: Ունեցվածքի տիրապետողն էլ կոչվում էր մուլքագար: Այստեղից էլ մուլքագարական իրավունքի ծագումը:

տեղական սովորություններն ու կարգը և մտցնել իրենցը՝ մահմեդականը: Նրանք քայքայում ու ավերում էին ոչ միայն աշխատավոր մասսաների տնտեսությունը, այլև խարխուլում էին տեղական ազգային արխատուրատիայի տնտեսական-քաղաքական հիմքերը: Պարսիկները իրենց զբաղած շրջաններում բռնազորավում էին հայ ֆեոդալներին ու գյուղական համայնքներին պատկանող հողերը և շահի կամ խանի սեփականությունը դարձնում: Իրենց սոցիալական հենարան հանդիսացող խավերին կամ տեղական իշխաններից նրանց, ովքեր ցուցաբերում էին իրենց նվիրվածությունը, նրանք առանձին հողամասեր էին տալիս որպես մուլք կամ թիուլ:

Մուլքագարական հողերը ձեռք էին բերվում նվիրատվության կամ առուծախի միջոցով: Մուլքագարը հանդես էր գալիս որպես հողի սեփականատեր և անարգել շահագործում գյուղացիներին:

Նրեանի խանությունում հողատիրության հիմնական ձևը եղել է մուլքագարությունը: Մուլքը առանց որևէ արգելքի վաճառվում և դնվում էր:

Թիուլդարը իր կատարած ծառայությունների համար խանից իրավունք էր ստանում այս կամ այն բնակավայրից հավաքելու հարկերի մի մասը կամ ամբողջը:

Թիուլի իրավունք ունեցողը սկզբնական շրջանում չէր կարող այն ուրիշ անձի տալ կամ ժառանգական դարձնել: Սակայն հետագայում, Հայաստանը Ռուսաստանին միանալու նախօրյակին, թիուլային իրավունքն զգալի փոփոխության է ենթարկվում: Այդ շրջանում թիուլդարը ստանում էր ոչ միայն մալխահաթի՝ այսինքն բնամթերքների ունետայի մի մասը, այլև բոլոր տեսակ հարկերն ու պարհակները գանձվում էին նրա օգտին առանց խանի ներկայացուցչի միջնորդության:

Այդ հանգամանքը թիուլդարին դարձնում էր տվյալ գյուղի կամ վայրի լիակատար իշխողը: Շատ դեպքում թիուլդարները, օգտվելով խանի կենտրոնական իշխանության թուլացումից, իրենց իրավասությունն ամրապնդում էին իրենց ժառանգությունն էին թողնում ազգականներին: Բայց քանի որ գոյություն ունեցող օրենքով այդ անօրինական էր համարվում, թիուլդարները ամեն կերպ ձգտում էին ձեռք բերել շահի կամ խանի ֆերմանը՝ իրենց իրավասության տակ գտնվող կալվածքներին մուլքագարական իրավունքով տիրելու համար:

Ինչպես ամբողջ մուսուլմանական Արևելքում, այնպես էլ Թուրքիայում հողը արլահի սեփականությունն էր, որի տնօրենը

երկրի վրա համարվում էր սուլթանը: «Ալլահի հողերը» սուլթանը բաժանում էր իրեն նվիրված զինվորական և պետական գործիչների միջև: Ահա այսպես, աստիճանաբար ձևավորվում էին թուրքական ագրարային-ֆեոդալական հարաբերությունները, որոնք ունեին իրենց յուրահատկությունը: Այստեղ ամեն ինչ ծառայեցվում էր երկրի ռազմական հզորությունը բարձրացնելու և հսկայական զինված ուժ ստեղծելու խնդրին: Հենց այդ նպատակով էլ այստեղ հողը կենտրոնացված էր ֆեոդալ-զինվորականների ձեռքում: Երկրի վարչական բաժանումն էլ սերտ կապ ուներ զորամասերի տեղադրման հետ:

Նահանգի զուլա կանգնած էր զինվորական հրամանատարը, որն ուներ խոշոր կալվածքներ և հողային տարածություններ: Նահանգները բաժանվում էին սանջակների, որոնք կառավարվում էին բեկերի կողմից: Սանջակներն իրենց մեջ ընդգրկում էին սիամեթի և թիմարի կոչվող վարչական բազմաթիվ միավորներ: Այդ ամբողջ հիերարխիան կառուցված էր ֆեոդալական վարչական ու զինվորական բյուրոկրատիայի սկզբունքով: Այդ բյուրոկրատիան պատերազմի ժամանակ զլխավորում էր ռազմական գործողությունները, իսկ խաղաղ պայմաններում բնակչությունից գանձում էր հարկերն ու տուրքերը և կատարում վարչական, դատական և ոստիկանական ֆունկցիաներ:

Իր գրաված հարկային շրջաններում Պարսկաստանի նման Թուրքիան ևս մտցնում էր ագրարային իր կարգերն ու հողային հարաբերությունները<sup>1</sup>: Ճիշտ է, փաշաներն ավելի պակաս իրավունքներից էին օգտվում, քան պարսկական խաներն ու սարգարները, բայց նրանք էլ շատ լայն իրավունքներ ունեին: Փաշան նշանակվում էր սուլթանի կողմից. նրա ձեռքում էր կենտրոնացված տվյալ նահանգի վարչական ամբողջ իշխանությունը: Նա ստանում էր տվյալ փաշայության եկամտի որոշ տոկոսը: Սանջակները ղեկավարվում էին բեկերի ու աղալարների կողմից՝ փաշայի նշանակումով: Նրանք ևս համարվում էին պետական շինովնիկներ, որոնք ստանում էին գյուղացիներից հավաքված հարկերի մի մասը:

Թուրքիայի իշխանության տակ գտնվող հայկական հողերը կոչվում էին ախչայական և թափուական:

Ախչա կոչվում էր այն գյուղի կամ հողամասի եկամուտը, որը արտահայտվում էր գրամով և որի  $\frac{1}{3}$  մասը պետք է տրվեր պետու-

<sup>1</sup> Գրավված շրջանները բաժանվում էին փաշայությունների:

թյանը: Այդ կարգը սուլթանի կողմից օրինական ուժ էր ստացել և 1587 թ. մտցվել թուրքական Ջարա կոչվող օրենսգրքի մեջ: Ախշա տրվում էր բեկերին կամ այն անձանց, որոնք ցույց էին տալիս իրենց նվիրվածությունը պետությունը և աչքի էին ընկնում զինվորական կամ վարչական գործում: Այդ իրավունքը տրվում էր սուլթանի կողմից հաստատված պայմանագրով: Սուլթանի մահից հետո այդ պայմանագիրը պետք է ներկայացվեր նոր սուլթանին և վերանորոգվեր: Եթե սրևէ մեկը այդ շէր անում, ապա նա կորցնում էր ախշայի իրավունքը:

Ախշայի տիրոջ մահից հետո այդ իրավունքը պետք է որ վերանար, սակայն հաստատված տրագիցիայի ուժով այն հորից ժառանգաբար անցնում էր որդուն: Տղան պարտավոր էր կատարել ախշայի համաձայն հոր վրա դրված պարտականությունները:

Պատահում էր նաև այնպես, որ տերը վաճառում էր այդ իրավունքը. այս դեպքում գնողը պետք է իր վրա վերցնեք նախկին տիրոջ բոլոր պարտականությունները:

Հողատիրության մյուս ձևը թափուն էր: Թափուն այն վավերագիրն էր, որի համաձայն հողատերը (մզկիթը կամ պետությունը) իրենց պատկանող հողի մի մասը հատուկ պայմանով տալիս էին որևէ մեկին՝ ընդմիշտ օգտագործելու համար: Հողի նոր տերը պարտավոր էր վճարել հողի գինը որոշ դումարով և ապա հետագայում էլ հաջորդաբար վճարել բերքի  $\frac{1}{6}$  մասը: Թափուի տերը ձևոք բերած այդ հողամասը իր հերթին բաժանում էր գյուղացիների միջև՝ այն մշակելու համար. գյուղացիները վերցնում էին ստացած բերքից իրենց ցանած սերմացուն, իսկ մնացածը կիսում թափուի տիրոջ հետ: Եթե բաժանված այդ հողամասը երեք տարի անընդհատ չէր մշակվում, ապա հողատերը կարող էր այն վերցնել և տալ մեկ ուրիշին:

Հողատիրության մյուս ձևը կոչվում էր չիֆթլիկ: Այդ հողամասը փաշայի, մզկիթի կամ մի ուրիշ տիրակալի մասնավոր սեփականությունն էր: Եթե այդ հողամասը մշակվում էր տվյալ հողատիրոջ ուժերով ու միջոցներով, այն կոչվում էր չիֆթլիկ, իսկ երբ այն տրվում էր ուրիշին մշակելու՝ կոչվում էր թափու<sup>1</sup>:

Գյուղացիությունը բոլոր դեպքերում էլ հողագուրկ էր. նա

<sup>1</sup> *Sb'ю* Свод материалов по изучению экономического быта гос. крестьян Закавказ. края, т. V, ч. III, стр. 552.

միայն հանդես էր գալիս հողը վարձակալուլի դերում, որը նրա վրա շատ ծանր էր նստում:

Գյուղացին այդ ձևով հողը օգտագործում էր ժառանգարար: Նրա մասնավոր սեփականությունն էր տունը, բակը և մյուս կառուցումները: Այսպես կոչված վաղուֆային հողամասերը պատկանում էին հողեկորականներին, որոնք ազատված էին պետական հարկերից ու պարհակներից: Համաձայն պարսկական շահերի կողմից էջմիածնին տրված ֆերմանների՝ վերջիններս էլ օգտվում էին այդ իրավունքներից, սակայն իրականում Երևանի սարգարը խախտում էր այդ կարգը և մեծ քանակությամբ հարկեր ու նվերներ էր պահանջում կաթողիկոսից: Կաթողիկոսը պարտավոր էր ամեն անգամ թանկարժեք նվերներ տալ Պարսկաստանի շահին, Երևանի սարգարին և նրա բարձրաստիճան շինուլնիկներին: Արշավանքների ժամանակ պարսկական իշխանությունները կաթողիկոսին ստիպում էին մեծ գումարներ վճարել որպես փրկագին: Հայտնի է, օրինակ, որ Աղամահմեդ խանի արշավանքի ժամանակ գավթիչները խոշոր գումար պահանջեցին և էջմիածինը փրկվեց ավերումից՝ շնորհիվ ժողովրդից հավաքված հսկայական միջոցների և կաթողիկոսի ունեցվածքի:



Երևանի խանությունն վարչական կառուցվածքը հետևյալ պատկերն էր ներկայացնում: Խանության իշխող գասակարգի գլուխն էր կանգնած խանը կամ սարգարը, որը նշանակվում էր շահի կողմից: Նրանք համարվում էին գերագույն իշխող և օգտվում էին արտակարգ իրավունքներով: Խանը երկիրը կառավարում էր բազմաթիվ շինուլնիկների միջոցով, որոնց նշանակում կամ ազատում էր իր հայեցողությամբ: Հատկապես արտակարգ իրավունքներից էր օգտվում Երևանի խանության վերջին տիրակալը՝ Հուսեյն Կուլի սարգարը: Մի շարք վայրերում, հատկապես Ղարաբաղում ինքնուրույն իրավունքներ ունեին նաև հայ մելիքները. Խամսայի մելիքությունները սկզբնական շրջանում ճանաչում էին միայն պարսկական շահի իշխանությունը: Հայ մելիքներ կային բացի Ղարաբաղից նաև Գյանջայի խանության մեջ, Սյունիքում և Երևանի խանությունում:

«Մեկիքը յուր մեկիքութեան մեջ միանգամայն ինքնիշխան էր,— գրեւ է ուսումնասիրողներից մեկը,— նա ունէր անսահման իրավունքներ, նրա կամքը հպատակների համար օրենք էր: Նա տնօրինում էր ոչ թե միայն մարմնավոր, այլև շատ անգամ հոգևոր իշխանութեան վերաբերյալ գործեր»<sup>1</sup>:

Հետագայում խանական իշխանութեան ուժեղացման հետ մեկտեղ, մեկիքներն ընկան նրանց ազդեցութեան տակ, իսկ Ղարաբաղի Փանահխանն ու նրա որդի Իբրահիմ խանը բոլորովին ոչնչացրին Ղարաբաղի մեկիքութունները:

Խանի պալատին կից կար դիվան կամ խորհուրդ՝ կազմված վեպիրից, գլխավոր խորհրդատուից, մի քանի միրզաներից (քարտուղարներից), որոնցից ամեն մեկը գլխավորում էր ֆինանսների, տուրքերի, զինվորական և այլ ճյուղեր: Դիվանի մեջ էին մտնում նաև Սանդուխտար աղան (որը սպառողական մասի պետն էր), կամ կալաբեկը (բերդի պահետք), խաղնազարը (գանձապահը), մուղասիլբեկը (հետևում էր խանի հրամանների իրագործմանը):

Դատական գործերը սովորաբար վարում էին զադիներն ու մոլլաները, համաձայն շարիաթի, կամ հնուց ի վեր գոյություն ունեցող և օրենքի ուժ ստացած սովորութունների, որոնք ժողովրդի մեջ «հագիսա» անունն էին կրում:

Հայերը դատական գործերով դիմում էին իրենց համայնքի, գյուղի ավագի վճռին: Նրանք խուսափում էին խանին կամ նրա շինովնիկներին դիմելուց, քանի որ այդ նրանց վրա շատ թանկ էր նստում:

Ամեն մի հայկական գյուղում կային, այսպես կոչված, «ընտրովի» դատավորներ, որոնք կատարում էին միջնորդի դեր՝ այս կամ այն վիճը լուծելու համար: Եթե կողմերը մնում էին անրավական, ապա դիմում էին մահալի նախրին, որի որոշումը վերջնական էր:

Խանութեան կենտրոնն էր Երևանը, որտեղ ապրում էր խանը՝ իր բազմաթիվ սպասավորներով:

Քաղաքի կառավարումը հանձնված էր խանի կողմից նշանակված դարդալին, որը ռատիկանապետի դեր էր կատարում: Վերջինս իր արամադրութեան տակ ունէր յուզարաշիններ (հարյուրապետներ) և ավելի ցածրաստիճան շինովնիկները՝ շավուշներ, ֆառաշներ և այլն:

1 Հ. Մուսայելյան, Անդրկովկասի հողային պայմանները, Վաղարշապատ, 1910, էջ 53:

Քաղաքի բնակչութիւնը XVIII դարի վերջին հասնում էր մոտ 12 հազարի: Քաղաքը բաժանված էր երեք թաղամասի. հիմնական մասը կոչվում էր շահար (քաղաք), մյուս մասը թափարաշի (կոնդ), որը նշանակում էր բլրի գագաթ, երրորդ մասը՝ Դամիր-բուլաղ (երկաթե աղբյուր)<sup>1</sup>:

Երևանի բերդը հիմնադրվել է 1581 թ. Ֆահրադ փաշայի կողմից, հետագայում այն մի քանի անգամ ավերվել և նորից վերականգնվել է:

Խանութիւնը վարչական տեսակետից բաժանվում էր Ֆեոդալական առանձին շրջանների. դրանք կոչվում էին մահալներ: Շատ դեպքերում այդ մահալների թիվը որոշվում էր գետերի կամ ջրանցքների թվին համապատասխան, ելնելով ուղղման կարևորութիւնից: XIX դարի սկզբում Երևանի խանութիւնը բաժանվում էր 12 մահալի: Դրանք էին՝ Կրխբուլաղի, Գառնի-Վեդի-բասարի, Շարուրի, Սուրմալուի, Սաաթլիի, Քալինի, Սենգլի-Ախտախլախի, Սարդարաբադի, Կարբի-բասարի, Աղարանի, Դարաշիշալի, Գյոկշայի մահալները:

Ամեն մի մահալի ղուլս կոչված էր խանի կողմից հաստատված նախը: Նախըներն ունեին վարչական և դատական իրավունքներ: Մուլքադարական որոշ գյուղերում այդ իրավունքներից օգտվում էին նաև մուլքադարները: Խանը նրանց միջոցով կատարում էր նաև հարկերի հավաքում: Շատ հաճախ, ի նշան այս կամ այն նախբի ծառայութեան, խանը այդ պաշտոնը տալիս էր ժառանգներին ու հաստատում հատուկ հրամանագրով: Խանը նրանց նվիրարեցնում էր նաև առանձին գյուղեր և կավածքներ: Նախըներից շատերը դառնում էին իրենց մահալի ժառանգական տերերը: Պատահում էր նաև, որ խանը նախբին զրկում էր այդ պաշտոնից և նրա փոխարեն նշանակում ավելի նվիրված անձի:



Մանր էր աշխատավոր գյուղացիութեան վիճակը Երևանի խանութիւնում: Գյուղացիութիւնը կամ ինչպես ասում են ռայան-ռահաթը դաժան շահագործման էր ենթարկվում իշխող դասակարգի ներկայացուցիչների՝ մուլքադարների, թիւղդարների, հոգևորականների կողմից:

<sup>1</sup> Տե՛ս Շոպեն, Նշված աշխատութ., էջ 464:

Երկրում ստեղծված հողատիրութեան մուլքադարական և թիուղարական սիստեմը ավելի ծանրացրեց գյուղացիների դրութեանը. սոցիալական ճնշմանն ավելացավ ազգայինը, որը հաճախ բարբարոսական ձևեր էր ընդունում:

Մուլքադարն իրեն ենթակա գյուղական համայնքից հավաքում էր բնատուրք, որոշ դեպքերում էլ՝ դրամային հարկ: Գյուղացիները պարտավոր էին աշխատելու նաև մուլքադարի անձնական տնտեսութեան մեջ: Հարկի հիմնական տեսակներն էին՝ ծխահարկ, որը վճարում էր ամբողջ ընտանիքը, գլխահարկ՝ վճարում էին 15 տարին լրացած տղամարդիկ, բահրա կամ մալչահաթ (բնատուրք), վճարվում էր բերքի որոշ մասը:

Երեանի խանութեանում մուլքը իրավունք էր տալիս մուլքադարին որպես մալչահաթ ստանալ հացահատիկի բերքի  $\frac{1}{10}$  մասը, սակայն այդ կարգը տիրող անօրինականութեանների պատճառով հաճախ խախտվում էր և վերցվում բերքի  $\frac{1}{5}$  մասը, իսկ որոշ դեպքերում էլ նույնիսկ  $\frac{2}{3}$ -ը. բամբակից, մետաքսից միշտ վերցվում էր բերքի  $\frac{1}{5}$  մասը: Մուլքադարական գյուղացիները խանին վճարում էին նաև բահրա. նրանք հատուկ տուրք էին տալիս ջրից օգտվելու համար: Բոլոր շափահասները վճարում էին գլխահարկ կամ բաշփուլի: Մինչև XVIII դարի 30-ական թվականները քրիստոնյաներից հավաքում էին ջիզա կոչվող հատուկ հարկը: Հետագայում այդ հարկի հավաքման մասին մեզ տեղեկություններ չեն հասել: Ըստ երևույթին այդ հարկը դադարել է գոյություն ունենալուց: Բայց դա, իհարկե, ոչնչով չի բարելավել հպատակ ժողովուրդների վիճակը: Մուսուլմանների համեմատութեամբ, քրիստոնյաները պարտավոր էին ավելի շատ հարկ վճարել: Նախիջևանի խանութեանում, օրինակ, հայերը ամեն մի շնչին, որպես գլխահարկ, վճարում էին 4 ուրլի, իսկ մուսուլմանները՝ 2 ու 20 կոպ., հայերը ծխահարկ էին վճարում 4 ու 20 կոպ., մուսուլմանները՝ 4 ուրլի և այլն: Քրիստոնյա ժողովուրդը իրավահավասար չէր մահմեդական ցեղերին: Քրիստոնյաները, օրինակ, չէին կարող դատի ժամանակ իրրե վկա հանդես գալ:

Գոյություն ունեւ բնատուրքի վճարման հետևյալ կարգը: Երբ գյուղացին արտը հնձում էր, բեկը, մեկիքը կամ սարդարը դաշտում հաշվում էին խուրձերը, թուլատարում կալը տեղափոխելու և կալակելու: Այնուհետև սարդարը, խանի նշանակած այդ շինովնիկը, ներկայանում էր և կալում հացահատիկի վրա դնում իր կնիքը: Մինչև խանին հասնող բաժինը չվերցվեր, գյուղացին իրավունք

շուներ ձեռք տալու իր հացահատիկին: Այստեղից ամեն մեկը՝ խանը, մուքաղարը, հոգևորականներն ու մյուս շահագործողները ստանում էին իրենց «բաժինը» և միայն մի շնչին մասն էր մնում շարքաշ գյուղացուն:

Ժամանակակիցներից մեկը պատմում է այսպիսի մի դեպք. մի գյուղացի իր ցանած ու մշակած արալը հնձելուց հետո մի քանի խուրձ բարձում է իր էշին, որպեսզի տուն տանի և երեխաներին սովից փրկի: Ճանապարհին պատահում է բեկը, ծեծում է գյուղացուն և այրում խուրձերով բեռնված էշին:

Գյուղացիները, բացի երկրագործության դիմաց վճարվող եկամուտներից, տալիս էին նաև առանձին հարկ՝ անասուններից ստացած եկամտի համար: Օրինակ՝ 100 ոչխարից վերցնում էին. մեկ ոչխար և մեկ դառ կամ մեկ այծ և մեկ ուլ: Կովերից տալիս էին յուղ: Այդեղգործությունից ստացված եկամտահարկը, որը կոչվում էր բաղփուլի, կաղմում էր գրամական եկամտի  $\frac{1}{11}$ — $\frac{2}{7}$  մասը, հաճախ այն վերցնում էին ըստ ծառերի քանակի կամ այդու տարածություն: Այս հարկերի շարք շատ հաճախ փոփոխվում էր և մեծ մասամբ կախված էր խանի կամ նրա սպասավորների կամքից:

Բացի «օրինական» հարկերից, գյուղացին տալիս էր փեշքեշ (նվերներ)՝ բայրամլիկ, որը, ըստ էության, հարկերից չէր տարբերվում: Ամեն տեսակ կրոնական տոների՝ Նովրուզ բայրամի (մարտի 21-ին), Ուամազանի և խանի տոհմի ու բարձրաստիճան շինուլնիկների հետ կապված նշանավոր դեպքերի՝ ծննդի, հարսանիքի և այլ առիթներով գյուղացիները պետք է թանկարժեք նվերներ մատուցեին խանին և մյուս շահագործողներին: Որպես նվեր կարող էին արվել թանկարժեք փարշա-կատրեղեն, բրդե գործվածքներ, սակի, թանկարժեք քարեր, դրամ, ոչխարներ, դառներ, հավեր, ձու և այլ մթերքներ:

Հարկ հավաքելը մշտապես ուղեկցվում էր ատօրինություններով, հարկահանների կողմից այն օգտագործվում էր որպես հարցստանալու ազդյուր: Ամեն մի շնչին առիթով գյուղացին ենթակա էր տուգանման:

Բացի հարկերից, գյուղացիները պարտավոր էին մշակել խանի և մյուս ֆեոդալների ցանքային տարածությունները, այգիներն ու բանջարանոցները, կատարել կոռային աշխատանքներ:

Տարվա ընթացքում գյուղացին որոշ օրեր պետք է աշխատեր ֆեոդալի տնտեսության մեջ, որտեղ նրա աշխատանքի տևողությունը սովորաբար պետք է հասներ 3—6 օրվա: Իրականում նա աշ-

խատում էր այնքան, որքան կալահանջեր ֆեոդալը: Բերդերի, կամուրջների, ջրանցքների, ճանապարհների շինարարության ժամանակ գյուղացիները իրենց բանող անասուններով ու գործիքներով հավաքագրվում և հարկադրական աշխատանքի էին ուղարկվում մինչև շինարարության ավարտումը: Երբ խանի, կամ մյուս ֆեոդալների ընտանիքները դնում էին ամառանոց, կամ ձմեռանոց, գյուղացիները պարտավոր էին տրամադրել փոխադրական միջոցների և աշխատող ուժ: Երբ խանը կամ նրա շինովնիկները ժամանում էին որևէ գյուղ, ապա տեղում նրանց համար պետք է կալամակերպվեր ճոխ հյուրասիրություն, նվերներ տալին, ինչպես նաև վճարելին հատուկ հարկ՝ «գիշ քիրասի» (ատամի վարձ) այն բանի համար, որ նրանք նեղություն էին կրել գյուղացիների հացը ուտելու Հատուկ հարկ էր վճարվում շինովնիկների ձիերին կերակրելու համար: Այդ հարկը կոչվում էր «աթ արփասի» (ձիու գարի): Ֆեոդալի տանը աշխատելու համար նույնպես ծառաներ էին տալիս: Պատահում էին դեպքեր, երբ գյուղացին տարիներ շարունակ ողջ ընտանիքով՝ կնոջով և երեխաներով ծառայում էր ֆեոդալի տանը:

2. Մուսայելյանը «Անգրիովկասի հողային պայմանները» իր աշխատության մեջ իրավացիորեն գրել է. «...խանությունների մեջ ընդհանրապես տիրում էր կատարյալ կամայականություն, մանավանդ վերջին ժամանակները (հեղինակը նկատի ունի XVIII դարի վերջը և XIX դարի սկիզբն ընդգրկող ժամանակաշրջանը—Մ. Ա.): Որոշված հարկեր, տուրքեր համարյա թե չկային, ով ինչքան ուզում էր, առնում էր: Տիրում էր արևելյան բացարձակ բռնակալություն: Օրենք, կարգ, կանոն, հաշվապահություն՝ գոյություն չունեին: Փողովուրդն անմուռնչ կերպով տանում էր խաների և անթիվ բեկերի ու այլ ծառայողների կամայականությունները»:

Խանական հողերը ըստ իրենց օգտագործման բնույթի բաժանվում էին չորս խմբի՝ այսպես կոչված բահրաքարային, յարիքարային, ռանչպարային և կապալով տրված հողամասերի:

Սարդարը վերաբնակեցված գյուղացիներին կապալով տրամադրում էր այս կամ այն հողամասը, որոշ դեպքերում էլ հողը մշակելու համար տալիս էր գյուղատնտեսական գործիքներ, բանող անասուններ և այլն: Դրա փոխարեն սարդարը ստանում էր բերքի կեսը:

1 2. Մուսայելյան, Անգրիովկասի հողային պայմանները, Վաղարշապատ, 1910, էջ 53:

Այս բուրբից հետո բուրժուական պատմագրությունը հակված է պնդելու, որ «բեկերը, աղաները գյուղացիների վրա իշխելու իրավունքներ չունենին. գյուղացիք աղատ էին անձնական ծառայություններից»:

Եթե մանրամասնորեն ծանոթանանք այն ժանր ու բազմաստիճան հարկային սխտեմին, որին ենթարկվում էին գյուղացիները, ապա պարզ կլինի, թե այս տեսակետը որքան հեռու է իրականությունից:

Թուրքիայում գյուղացիները պարտավոր էին վճարել հետևյալ տուրքերը.

Գլխահարկ—ամեն մի չափահաս սուլամարդ վճարում էր 60 կոպեկից մինչև 3 ո. 50 կոպեկ:

Հողային հարկ կամ տասանորդ—վճարում էին բոլորը, սակայն քրիստոնյաները վճարում էին եկամտի  $\frac{1}{5}$ -ից մինչև  $\frac{1}{3}$ -ը, իսկ մահմեդականները միայն  $\frac{1}{10}$ -ը:

Եկամտահարկ: որը բաժանվում էր մի քանի տեսակների, զըրանք էին՝ եկամտահարկ հացահատիկի բերքից, արտավայրերից, անասնապահությունից, ջրաղացներից, տարբեր տեսակի արհեստանոցներից և այլն:

Բավական մեծ տեղ էին զբաղում մաքսային եկամուտներն ու տուրքները:

Քրիստոնյա ժողովուրդների համար խոշոր չարիք էր մանկահասակ երեխաների հավաքումը: Հինգ տարին մեկ անգամ սուլթանի ներկայացուցիչը գալիս էր գյուղ և հավաքում առողջ ու ղեզեցիկ երեխաներին, որոնց տեղափոխում էին Ստամբուլ և այնտեղ համատարփոխ անելով՝ դաստիարակում մահմեդական կրոնի ոգով: Աղջիկներին ուղարկում էին սուլթանի հարեմը, իսկ տղաներից կազմում էին սուլթանին նվիրված ենիչերիների զորքը, որոնց միջոցով հալածում ու տանջում էին քրիստոնյա ժողովուրդներին:

Հարկի գանձման և մանկահասակ երեխաների հավաքման իրավունքը հաճախ բարձր գներով տրվում էր առանձին կապալառուների, որոնք իրենց կամայականություններն ու շարաշահումները անարգել զործագրում էին ժողովրդի նկատմամբ:

Գյուղացիների համար չարիք էր հավաքված մթերքների տեղափոխումը: Գյուղացին պարտավոր էր հավաքված հարկերը իր փոխադրամիջոցներով տեղափոխել նշված վայրերն ու պահեստները, որոնք հաճախ բավական մեծ հեռավորությունների վրա էին գտնվում:

Պատերազմի կամ ռազմական գործողութիւններու ժամանակը ղյուղացիները պարտավոր էին աշխատել ճանապարհներու, կամուրջներու շինարարութեան վրա, ինչպէս նաև խորամատներ փորել և այլ աշխատանքներ կատարել: Բացի այդ, գյուղացիները փոխադրական միջոցներ էին հատկացնում նախատեսված և շնախատեսված բաղմամբիւ ալ աշխատանքներու համար:

Քանի որ անակնկալ պատերազմները և միջինոգալական ընդհարումներն ու ավերածութիւնները սովորական երևույթներ էին, ապա գյուղացու կյանքը միշտ էլ ենթակա էր արհաւիրքներու: Սկըսած միջնադարից ընդհուպ մինչև 1830 թ. Թուրքիայում հարկային սիստեմը գրեթէ նույնն էր: 1830 թ. սուլթան Աբդուլ Մեջիթը այն ենթարկում է որոշ փոփոխութիւններու:

Բացի վերահիշյալներէ, կային նաև բաղմամբիւ ալ հարկեր և տուրքեր: Այսպէս, օրինակ, գյուղացին պետք է վճարեր տուրք ամուսնանալու, ծնունդի, իր ունեցվածքը վաճառելու կամ այն ժառանգելու և այլ դեպքերում: Հայ մելիքներն իրավունք ունեին հարկեր հավաքելու, դատական գործեր վարելու, երկրում վարչական գործերը ղլխավորելու, ինչպէս նաև զինահավաք կատարելու և այլն: Ամբողջ իշխանութիւնը գտնվում էր մելիքների ձեռքին, որոնք տեղերում նշանակում էին իրենց ներկայացուցիչներին՝ տանուտերերին: Տանուտերն իր զգրի միջոցով հավաքում էր տուրքերը, զինակոչիկներին բանակ էր ուղարկում, հետևում էր կարգ ու կանոնին և որոշում մանր վեճերն ու դատական գործերը:

Տանուտերները որոշված աշխատավարձ չէին ստանում: Սակայն գյուղացիները պարտավոր էին մշակել նրանց հողամասը, պահել անասունները, արտերը հնձել, խոտը հարել և տեղափոխել ձմեռանոց, վառելու փայտ բերել և կատարել բաղմամբիւ ալ պարտականութիւններ: Մելիքներին արվող հարկերն էին՝ բնատուրք-մալչահաթ կամ տասանորդ՝ բերքի տասներորդ մասը (որոշ տեղերում հավաքում էին բերքի  $\frac{1}{5}$  մասը):

Ամեն մի ընտանիք պարտավոր էր մի ոսկի վճարել մելիքին՝ շահին ուղարկելու համար:

Գյուղացիները պարտավոր էին մելիքի տնտեսութեան մեջ տարվա ընթացքում կատարել բոլոր տեսակի աշխատանքները: Ամեն մի տնտեսութիւն տարվա ընթացքում մելիքի համար պետք է աշխատեր 20 օր: Այն տնտեսութիւնները, որոնք այդ աշխատանքը չէին կատարել, պարտավոր էին դրամով վճարել, տալ, այսպիսի կոչված, գյուն փուլի, օրավարձ:

Յուրաքանչյուր 25 տնտեսությունից պետք է տրվեր մի ծառա և 30 տնից մեկ կին՝ մեկիքի տանը աշխատելու համար: Բացի դրանից, գյուղացիները տալիս էին դլիր, ձիապան և բազմաթիվ այլ ծառայողներ: Կին ծառայողներն աշխատում էին մեկիքի տանը և կատարում էին ամենածանր աշխատանքներ:

Ամեն մի տնտեսություն տարվա ընթացքում պարտավոր էր մեկիքի տան համար մի բեռ փայտ բերել:

Նրանք, ովքեր ցանկանում էին ամուսնանալ, պարտավոր էին ստանալ մեկիքի թուլտվությունը, իսկ դրա համար նա պետք է վճարեր հատուկ տուրք՝ 3—6 ռուբլու սահմաններում: Բացի այդ, մեկիքի համար նա պետք է բերեր մի շարք նվերներ՝ մի կուժ գինի, երկու շիշ օղի, մորթած անասունի սուկին, երիկամները, երկու հավ և այլն: Եթե հարսին տանում էին ուրիշ գյուղ, ապա այդ դեպքում նվերների ու վճարի քանակը ավելի մեծանում էր:

Տոն օրերին գյուղացիները պետք է մեկիքին նվերներ բերեին. այդ նվերը պետք է լիներ մի մեծ խնձորի մեջ մտցված 20 կոպեկանոց կամ պարսկական ուրիշ դրամ, մի կուլա գինի, մի շիշ օղի և այլն:

Մեկիքը այս կամ այն հանցանքի կամ խախտումների համար վերցնում էր իր ցանկացածի շափ տուգանքներ և հարկեր:

Որոշ պատմաբաններ ջանում են նկարագրել մեկիքներին որպես իրենց համայնքի կամ տոհմի ավագանի, որը հոգում էր համայնքի կարիքները և հայրական հովանավորություն ցուցաբերում նրա նկատմամբ: Իրականում, դրությունը ճիշտ հակառակն էր: Մեկիքը հանդես էր դալիս որպես իշխող դասակարգի ներկայացուցիչ, որը գաժանորեն ճնշում և շահագործում էր աշխատավորներին:

Մեկիքները հատուկ պարտականություն էին կրում շահի և խանի առջև: Նրանք պարտավոր էին շահին հարկեր և տուրքեր տալ, թանկարժեք նվերներ ուղարկել, իսկ անհրաժեշտության դեպքում նաև որոշ քանակությամբ զորք ուղարկել:

Այն մեկիքները, որոնք ենթարկվում էին խանին, կրում էին հետևյալ վասալային պարտավորությունները: Մեկիքը պարտավոր էր ամեն մի ընտանիքից հավաքագրել մեկ զինվոր:

Ամեն մի ընտանիքից մեկ սակի էր գանձվում՝ խանին ուղարկելու համար:

Մեկիքը, որպես հավատարմության նշան, պարտավոր էր իր

տղաներից մեկին որոշ ժամանակով խանի մոտ ծառայության ուղարկել:

Տոն օրերին մեկիքը պետք է խանին նվերներ ուղարկեր: Խանի պահանջով մեկիքները կատարում էին նաև շատ ուրիշ պարտավորություններ: Մեկիքի մահանալուց հետո իշխանությունը ժառանգում էր նրա ավագ որդին, որն ստանում էր մեկիքի կոշում, իսկ մյուս որդիները կոշվում էին բեկեր<sup>1</sup>:

Գյուղացիները զգալի քանակությամբ հարկեր էին վճարում հայ էկեղեցուն, որը նույնպես ուներ հողային մեծ տարածություններ: Եկեղեցական հողերի վրա բնակվող գյուղացիները պարտավոր էին վճարել տասանորդ, եկեղեցական տուրք, որը կոշվում էր պտուղ:

Գյուղացիների կողմից հողևորականությանը վճարվող տուրքերը հսկայական գումար էին կազմում: Հողևորականության համար հարկերի և այլ տեսակի գանձումների թիվը 40-ից անցնում էր: Այդ գանձումները հիմնականում բաժանվում էին երեք խմբի. ա) էջմիածնի կաթողիկոսի համար, բ) առանձին թեմերի և վանքերի պահպանման համար, և գ) հողևորականության ցածր խավերի և տեղական եկեղեցիների պահպանման համար:

Լեոն նշում է, որ միայն մեռողն էր կելով էջմիածինը 200 հազար ուրլու եկամուտ էր ստանում:

Գյուղացիները բազմաթիվ ուղղակի և անուղղակի հարկեր էին վճարում: Ուղղակի հարկերից էին առանձին համայնքներից, քաղաքացիներից, գյուղացիներից, քոշվորներից և էջմիածնից գանձվող հարկերը: Դրանց մեջ էին մտնում նաև կրոնական և այլ տոների կապակցությամբ տրվող բայրամլիկ հարկը և պետական ղինվորների վարձը՝ կուլուկ փուլին:

Անուղղակի հարկերն ստացվում էին երկրի բնական հարստություններն օգտագործելու դիմաց, մաքսային եկամուտներից և այլն:

Դրամական հարկերը հավաքում էին տարվա ընթացքում երկու անգամ, աշնանը՝ բերքահավաքից հետո և ձմռանը՝ փետրվար ամսին:

Շոպենի մոտավոր հաշվումներով Երևանի խանության կողմից հավաքվող հարկերը դրամական արտահայտությամբ կազմում էին 653.152 ուրլի: Այն ժամանակվա գներով դա բավական մեծ գու-

<sup>1</sup> Բաֆի, Խամսայի մեկիքությունները, Ե. Լալայան, Գանձակի գավառ, Զանգեզուրի գավառ:

մար էր: Չևական տեսակետից գյուղացիները աղատ էին և կարող էին մի տեղից տեղափոխվել մեկ ուրիշ տեղ, սակայն իրականում այդ շատ քիչ էր հաջողվում գյուղացիներին, քանի որ նրանք հարկային և այլ պարտավորություններով այնպես էին կաշկանդված, որ այդ իրագործել չէր հաջողվում: Հայտնի են փաստեր, երբ տեղից հեռացած գյուղացուն խանի կարգադրությամբ փնտրում և ետ էին վերադարձնում, եթե 12 տարի չէր անցել, այսինքն՝ երբ վաղեմության ժամկետը ուժի մեջ էր:

Գյուղացիությունը ծայր աստիճան հետամնաց էր ու սնոտիապաշտ, ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ և ենթարկվում սովի ու վարակիչ հիվանդությունների արհավիրքներին: Նրանց մեծ մասը բնակվում էր ղետնափոր տնակներում, հաճախ անասունների հետ մեկտեղ:

Երևանի խանության գյուղերում բժշկական օգնության մասին խոսք լինել չէր կարող: Գյուղացու միակ խորհրդատուն գյուղի տատմերները, գուշակողներն ու հեքիմներն էին: Այդ էր պատճառը, որ գյուղում շատ հաճախ էին բռնկում վարակիչ հիվանդություններն ու համաճարակը: Հատկապես աղետալի էին ժանտախտն ու բժավոր տիֆը: 1797—1798 թթ. պարսկական ավերիչ արշավանքից հետո երկրում սկսվեց սով և իսկույն տարածվեց ժանտախտը, որը գերեզման տարավ անօգնական բնակչության զգալի մասը, ամայացրեց տասնյակ գյուղեր ու բնակավայրեր:

Նապոլեոն Բոնապարտի գործակալ Պիեռ Ամեդե Ժոքերը 1805—1806 թվականներին հատուկ հանձնարարությամբ ուղարկվել է Արևելք: Նա Հայաստանի վրայով անցնելիս ծանոթացել է երկրի կյանքին և իր հուշերում թողել մի շարք տեղեկություններ: Արեմըտյան Հայաստանի, Սվազի և Երզնկայի փաշայությունների հայ գյուղացիների մասին նա գրել է.

«Այս երկրի գյուղացիները աղքատ են: Նրանք ուղեկցում են քարավաններին և զբաղվում են եղենի ծառերից խեժ կամ goudron հանելով: Ձմեռվա երկար գիշերները զբաղվում են կտավ գործելով, ձիսելով ու հեքիաթներ լսելով: Այդ միջոցին նրանց երեստաներից մեկը ձեռքում բռնում է մի տեսակ ջահ եղենու փայտից, որն այրվում է պաշտոն մի բոցով: Այդ լեռնականները, ինչպես նաև Ալայյան և Ապենինյան լեռներում ապրողները, գիշերը լուսավորելու ուրիշ միջոց չունեն»<sup>1</sup>:

1 2. Հալոբյան, Ուղեգրություններ, 2. 2., Երևան, 1940, էջ 206:

Իսկ վանի շրջանի հայ գյուղացիների մասին ժողերը գրել է.  
«Ամեն տարի այդ երկրի բանվորների բաղձաթիվ կարավաններ  
մեկնում են Կ. Պոլիս, նավատորմիղի զինարաններում աշխատե-  
լու: Մի քանի տարի հետո նրանք վերադառնում են հաստատվելու  
իրենց հայրենիքում»<sup>1</sup>:

Հետաքրքիր են նրա թողած տեղեկությունները Խնուսի շրջ-  
անի գյուղացիների մասին.

«Իջանք Խնուսի ավազանը, որը նշանավոր է իր աղնվացեղ  
ձիերով: Գնացինք գիշերելու Քողլի հայկական մի գյուղում, որի  
բնակիչները, հակառակ Յուսուֆ փաշայի հրամաններին, համա-  
ռորեն մերժեցին մեզ ապաստարան տալ, եթե չհամաձայնվեինք  
վարձատրել նրանց: Առաջին անգամն էր, որ պատահում էինք  
քրիստոնյաների, որոնք թուրքերին ընդդիմադրություն էին ցույց  
տալիս. սակայն Հայաստանի այս մասում կառավարության իշխա-  
նությունը համարյա թե չնչին է: Գյուղացիք զինված են և պատ-  
րաստ կռվելու քրդերի հարձակումների դեմ, որոնց հետ հաճախա-  
կի կռիվներ են մղում և շեն վախենում ոչ սպառնալիքից, ոչ նախա-  
տինքից և ոչ էլ մահից: Նրանց մերժումը հիմնավոր էր, որովհետև  
թուրք սպաները, չբավականանալով ցույց տված հյուրասիրու-  
թյունից, հաճախ մեկնում են գյուղերից՝ պահանջելով վարձատրու-  
թյուն փոխարեն այն բանի, որ վնաս չեն հասցրած գյուղին»<sup>2</sup>:

Եվրոպական ճանապարհորդ Մորիսը Երևանի խանության  
բնակչության վիճակի մասին 1815 թ. գրել է. «Սարդարը հայ գյու-  
ղացիների հետ վարվում էր արտակարգ խստությամբ, որովհետև  
նրանցից հարկ էր վերցնում արտադրության մեկ երրորդը, նրանց  
թողնելով մշակության բոլոր ծախսերը: էլ վաթներկից նրանք, որ հո-  
ղամշակությամբ են զբաղվում, նրանց հետ վարվում է այնպես,  
ինչպես այլ գյուղացիների հետ, բոլոր նրանք, որոնց սեփականու-  
թյունը միայն կենդանիներն են, հարկ են վճարում յուրաքանչյուր  
կենդանու գլխի համար»<sup>3</sup>:

Ռոբեր Կեր Պորտը հայկական Ուզունլար գյուղի մասին  
1818 թ. գրել է. «Անցյալում Ուզունլարը կարևոր մի ավան էր, բայց  
հիմա սլարզուկ մի գյուղ է, կամ ավելի ճիշտ է ասել, թշվառական  
հյուղակների մի կույտ, որի հողե ցածր պատերը և մուժ մուտքերը՝

1 Տե՛ս «Ուղեգրություններ», էջ 209:

2 Նույն տեղում, էջ 208—209:

3 Նույն տեղում, էջ 326:

հաղիվ գետնի երեսից մեկ յարդ բարձր, ավելի ճագարանոցի տպավորություն են թողնում, քան մարդկային բնակարանի»<sup>1</sup>:

Համամլու գյուղի մասին նույն հեղինակը գրել է.

«Այս գյուղը նույնպես նման է ճագարանոցի...

Նրանց բնակարաններից մեկի նկարագրությունը բավական ճիշտ պատկերը պիտի տա բոլորին: Ներսը մի սենյակ է՝ տասնվեցից-տասնութ ոտք լայն և հաճախ նույնքան և ավելի երկար, մի տարածություն, որը համեմատական չէ տան դրսի ցածությունը, բայց գետնի երեսից չորս ոտք խոր փորված է, որ տալիս է բնակարանին բավական բարձրություն, թեև դրսից աննկատելի է... Վերևի մասում գետնից ձգված է օջախն իր ծխնելույզով և նրա դիմաց, կտուրի վրա մի փոքր ծակ՝ լույսի համար. հատակը հող է՝ կարծրացրած. բայց կոպիտ կարպետներ փռված են կողքերում, որոնց վրա մարդիկ նստում են ու քնում: Ոչ սեղան կա և ոչ էլ աթոռ: Պատերը պարզապես չորացած են, որոնց մեջ կան բացված փոքրիկ պահարաններ ընտանիքի փոքր սեփականությունները պահելու համար:

...Այսքան գերեզմանանման այս մարդկային բնակարանի համար, մնացյալ մասը, այսինքն փոսը հատկացված է խոզերի, ոչխարների, ձիերի և այլնի համար»<sup>2</sup>:

Հետաքրքիր են ժորերի տեղեկությունները նաև Վանի գյուղերում մշակվող կուլտուրաների մասին.

«Վանը շրջապատող հողամասի կլիման շատ մեղմ է և ունի գրեթե մշտական պայծառ երկինք: Բավականաչափ ցորեն է արտադրվում բնակիչների պահանջը բավարարելու համար և բավականաչափ ցորեն՝ արտահանման համար: Ես տեսա մի քանի նարնջի և կիտրոնի ծառեր, սակայն մեծ խնամքի պետք կա այդ պտուղները հասունացնելու համար: Այս երկրում ոչ ձիթապտղի և ոչ էլ արմավի ծառեր չկան: Հյուսիսային Պարսկաստանի պտղատու ծառերը այնտեղ հաջող կերպով աճում են»<sup>3</sup>: Մորիերը երկրորդ անգամ Հայաստանով անցել է 1816 թվականին: Խոյի հովտի մասին նա գրել է հետևյալը.

«(Խոյի հովիտը)... իր մշակութային հարստությամբ, ջրով, արտավայրերով ու բնակչությամբ գերազանցում է նույնքան տարա-

1 Ուղեգրություններ, էջ 738:

2 Նույն տեղում, էջ 740—741:

3 Նույն տեղում, էջ 221:

ծությամբ որևէ տեղի՝ թե՛ Պարսկաստանում և թե՛ ուրիշ որևէ երկրում: Գրեթե ձվածե է, մոտ տասնհինգ մղոն երկար և տասը մղոն լայն, և շրջապատված է լեռներով, թեև, ինչպես սովորաբար, զարդարված չէ անտառներով, սակայն գեղեցիկ է իր ձևով ու հեռավորությունը: Բացի բամբակից ու բրնձից՝ արտադրում է մեծ քանակությամբ հացահատիկ: Հողն այնքան կարծր է, որ երբեմն պահանջում է նույնիսկ տասը զույգ գոմեշ՝ արորը քաշելու համար: Երբ վարում են, երկու-երեք հոգի նստում են լուծերի վրա՝ գրգռելու համար կենդանիներին մի բարձրաձայն երգով, որ առավոտյան լուծյան մեջ շատ հաճելի է լսել: Նրանց արորն ավելի մեքենայացված է այստեղ, քան հարավային Պարսկաստանում և ավելի լավ է վարում հողը: Մեր նկարած հունձքը ավելի խիտ էր ու ավելի լավ, քան (Պարսկաստանի) այլ մասերում, որ անտարակույս, մասամբ շնորհիվ այս գործիքին է, որոշ աստիճանով, շնորհիվ առատ ջրին, որով օժտված է այս հովիտը:

Գյուղերի բնակչության մեծագույն մասը հայ է»<sup>1</sup>:

Հայաստանի գյուղացիությունը գտնվում էր ժայռահեղ ճնշված ու հալածված վիճակում՝ անընդունակ մասնակցելու քաղաքական խոշոր շարժումների: Նրա պայքարը կրում էր անկազմակերպ բնույթ, որն արտահայտվում էր առանձին բողոքների, հարկերը վճարելուց հրաժարվելու, հարկադրական աշխատանքից խուսափելու, տուգանքները չվճարելու և այլ ձևերով: Առանձին գեպերում ավելի խիզախները, չկարողանալով տանել այդ հալածանքները, տեղորի էին կնթարկում ատելի շինովնիկներին ու ճնշողներին կամ հրդեհում էին մուլքադարների ու մյուս ճնշողների ունեցվածքը: Պատժից խուսափելու համար այդ խիզախները փախչում էին լեռները և զբաղվում զաշաղուկյամբ: Ծառ հաճախ նրանք բռնագրավում էին շահագործողների ունեցվածքը և այն բաժանում գյուղացիների միջև: Այդպիսի հերոսների անունները և նրանց հերոսապատումը ժողովուրդը երկար ժամանակ պահում էր իր ֆոլկլորում:

Հայ գյուղացիները իրենց ազատագրությունը կապում էին Ռուսաստանին միանալու հետ: Եվ երբ 1801 թ. Վրաստանը միացավ Ռուսաստանին, հայերը հաճախ ամբողջ համայնքներով տեղահան էին լինում և անցնում Վրաստան ռուսական զորքի հովանավորության տակ: 1804 թ. նոյեմբերի մեկին զրված մի փաստաթղթում նշվում է, որ մեկիքներ Հովհաննես և Գաբրիել Գեղամյանները իրենց ամբողջ համայնքով անցել են Վրաստան և խնդրել ռուսական կա-

<sup>1</sup> «Ուղեգրություններ», էջ 304:

տավարութիւնից իր հովանավորութեան տակ ընդունել և բնակութեան համար տեղ հատկացնել նրանց<sup>1</sup>։

Այսպիսով, հայ ժողովուրդը, XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին ենթարկւելով սոցիալական և ազգային ծանր ճնշումների ու հալածանքների, բոլոր հնարավոր միջոցներով պայքարում էր ազատութեան համար։

Ц. П. АГАЯН

Р е з ю м е

## ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКОГО КРЕСТЬЯНСТВА НАКАНУНЕ ПРИСОЕДИНЕНИЯ АРМЕНИИ К РОССИИ

Армянское крестьянство, веками порабощенное персидскими и турецкими угнетателями, переживало процесс полного разорения, в особенности накануне присоединения Армении к России. Бесконечные феодальные междоусобные войны, нашествия персидских шахов и турецких султанов довели страну до крайнего экономического обнищания и политического упадка.

Всюду господствовали беззаконие и разбой. Имущество, труд и жизнь крестьянина-труженика никем не защищались. Крестьянская семья постоянно находилась в опасности. Все больше усиливался налоговый гнет, поборы и всевозможные повинности никем не регламентировались. В этом отношении все зависело от воли и самочинства мюлкадаров и тиулдаров, ханских чиновников и сборщиков налогов. Кроме подымной, подушной и натуральной подати (малуджагат), собирали многочисленные, установленные и не установленные, налоги и поборы. Раяты, ранджбары и др. категории крестьян работали в хозяйстве феодала в крайне тяжелых условиях. Крестьяне выполняли принудительную работу по строительству мостов, дорог и других сооружений для феодалов и для нужд ханского двора.

Забитое крестьянство стремилось избавиться от национального и социального гнета, но вследствие своей отсталости

<sup>1</sup> Տե՛ս՝ «Վրացական ՍՍՌ Կոմիտե», ք. 2, ցուց. 1, գ. 120, թ. 30։

оно не могло объединиться для освободительной борьбы. Эта борьба носила крайне неорганизованный характер. Отдельные выступления, жалобы и ропоты, отказ от уплаты налогов, поджоги помещичьих усадеб и, наконец, качагство,—все это не могло привести к действительному освобождению крестьян.

Единственным выходом из создавшихся условий армянский народ видел в присоединении Армении к России. Это стремление проявилось с наибольшей силой в 1801 г., когда Грузия была присоединена к России и русские войска приблизились к границам Армении, когда армянские крестьяне целыми группами переходили границу, идя к русским солдатам с просьбой освободить их от тяжелого ига Персии и Турции.

## ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿՋԲՆԵՐԻՆ

Հայաստանում բամբակի մշակությամբ զբաղվել են դարեր առաջ: VII դարի նշանավոր մատենագիր Անանյա Շիրակացին<sup>1</sup>, խոսելով Հայաստանի գավառների մասին, նշել է, որ Քուռ և Արաքս գետերի խառնարանի արևմտյան մասում ընկած Փայտակարան գավառում եղել է շատ բամբակ և դարի, իսկ Մովսես Կաղանկատովացու վկայությամբ Քուռ գետի հովտում մշակել են հացահատիկ, բամբակ և անթիվ ձիթենիներ<sup>2</sup>: 1286 թ. Սահմադիևի հրամանով, տեղական կառավարիչներ Ստեփանոսը և Վահրամ Քեթրոսը բամբակի և այգու հարկից ազատում են դյուղի քահանաներին: 10 տարի հետո, Շիրակի տեր իշխան Զարարյանի վասալները վերացնում են ֆեոդալների օգտին Հոխիսիմևի վանքից ստացվող բամբակի շարխառը (գանձվող բերքի մեկ տասներորդ մասը): Միաժամանակ նրանք վերացրին շահնայի (քաղաքապետի) օգտին արվելիք բամբակի հակը (հակը ուներ կշռային իմաստ)<sup>3</sup>:

Միջնադարի առակագիր Մխիթար Գոշը գրել է «...նս (խոսքը բամբակի մասին է), թեև փոքր եմ ու տկար, բայց բաղմաշահ եմ և շատակար բոլոր մարդկանց համար և պահպանելու, և քաղելու և դործելու ժամանակ, և վերջում էլ դառնում եմ հագուստ, ինչպես ոչխարների բուրդը, կտավհատի վուշը, շերամի մետաքսը»<sup>4</sup>:

1 Ա. Գ. Արաբամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 350:

2 Մովսես Կաղանկատուացույ Պատմության Աղուանից Աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 15:

3 «Վիճական տարեգիր ցուցակ ժողովածոց, արձանագրութեանց հայոց», կաղմեց Կ. Կոստանյանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 129, 138:

4 Մխիթար Գոշ, Առակներ, Երևան, 1951, էջ 54:

Այսպիսով, բամբակից դանձվող հարկերի և նրա օգտակարության մասին եղած փաստերը վիճարկում են, որ Հայաստանում սիստեմատիկորեն զբաղվել են բամբակի կուլտուրայի մշակութայամբ:

Հայաստանում բամբակի մշակույթի մասին հիշատակումներ կան Վ. Հակոբյանի կազմած XIII—XVIII դարերին վերաբերող «Մանր ժամանակագրություններ» ժողովածուի երկրորդ հատորում, որտեղ կարդում ենք. «Եւ ունի քաղաք մեծ Հայոց զԵղնիկայ, որ լի է ամենայն բարօրությամբ քամպակօֆ, այգեստանոք և մրգաբեր ծառոնք»<sup>1</sup>: Այդ փաստից, որ վերաբերում է XVIII դարին, կարելի է կռահել, որ այստեղ Եփրատ գետի միջին հոսանքում մեծ Եղնիկա քաղաքի շրջակա արգավանդ դաշտերում մարդիկ վաղուց զբաղվել են ոչ միայն այգեգործությամբ այլև բամբակի մշակութայամբ:

Ենթադրվում է, որ սլարսիկների տիրապետության ժամանակ Հայաստանում տարեկան արտադրվել է 90 հազար փութ բամբակի հումք: Շոպենի տվյալներով Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելու սկզբնական շրջանում, Հայկական մարզում տարեկան ստացվել է 3000 խարվար (խարվարը 30 փութ է), այսինքն շուրջ 90 հազար փութ բամբակի հումք<sup>2</sup>:

Ընդարձակ շուկա և փոխադրական միջոցներ չլինելու պատճառով բամբակը երկար ժամանակ ունեցել է տեղական նշանակություն: Յուրաքանչյուր գյուղացի ցանել է այնքան բամբակ, որքան կարիք է ունեցել:

«Բամբակագործությամբ զբաղվող գյուղական ամեն մի ընտանիք,— գրել է Սեղալը,— ցանում էր այնքան սերմ, որքան բամբակ էր պետք իրեն՝ ընտանիքի սեփական պահանջները բավարարելու կամ տնային տնտեսության մեջ զործածվող այլ մթերքներով փոխանակելու համար»<sup>3</sup>:

Միակ տեսակի մշակվող բամբակը «կարա-կողա»-ն էր, որը

1 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Երևան, 1951, հատ. 2, էջ 551.

2 Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, стр. 743.

3 И. Л. Сегал, Развитие хлопководства в Закавказском крае и современное состояние его, Труды съезда хлопководов, том II, часть II, Тифлис, 1914, стр. 56.

Տարատիւնովի և ուրիշ մասնագետների կարծիքով նման էր հնդկական կամ պարսկական բամբակին, հետևաբար, նրանք ենթադրում էին, որ այն Հայաստան է բերվել հիշյալ երկրներից: «Երևանի նահանգը... որպես պարսկական նախկին գավառ անհիշելի ժամանակներից նույնպես զբաղվել է բամբակագործութեամբ,—գրել է Ն. Պ. Տարատիւնովը,—բնականաբար պետք է ենթադրել, որ «կարակողա»-ն նույն հնդկական կամ պարսկական բամբակն է: Այդպիսի ենթադրութեանը լրիվ հաստատում է, ինչպես թելի բնույթով, այնպես էլ սերմով և ամբողջ բույսի հատկութեաններով ընդհանրապես»<sup>1</sup>: Մենք համամիտ ենք այդ ենթադրութեանը:

Դժբախտաբար բամբակի մշակույթը և օգտագործումը մինչև XVIII դարի կեսերը եղել է սահմանափակ:

Հետագայում, երբ հայտնաբերվեցին և գործածության մեջ դրվեցին մանածագործական դաղգահները (1767), սղոցավոր ջին (թելը սերմից անջատող) մեքենաները (1793) և մեքենայացված դաղգահները (1815), սկսվեց բամբակի մասսայական մշակույթն ու նրա հումքի վերամշակումը: Բամբակի արդյունաբերության մեջ հիշյալ մեքենաների կոնկրետ կիրառումը առևտրական բամբակագործության զարգացման սկիզբ հանդիսացավ: 1869 թ. 5344 հազար տոնկից<sup>2</sup> կամ ավելացավ 78% -ով: Հայաստանի բամբակագործության զարգացմանը նպաստեցին մի կողմից՝ Ռուսաստանի հետ Հայաստանի միացումը, որ խոշոր իրադարձություն էր հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական կյանքում. և մյուս կողմից՝ 1832 թ. ռուս-ամերիկյան առևտրական հարաբերությունների զարգացումը:

Երկրի բամբակ վերամշակող արդյունաբերությունը ամերիկյան հումքի կախվածության վտանգից ապահովելու միակ ելքը հայրենական բամբակագործության զարգացումն էր, որի օգտին հանդես եկան մայրաքաղաքի թերթերը, ժամանակի մասնագետները, պրոդրեսիվ մտածողները և պետական համապատասխան օրգանները:

Հայ մեծ լուսավորիչ խաչատուր Աբովյանը, ծանոթ լինելով Արևմտյան Եվրոպայի երկրագործության եղանակներին, 1836 թ.

<sup>1</sup> Н. П. Таратиннов, Очерк хлопководства в Закавказье, Труды Кавказского общества сельского хозяйства, сентябрь-декабрь, Тифлис, 1888, стр. 589.

<sup>2</sup> Там же, №№ 9—12, Тифлис, 1888, стр. 636.

«Հայաստանը և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին» իր հայտնի հոդվածում՝ Հայաստանի երկրագործության զարգացման պրիմիտիվ եղանակը կատարելագործելու, այն գիտական հիմքերի վրա դնելու հետ մեկտեղ, միաժամանակ, առաջարկում էր ընդարձակել նաև տեխնիկական կուլտուրաների՝ ծխախոտի և հատկապես տնտեսական շատ շահավետ և արդյունարերական մեծ նշանակություն ունեցող բամբակի մշակումը: Այդ կուլտուրաները որպես առավել եկամտարեր ճյուղեր կրարձրացնեն երկրի էկոնոմիկան, կբարելավեն գյուղացիների ծանր վիճակը և ամենագլխավորը՝ հումք կմատակարարեն «մեր հայրենական ֆաբրիկաների համար»<sup>1</sup>:

Նա գտնում էր, որ հայրենական բամբակագործությունը պետք է այնքան զարգանա, որպեսզի նրա արտադրանքը բավարարի երկրի տեքստիլ արդյունաբերության աճող պահանջները: Այդ ճանապարհով միայն հնարավոր կլինի խնայել բամբակի ներմուծման համար վճարվող այն հսկայական գումարները, որ 40-ական թվականների կեսերին 7,4 միլ. հասալ 20 միլիոն ռուբլու և շարունակում էր աճել<sup>2</sup>:

Հետագա տարիներին Ռուսաստանի երկրագործության և հողաշինարարության զլխավոր վարչությունը մշակեց հետևյալ միջոցառումները.

1. Ուժեղացնել ջրաշինարարական աշխատանքները Մուղանում և Սոված անապատում:
2. Արագացնել հետազոտումը Ֆերգենայի հովտում, Սոված անապատում և Ամու-Ղարխայի ավազանում:
3. Վերամշակել Միլիի տափաստանի ոռոգման նախագիծը:
4. Կարգավորել Սոված անապատի և Անդիժանի բամբակի փորձադաշտերը և զրանք դարձնել օրինակելի կայաններ: Փորձադաշտեր ստեղծել Թուրքեստանում և Մուղանում:
5. Ղարայազում և Մուղանում հիմնել գյուղատնտեսական-հիդրոտեխնիկական դպրոց:
6. Ուժեղացնել և զարգացնել բամբակի կուլտուրայի ցուցադրական միջոցները:
7. Ուժեղացնել բամբակի մասնագետների և հրահանգիչների կազմը:

<sup>1</sup> Խ. Արվյան, Երկրի լիակատար ժողովածու, հատ. 8, Երևան, 1958, էջ 90:

<sup>2</sup> Акты, собранные Кавказской Археологической комиссией, том X, Тифлис, 1885, стр. 155.

Տ. Մշակել ջրման մոդուլ<sup>1</sup>:

Բամբակագործության զարգացման համար քիչ նշանակություն չունենր հումքի որակի բարձրացումը և նրա զտման պրոցեսների կատարելագործումը, որովհետև տեղական «կարա-կողա» բամբակը, իր ցածր որակի պատճառով քիչ էր շահագրգռում տեքստիլ արդյունաբերողներին: Բամբակի հումքի որակի բարձրացումը Ռուսաստանի համար վճռական և կենսական անհրաժեշտություն ունեցող հարց էր, որի լուծման վրա հատուկ ուշադրություն դարձրեց և ֆինանսների մինիստրությունը:

«Ֆինանսների մինիստրությունը անհանգստացած լինելով Անգլիոյ կառավարչության բամբակի մշակույթով, — ասված է 1838 թ. փետրվարի 28-ին գեներալ Գոլովինին հասցեագրված գրություն մեջ, — այս տարի Ալեքսանդրիայի՝ Ռուսաստանի գլխավոր դեսպանի միջոցով դուրս է գրել մեկ փուլ եգիպտական բամբակի սերմ՝ Հայկական մարզի բնակիչներին բաժանելու համար, որպեսզի փոխարինի տեղում աճող ցածրորակ տեսակի բամբակին»<sup>2</sup>:

Հետագայում Կովկասի փոխարքա Վորոնցովի հանձնարարությամբ նահանգի բամբակագործները ստանում են եգիպտական, ամերիկյան և սիրիական բամբակի սերմեր<sup>3</sup>: Սակայն սկզբնական արդյունքները տեղ-տեղ անբավարար էին, որովհետև գյուղացիները ծանոթ չէին արմատավորվող նոր տեսակի բամբակի կուլտուրային: Սպասված արդյունքների չհասան նաև Նախիջևանի և Երևանի գավառներում: Բավարար արդյունքների հոստան Ղարաբաղի գավառում, իսկ Շիրվանի գավառում հավաքեցին 5 անգամ ավելի շատ բամբակ, քան տալիս էր տեղական բամբակը:

Այսպիսով, նոր արմատավորվող բամբակի մշակումը չնայած որոշ անհաջողությունների, ընդհանրապես խոշոր երևույթ էր Անգլիոյ կառավարչության:

Բամբակի որակի բարելավումը կապված էր նաև հումքի զտման աշխատանքների կատարելագործման հետ, որը կիրճատեր ավելորդ ծախսերը, կիջեցներ արտադրանքի ինքնարժեքը և ամենակարևորը՝ կրարձրացներ հումքի որակը:

1 И. Л. Сегал, Развитие хлопководства в Закавказском крае и современное состояние его. Труды съезда хлопководов, том II, часть II, Тифлис, 1914, стр. 55.

2 Акты, собранные Кавказской Археологической комиссией, том 9, Тифлис, 1884, стр. 51—52.

3 1839 թ. Ամերիկայից բերվում է 153 ֆունտ (ֆունտը հավասար է 458 գրամի) սերմ, 1845 թ. 28 ֆունտ և Սիցիլիայից 1846 թ.՝ 20 ֆունտ սերմ:

Բամբակը կորիզից զտելու գոյություն ունեցող պրիմիտիվ ձևը<sup>1</sup> շրայուցիչ աշխատանք պահանջելուց բացի, խիստ խցեցնում էր նաև հումքի սրակը, այդ պատճառով էլ Հայաստանի բամբակը առանձնապես լավ ընդունելություն չէր գտնում ուսև ֆաբրիկանտների մոտ: Այդ մասին երկրամաս գործուղված և նրա իրական վիճակը ուսումնասիրող մայր Շեմյուր հունիսի 30-ին Ռուսաստանի երկրագործության և պետական գույքի մինիստրությանը գրել է. «Անդրկովկասի բնակիչների կողմից գործածվող բամբակի զտման ձևերի մեքենան ընդհանրապես ունի շատ թերություններ և արտակարգ զանգաղ է նրանով կատարած աշխատանքները, երկու մարդ օրական հազիվհազ ի վիճակի են մաքրելու 20—30 փուլ բամբակ: Բացի այդ, կորիզը բամբակից անջատելու ժամանակ վերջինիս թելը աչնքան է կարճ լինում, որ նրան մանել կարելի է միայն ձեռքի իլիկով, այլ ոչ թե մեքենայով—գրա համար էլ անդրկովկասյան բամբակը Ռուսաստանում ոչ մի շահագրգռվածություն չի առաջացնում և վաճառվում է տեղական բնակիչներին միայն, որոնք վուշի, կանեփի պակասության պատճառով այն օգտագործում են տնային մանվածքի և գործվածքի համար»<sup>2</sup>:

Բամբակի զտման աշխատանքի բարելավումը առաջնակարգ նշանակություն ուներ ոչ միայն բամբակագործների համար, այլև տեքստիլ արդյունաբերությանը որակյալ հումքով ապահովելու տեսակետից:

Անդրկովկասում եփիպտական-ամերիկյան լավ տեսակի բամբակի սերմը տարածելու հետ մեկտեղ, հիշյալ երկրներից առաջին անգամ՝ Երևան, Թիֆլիս և Քուբաիսի բերվեցին նաև բամբակը կորիզից զտող ձեռքով աշխատող մեքենաներ:

Երկրամասում «Կոտն-ջին» մեքենաների երևան գալը կարևոր իրադարձություն էր, որովհետև դրանց հետագա կատարելագործու-

<sup>1</sup> Բամբակի զտումը, եթե նկատի չունենանք հնդկական շիդդիխի» գործիքը, որի քանակը շատ սահմանափակ էր, հիմնականում կատարվում էր ձեռքով, բամբակին խառնում էին փոքր բարեր, այնուհետև լցնում այդ նպատակով պատրաստած փոքր անցրեր ունեցող զամբյուղների մեջ և ձեռքով թափահարում մինչև բամբակի վերջնական զտումը: Ավիլի մանրամասն տե՛ս Շոպենի ռուսերեն աշխատությունը, էջ 743:

<sup>2</sup> Акты, собранные Кавказскою Археологическою комиссией, т. X, Тифлис, 1885, стр. 155.

մը հսկայական ներդրածություն կունենար հայրենական բամբակագործութեան զարգացման վրա:

Թվում էր, թե հայրենական բամբակագործութեան զարգացմանը վերաբերվող վերը նշված միջոցառումները պետք է արմատական բեկում մտցնեին սեփական բամբակագործությունը առաջ մղելու գործում, ինչպես Հայկական մարդում, այնպես էլ երկրամասի մյուս նահանգներում: Սակայն այդպես շտապվեց: 40-ական թվականների սկզբներին Անդրկովկասում արտադրված 90 հազար փութ բամբակի փոխարեն 50-ական թվականների վերջերին ստացվեց 36—40 հազար փութ կամ կրճատվեց ավելի քան երկու անգամ, այդ թվում 30 հազար փութը կամ 75—85 %-ը ավելց Հայաստանը, որը 1849 թվականին վերականգնվեց Երևանյան նահանգի:

Այսպիսով, բամբակի արտադրանքը Երևանի նահանգում Ռուսաստանի հետ միավորվելու սկզբնական շրջանի համեմատությամբ իջավ երեք անգամ: Դա պետք է բացատրել նրանով, որ երկրամասում արտակարգ ակտիվացավ Ռուսաստանից բերվող բամբակյա և տեքստիլ մյուս գործվածքների վաճառքը, որովհետև դրանք որակով բարձր էին և անհամեմատ էժան, քան պրիմիտիվ եղանակով արտադրված տեղական կոպիտ գործվածքները:

Մի կողմից Անդրկովկաս բերվող որակյալ տեքստիլ գործվածքների մասսայական հոսանքը և մյուս կողմից տեղական բամբակի սերմի անորակությունը ու բամբակի նոր տեսակների տված անբավարար արդյունքները հիասթափեցրին բամբակագործներին: Այդ պատճառով էլ երկրամասի շատ շրջաններում բամբակի փոխարեն սկսեցին մշակել բրինձ, հացահատիկ և այլ կուլտուրաներ, որոնք հատուկ խնամք և մեծ ծախսեր չէին պահանջում: «Անդրկովկասի մի քանի մասերում ներկայումս բամբակի ցանքսերը ամենուրեք դադարեցված են, — կարդում ենք Շեմյուտի 1845 թ. հունիսի 30-ի ղեկուցագրում, — իսկ Ելիզավետպոլի և Երևանի դավառներում, որտեղ բամբակի մշակույթը կատարվել է շատ վաղուց և եղել է երկրագործութեան արդյունարբությունից գլխավոր նշուկերից մեկը պարսկական տիրապետության ժամանակ, այժմ նույնպես նշանակելիորեն պակասել է: Դրա պատճառը բամբակի բերքի արտակարգ աղքատությունն է»<sup>1</sup>:

<sup>1</sup> Акты, собранные Кавказской Археологической комиссией, т. X, Тифлис, 1885, стр. 155.

Բամբակագործութեան նոր վերելքը Երևանի նահանգում և ամբողջ Անդրկովկասում սկսվում է 60-ական թվականներից՝ կապված, մի կողմից Ռուսաստանում կապիտալիզմի արագ զարգացման և մյուս կողմից 1861—1865 թթ. ԱՄՆ-ում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի հետ: Այդ պատերազմը մոտ մեկ տասնամյակ զաղարեցրեց բամբակի արտահանումը: ԱՄՆ-ից կախում ունեցող երկրները զարկ տվեցին բամբակագործութեան զարգացմանը: Անգլիան, որը համարվում էր բամբակի արդյունաբերության զարգացած երկիր, բամբակի ճգնաժամից դուրս գալու և իր վերամշակող արդյունաբերությունը հումքով ապահովելու համար 1858 թ. տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոն Մանչեստրում կազմակերպեց «Բամբակի արտադրությունը ավելացնող ընկերություն», որի նպատակն էր բարձրացնել բամբակի հումքի արտադրությունը գաղութներում և նույնիսկ այն վայելքում, որտեղ դեռևս չկար նրա մշակումը: Այդ ընկերությունը Անգլիայի արտաքին գործերի մինիստրության միջոցով անմիջական կապերի մեջ մտավ այն երկրների դեսպանների հետ, որտեղ մշակում էին բամբակ կամ առկա էին նրա զարգացմանը նպաստող հողակլիմայական պայմանները: Մեկ տարվա ընթացքում այդ ընկերությունը Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում և ուրիշ երկրներում ունեցավ 2000-ից ավելի թղթալից և գործակալ, որոնք անհրաժեշտ տվյալներ հաղորդեցին բամբակի մշակման և նրա հնարավոր տարածման մասին: Միաժամանակ դրանց միջոցով տեղացիներին բաժանվեց 6500 փութ որակյալ բամբակի սերմ և բամբակի մշակմանը վերաբերվող բրոշյուրներ, ինչպես և բամբակը կորիզից զտող ու մամլող երեք հարյուր «Կոտն-ջին» մեքենաներ ու մամլիչներ: Հիշյալ մեքենաները վաճառվում էին միանդամայն էժան, իսկ սերմը շատ տեղերում տրվում էր ձրի, տեղի բնակիչներին խրախուսելու և բամբակագործության ասպարեզում արագ հաջողությունների հասնելու համար: Ընկերության գործունեությունը շուտով տվեց իր բեղմնավոր արդյունքները՝ 1860 թ. միայն Երևանում Անգլիա արտահանեց 200 հազար կիպ (1800 հազար փութ) բամբակ՝ անցյալում հարյուր հազար կիպի փոխարեն<sup>1</sup>, երբ Անգլիան բամբակի նորանոր բազաներ էր որոնում Արևելյան Հնդկաստանում, Ավստրալիայում, Հարավային Ամերիկայում և աշխարհի զանազան մասերում, Ռուսաստանը, որի բամ-

<sup>1</sup> Н. С. Хатисов, О развитии культуры и торговли хлопком в Закавказье, Тифлис, 1865, стр. 1—3.

բակի արդյունաբերութիւնը հիմնված էր ներմուծվող հումքի բազայի վրա, առանձնապէս մեծ դժվարութիւնների դեռ չէր հանդիպել: Անդրկովկասում գրեթէ երկու տարի անփոփոխ մնացին բամբակի գները՝ բամբակի փութը 3—3 ուբլի 50 կոպեկից չէր անցնում, մինչդեռ Լիվերպուլում այն բարձրացել էր 18—20 ուբլուով: Ավելին՝ 1859—1860 թթ. Մանչեստրում գնված բամբակյա գործվածքները մինչև 1862 թ. սկիզբը Թիֆլիսում վաճառվում էին ավելի էժան, քան գնվել էր արտադրութեան վայրում: Ստեղծված նպաստավոր պայմանները օգտագործելու համար առևտրական բանակցութիւններ սկսվեցին մի կողմից Ռուսաստանի առևտրական պալատի և մյուս կողմից Լիվերպուլի, Մանչեստրի և Կոստանդնուպոլսի գեսպանների միջև՝ Անդրկովկասյան բամբակը Եվրոպա ուղարկելու հարցի շուրջը: Դրա իրականացումը Կոստանդնուպոլսում 1862 թ. Անդրկովկասյան և հատկապէս Երևանյան նահանգի բամբակի առաջին խմբի (ընդամենը 6000 փութ) երևան դալն էր: Այդ բամբակը տեղում վաճառվեց «մեծ շահույթով և այդ ժամանակվանից էլ Անդրկովկասը սկսեց խառնվել, այսպէս ասած, Եվրոպական բամբակի առևտրին»: Շուտով բամբակի գները բարձրացան նաև ներքին շուկայում՝ նիժնի-նովգորոգում (այժմ Գորկի), Մոսկվայում բամբակի փութը 4—5 ուբլուց 1862—1864 թթ. հասավ 22—23 ուբլու, Թիֆլիսում՝ 19—20 ուբլու, Մեդրիում և Շարուրի գավառում 17—18 ուբլու, Երևանի գավառի Օղորեկու գյուղում 21 ուբլու: Երկրում բամբակի գների անսպասելի բարձրացումը պետք է դիտել ոչ թե Եվրոպական շուկայում անդրկովկասյան բամբակի մուտքով միայն, որի տեսակարար կշիռը չափազանց չնչին էր, այլ Ամերիկայից Ռուսաստան եկող բամբակի հանկարծակի դադարեցումով:

Դա հասցրեց Ռուսաստանի մի շարք տեքստիլ ձեռնարկութիւնների փակմանը. 1860 թ. գործող 57 մանարանից 1863 թ. մնաց 35-ը, իսկ 559 գործվածքային ֆաբրիկայից՝ միայն 338<sup>3</sup>:

Չնայած բամբակի գների բարձրացումը բամբակագործութեան արդյունաբերութեան շրջաններում ուներ ժամանակավոր բնույթ, բայց այն հետևանքն ունեցավ, որ նահանգի բամբակի մշակման.

1 Նյու-Յորքի շուկայում անգլիական ֆունտը (ֆունտը հավասար է 458 գրամի) վաճառվում էր 1861—1862 թթ. 60 ս. 60 կ., 1862—1863 թթ. 138 ս. 58 կ., 1863—1864 թթ. 197 ս. 21 կ., 1864—1865 թթ. 162 ս.:

2 И. С. Хатисов, О развитии культуры и торговли хлопком в Закавказском крае, 1865, стр. 7—8.

3 П. Петрович, Хлопководство в Закавказье, 1912, стр. 10.

բոլոր վայրերի բնակիչներն անմիջապէս ընդարձակեցին բամբակի ցանքերը ի վնաս հացահատիկի և մյուս կուլտուրաների: Դա ապացուցում է բամբակի արտադրանքի աննախընթաց վերելքը: 1861 թ. ստացվել է 30 հազար փուֆ, 1862 թ.<sup>1</sup> 60 հազար, 1863 թ.<sup>1</sup> 150 հազար փուֆ բամբակ (զտած), իսկ Իմերեթիայում 10 հազար փուֆ, 1861 թ.<sup>1</sup> 3000 փիֆի փոխարեն: Հաջորդ տարում, Ի. խատիսովի խոսքերով տասած. Երևանի նահանգում այնքան բամբակ ցանվեց, որ նույնիսկ օգտագործեցին հողի տների կտուրները: Եթե արտադրած հումքը արտահայտենք դրամական գումարներով, ապա կստացվի, որ 1861 թ. (փիֆի միջին զինը հաշվելով 3 ու.) նահանգին ավել է շուրջ 90 հազար ուրլի եկամուտ, իսկ երկու տարի հետո, զները բարձրանալու շնորհիվ (փիֆի միջինը հաշված 15—16 ու.) հասավ 2—2,1 միլ. ուրլու: Եթե հումքի այդ բարձր զները շարունակվեին նաև հետագայում (իսկ դա լինել չէր կարող, ասենք երկրի համար էլ ձեռնտու չէր), ապա բամբակագործությունը նահանգում և ամբողջ Անդրկովկասում նույն թափով կդարգանար նաև ապագայում, առանց կառավարութեան ակտիվ միջամտութեան: Սակայն այդպիսի ենթադրութեանն, ինչպես մտածում էին որոշ գործիչներ, խորապես սխալ էր: Նախ այն պատճառով, որ ԱՄՆ-ում պատերազմը ավարտվելուց հետո նորից կուժեղանար բամբակի հումքի արտահանումը Ամերիկայից Ռուսաստան, ինչպես տեղի ունեցավ, և երկրորդ՝ որ առանց պետութեան ակտիվ միջամտութեան անհնար էր զարգացնել սեփական բամբակագործութեանը: Հետևաբար կառավարութեան ակտիվ միջամտութեանը բամբակի մշակույթն ընդարձակելու գործում յառաջնակարգ նշանակութուն ունեւր ոչ միայն երկրի բամբակի արդյունաբերութեանը սեփական հումքով ապահովելու տեսակետից, որի կարևորութեանն անժխտելի էր, այլև հետապնդում էր ուրիշ նպատակ: Հարկ եղած դեպքում բամբակի հումքի որոշ մասը կարտահանվեր Նաև եվրոպական շուկա, շնայած այդ միտքը ոչ միայն շիրակնացավ, այլ ընդհակառակը, Ռուսաստանը իր խոշոր հնարավորութեաններով հանդերձ, մինչև վերջ էլ մնաց որպէս բամբակ ներմուծող երկիր:

Այսպիսով, 1870 թ. բամբակի արտադրանքն՝ Երևանի նահանգում ավելացավ ավելի քան 9 անգամ. արտադրվեց 276876 փուֆ

<sup>1</sup> Պետրովիչի տվյալներով 1870 թ. բամբակի ցանքերը եղել են 23 հազար քէսյատին, իսկ բերքը՝ 273 հազար փուֆ:

զտած բամբակ<sup>1</sup>: Դա նշանակում էր, որ հայրենական բամբակագործությունը կանգնել էր վերելքի ուղու վրա: Միանգամայն հասկանալի էր, որ բամբակի հումքի այգպիսի կարևոր բաղա ունեցող երկիրը, ինչպիսին էր ցարիզմի զաղութ Հայաստանը՝ չէր կարող դուրս մնալ Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերողների տեսադաշտից:

Ցարական կառավարությունը հատուկ ուշադրություն էր դարձնում հայրենական բամբակագործության զարգացմանը Անդրկովկասում և մասնավորապես Երևանի նահանգում, որոնք Ռուսաստանի համար հանդիսանում էին ոչ միայն գյուղատնտեսական հումքի կարևոր բաղա, այլև սպառման շուկա արդյունաբերության արտադրանքը տեղում վաճառելու համար:

Հայաստանը, որի բամբակը մեծ համբավ էր վաստակել երկրի կենտրոնական քաղաքներում, 1877—1878 թթ. տեքստիլ արդյունաբերության ներկայացուցիչների և առևտրականների միջոցով Ռուսաստան է ուղարկել 1,000 և Պողեանի ֆիրմաների համար՝ 8000 հակ (հակը 7,5 փութ է) բամբակի հումք, Մոսկվայի Կարգինկինի ֆիրմային՝ 6000 հակ, Մոսկվայի Ալեքսևևի ֆիրմային՝ 4000 հակ, Չիթախովի ֆաբրիկային (Թիֆլիս)՝ 5000 հակ, իսկ առևտրականներ Դուլգարովը, Կևորկովը և ուրիշները Երևանից Մոսկվա և Նիժնի Նովոգորոդ տեղափոխեցին 17 հազար հակ<sup>2</sup>:

Հայաստանի բամբակը եթե անցյալում երկար ժամանակ (մինչև ռեֆորմը) ուներ բացառապես տեղական նշանակություն, ապա այն հետագայում սկսեց վաճառվել հատկապես երկրի տեքստիլ կենտրոններում, այսինքն մտավ համառուսաստանյան շուկա:

Դժբախտարար բամբակի հումքի այդ արագ վերելքը ոչ միայն շարունակվեց, այլև շուրջ մեկ տասնամյակ ընկավ<sup>3</sup>:

1876 թ.	արտադրվել է	132.000	փութ բամբակ
1877 թ.	»	149.000	»
1880 թ.	»	81.084	»
1881 թ.	»	42.829	»
1882 թ.	»	74.183	»
1883 թ.	»	73.262	»

<sup>1</sup> Н. Н. Спасский, Сельскохозяйственные статистические сведения об Эриванской губернии за 1870 г. Сборник сведений о Кавказе, том II, Тифлис, 1872, стр. 177.

<sup>2</sup> Օ. Մ. Հովհաննիսյան, Ազրբայձին հարցը Երևանի նախկին նահանգում, Երևան, 1949, էջ 66:

<sup>3</sup> П. Петрович, Хлопководство в Закавказье, Тифлис, 1912, стр. 11.

Ինչպես տեսնում ենք, նահանգում բամբակի հումքի արտադրանքը 1883 թ. 1870 թ. համեմատությամբ պակասել է 3,8 անգամ: Բամբակի արտադրանքի ժամանակավոր իջեցումը, որի անկումը, ոչ միայն շահասավ 1861 թ. մակարդակին, այլ բերքի ամենացածր տարում (1881 թ.) 13 հազար փթով գերազանցեց այն: Այդ ամենից առաջ Ամերիկայից Ռուսաստան ներմուծվող բամբակի հումքի աճման արդյունք էր: Եթե 1870 թ. ներմուծվել էր 2605 հազար փութ բամբակ՝ 31 միլիոն ռուբլու արժույթյամբ, ապա 1880 թ. հասավ 5223 հազար փթի 53 միլիոն ռուբլու՝ ընդհանուր արժույթյամբ: Տասը տարում զրեթե կրկնապատկեց բամբակի ներմուծումը և 1,7 անգամ ավելացավ նրան վճարած գումարը: Ներմուծվող բամբակի արագ վերելքը հասցրեց զների անկմանը ներքին շուկայում<sup>2</sup>:

Երկրորդ՝ 1877 թ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Երևանի նահանգում արտակարգ բարձրացավ հացահատիկի գինը, ցորենի փթի գինը հասավ 6—7 ռուբլու: Վերահաս սովի վտանգը կանխելու նպատակով Արարատյան դաշտի գյուղացիները բամբակի փոխարեն ընդարձակեցին ցորենի, դարու, բրնձի կուլտուրաների մշակույթը: Բամբակի արտադրանքի անկման հետևանքով Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերողները փակեցին Հայաստանում եղած բամբակի գնման իրենց կայանները:

Ռուսաստանը պետք է ունենար բամբակի հումքի իր սեփական բազան: Հայրենական բամբակի բազայի ստեղծումը, որ առաջ էր քաշվել զեռուս 30—40-ական թվականներին, երկրի համար վճռական նշանակություն ուներ ամենից առաջ այն պատճառով, որ արտասահմանից ներմուծվող բամբակը, երկիրը կախման մեջ դնելուց բացի, միշտ կարող էր վտանգի տակ դնել նաև նրա տեքստիլ արդյունաբերության նորմալ զարգացումը, ինչպես որ տեղի ունեցավ 60-ական թվականներին:

Երկրորդ, որ ներմուծվող բամբակը երկրից տարեկան տանում էր խոշոր գումարներ, այն էլ ոսկի, իսկ դա չէր կարող չհարվածել Ռուսաստանի տնտեսական և քաղաքական հզորությանը: Սկսած 80-ական թվականներից Անգրիտվիասում և մասնավորապես Երեվանի նահանգում արտակարգ ակտիվանում է Ռուսաստանի տեքստիլ ֆիրմաների գործակալների և բամբակի առևտրական միջնորդների գործունեությունը: Իր գործունեությունն է ակտիվացնում

1 «Кавказский календарь» 1885, стр. 252.

2 Նույն տարիներում գոտած բամբակի փութը վաճառվում էր 4 ռուբլուց մինչև 8 ռուբլի 40 կոպեկ, իսկ հնդավորինը՝ 4 ռուբլուց մինչև 2 ռուբլի 20 կոպեկի:

«Անգրեյ Կորզինկին մեծ Յարոսլավսկու մանուֆակտուրային ակցիոններական ընկերությունը»: Նա 1886 թ. Երևանում, Շարուր-Պարալագզազի գավառի Ենգիջա գյուղում և այլ վայրերում հիմնում է բամբակի դեման կայաններ, իսկ առանձին գյուղերում՝ բամբակ զտող մեքենաներ: Մեկ տարի հետո հանգես են գալիս Վլադիմիր Ալեքսեևի (Մոսկվա), Պոզնանի (Լոձ), Չիտախովի (Ռիֆլիս) ֆիրմաների ներկայացուցիչները՝ Վերոհիշյալ ֆիրմաների գործունեության ակտիվացման հետ մեկտեղ Հայաստան են գործուղվում նաև գյուղատնտեսության մասնագետները՝ բամբակի կուլտուրայի մշակումը բարելավելու և ամերիկյան բամբակի սերմը տարածելու նպատակով:

1883 թ. Երևան է գալիս Սամուլևսկին: Նա ուսումնասիրում է նահանգի բամբակագործության վիճակը, գյուղացիներին, որոնք մինչև այդ գրեթե գաղափար չունեին ագրոկանոնների մասին, բամբակի ցանքսը և մշակումը կատարում էին պրիմիտիվ ձևերով, Սամուլևսկին նրանց սովորեցնում է բամբակի մշակման և զտման կանոնները, ծանոթացնում ամերիկյան բամբակի առավելություններին, իսկ 1883 թ. Ս. Մորոզովի Մանուֆակտուրայի ընկերության հանձնարարությամբ, գյուղացիներին խրախուսելու նպատակով ձրի բաց է թողնում 200 փութ ամերիկյան բամբակի սերմ: 1885—1886 թթ. նույն ընկերությունը Անգրկովկասի և Ռուրքեստանի բամբակագործներին տալիս է 500 փութ սերմ: Մահացած Սամուլևսկուն փոխարինելու է գալիս (1887) Ն. Պ. Տարատինովը<sup>2</sup>, որի ղեկավարությամբ մեկ տարի հետո Սարգարի այգում կազմակերպվում է բամբակի ցանքսերի օրինակելի մշակման փորձադաշտ: Տեղական «կարա-կոզա» և ամերիկյան բամբակի առավելությունները պարզելու համար՝ բերենք մեկ դեպատինի վրա կատարած ծախսերի և ստացած եկամուտների տվյալները, որը կատարել է Ա. Ն. Խան-Աղովը 80-ական թվականների սկզբներին՝ էջմիածնի գավառում<sup>3</sup>:

Թվերից երևում է, որ ամերիկյան տեսակի բամբակի մեկ դեպատին ցանքի մաքուր եկամուտը եղել է 33 ռուբլի 80 կոպեկով

1 Н. П. Таратинов, Очерк хлопководства в Закавказье. Труды Кавказского общества сельского хозяйства, Тифлис, 1888, стр. 622.

2 «Труды съезда хлопководов», т. II, ч. II, Тифлис, 1914, стр. 58.

3 «Материалы для изучения экономического быта гос. крестьян Закавказского края», т. III, ч. I, Тифлис, 1886, стр. 314—315.

Ծախսերը և եկամուտները	Տեղական տեսակը		Ամերիկյան տեսակը	
	ա.	կ.	ա.	կ.
<b>Ծախսերը</b>				
Հերկը զուլթանով . . . . .	6	40	6	80
Խմբեր քաշելը . . . . .	1	80	1	80
Փխրեցուժը և սերմի դանելը . . . . .	12	80	12	80
Ջրելը . . . . .	3	60	3	60
Ֆաղհանելը . . . . .	9	50	9	50
Բամբակ հավաքելը . . . . .	4	50	7	40
Զրազված կնիզուղների հավաքումը և նրանցից հումքի ստացումը՝ զամբյուղներում թափահարելու միջոցով . . . . .	10	—	—	—
Բամբակը կորիզից զտելը . . . . .	4	40	7	—
Ձուվարի վարձը . . . . .	—	35	—	35
<b>Ընդամենը</b>	<b>53</b>	<b>35</b>	<b>49</b>	<b>25</b>
<b>Համախառն եկամուտը</b>	<b>102</b>	<b>—</b>	<b>131</b>	<b>70</b>
<b>Ծարուր եկամուտը</b>	<b>48</b>	<b>65</b>	<b>82</b>	<b>45</b>

բարձր, քան տեղական բամբակինը, մինչդեռ վերջինիս ծախսը 4 ուրբլի 10 կոպեկով գերազանցել է առաջինին:

Այսպիսով, տեղական և ամերիկյան բամբակների ցանքսերի մեկ զեսայատինի ծախսերի և եկամուտների համեմատումից պարզվում էր, որ ամերիկյան բամբակը, որը «գերազանցում էր տեղականից իր թելերի երկարությամբ, փայլունությամբ և քնքուշութեամբ»<sup>1</sup>, կարա-կողայի նկատմամբ ուներ գերազանց առավելություններ, ինչպես ծախսերի, այնպես էլ եկամուտների տեսակետից: Հետևաբար տեղական բամբակը ամերիկյան բամբակով փոխարինելը դարձել էր անհետաձգելի հարց: 90-ական թվականների սկզբներին նահանգում ամերիկյան բամբակը ցանում էին 5—6 անգամ ավելի քան տեղականը և այդ պրոցեսը այնքան արագ էր կատարվում, որ վաղ թե ուշ խիստ կնվազեր կամ ամբողջովին կվերացվեր տեղական բամբակի մշակումը: Եվ դա հասկանալի էր, որովհետև ամերիկյան տեսակի բամբակը զտվում էր անհամեմատ հեշտ, տալիս էր շատ, որակով բարձր հումք, և ամենազլխաավորը, որ խրախուսվում էր ոռոջաբերական տնտեսների կողմից:

1 2. Արանեսյանց, Երևանի բուսականությունը, Երևան 1881, էջ 25:

«Ոչ շատ տարիներ անց,—ասել է Ն. Պ. Տարատինովը,—նահանգի բամբակագործները զգացին ամերիկյան սերմի և ամերիկյան բամբակի վճռական առավելությունները տեղականի նկատմամբ, ինչպես որակի, այնպես էլ քանակի տեսակետից: Քանի որ ամերիկյան սերմը տեղականի համեմատությամբ տալիս էր և շատ բերք և բարձր էր նրա գինը, բացի այդ ամերիկյան բամբակը դաշտից հավաքելը և գտելը Կոտն-ջին (բամբակազտիչ) մեքենաներով կատարվում էր անհամեմատ ավելի հեշտ, քան տեղականը և հետևաբար նրա բերքահավաքն ու դտումը նստում էր էժան»<sup>1</sup>: Ճիշտ է, դեռևս լիովին չչավացավ բամբակի որակը և ժամանակ ու համառաշխատանք էր պահանջվում այդ գործում, բայց մի բան պարզ էր, որ նահանգի բամբակագործները ոգևորվելով բամբակի որակական ցուցանիշների փոփոխման նախնական արդյունքներով, որը անցյալում քիչ էր հաջողվում, հաղթահարեցին եղած դժվարությունները և ապահովեցին նրա հետագա գերակշռությունը ամբողջ ցանքատարածություններում:

Ցարական կառավարությունը խիստ շահագրգռվեց՝ հայրենական բամբակագործության զարգացումով: 1878 թ. դեկտեմբերի 27-ին հատուկ հրամանագրով բարձրացվեց Եվրոպայի վրայով Ռուսաստան բերվող բամբակի մաքսը՝ 1841—1863 թթ. ներմուծվող յուրաքանչյուր փութ բամբակից դանձվում էր 20 կոպ. մաքս, իսկ նոր օրենքի համաձայն դանձվեց 40 կոպեկ՝ ոսկով, 90-ական թվականներին 1 ռ. 20 կոպեկ ծովային սահմաններից և 1 ռ. 30 կոպեկ ցամաքային սահմաններից<sup>2</sup>:

Ներմուծվող բամբակից դանձվող մաքսերի արտակարգ բարձրացման հետ մեկտեղ Անդրկովկասում միաժամանակ ծավալվեց երկաթուղային շինարարությունը: 1899 թ. շահագործման հանձնվեց Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Ղարս երկաթգիծը, 1902 թ. Ալեքսանդրապոլ-Երևան, իսկ 1908 թ.՝ Երևան-Նախիջևան-Ջուլֆա մագիստրալը: Այդ երկաթուղիների գործարկումները վճռական դեր խաղացին Հայաստանի ամբողջ էկոնոմիկայի հուժեղ ու վերելքի գործում: Երկաթուղու շնորհիվ Ռուսաստանի կենտրոնական քաղաքները հոսեց երկրի գյուղատնտեսական էժան արտադրանքը՝ խաղողը, բամբակը, խմիչքը և այլ մթերքներ, իսկ այնտեղից բերվեց գյուղատնտես-

<sup>1</sup> Труды Кавказ. общества сельского хозяйства, № 3—5, Тифлис, 1890, стр. 171.

<sup>2</sup> П. Петрович, Хлопководство в Закавказье, Тифлис, 1912.

սական գործիքներ, արդյունարերական ասլրանքներ, տեքստիլ գործվածքներ և այլ անհրաժեշտ ասլրանքներ: Նահանգի բամբակագործութեան զարգացմանը նպաստեց նաև այգեգործութեան եկամտի իջեցումը<sup>1</sup>:

Ըստ Զավարյանի տվյալներով<sup>2</sup> 1894 թ. էջմիածնի գավառի Փարբի գյուղում, երբ գյուղատնտեսությունը չէր ենթարկվել բնական որևէ աղետի, այդու մեկ զեսյատինի ընդհանուր եկամուտը կազմել է 160—200 ուրլի, իսկ նրա վրա կատարած ծախսերը՝ 160—200 ուրլի, այսինքն եկամուտը հազիվ-հազ ծածկել է ծախսերը: Տվյալ զեսյատում այն անեկամտարեր ճյուղ էր, մինչդեռ բամբակի զեսյատինը տվել էր՝ 24—64 ուրլու եկամուտ, ցորենինը՝ 60—76 ուրլի և այլն: Սակայն դրանից չպետք է ելրակացնել, թե նույն վիճակը գոյություն ունեւր այգեգործական և մյուս գավառներում. եթե այդպես շարունակվեր, ապա այն Արարատյան դաշտից ամբողջապես կվերացվեր: Սակայն գոյությունը բարվոք չէր կարելի համարել, քանի որ խաղողի եկամուտը մյուս կուլտուրաների համեմատությամբ իրոք որ ցածր էր:

«Մեր երկրում աճող թանկագին բույսերի մեջ,— գրել է Ա. Աթանեսյանը,— բամբակը բռնում է առաջին տեղերից մեկը և շատ շքեղաններում, նա խաղողից էլ ձեռնտու է: Երևանի նահանգի Գյառնիբասարի մահալում (ներկա Արտաշատի շրջան) շատ զեսյքեր են եղել, երբ գյուղացիք արմատահան են արել իրենց խաղողի այգիները և տեղը բամբակ ցանել՝ առարկելով թե «բամբակի մուշտարին միշտ էլ արտի պլսին կանգնած է, իսկ զինունը՝ օխտը սարի քամակին թաքնված է»<sup>3</sup>: Նահանգի գյուղացիները ոգևորվելով խախողի համեմատությամբ բամբակի գնի գերազանց առավելություններից և շուկայում նրա արագ վաճառքից, ավելացրին բամբակի ցանքսերը և նրա արտադրանքը:

1890 թ. բամբակի ցանքսերը հասան 29.150 զեսյատինի, արտադրանքը՝ 508.750 փթի, այսինքն մոտ 7 անգամ ավելի, քան արտադրվել էր 1883 թվականին, իսկ 3 տարի հետո 32.142 զեսյատին տարածությունից հավաքվեց 552.957 փութ հումք: Դա խսկապես նահանգի բամբակագործների վերջին շրջանի կարևոր նվաճումն էր:

<sup>1</sup> 90-ական թվականներին գյուղացին չորաքանչյուր խարվար խաղողի եկամտի  $\frac{1}{4}$ — $\frac{1}{3}$  կամ 4 ու. 50 կոպեկից մինչև 5 ուրլի «Ակցիզ» էր տալիս:

<sup>2</sup> С. Заварян, Опыт исследования сельского хоз. хлебородного района Эриванской губернии и Карской области, Тифлис, 1899, стр. 139.

<sup>3</sup> «Գյուղատնտես», 1909, № 2, էջ 322:

Սակայն բամբակագործության սկսված վերելքը հրկար չտևեց, 1900 թ. ցանքսերը իջան 15.257 դեսյատինի, իսկ արտադրանքը՝ 382.025 փթի: Բամբակագործության մեջ տեղի ունեցող անկումը հետևանք էր հացահատիկի գների բարձրացման, բամբակի գնի իջեցման<sup>1</sup> և հրկրամասի մյուս մարդերում բամբակի ցանքսերի ընդլայնմանը. օրինակ՝ Ելիզավետպոլի նահանգում բամբակի հումքը 15 տարվա ընթացքում (1891—1904) ավելացել է ավելի քան երեք անգամ, 32 հազար փթից հասել 100 հազար փթի: Բամբակի մշակության մեջ զբաղվել են Թիֆլիսի և Քութայսի նահանգներում:

Սրանք են նահանգի բամբակագործության զարգացման վրա ներգործող բացասական գործոնները, սրտնք և դանդաղեցրին նրա վերելքը: Քանի որ Ռուսաստանի բամբակի արդյունաբերությունը XX դարի սկզբներին տարեկան տալիս էր 52 միլիոն ուլբլուց ոչ պակաս արտադրանք<sup>2</sup> և դարձել էր երկրի վերամշակող արդյունաբերության ամենխոշոր ճյուղերից մեկը, ուստի հրամայաբար պահանջվում էր զարգացնել հայրենական բամբակագործությունը, որովհետև բամբակի արդյունաբերության արագ զարգացումը սկսվել էր նաև Հյուսիսային Ամերիկայում: ԱՄՆ, որը տալիս էր համաշխարհային բամբակի 85% -ը, կարող էր կրճատել կամ ամրողջապես դադարեցնել նրա հետագա արտահանումը<sup>3</sup>:

Բամբակի արդյունաբերությունը վերահաս վտանգից փրկելու և նրա անխափան աշխատանքները ապահովելու նպատակով Ռուսաստանի հողագործության և պետական գույքի մինիստրության նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ բամբակի մշակման կենտրոններում գումարովեցին բամբակագործների համագումարներ

1904 թ. հոկտեմբերի առաջին կեսերում Անդրկովկասի բամբակագործական խոշոր կենտրոններ՝ Աղզաշ գյուղում (Ելիզավետպոլի նահանգ) և Երևան քաղաքում տեղի ունեցան բամբակագործների անդրանիկ համագումարները, որտեղ քննարկվեց այդ նահանգներում բամբակագործության զարգացումն արդելակող խոշորողտների վերացման հարցը:

Համագումարների առանցքային հարցը՝ «Անդրկովկասի բամ-

1 Երևանի նահանգում մարտի բամբակի փութը, եթև 1887 թ. փաճառվում էր 11—12 ուրլի, ապա 1895 թվականին՝ իջավ 6—7 ուրլու:

2 Труды съезда хлопководов в селе Агдаш Елизаветопольской губернии и в Эривани, 1904, стр. 42.

3 Նույն տեղում:

բակագործների գլխավոր կարիքների մասին», Ն. Պ. Տարատինովի տված ղեկուցման լաճն քննարկումն էր: Երկրամասում բամբակագործությունը, որպես արտակարգ կարևոր և ընդհանրապես ձեռնըտու տնտեսական ճյուղ, — ասված է այդ ղեկուցման մեջ, — որի տարեկան եկամուտները հասնում էին 6—7 միլիոն ռուբլու՝ 600—700 հազար փուխ գտած բամբակի հումք արտագրելու դեպքում: Բամբակագործության հետագա աճը հնարավորություն կտար ավելացնել բամբակի տեսակարար կշիռը և դրանով կնպաստեր Ռուսաստանում վերամշակվող հումքի աճմանը, իսկ նրա կորիզի բազայի վրա Անդրկովկասում կստեղծվեին ձեթի, օձառի արտադրության ճյուղերը, ինչպես և քուսպի արտադրությունը, որպես անասնակեր, իսկ նրա ցողունները կլրացնեին հարթավարային շրջանների վառելիքի դրացվող պակասը: Սակայն երկրամասում բամբակի հետագա զարգացումը հնարավոր չէր, եթե չլիարցվեին նրա առաջ կանգնած դժվարությունները, ինչպես, օրինակ, բանվորական ուժի պակասը, թեև Երևանի նահանգը դրա կարիքը չուներ, բայց մշտանների համար դա խիստ անհրաժեշտ էր: Բանվորական ուժի պակասության պատճառով Ղարաչաղում (Թբիլիսիի նահանգ) բամբակի համար պիտանի 10 հազար դեսյատինից օգտագործվում էր 15—20% միայն: Բացի այդ, երկրագործության մեջ չկային կամ խիստ սահմանափակ էին ձեռքի աշխատանքները թեթևացնող մեքենաներն ու գործիքները (խոտ հնձող, կալսիչ, փոցիս և այլն), որոնց օգտագործումը հնարավորություն կտար կարճ ժամկետում ավարտելու գյուղատնտեսական աշխատանքները և կկրճատեր լարտադրանքի մեկ միավորի վրա կատարված ծախսումները:

Բամբակի զարգացմանն արգելակում էին նաև

1. Ոռոգվող ջրի սակավությունը՝ մասնավանդ Երևանի նահանգում:

2. Գյուղատնտեսական մասնագիտական կադրերի պակասը:

3. Ամերիկյան բամբակի մշակման ասպարեզում գյուղացիների անբավարար փորձը:

Երևանում տեղի ունեցած համագումարը միաժամանակ քննարկեց Մ. Գալստյանի «Արարատյան դաշտում բամբակի կուլտուրայի զարգացման համար արտակարգ կարևոր նշանակություն ունեցող գլխավոր կարիքները և պահանջները» թեմայով ղեկուցումը: Զեկուցողը առաջ քաշեց նաև բամբակագործ գյուղացիների վարկավորումը կաղմակերպելու հարցը, որի լուծումը, ըստ նրա, կթեթևացներ շրավոր ու միջակ գյուղացիների տնտեսական ծանր դրությունը:

նը, նրանց կադատեր կուլակներին կախվածությունից: «Վարկավորում» բառը մեկ մոտ (Արարատյան դաշտում—Ն. Ա.) գոյություն չունի: Տվյալ շրջանների բնակչության 95%-ը ընդհանրապես, կախված են հարուստ մարդկանցից, որոնք քամում են առանց այն էլ քայքայված խեղճ գյուղացու հյուսիսը<sup>1</sup>:—Գյուղացուն միայն հումքի վաճառման ընթացքում փթի համար սահմանված գնից պակաս էին վճարում 1 ուրբլի կամ 1 ուրբլի 50 կոպեկ և երբեմն էլ 2 ուրբլուց մինչև 2 ուրբլի 50 կոպեկ: Այսինքն բամբակ մշակողը յուրաքանչյուր փուխ բամբակ հանձնելու ժամանակ կորցնում էր 2—3 ուրբլի<sup>2</sup>:

Այսպիսով, համագումարներում քննարկված հարցերը և ընդունած միջոցառումները ներգործող ազդեցություն ունեցան երկրամասի բամբակագործության զարգացման վրա:

Բամբակի ցանքերը և համախառն բերքը Անդրկովկասում ըստ տարիների եղել է (արտահայտած հազարներով)

Նահանգներ	1904		1909		1910		1911	
	ցանք. գեա.	բերք. փթեր.	ցանք. գեա.	բերք. փթեր.	ցանք. գեա.	բերք. փթեր.	ցանք. գեա.	բերք. փթեր.
Երևանում <sup>4</sup> . . . . .		500,0	29,0	520,0	35,5	600,0	40,4	670,0
Նիդազվեստայում . . . . .		100,0	14,2	215,6	26,6	530,0	53,3	746,0
Քաբվում . . . . .		60,0	5,6	73,5	12,2	182,0	23,6	309,0
Թիֆլիսում . . . . .		10,0	0,52	7,8	1,6	27,0	5,0	68,0
Փոթիսում . . . . .		30,0	0,85	8,3	1,9	28,7	2,7	22,0
<b>Ընդամենը</b>								
<b>Անդրկովկասում</b>	40	700,0	50,2	825,2	77,8	1367,7	125,0	1815,0

Այլուսակից պարզվում է, որ անցած ժամանակում, այսինքն բամբակագործների առաջին համագումարից մինչև երկրորդ հա-

1 Труды съезда хлопководов в селе Агдеш Елизаветопольской губ. и в Эриване в 1904, стр. 102.

2 Там же.

3 С. Н. Тимофеев, Статистика хлопководства в Закавказском крае 1909—1911 гг., Тифлис, 1912, стр. 76.

4 Պ. Պետրովիչի տվյալներով Երևանի նահանգում ցանքեր 1910 թ. եղել է 22620 դեսյատին: Մեր կարծիքով թե Պետրովիչի և թե Տիմոֆևի տվյալները ճիշտ չեն նկատի ունենալով, որ դեսյատինի միջինը այդ տարիներում եղել է 18—20 փուխ, հետևաբար պետք է ենթադրել, որ բամբակի ցանքերի տարածությունը եղել է ոչ թե 35,5—40 հազար, այլ ավելի ճիշտ 30—35 հազար դեսյատին:

Իսկ 1904 թ. նահանգում բամբակի ցանքեր եղել է 22,5 հազ. գեա.:

մադուամարի նախօրյակը՝ 1912 թ. բամբակի արտադրանքը Անդրկովկասում ավելացել է 2,6 անգամ, ցանքսերինը՝ ավելի քան 3 անգամ:

Ելիզավետպոլի, Բաքվի, Թբիլիսիի նահանգներում բամբակի արտադրանքը աճել է 5—7,5 անգամ, իսկ Երևանի նահանգում՝ ընդամենը 1,3 անգամ: Համապատասխանաբար իջավ և վերջինիս տեսակարար կշիռը Անդրկովկասում. բամբակի արտադրանքը 1911 թ. կազմեց 36%, ցանքսերինը՝ 32,2%, 1904 թ. 71 և 56% փոխարեն<sup>1</sup>: Երևանի նահանգում բամբակի դանդաղ զարգացման պատճառները պետք է բացատրել բամբակագործական նոր շրջաններում, մասնավորապես Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում ստեղծված կալվածատիրական խոշոր տնտեսությունների ստեղծումով, որոնք պերազանց առավելություններ ունեին մանր տնտեսությունների նկատմամբ: Սա կարևոր և անփյտելի փաստ է, որպիսին շկար բամբակագործության նախկին կենտրոն՝ Երևանի նահանգում: Մյուս կողմից այն, որ տարեցտարի ընդարձակելով ցանքսերի տարածությունը, սպառել էր բամբակի համար պիտանի ոռոգելի տարածությունները, իսկ ջրովի նոր հողեր այդ տարիներին Արարատյան դաշտում գրեթե չավելացան՝ ջրաշինարարական անրավարար աշխատանքների հետևանքով: Դրան պետք է ավելացնել նաև էջմիածնի և Սուրմալուի դավառներում հողերի տեղ-տեղ քայքայվածությունը՝ որոնք առաջացել էին տվյալ հողերում բամբակի երկարատև մշակման և ցանքսերի անրավարար խնամելու պատճառով: Այսպիսով, Անդրկովկասում կարճ ժամանակամիջոցում բամբակագործների ակտիվ մասնակցությամբ հանդես եկան նոր կենտրոններ, որոնք բամբակի բարձր զների և սպառման մեծ պահանջների շնորհիվ տարեցտարի ավելացրին նրա արտադրությունը: Վերջին տարիներին բամբակի մշակությունը արագ քայլերով առաջ է գնում մեղանում (Անդրկովկասում—Խ. Ա.) գրել է Շահնազարյանը,— և հետզհետե ընդարձակվում են նրա մշակության սահմանները, շնորհիվ բամբակի պահանջին և նրա բարձր զնին, որ լի ու լի վարձատրում է գյուղացուն, եթե նա փոքր ի շատ լուրջ է վերաբերվում գործին, չի նեղվում ջրի կողմից կամ ցանքան ազատ է մնում այս ու այն պատահարից»<sup>2</sup>:

Մենք խոսեցինք նահանգում արտադրվող բամբակի մասին

1 П. Петрович, Хлопководство в Закавказье, Тифлис, 1912, стр. 49.

2 «Գյուղատնտես» № 21, 1910, № 43, էջ 643:

ամբողջությամբ վերցրած, այժմ պարզենք թե ինչ վիճակում էր այն դավառներում, տարբեր տարիներին: Թեև վերջին տարվա ցանքսի և բերքի տվյալները խիստ տարբերվում են նախորդ տվյալներից, այնուամենայնիվ նրանք գալափար ևն տալիս նրա տարածման մասին:

Ցանքը դեպատինով, բերքը փթերով (արտահատված հազարներով)<sup>1</sup>:

Գավառներ	1902		1912	
	ցանքսը	բերքը	ցանքսը	բերքը
Երևանում . . . . .	4,1	70,8	6,1	95,0
Էջմիածնում . . . . .	3,1	38,7	4,2	65,5
Սուրբայրում . . . . .	5,9	235,6	6,4	226,4
Շարուր-Դարալաղազում . . .	1,7	28,9	5,0	59,2
Նախիջևանում . . . . .	0,5	0,8	1,4	21,7
<b>Ընդամենը</b>	<b>15,3</b>	<b>382,0</b>	<b>23,1</b>	<b>467,7</b>

Այսպիսով, տասը տարվա ընթացքում բամբակի առաջնությունը պատկանել է Սուրմալուի և Երևանի գավառներին, երկրորդ, որ բամբակի մշակման հիմնական վայրը եղել է Արաքս գետի ստորին և միջին հովիտը իր բնակլիմայական նպաստավոր պայմանների շնորհիվ: Ինչ վերաբերում է դեպատինի միջին բերքին, որի հաշվառմանը անցյալում հարկ եղած ուշադրություն չէին դարձնում, ապա Պետրովիչի տվյալներով վերջին տասնամյակում եղել է չմաքրածի միջինը՝ 61 փութ, տատանումը՝ 18—140 փութ, մաքրածի միջինը՝ 20 փութ, տատանումը՝ 6—40 փութ: Բամբակի հումքի քանակական փոփոխման հետ փոխվեցին և նրա որակական ցուցանիշները: 1912 թ. նահանգի բամբակի ամբողջ արտադրանքի 91,14 %-ը կազմեց ամերիկյան տեսակի բամբակը՝ 70—80 ական թվականներին եղած շնչին տոկոսների փոխարեն: Այդ թուխքը, որ ավելի արագացավ վերջին տասնամյակում, արդյունք էր ամերիկյան տեսակի բամբակի բերած բարձր եկամուտի, որում համոզվեցին իրենք՝ բամբակադործ գյուղացիները:

Դա հաստատում են 1912 թ. Կովկասյան գյուղատնտեսական ընկերությունների կողմից կատարած ուսումնասիրության տվյալները:

<sup>1</sup> Памятная книжка Эриванской губ. за 1904 и 1914 гг.

Թղթակիցների 70—75 % -ը պատասխանել են, որ այժմ նահանգում բամբակի բերքը լավ է, քան անցյալներում, որոնց նպաստող գործոնները եղել են հողի մանրամասն նախապատրաստումը, ցանքսի լավ խնամքը և ամենակարևորը՝ հողի պարարտացումը և բամբակի որակյալ սերմը: «Այժմ բամբակի բերքը ավելի լավ է (16—18 փութ զտած բամբակ), քան 10 տարի սրանից առաջ: Այդ բարելավումը արդյունք է լավ սերմի» — գրել է Սուրմալուի գավառի թղթակիցը. «բամբակի բերքը լավանում է շնորհիվ սերմի հոգատար ընտրության և լավ մշակման», «բամբակի բերքն այժմ լավ է», «ներկայումս ստացված է լավ բերք» հաղորդել են Իգդիրի թղթակիցները. «շնորհիվ պարարտացման... այժմ ստացվում է բամբակի բարձր բերք» (մինչև 30 փութ), գրել է Երևանի գավառի Դոզլուզ գյուղի թղթակիցը. «բերքը ստացվում է լավ, — գրել է Արազգյանի թղթակիցը, — քանի որ բնակչությանը ավելի շատ է ծանոթացել բամբակի կուլտուրային և դրա հետ մեկտեղ բարելավվում է նաև նրա սերմը». «ներկայումս բամբակից ստացվող բերքը անհամեմատ ավելի լավ է, քան 5 կամ 10 տարի սրանից առաջ» հաղորդել է Վաղարշապատի թղթակիցը և այլն:

Թղթակիցների պատասխաններում կան և հակասող փաստեր, որը պետք է բացատրել ոչ միայն աննպաստ եղանակներով և բնական այլ պատճառներով, ինչպես մեկնաբանում էին ժամանակի մասնագետները, այլ արտադրության միջոցների խիստ անհավասար բաշխումով:

Այդ է պատճառը, որ չէին կարողանում իրականացնել ցանքսաշրջանառությունը, պարարտացումը, հողի նախապատրաստումը ցանքին, ցանքսի ժամանակին մշակումը, ջրումը և այլն: Դրա հետևանքով էլ տարեցտարի քայքայվում և ուժասպառ էր լինում հողը, հետևաբար ընկնում էր և նրա բերքատվությունը: Քիչ չեն դեպքերը, երբ նույն հողում տարիներ շարունակ ցանում էին միևնույն կուլտուրան և արդյունք չէր ստացվում:

«Այժմ բերքը վատ է ստացվում քան առաջ, — գրել է էջմիածնի գավառի Դեղլու գյուղի թղթակիցը, — հողը հյուժվելու և վատ ջրելու հետևանքով». «5—10 տարի առաջ բերքը լավ էր ստացվում, իսկ վերջին ժամանակներս հողը բոլորովին ուժասպառ է եղել և քիչ ու մինչևիսկ չի պարարտացվում» նշել է նույն գավառի Փոքր Շարիար գյուղի թղթակիցը. «հողի հյուժվածությունից բերքը վատ

է ստացւում՝ ընդամենը 7 փութ»—գրել է Սուրմալուի գավառի թրդ-  
թակիցը<sup>1</sup>։

Որոշ աշխատանքներ կատարվեցին նաև բամբակը հունդից  
զտելու ուղղութեամբ։ Նահապետական պրիմիտիվ գործիքներին փո-  
խարինելու եկան նավթի և գոլորշու ուժով աշխատող շարժիչները,  
որոնց քանակը 1911—1912 թվականներին հասավ 355-ի<sup>2</sup>։

Այդ «զավոդները» ինչպես անվանել է Տիմոֆեևը, ըստ գավառ-  
ների տեղաբաշխված էին։

Գավառները	Գավառները ըստ շարժիչների աշխատում էին				
	նավթով	գոլորշիով	ջրով	ձիով	ընդամենը
Երևանում . . . . .	13	8	47	—	68
Սուրմալուում . . . . .	67	—	7	30	104
Էջմիածնում . . . . .	24	19	20	10	80
Շարուր-Նիքոսիում . . . . .	14	—	41	—	55
Նախիջևանում . . . . .	6	11	29	2	84
<b>Ընդամենը<sup>1</sup></b>	<b>124</b>	<b>38</b>	<b>151</b>	<b>42</b>	<b>355</b>

Այդ «զավոդները», որոնք տեղադրված էին բամբակի մշակման  
խոշոր վայրերում և զտնվում էին հարուստների ձեռքում, ձիշտ է  
որոշ գործ կատարել էին, բայց իրենց ոչ կատարելագործվածու-  
թյան հետևանքով չէին բավարարում ժամանակի պահանջները։  
Բամբակը որակով չզտվելու պատճառով ընկնում էր նրա վաճառքի  
պինդը։ Այս ուղղությամբ շատ կարևոր էր Երևանում կենտրոնացված  
բամբակազտիչ գործարանի հիմնադրումը՝ ձեթ-օձառի բամբակ  
հանդերձ։

Անդրկովկասում և միջինասիական երկրներում բամբակի  
զարգացումը պայմանավորված էր Ռուսաստանի բամբակի ար-  
դյունաբերության հումքի պահանջով, որքան մեծանում էր նրա պա-  
հանջը, այնքան ակտիվանում էր բամբակի արտադրանքը ավելաց-  
նելու հետաքրքրությունը։

<sup>1</sup> П. Петрович, Хлопководство в Закавказье, Тифлис, 1912, стр. 97—98.  
<sup>2</sup> С. Н. Тимофеев, Статистика хлопководства в Закавказском крае за  
1909—1911 гг., Тифлис, 1912, стр. 17.

Ռուսաստանի բամբակի արդյունաբերությունը 1890—1910 թթ. վերամշակել է  
(հազարներով արտահայտված)<sup>1</sup>

Տարիներ	Ընդամենը վերամշակ- վել է հազար փթեթով	Այդ թվում	
		հայրենականը	ներմուծվածը
1890	8328	1986	6342
1900	16007	6111	9886
1910	22086	11240	10846

Աղյուսակը ցույց է տալիս, որ եթե 20 տարում Ռուսաստանի բամբակի արտադրության մեջ վերամշակված հումքը ավելացել է 2,8 անգամ, ապա հայրենականը՝ 5,7 անգամ, կազմելով ամբողջ հումքի 50,7% -ը, եղած 24% -ի դիմաց, իսկ տարեկան միջին աճը վերջին տասնամյակում 2,5-ից հասել է 12,1% -ի:

Հայրենական բամբակի 1,4 միլիոն փուլը, իսկ 1912 թ. 1,8 միլիոն փուլը տվել են Անդրկովկասի նահանգները, մնացածը միջինասիական երկրները:

Հայրենական բամբակի արտադրանքը չէր կարելի բավարար համարել, քանի որ երկրի բամբակի արդյունաբերության կախվածությունը օտարերկրյա հումքից դեռևս շարունակում էր մնալ: Ռուսաստանը տարեկան ներմուծում էր 80—100 միլիոն ռուբլու բամբակ<sup>2</sup>, մի բան, որի կողքով ցարական կառավարությունը անտարրեր անցնել չէր կարող, հաշվի առնելով իր երկրի քաղաքական ու տնտեսական շահերը: Հետևաբար հայրենական բամբակագործության զարգացումը պետական խոշոր նշանակություն ունեցող գործ էր, իսկ եղած հնարավորությունները երկրում անսպառ էին: Այդ մասին պետական գույքի և երկրագործության մինիստրությունը գրել է. «Անդրկովկասում և կասբուլի միջինասիական տիրապետություններում բամբակի զարգացման կլիմայական նպաստավոր պայմանները և այդ երկրներում դեռևս չօգտագործված արտադրողական ուժերը՝ անապատային հողերը և ջրային պաշարները, որոնք կարող են օգտագործվել ոռոգման նպատակով, հիմք են տալիս ենթադրելու, որ կասբուլի ներսում անհրաժեշտ ֆանակուրյամբ բամբակի քել կարելի է արտադրել միայն այն դեպքում, երբ

<sup>1</sup> Статистика бумагопрядильного и текстильного производства за 1900—1910 гг., С.-Петербург, 1911, стр. 2.

<sup>2</sup> Труды съезда хлопководов, т. II, ч. I, Тифлис, 1913, стр. 2.

ավելացնենք ոռոգելի հողերը և բարելավենք իրեն բամբակի կուլտուրան»<sup>1</sup> (ընդգծումը մերն է—Ն. Ա.):

Հայրենական բամբակագործության զարգացումը երկար ժամանակ օրակարգի հարց էր: Դրա պատճառն ամենից առաջ այն էր, որ բամբակի վերամշակումը լայն ծավալ էր ստացել ոչ միայն Նվրոպայի երկրներում, այլև նրա արտահանման կենտրոնում՝ ԱՄՆ-ում: Դա հաստատում է բամբակի արդյունաբերության մեջ եղած իլիկների աճը: ԱՄՆ-ը 1890 թ. ուներ 14,2 միլիոն իլիկ, 1900 թ. 19,1 միլիոն, 1910 թ. հասավ 28,3 միլիոն իլիկի՝ բռնելով աշխարհում երկրորդ տեղը Անգլիայից հետո<sup>2</sup>: Մինչդեռ Ռուսաստանը 1890 թ. ուներ 3,45 միլիոն, 1900 թ. 6,65 միլիոն, իսկ 1910 թ. 8,3 միլիոն իլիկ, կազմելով համաշխարհային իլիկների 6,2% -ը, 1890 թ. եղած 4% -ի փոխարեն:

Ռուսաստանը, որն աշխարհում բռնեց շրրորդ տեղը Անգլիայից, ԱՄՆ-ից և Գերմանիայից հետո, ուներ ավելի բիշ իլիկներ, քան աճել էր Ամերիկայում միայն վերջին տասնամյակում (9,2 միլիոն)<sup>3</sup>:

Այսպիսով, եթե Ամերիկայում բամբակի վերամշակման նույն տեմպը շարունակվեր, որը նրան նույնպես ձեռնտու էր հսկայական շահույթներ կորզելու համար, ապա ԱՄՆ-ի արտադրած բամբակը հաղիվհաղ բավարարեր իր երկրի պահանջը միայն: Հետևաբար նա պետք է կրճատեր կամ ամբողջապես զաղարեցներ բամբակի հետագա արտահանումը, իսկ դա նշանակում էր սղեռի առաջ կանդնեցնել Ռուսաստանի բամբակի արդյունաբերությունը: Վերահաս վտանգը կանխելու իրական ուղին հայրենական բամբակագործության բազմակողմանի զարգացումն էր: Այդ կապակցությամբ բամբակագործների համագումարների հրավիրումը նրա արտադրման վաչրերում նորից օրակարգի հարց դարձավ: 1912 թ. վերջերին Թիֆլիսում կայացավ Անդրկովկասի բամբակագործների II համագումարն, որը բննարկեց հետևյալ հարցերը.

1 Труды съезда хлопководов, т. I, Тифлис, 1913, стр. 1.

2 1910 թ. Անգլիան ուներ 53397 հազար, Գերմանիան՝ 10200 հազար, Ֆրանսիան՝ 7100 հազար իլիկ:

3 Статистика бумагопряд. и текстильн. произв. за 1900—1910 гг., С.-Петербург, 1911, стр. 3.

4 Համագումարը կայացավ նոյեմբերի սկզբներին: Մասնակցում էին 388 մարդ, 4 անգամ ավելի, քան երկու համագումարներում միասին վերջրած (Երևանից մասնակցում էին 48 մարդ, Ազգաշից 43 մարդ): Նույն թվականին համագումար տեղի ունեցավ նաև Տաշքենդում:

1. Բամբակագործության ժամանակակից վիճակը Անդրկովկասում և նրա զլխավոր պահանջները:

2. Թիֆլիսի բորսայական կոմիտեի զեկուցումը՝ «Անդրկովկասի պետական հողերը ոռոգելու գործում մասնավորներին անհրաժեշտ է»:

3. Բամբակագործությունը և ոռոգիչ միջոցները Անդրկովկասում:

4. Պետական և մասնավոր վարկավորումը, ինչպես և այլ բնույթի հարցեր: Իսկ մասնագիտական սեկցիաներում լավեցին՝

Առաջին սեկցիայում՝ բամբակագործության տեխնիկան:

Երկրորդ սեկցիայում՝ «բամբակագործության ասպարեզում փորձացուցադրական միջոցառումները և զիտուիստական տարածումը:

Երրորդ սեկցիայում՝ «բամբակագործության դարգացումը կապված ոռոգման և տնտեսական էֆեկտիվության հետ:

Չորրորդ սեկցիայում՝ «վիճակագրական և բամբակագործական կոմիտեիների առևտուրը, և վաճառահանման պայմանները:

Հինգերորդ սեկցիայում՝ կոոպերացիա և վարկավորում:

Վերոհիշյալ սեկցիաներում լավեցին բամբակագործության վերաբերող 104 զեկուցում և հաղորդում՝ կապված տեղական աշխատանքների հետ, իսկ քննարկվող հարցերի վերաբերյալ առաջարկներ և միջոցառումներ ընդունվեցին այլևսար նիստերում: Համագումարն ամփոփեց Անդրկովկասի բամբակագործների առաջին և երկրորդ համագումարների միջև եղած որոշ նվաճումները և մշակեց նրա հետագա զարգացման միջոցառումները:

Բամբակի զանդազ վերելքի ամենազլխավոր պատճառը՝ արհեստական ոռոգման միանգամայն անբավարար զարգացումն էր Երևանի նահանգում: Այդ կապակցությամբ համագումարը որոշեց Գյոզլաջի (Սևանա) լճի ջրերով Արարատյան հարթավայրի հողերը ոռոգելու նախագծի իրականացումը, որը ներկայացված էր սեկցիայի կողմից տնտեսագետ Զ. Ն. Մանասարյանի զեկուցման հիման վրա, գտնել հնարավոր և արտակարգ ցանկալի, ինչպես նաև տափաստանային այդ վիթխարի զանգվածները, որի շուրջը 30 հազար գեոսյատինը կարող է սրամազրվել բամբակի կուլտուրային, դարձնել մշակելի տարածություններ: Հետևաբար տվյալ հողերի մանրամասն ուսումնասիրումը և նրա գործնական իրականացումը հանդիսանում է անհետաձգելի գործ երկրի համար՝ Համագումարը

1 Труды съезда хлопководов, т. 1, Тифлис, 1913, стр. 43.

համապատասխան միջոցառումներ ընդունեց նաև քննարկած մյուս հարցերի վերաբերյալ: Թեև համագումարի առաջ քաշած հարցերը լրիվ չլուծվեցին նաև հետագայում, այնուամենայնիվ բամբակագործությունը՝ շնորհիվ իր եկամտաբերությանը, Անդրկովկասում նոր վերելք ապրեց:

Ցանքերի տարածությունը 1914 թ. հասավ 148,9 հազար դեսյատինի, հումքի արտադրանքը (առանց հունդի) 2167 հազար փթի, այդ թվում Երևանի նահանգում ցանքսը 44 հազար դեսյատին էր, որ ամենարարձրն էր անցյալի համեմատ, իսկ համախառն բերքը՝ 710 հազար փութ<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է Արարատյան դաշտի դյուլատնտեսական կուլտուրաների մեջ բամբակի ունեցած տեսակարար կշռին, ապա այդ մասին պարզ պատկերացում է տալիս մեկ դեսյատինի վրա կատարած ծախսերի և եկամուտների հարաբերության աղյուսակը<sup>2</sup>:

կուլտուրաներ	Ծախսեր		Համախառն եկամուտ		Մաքուր եկամուտ	
	սուբ.	կոպ.	սուբ.	կոպ.	սուբ.	կոպ.
Բամբակի	83	20	244	—	160	80
Խաղողի այգու.	145	—	261	—	116	—
Փարու.	58	25	97	—	38	75
Ցորենի	60	—	92	—	32	—

Այս թվերը ասում են այն մասին, որ մինչև առաջին համաշխարհային պատերազմը, բամբակի մեկ դեսյատինի մաքուր եկամուտը բարձր է եղել խաղողի նկատմամբ՝ 139%-ով, դարիինը՝ 417%-ով, ցորենինը՝ 503%-ով: Եթե այդ ավյալները ընդունենք հիմք, իսկ բամբակի ցանքսերի միջին տարածությունը 30—35 հազար դեսյատին, ապա կստացվի, որ բամբակագործությունը միջին հաշվով տարեկան նահանգին տվել է 4,8 միլիոնից մինչև 5,6 միլիոն ուսույլու եկամուտ:

Մինչդեռ այդ դավառների խաղողի այգիների տարածությունը ընդունելով 10 հազար դեսյատին, մոտավոր եկամուտը կազմել է

<sup>1</sup> См. Тимофеев, Статистика хлопководства в Закавказье, Тифлис, 1915, стр. 12.

<sup>2</sup> Хлопковое дело, № 1—2, 1923, стр. 73.

Ճ, 16 միլիոն ռուբլի: Ահա թե ինչու Արարատյան դաշտի գյուղատնտեսական կուլտուրաների մեջ ամենամեծ ուշագրությունը դարձնում էին բամբակի մշակմանը, որովհետև մեկ փուլի բամբակի վաճառքից<sup>1</sup> ստացած գումարով գյուղացին կարողանում էր գնել 4—5 փուլի և նույնիսկ ավելի հացահատիկ, իսկ բամբակի ցանքսը լավ խնամելու ժամանակ ստացվում էր ոչ թե 16—18 փուլ, այլ ավելի բարձր բերք: Հետևաբար բամբակից ստացված գումարով (եթե հաջող էր բերքը) բամբակագործ գյուղացին առանց որևէ դժվարության կարողանում էր բավարարել իր հացի տարեկան պահանջը և որոշ մասն էլ տրամագրում էր տնտեսության մյուս կարիքները հոգալու համար: «Ներկայումս բամբակի կուլտուրան մեր երկրամասի գաշտավարության մեջ,— հայտարարել է Պ. Պետրովիչը Անդրկովկասի բամբակագործների երկրորդ համագումարում, կարևոր տեղ է գրավել և շատ շրջանների տնտեսական կյանքում խոշոր և պատասխանատու դեր է խաղում: Որոշ տեղերում բամբակը դարձել է այն առանցքը, որի շուրջը պտտվում էր տեղական, ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ առևտրա-արդյունաբերական ազգարնակչության ողջ տնտեսական կյանքը: «Բամբակը» դարձել է այն կախարհական բառը, որը գրավել է շինովնիկներին, բեկին, քոչվորին, շարքային գյուղացուն, կապիտալիստական արենդատորին և սովորական ռենտանտին»<sup>2</sup>:

Սակայն, պատերազմի տարիներին աշխատող ձեռքը և քաշող անասունները մորիլիզացնելու, ուղղման սխտեմը քայքայվելու, ինչպես և գյուղատնտեսական գործիքների սուր պակասության պատճառով տարեցտարի սկսեցին կրճատվել բամբակի ցանքսերը<sup>3</sup> և ամբողջապես լիկվիդացվեցին դաշնակների տիրապետության շրջանում:

«Հայաստանի սահմաններում, գյուղական տնտեսության մեջ գոյություն ունեցող կուլտուրաներից և ոչ մեկը այնքան չի տուժել պատերազմի ընթացքում,— ասված է ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիտեաների 1920—1922 թվականների հաշվետվության մեջ,— որքան

<sup>1</sup> 1909—1912 թթ. մարրած բամբակի փուլը վաճառվել է՝ ամերիկյան տեսակինը 10—14 ռ., տեղականինը՝ 9—12 ռ., իսկ ցորենի փուլը 1911 թ. 1—2 ռ. 50 կոպ.:

<sup>2</sup> П. Петрович, Хлопководство в Закавказье, Тифлис, 1914, стр. 131.

<sup>3</sup> 1915 թ. բամբակի ցանքը եղել է 36,2 հազար, 1916 թ.՝ 30304, 1917 թ.՝ 18 հազար դես., իսկ զոտած բամբակի արտադրանքը համապատասխանաբար 382 հազար, 450 հազար և 275 հազար փուլ:

բամբակի կուլտուրան, զաշնակցական կառավարութեան իշխանութեան օրոք»:



Բամբակագործութեան զարգացման պատմութեան համառոտ շարադրանքից պարզվում է, որ Հայաստանում բամբակի մշակութեամբ զբաղվել են հեռավոր անցյալում:

Սակայն բամբակագործութեան իսկական վերելքը սկսվում է անցյալ հարյուրամյակի երկրորդ քառորդից, Ռուսաստանի հետ Հայաստանի միավորումից և հատկապես 60-ական թվականներից՝ կապված երկրի տեքստիլ արդյունաբերութեան արագ զարգացման հետ:

#### X. А. АВЕТИСЯН

### Развитие хлопководства в Армении в XIX и в начале XX веков

#### Резюме

Исходя из многочисленных письменных свидетельств армянских летописцев—Ананя Ширакаци, Мовсеса Каганкатваци, Мхитара Гоша и других историков последующих периодов—о наличии и пользе хлопка, можно уверенно сказать, что возделыванием хлопка в Армении занимались с древнейших времен.

Подлинное развитие хлопководства начинается с присоединением Армении к России. Главное Управление землеустройства и земледелия России, в целях расширения и развития отечественного хлопководства, разработало широкую программу. На развитие хлопководства в Армении особое внимание обращает Хачатур Абовян. Хлопководство, как высокодоходная отрасль, говорил он, не только поднимет экономику страны и улучшит тяжелое экономическое положение армянского крестьянина, но и снабдит «наши отечественные фабрики» сырьем. Он считал, что необходимо расширить хлопководство не только в Эриванской губернии, но и за пределами Кавказа—в среднеазиатских владениях, что дало бы возмож-

ность выплачиваемые за импорт хлопка денежные средства, которые к концу 30-х годов доходили до 7,4 млн. рублей, а к середине 40-х годов—20 млн. рублей, если не полностью, то хотя бы в пределах третьей части оставить в стране для финансирования других отраслей народного хозяйства. С этой целью Абовян предлагал изменить существующие сорта хлопчатника и совершенствовать процессы очищения хлопка. На это особое внимание обратило Министерство финансов России, в результате чего были получены высококачественные сорта хлопковых семян из Египта, США и других стран, а также хлопкоочистительные машины из Англии и США.

Несмотря на принятие ряда мер, производство хлопка в Эриванской губернии не только не встало на путь подъема, но и сильно сократилось в 40—50 годах, вследствие ввоза из России в Закавказье высококачественной текстильной ткани, количество которой непрерывно росло, а также из-за первых неудач, связанных с ввозом семян хлопка из-за границы.

Подъем хлопководства в Армении начинается с 60-х годов в связи с быстрым ростом хлопчатобумажной промышленности в России. Вследствие гражданской войны в США (1861—1865 гг.) прекратился ввоз американского хлопка, в стране начался хлопковый голод, закрылся ряд предприятий по переработке хлопка. Из 57 действовавших прядильных фабрик в 1863 г. осталось 35, а из 559 ткацких фабрик—33<sup>2</sup>, повсюду поднялись цены на хлопок. Невиданный подъем цен хотя и был временным явлением, но хлопок благодаря своей высокой доходности дал толчок быстрому развитию хлопководства в стране. Производство хлопка в Эриванской губернии с 30 тыс. пудов в 1861 г. поднялось до 276 тыс. пудов в 1870 г., т. е. выросло более чем в 9 раз. Однако начавшийся подъем не только не продолжался, но в течение нескольких последующих лет хлопководство оказалось в состоянии упадка: в 1881 году производство хлопкового сырья снизилось на 42 тыс. пудов, т. е. уменьшилось в 6,5 раза. С падением производства хлопка, явившемся результатом возобновления его импорта, не могли примириться ни царское правительство, ни хозяева текстильной промышленности, ибо импортный хлопок не только наносил ущерб экономической и политической не-

зависимости страны, но мог бы затормозить дальнейшее развитие хлопчатобумажной промышленности России и даже довести ее до катастрофического состояния. Следовательно, единственным средством для предотвращения этой опасности могло стать расширение базы отечественного хлопководства. В этой связи, начиная с 80-х годов, в Армении особую активность проявляют агенты и торговые представители текстильных фирм России. Они создают скупочные пункты в хлопководческих районах, устанавливают разные хлопкоочистительные машины и прессы. Одновременно в эти районы направляются агрономы для изучения условий местности, ознакомления крестьян с преимуществом американских сортов хлопка, с правилами его обработки и очистки. Царское правительство в 1878 г. накладывает высокие пошлины на хлопок, ввозимый в Россию из Европы. Развитию хлопководства в Армении сильно способствовали, с одной стороны, низкий доход от виноградарства, что было результатом «акциза» (налога) на водку, а с другой—строительство железных дорог. Проведение Закавказской железной дороги не только значительно улучшило перевозку товаров, но и сыграло огромную роль во всей экономической жизни края. Производство хлопка в Армении к концу 900-х годов достигло 400 тыс. пудов. Значение армянского хлопка особенно выросло в начале XX столетия, когда хлопчатобумажная промышленность в стране становилась одной из крупных отраслей обрабатывающей промышленности и когда все больше и больше увеличивалась угроза прекращения или сокращения дальнейшего вывоза сырья из США в Россию.

В связи с этим в 1904 и 1912 гг. в Закавказье были созваны съезды хлопководов, где обсуждались самые наболевшие вопросы хлопководства, связанные с конкретными условиями края. Значительная часть мероприятий по развитию собственного хлопководства, принятых на этих съездах, в частности водооросительные вопросы, не получили своего полного разрешения. Тем не менее хлопководство, за счет которого жила значительная часть населения, благодаря своей доходности снова начинает развиваться. Накануне первой мировой войны Эриванская губерния с 30—35 тыс. десятин посевной площади

ежегодно давала 600—700 тыс. пудов очищенного хлопка, что составляло третью часть всего производства хлопка в Закавказье.

В Армении и в других хлопководческих районах России вследствие неуклонного роста отечественного хлопководства, удельный вес последнего в обрабатываемом сырье из года в год увеличивался.

Если за 20 лет обрабатываемый хлопок в стране увеличился всего в 2,8 раза, то количество отечественного сырья выросло в 5,7 раза.

Удельный вес отечественного хлопка в общем количестве обрабатываемого хлопка с 24% в 1890 году вырос до 50,7% в 1910 году, что является результатом длительной и упорной борьбы хлопководов страны.

Таким образом, хлопководство, которое накануне первой мировой империалистической войны ежегодно давало от 4 до 5 миллионов рублей чистого дохода, т. е. в 3—4 раза больше, чем давало виноградарство, стало ведущей отраслью сельского хозяйства Араратской равнины и сыграло решающую роль в экономической жизни Армении.

## ԲՐՈՆՋԵԳԱՐՅԱՆ ԱՆՍՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ

Հայաստանում կենդանիների ընտելացման առաջին փորձերը համընկնում են մեղուլիթյան դարաշրջանին, իսկ ձևավորված նախնական անասնապահական շրջանը հաշվվում է ավելի քան 5000 տարի: Կենդանիների ընտելացումը կապվեց նստակյաց սպայամանների և նախնական երկրագործության հետ: Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ անասնապահությունը և երկրագործությունը թեև դանդաղ, բայց դարեր շարունակ զարգացել են իրարից անբաժան:

Ընտանի կենդանիների ու երկրագործության միատեղ զարգացման մասին գաղափար ենք կազմում հուշարձանների պեղումների նյութերից: Այդ նյութերի հիման վրա հաստատվում է, որ դեռևս 5000 տարի առաջ ընտելացված են եղել ոչխարը, այծը, խոզը: Մշակվել են ցորենը, դարին, կորեկը: Նույն ժամանակաշրջանին է վերաբերում Շենգավթում, Մոխրաբլուրում, Ֆիուլետովոյում և այլ վայրերում հնագիտական պեղումների և հետազոտությունների ժամանակ գտնված ընտանի կենդանիների քարե և կավե արձանիկները: Վերջիններս ոչ միայն ապացույց են կենդանիների ընտելացման, այլև արվեստի մասին ունեցած մեր նախնիների յուրահատուկ պատկերացումների:

Շենգավթում, Շրիշ բլուրում, Մխլութափայում, Գառնիում, Դվինում և այլ վայրերում գտնված մեծ թվով երկրագործական աշխատանքային գործիքները (աղորիքներ, կայծաքարից և օբսիդիանից մանդաղների ներդիրներ), վերաբերում են էնեոլիթին:

Պետք է ենթադրել, որ էնետլիթում անասնապահությունը և երկրագործությունը չէին ապահովում մեր նախնիների ապրուստի պահանջները և այդ պատճառով էլ որսորդությունը, գետերի և լճերի ափերին ապրող տոհմերի համար նաև ձկնորսությունը, անունդ ձեռք բերելու կարևոր միջոցներն էին:

Որսորդության հետ միասին անասնապահությունը հսկայական դեր կատարեց սննդի և հագուստի բավարարման հարցում: Էնգելան ասում է, որ «...որսորդության կողքին նա (անասնապահությունը — Հ. Մ.) նոր աղբյուր բաց արեց, որտեղից դա ավելի կանոնավոր կերպով կարելի էր ստանալ, և բացի այդ, կաթի կաթնամթերքների ձևով նոր, իր բաղադրովյա՞մբ մսին առնվազն հավասարաթեք, սննդի առարկա մատակարարեց:

Այսպիսով, արդեն այս երկու նվաճումներն էլ անմիջականորեն մարդու համար ազատագրման նոր միջոցներ հանդիսացան»<sup>1</sup>:

Անասնապահությունը զարգանալով հետագայում որոշ ցեղերի համար դարձավ սննդի գլխավոր աղբյուր: Անասնապահության զարգացման սկզբնական շրջանում, ավելի ճիշտ վաղ բրոնզի դարից մեծ թափ է ստանում մանր եղջերավոր կենդանիների զարգացումը: Դա այն շրջանն էր, երբ բնիկների մեջ գտնվող քոչվոր ցեղերը պայքարում էին արտաավայրերի ընդարձակման համար, որը կենսական նշանակություն ուներ անասնապահության զարգացման գործում: Այս շրջանում ճիշտ է դանդաղ, բայց աճում էր նաև խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը:

1952 թվականին Ապարանի շրջանի Զարջարիս գյուղում մեր կատարած պեղումների ընթացքում հայտնաբերվեց XXIII—XXI դարերին (մ. թ. ա.) պատկանող դամբարան, որի մեջ թաղված էին եզան գանգը և ոտքերի վերջավորությունները: Գանգը հանձնվեց մասնագիտական ուսումնասիրման:

Ս. Կ. Դալը, որը բաղմակողմանիորեն ուսումնասիրեց այն, գտավ, որ այդ դանգը պատկանում է ՍՍՈՄ-ի սահմաններում առաջին բնտեղացված եղնների ցեղին (*Bostaurus primigenius*): Ավելի ուշ ժամանակաշրջանի են պատկանում Կիրովականում Բ. Բ. Պրոտորովսկու պեղած մեծ կուրգանից գտնված խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորները, Ալավերդու շրջանի Ղաչաղան գյուղում մեր պեղած մեծ կուրգանից գտնված խոշոր եղջերավոր կենդանիների

1. Յո. էնգելս, Աշխատանքի դերը կապիլ՝ մարդու փոխարկվելու պրոցեսում, Երևան, 1948, էջ 12:

ոսկորները, Ալավերդու շրջանի Ղաչաղան գյուղում մեր պեղած մեկ կուրգանից հանված եզան ոսկորները և գանգի մեկ բեկոր:

Խոշոր և մանր եղջերավոր անասունների աճի մասին հարուստ փաստերի ենք հանդիպում Սևանի ավազանում, առանձնապես Լճաշենում կատարվող պեղումների ընթացքում: Այստեղ մեծ կուրգաններում հանդիպում են եղների, ոչխարների, այծերի, խոզերի, ձիերի, շան և անտառաբնակ կղաքիսների գանգեր, ամբողջական կմախքներ և ոսկորների մնացորդներ:

Բացվել են XIX—XII դարերին (մ. թ. ա.) պատկանող այնպիսի կուրգաններ, որոնց մեջ թաղվել են բացառապես մանր և խոշոր եղջերավոր կենդանիներ: Այսպես, 1955 թվականին Լճաշենից 3 կմ դեպի հարավ-արևելք լճի ցամաքած տարածություն վրա պեղած մի դամբարանում գտնվեց ոչխարի կմախք: Թեև այստեղ մարդու ոսկորներ չկային, բայց դրված էին մեծ քանակությամբ կավե ամաններ, որոնք ներկված էին երեք գույնով (սև, սպիտակ և կարմիր): Լճաշենում պեղվել են նաև մի քանի դամբարաններ, որոնց մեջ գտնվել են միայն եղների գանգեր և նրանց ոտքերի վերջավորությունները կամ կողոսկրերից մի քանիսը: Երբ առաջին անգամ բաց արինք IX դարին (մ. թ. ա.) վերաբերող մի մեծ դամբարան, որի արևելյան ճակատի անկյուններում խնամքով դրված էին երկու եղների գանգերը՝ ղնչերը դեպի երկինք ուղղված, մեղ համար թաղման արտասովոր այս վիճակը մի պահ տարօրինակ թվաց, բայց երբ նույն ժամանակաշրջանին պատկանող ևս երկու դամբարաններում հանդիպեցինք նույնատիպ թաղումների, պարզվեց, որ վաղ բրոնզի դարում թաղման նմանօրինակ ձևը ընդունված է եղել: Լճաշենում և Հայաստանի այլ վայրերում հայտնաբերված կենդանիների թաղման այս ձևը հիմք է տալիս ենթադրելու, որ այն կապված է եղել դիակիզված ննջեցյալի պատվին կատարվող զոհաբերության և կենդանիների պաշտամունքների հետ:

Կենդանիների պաշտամունքը, հատկապես եղների, եղել է համատարած երևույթ՝ կապված երկրագործության հետ: Եզան պաշտամունքը խոր հնություն ունի: Հայկական լեռնաշխարհում մեծ հատկություններ է վերագրվել նրան, նույնիսկ որոշ դեպքերում ֆետիշայվել է: Ղրան պետք է վերագրել 1905 թվականին Ուրմիո լճի մի թերակղզում (Ղարաբաղ կոչվող) պատահաբար հայտնաբերված մի եզան մոմիացված կմախքի գոյությունը<sup>1</sup>, 1864 թ.

<sup>1</sup> Խ. Սամուկյան, Բանբեր, 1921—1922, էջ 20, նույնը տե՛ս «Հանդես ամսորյա», № 23, էջ 119, Ատրպետի հոդվածը:

Սղերդի վանքերից մեկում պահվում էր սպիտակ մի գոմեշ, որն ուներ իր սպասարկող անձնակազմը և նույնիսկ օժվում էր անուշահոտ յուղերով<sup>1</sup>։

1954 թվականին Սիսիանի շրջանի Տոլորս գյուղում պեղված մի դամբարանում գտնվել է եղան բրոնզե գլուխ, որը ամրացված է եղել հատուկ պատվանդանի վրա։ Նրա ճակատի վրա նկատելի է եռանկյունաձև մի անցք, որի մեջ հավանաբար դրված է եղել գունավոր քար<sup>2</sup>։

Կենդանիների, հատկապես խոշոր եղջերավոր կենդանիների, մեծարման, թաղման սովորույթների և հանդերձյալ կյանքի մասին ունեցած հատկացողությունների ու պատկերացումների հետ են կապված Հայաստանում պեղված հարյուրավոր այն դամբարանները, որոնց մեջ դրված են մանր և խոշոր եղջերավոր կենդանիների դանգեր, ոտքերի վերջավորություններ, ազդրոսկրեր կամ ամբողջական կենդանիներ։

Այս տեսակետից ուշագրավ են Յամաքաբերդ գյուղի մոտ կատարված պեղումները։ Այստեղ պեղված ամլելի քան 30 դամբարաններում որպես կանոն դրված է խոշոր եղջերավոր կենդանիների ետևի ձախ ոտքի ազդրոսկրը և 3—4 հատ ձախ կողերից։ Պետք է ենթադրել, որ այդ երեույթը կապված է թաղման սովորույթի, նյութական հարցերի և կենդանու մեկ կողմն ուտելի, մյուս կողմն անուտելի (հարամ) համարելու հասկացողության հետ։

Այս սովորույթը հարատևել է հաղարամյակներ, որի վերապրուկները հասել են մեզ։ Կովկասյան ժողովուրդներից շատերի մոտ, այդ թվում նաև հայերի՝ ուղտի մեկ կողմը ճանաչված է ուտելի, մյուսը՝ ոչ, ճիշտ այնպես, ինչպես արջինը<sup>3</sup>։

Կան մի շարք օրինակներ, երբ բրոնզի դարում պաշտվող կենդանիները թաղվել են հատուկ պատրաստած դամբարաններում կամ առանց մարդու, կամ նրանց սպասարկող անձնակազմի հետ։

Երվանդ Լալայանը, Կամո քաղաքի մոտ Մրթբի ձոր կոչվող վայրում պեղել է պաշտվող եղան մի դամբարան, որտեղ գտնվել են մի շարք կավամաններ և խողովակաձև իրեր, որոնց Լալայանը անվանում է խնկամաններ։ Հենց այդ խնկամաններով խոնկ է ծիվել պաշտվող եղան դամբարանում։

<sup>1</sup> «Հանդես ամսօրյա», № 23, էջ 223։

<sup>2</sup> А. О. Мнацаканян, Находки предметов бронзового века в селе Толорс, КСИИМК, 1954, вып. 54, стр. 101.

<sup>3</sup> Հ. Մնացականյան, Հնագույն դամբարանադաշտ Յամաքաբերդ գյուղի մոտ, ՀՍՍՌ ԳԱ Հասարակական բաժանմունքի «Տեղեկագիր», № 5, 1954, 88—90։

Դեռևս 1887 թվականին Դերեգ գետի ձորում, Շեյթան-դաղ կոչվող վայրում ժակ դը Մորգանը պեղել է պաշտվող եղան դամբարան, որն ունեցել է երկու բաժանմունք, մեկում թաղված են եղել երկու մարդ (պաշտվող եղան սպասավորները), մյուսի մեջ ինքը՝ եղը, որի կմախքի վրա Մորգանը նկատել է օբսիդացված բրոնզի հետք:

1953 թվականին Սևանի շրջանի Ցամաքաբերդ գյուղի մոտ լճի ցամաքած տարածություն վրա մենք պեղեցինք մի դամբարան, որի մեջ բացվեցին մեկ ոչխարի և մեկ աչձի կմախք ու մի քանի կավե ամաններ<sup>1</sup>: 1951 թվականին Ախտալյի շրջանի Քաղսի գյուղի Չայ-Նենթայ կոչվող ձորում բացված դամբարանը բաղկացած էր երկու բաժանմունքից: Առաջինում դրված էր մեկ ոչխարի կմախք, որի գանգի տակ կար մեկ տափակ քար, իսկ երկրորդ բաժանմունքում թաղված էր մեկ մարդ:

1936 թվականին պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆաղարյանը Կիրովականում պեղեց մի դամբարան, որտեղ բացվեց մեկ եղան կմախք<sup>2</sup>:

Կան շատ օրինակներ թաղման սովորույթների, հատկացողությունների, զոհաբերությունների ու պաշտամունքների հետ կապված: Խոշոր ու մանր եղջերավոր կենդանիների և նույնիսկ շների համար հատուկ դամբարաններ պատրաստելու սովորույթը գոյություն է ունեցել դարեր շարունակ: Շան ընտելացումը և նրա բազմացումը մենք չենք անջատում անասնապահության զարգացումից և որսորդությունից: Շունը նույնպես մեր նախնիների տնտեսության մեջ դրավել է իր տեղը:

1954 թվականին Ցամաքաբերդ գյուղի մոտ, մեր պեղած դամբարաններից մեկում բացվեց շան կմախք: Մանրակրկիտ չափումների, ուշադիր հետազոտության և բազմաթիվ համեմատությունների միջոցով Ս. Կ. Դալը հաստատեց, որ Ցամաքաբերդից գտնված շունը պատկանել է Քանիս Ֆամիլարիս արաքանների շների խումբին: Ըստ Սափենկովի շների այս տեսակը գոյություն է ունեցել արևմտյան Սիրիոյում դեռևս էնեոլիթում: Ս. Կ. Դալը եզրակացնում

1 Զ. Մեացակեյան, Հնագույն դամբարանադաշտ Ցամաքաբերդ գյուղի մոտ, Հայկական ՍՍՏ ԳԱ Հասարակական բաժանմունքի «Տեղեկագիր», № 5, 1954, էջ 93:

2 Կ. Ղաֆաղարյան, Դամբարանների պեղումները Կիրովականում, Արմֆաների «Տեղեկագիր», 1941, № 3—4, էջ 60:

է, որ Յամաքաբերդի շունը ավելի մոտ է անդրկովկասյան ովչար-կային և հավանաբար սերունն է անդրկովկասյան գայլերի:

Շների համար հատուկ դամբարաններ են կառուցվել նաև Էհնկովկա և Անգարա գետերի խառնարանում:

Շները մեծ դեր են խաղացել ինչպես քոչվոր անասնապահ, այնպես էլ նստակյաց կյանք վարող տնտեսութունների մեջ:

Նրանք եղել են սլաշտպանը տների, հոտերի և որպես օգնական ուժ՝ որսի ժամանակ:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Սևանի ավազանի բնակիչների ապրուստի հիմնական աղբյուրը անասնապահութունից ստացած միջոցներն էին: Նրանք մանր և խոշոր եղջերավոր անասուններից ստանում էին միս, մորթի, բուրդ, կաթ, յուղ, գուցե և պանիր: Անասունները միաժամանակ միջցեղային փոխանակման միջոց էին: Սևանի ավազանի բնակիչների համար զարգացած անասնապահության շրջանում որսորդութունը և ձկնորսութունը սնունդ հայթայթելու օժանդակ աղբյուրներ էին:

Հնագիտական պեղումներով հաստատված է, որ բրոնզի դարում ունեցվածքի աստիճանական կենտրոնացումը ազդեցիկ մարդկանց ձեռքերում համայնքների ներսում առաջացրել էր սոցիալական շերտավորումներ: Այդ շերտավորումների պատճառով ունեզրկվում էին հասարակության ներքին խավերը, համայնքների անդամների մեծամասնությունը: Այս կարևոր երևույթ էր նախնազարյան համայնքների կյանքում, որը հաստատվում է Լճաշենի և Հայաստանի ու Անդրկովկասի միևնույն ժամանակին պատկանող դամբարանների պեղումների նյութերով:

Լճաշենում մեր արշավախմբի պեղած բոլոր մանր դամբարաններից յուրաքանչյուրի մեջ բացվում էին մեկ մարդու կմախք, կողքին դրված 3—8 կավե ամաններ, ոչխարի կամ այծի գանգ: Աշխատանքային գործիքներ, զենքեր և զարդարանքի պարագաներ բացակայում էին: Հակառակ այս փաստի, նույն ժամանակաշրջանին պատկանող մեծ կուրդաններում բացվում էին արտակարգ ուշագրավ և բազմակողմանի հարուստ նյութեր: Պեղված իրերը վերաբերում են տնտեսության բոլոր բնագավառներին: Այստեղ կան աշխատանքային գործիքներ, սառը զենքերի բազմատեսակներ, թռչունների, կենդանիների արձաններ, զարդարանքի հետ կապված ամեն տեսակի իրեր, կավագործության արտադրանքի հարյուրավոր նմուշներ, որոնցից շատերին հանդիպում ենք առաջին անգամ: Կուրդաններն առանձնապես հարուստ են մանր և խոշոր եղջերավոր կենդանիներ-

րի, ձիերի և խոզերի դանդերով ու նրանց ոսկորներով: Մեծ կուր-  
դաններում բացվում էին մեկ և երկու զույգ անիվներ ունեցող դիա-  
կառք-սայլեր, որոնց քաշանների և լծների միացման տեղերում զըր-  
ված էին եզների գանդեր, վերջիններիս ընդհանուր թիվը հասնում է  
22-ի: Նկատելի է, որ այս գանգերը ավելի մեծ ծավալ ունեն, քան  
ժամանակակից եզներինը: Արանց եղջյուրները մեծ մասամբ աճել  
են դեպի առաջ և ստացել կիսալուսնաձև տեսք. հանդիպում ենք  
նաև դեպի վեր բաճած ու ուղիղ տեսքերով եղջյուրների:

Լճաշենում սլեղված եզների գանդերից մի քանիսը ուսումնա-  
սիրում է կենդանաբանական ինստիտուտի աշխատակից Սոնիկ  
Մեջլումյանը: Նրա տվյալների համաձայն եզներից մեկը հնդկական  
ծագում ունի, մյուսները տեղական և պատկանում են Բոս Պրիմի-  
գենուս եզների խմբին: Ինչպես եզների, այնպես էլ մյուս կենդա-  
նիների գանդերն ու ոսկորները պահպանվել են ամբողջովին, միայն  
վերջերս հայտնաբերված երկու եզների եղջյուրները լրիվ քայ-  
քայվել էին:

Ինչ վերաբերում է գտնված ձիերի գանդերին, որոնց թիվը  
հասնում է մոտավորապես 10-ի, դրանք նույնպես լավ են պահ-  
պանված: Ուշագրավ է, որ ձիերից մի քանիսի բերաններում պահ-  
պանվել էին բրոնզե սանձերը: Տեղին է նշել, որ ձիերի և եզների  
գանդերի հանդիպում ենք նաև այլ վայրերում: Երվանդ Լայաջանը  
Սեանի ավազանում կատարած իր պեղումների ժամանակ ներքին  
Աղեհաման (այժմ ներքին Գետաշեն) գյուղի մոտ քացեց մի կուր-  
դան, որի մեջ քառանիվ սայլի դիմաց թաղված էին չորս եզներ:  
Սեանի ավազանում Լալայանը գտել է մեծ քանակությամբ մանր և  
խոշոր եղջերաավոր կենդանիների ու ձիերի ոսկորներ և գանդեր:

Դեռևս 1952 և 1954 թվականներին Մարտունիի շրջանի Աստ-  
ղածոր գյուղում սլեղված երեք գամբարաններից յուրաքանչյուրի  
մեջ գտնվեցին ձիերի գանդեր և ոսկորներ: Դամբարաններից մե-  
կում (2) թաղված երեք ձիերից երկուսի սմբակները արտաքին  
կողմից դարգարված էին բրոնզե ճաճանչափալ ժապավեններով:  
Այս գամբարանում ձիերի գանդերի մոտ գտնվեցին բրոնզից պատ-  
րաստված երեք լվումներ, որոնք հիշեցնում են ասորական ձիերի  
սանձերը:

Լճաշենում մեր սկզած ավելի քան 200 մեծ և փոքր գամբարան-  
ներից դրեթե յուրաքանչյուրի մեջ բացվում էին 1—3 ոչխարի կամ  
այծի դանդ, իսկ կուրդաններից մեկում՝ 14 խոզի դանդ: Նոդի  
ժանիքներ և գանդեր գտնվել են նաև մյուս գամբարաններում: Որ-

պէս կարևոր փաստ պետք է նշել, որ առաջին անգամ Լճաշենում հանդիպեց նաև երկու տարեկան հորթի գանդ: Մատղաշ անասունների թաղումը հազվագեղ կրեուշթ է եղել բրոնզե դարում:

Մեկ հետաքրքրող ժամանակաշրջանի անասնապահութեան հարցերը մինչև այժմ հատուկ ուսումնասիրութեան նյութ չեն դարձել: Սակայն մենք անսպառ նյութեր ունենք ինչպէս բրոնզե, այնպէս էլ երկաթե դարերի Հայկական լեռնաշխարհի անասնապահութեան վերաբերյալ:

Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհի բնիկները անվերջ մահու և կենաց կոիվներ են մղել ներքին և արտաքին նվաճողների դեմ: Թեկուզ այն փաստերը, որ ուրարտական թագավոր Արգիշտին (785—760 թթ. մ. թ. ա.) իր մի քանի արշավանքների ժամանակ նվաճված վայրերից քշել, տարել է Բիայինա (Վանա լճի ավազանը) 582,874 զուխ ոչխար, 125.543 եզ, 10,607 ձի և 346 ուղտ, հիմք է տալիս ասելու, որ Հայաստանը եղել է անասնապահական երկրներից մեկը: Այս թվերից կարելի է եզրակացնել, որ նույն թագավորի տարած 132,317 գերիներից յուրաքանչյուրին ընկնում է շորս և կես զուխ ոչխար և մեկ եզ: Իսկ եթե այս տվյալներին ավելացնենք և այն, որ մեր թվագրությունից առաջ VIII դարում Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվող «Նաիրյան երկրները» Ասորեստանին որպէս տուրք տարեկան վճարում էին 2000 եզ և 1200 ձի, ապա պարզ կդառնա անասնապահութեան զարգացման պատկերը Հայաստանում:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ Արգիշտի որդի Սարգուրը արշավելով Էրիախի երկրի վրա (Լենինականի շրջան) մեկ տարում այնտեղից տանում է շուրջ 61500 գերի, որից 26,700-ը կին, երկրից դուրս է քշում և տանում՝ 2500 ձի, 23,300 արջառ, 58,100 ոչխար: Պարզ է, որ նվաճողները ի վիճակի չէին ամբողջովին տանել մանր և խոշոր եղջերավոր անասունները, նրանց մի մասը մնացել է: Պարսիկները միայն Արևմտյան Հայաստանից որպէս տուրք տարեկան վերցնում էին 20,000 զամբիկ:

Անասնապահութեան և նրա հետ կապված եզան պաշտամունքի համոզիչ օրինակներ ենք գտնում Լճաշենում: Այստեղ մեծ կուրգաններից գտնված են բրոնզե ցուլերի երկու հոյակապ արձաններ: Յուլերը պատկերացված են հպարտ կեցվածքով և հարձակման համար պատրաստ դիրքով: Նրանց եղջուրները կարճ են և հաստ, իսկ ճակատները գանդուրներով ծածկված: Պարանոցները ուռուցիկ տեսք ունեն: Թեև սրանք կանգնած են հատուկ պատ-

րաստված պատվանդանների վրա, բայց պատկերացված են շարժման մեջ:

Հետագա դարերում Հայաստանը ստիպված լինելով անընդհատ պատերազմների մղել Հռոմի և Պարսկաստանի դեմ, ուներ հզոր բանակ, որի կորիզը կազմում էր մշտական հեծելազորը: Ինչպէս վկայում է Ստրաբոնը, Հայաստանը, բացի թեթև հեծելազորից ուներ պորամասեր՝ կազմված ծանր հեծելազորից, որի համար պահանջվում էին խոշոր և հուժկու ձիեր: Ըստ Քսենոֆոնի, Հայաստանի ձիերը թեև պարսկական ձիերից փոքր էին, բայց շատ ավելի կայտառ էին: Ստրաբոնի կարծիքով Հայաստանը և Մեդիան հանդիսանում էին նսեսկան հուշակավոր ձիերի հայրենիքը: Նույն հեղինակը մեծ գովասանքով է խոսում փոքր Հայքի ձիերի և հեծելազորի մասին: Հայաստանում ստրկատիրական հարաբերութիւնների դարգացման հետևանքով, ձիաբուծութիւնը այդ շրջանում համայնքից անցնում է խոշոր հողատերերի ձեռքը:

Արտավազդ II թագաւորի դրամի վրա պատկերված քառաձի կառքից երևում էր, որ այդ շրջանում ևս Հայաստանում բուծում էին թեթև սրընթաց տիպի ձիեր: Այս ամենից կարելի է կռահել, որ հայկական բարձրավանդակը հանդիսանում է սրընթաց արևելյան տիպի ձիերի օջախներից մեկը: IV դարից Հայաստանում ձիաբուծութեամբ զբաղվում են նախարարները: Ըստ մեզ հասած «Գահնամակի» Արշակունիների շրջանում հայկական հեծելազորի թիվը

հասնում էր 120 հազարի: Այսպիսով, այն զգալի ուժ էր ներկայացնում և մեծ հռչակ ուներ առաջավոր Ասիայում:

Բազրատունյաց շրջանին պատկանող ռելեֆների և որմնանկարների վրա հաճախ պատկերված են հեծյալներ, որոնց ձիերը սրընթաց ձիերին յուրահատուկ տեսք ունեն:

Հետագա դարերում Հայաստանում ձիաբուծությունը այլևս չզարգացավ: XIV—XVII դարերի հուշարձանները (ռելեֆները, մանրանկարները) մեզ պատկերում են սրընթաց հեծնելու տիպի վայելուչ տեսքով ձիեր, բայց շատ հավանական է, որ այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե տեղական, հայկական՝ ձիերի հետ, այլ արաբական և թուրքմենական, որոնք այդ ժամանակ արդեն համաշխարհային հռչակ էին ստացել: .

## ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՌՈԳՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հին Արևելքի երկրներում, այդ թվում և Հայաստանում, կլիմայական պայմաններն ստիպել են ժողովուրդներին անհիշատակ ժամանակներից ի վեր իրենց դաշտերի ոռոգման համար ջրանցքներ կառուցել:

Հայաստանում ամենահին առու-ջրանցքները վերաբերում են դեռևս նախնադարյան հասարակության դարաշրջանին, դրանք հայտնաբերվել են Արագածի և Գեղամա լեռների բարձրադիր լանջերում:

Խոշոր ջրանցքների կառուցման աշխատանքները մեծ թափով են սկսում ծավալվել առաջին պետականության օրոք, ուրարտական ստրկատիրական պետության դարաշրջանում, որից հետո շարունակվել են հազարամյակների ընթացքում:

Դժբախտարար պատմական Հայաստանի ոռոգման աշխատանքների և ջրանցքների շինարարության մասին հիշատակվել են միայն ընդհանուր բնույթի ուսումնասիրություններում կամ էլ գրվել են հողվածներ առանձին ջրանցքների մասին:

Մինչդեռ այդ խնդիրը բացի տեխնիկական և տնտեսական կողմից, ունի նաև պատմա-հասարակական արժեք:

Ջրանցքաշինությունը և ջրի օգտագործման հղանակները հին Արևելքի երկրներում ունեցել են բազմազան ձևեր՝ կապված ոչ միայն բնական-կլիմայական պայմանների, այլև տիրող հասարակարգի և աշխատավոր մասսաների շահագործման ձևերի հետ:

Պատմական Հայաստանում կարելի է նշել ջրանցքաշինության

և ջրի օգտագործման տիպերի մի քանի հիմնական շրջաններ և ձևեր:

1. Նախնադարյան հասարակարգ.—Այդ ժամանակներին վերաբերող ջրանցքներ հայտնաբերվել են առայժմ Արագածի և Գեղամա լեռների բարձր լանջերին, ամառույիլն արոտավայրերի սահմաններում. դրանցից Արագածի վրա գտնվածները ունեն միանգամայն առանձնահատուկ կառուցվածք և սիստեմ: Կավագույն արոտավայրերի ընդարձակ տարածությունների վրա, հարմար տեղերում, փորված են արհեստական բազմաթիվ փոսեր-լճակներ, որոնք իրար հետ կապված են առուններով: Ջրաբաշխական այդ սիստեմը սկսվում է արոտավայրերի վերին և վերջանում նրա ստորին սահմաններում: Ջրաբաշխական նման սիստեմը հնարավորություն է ընձեռել վաղ դարնան անձրևների և ձնհալի ջրերը կուտակել՝ պահել բազմաթիվ լճակ-ջրամբարներում և օգտագործել այն ամռան շոր ամիսներին:

Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ այդ շրջանում տեխնիկայի դարգացումը հասել էր այնպիսի աստիճանի, որ հնարավոր էր դարձել անասունների համար խմելու ջրի ընդարձակ ցանցով պատել արոտավայրերի նաև այն մասերը, ուր բնական աղբյուրներ չկային և հավանաբար նաև ջրել արոտավայրերը՝ տեղումների բացակայության ժամանակ<sup>1</sup>:

Այս դարաշրջանին պատկանող Գեղամա լեռների վրա գտնվող ջրաբաշխական սիստեմն, ըստ երևույթին, օգտագործվել է նաև հետագա հասարակությունների օրոք:

Աժդահա յուրտ կոչված վայրի սահմաններում գոյություն ունի ավելի կատարյալ տեխնիկայով կառուցված ընդարձակ լիճ-ջրամբար՝ Թոխմախան գյուղ, որի ափերին թափված են խոշորագույն քարե արձաններ-վիշապներ, հիմնականում ձկնաձև, որոնց վրա պահպանվել են թռչունների, ջրի և կենդանիների գլուխների սիմվոլիկ ուռուցիկ քանդակներ, որոնք վկայում են տարբեր տոհմերի մասնակցությունն ու իրավունքը ջրաբաշխական այս սիստեմի կառուցման և ջրի օգտագործման նկատմամբ:

Ջրաբաշխական այս սիստեմը հնագույն ժամանակներից օգտագործվել է նաև ցանքատարածությունները ոռոգելու նպատակով: Դրա հիմնական ասպացույցն այն է, որ Թոխմախան լիճը ջրանցքով

<sup>1</sup> Մանրամասն տեղագրական հետազոտությունների բացակայության հետևանքով գեոևս պարզ չէ, թե ջրաբաշխական այս սիստեմը օգտագործվել է նաև ավելի ցածրում եղած ցանքազաշտերի ոռոգման համար, թե ոչ:

կապվում է Աղատ գետի վերին ակունքների հետ, և նրա մեջ կուտակված ջրերը ամռան ամիսներին բաց էին թողնվում ու միանալով գետի ջրերի հետ, հոսում էին դեպի Արարատյան դաշտը և ոռոգում դաշտ ու այգիներ<sup>1</sup>։

Այս սիստեմի կիրառումը ապահովում էր լեռնային բարձրագիր վտակների, հեղեղատների, ալյուրոքների և ձնհալի ջրերի օգտագործումը արոտավայրերը և լեռնալանջային ցանքադաշտային տարածությունները ոռոգելու նպատակներով, որը համապատասխանում է նախնադարյան հասարակության արտադրական պրիմիտիվ տեխնիկային և թույլ է տալիս հնթագրել, որ Հայաստանի բնիկները զբաղվում էին անասնապահությամբ և երկրագործությամբ։

2. Ստրկատիրական հասարակություն.— Ուրարտական տիրապետության ժամանակ մեծ թափ են ստանում ջրանցքաշինության աշխատանքները։ Ստրկատիրական հասարակության պայմաններում ստեղծված կենտրոնական ուժեղ պետությունը և արքունի տունը տեղ ու տնօրեն են դառնում երկրի բոլոր հարստություններին։ Տոհմացեղային միավորներին կենտրոնական պետության մեջ միացնելու նպատակով անվերջ նվաճողական պատերազմներ են մղվում, որոնց ընթացքում պետությունը մի կողմից բազմաթիվ գերիներ է վերցնում, մյուս կողմից նվաճված ցեղերի տեղափոխություններ կատարում։ Դրան զուգընթաց անդադար պատերազմներ են մղվում հարևան պետությունների հետ, որի հիմնական նպատակներից մեկը նույնպես թալանն ու գերեվարությունն է։

Պետության ներսում առաջանում են ստրուկների հոծ բազմություններ և նյութական միջոցներ, որոնք օգտագործվում են պետական տնտեսությունների ընդլայնման և զարգացման նպատակներով։ Ուրարտական պետությունը իր ձեռքում եղած նյութական և մարդկային այդ միջոցները զործադրում էր հիմնականում դաշտավարական և այգեգործական տնտեսությունների ստեղծելու ուղղությամբ, իսկ այդպիսիները Հայաստանի աշխարհագրական և կլիմայական պայմաններում կարելի էր զարգացնել միայն դաշտավայրերում և ոռոգման կանոնավոր սիստեմի պայմաններում։

Այս նպատակների համար լեռնային ջրաբաշխական նախորդ սիստեմները բավարար չինել չէին կարող, և սկսվում են մեծ ու

<sup>1</sup> Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вншапы, Труды Академии ист. мат. культуры, том I, Л., 1931. Б. Б. Пиотровский, Вншапы, Л., 1939.

վորք գետերի ջրերի օգտագործման և հարթավայրերում մեծ լճերի կառուցման աշխատանքներ: Վասպուրականում, Արածանիի հովտում, Արարատյան դաշտում, Ուրմիա լճի ավազանում և Մակվի դաշտավայրում կառուցվում են Հայաստանի հին և միջնադարյան ամբողջ պատմության մեջ իրենց ծավալով և որակով չգերազանցված ջրանցքներ, որոնց մի մասը հազարամյակների ընթացքում գործելով՝ հասել է մինչև մեր օրերը:

Պատմական արձանագրություններից երևում է, թե ուրարտացիները որքան մեծ կարևորություն են տվել ջրանցքաշինությանը: Արքաները պարծանքով են հիշատակում իրենց աշխատանքի մասին և հաճախ ջրանցքը կոչում իրենց կամ արքայական տան նշանավոր անդամի անունով:

Այդ շրջանում ջրանցքները կառուցվում էին կենտրոնական իշխանության կամ արքունի տան հսկայական նյութական և մարդկային ձրի ուժի՝ ստրուկների միջոցով: Գրանք օգտագործվում էին արքունական տնտեսությունների բարգավաճման նպատակով և այդ պատճառով էլ մոնումենտալ ու բազմաձախ են:

Ուրարտական շրջանի ջրանցքները ճանաչվում են նրանց հատուկ տեխնիկայի՝ մեծամեծ քարերով ջրանցքի երեսները պատելու և նրանց ասիերին՝ քարերի կամ հատկապես կանգնեցրած հուշարձանների վրա կրված սեպագիր արձանագրությունների շնորհիվ:

Վաղ հայկական պետականության ժամանակաշրջանում կառուցված ջրանցքների մասին դժբախտաբար տեղեկություններ և փաստեր չկան: Սակայն չպետք է ենթադրել, որ այդ դարաշրջանում ցանրաշրջանառության աշխատանքներ չեն կատարվել, քանի որ Հայաստանի բնական-կլիմայական պայմանները, անշուշտ, մնում էին նույնը: Խոշորագույն և պետական նշանակություն ունեցող շինարարությունների մասին հիշատակ-արձանագրություններ գրել տալու սովորությունը ևս մնացել էր, թեև անհամեմատ ավելի սակավաթիվ. ինչպես, Տիգրանակերտի հիմնադրման, Գառնիի բերդի ու տաճարի շինարարության և հողաբաժանումների առթիվ կանգնեցրին Արտաշիսյան սահմանաքարերի և հայտնաբերված՝ հունարեն ու արարերեն արձանագրությունները:

Հավանաբար ուրարտական դարաշրջանում շինված ջրանցքները, մշտական նորոգման ենթարկվելով, բավարարել են եղած կարիքները: Մյուս կողմից գրավոր հիշատակագրության նախկին, ավելի կայուն, քարե կամ կավե հուշարձանների կողքին ավելացել էր ավելի հեշտ իրագործելի «մեհենագիր մատյանների»

կուլտուրան, որոնք ըստ մեր վաղ շրջանի պատմագիրներին՝ պահ-վում էին մեհյաններում և որոնց մեջ գրվում էին տնտեսական ներքին կյանքին վերաբերող ամեն կարգի փաստեր: Դժբախտաբար քրիստոնեութունն այդ արժեքավոր նյութերն այնպես անխընա ոչնչացրեց, որ մինչև այժմ մեկ հատիկ օրինակ էլ չի գտնվել: Մեր առաջին պատմագիրները, ինչպես հայտնի է, առավելապես արձանագրել են պետական-քաղաքական և եկեղեցուն վերաբերող փաստերը ու քիչ ուշադրություն են դարձրել ժողովրդի տնտեսա-կան կյանքին վերաբերող խնդիրներին<sup>1</sup>:

3. Ֆեոդալական շրջան.— Այս շրջանում երկիրը մասնատված էր զանազան մանր ու խոշոր նախարարութունների, հետևաբար համապետական միջոցներով ջրանցքաշինություն տեղի ունենալ չէր կարող: Թագավորն անգամ, եթե ձեռնարկեր որևէ ջրանցքի կառուցման, ապա այն պետք է կատարեր արքունական երկրում, իր բուն տիրույթների սահմաններում: Նույն կերպ էր վարվում նաև յուրաքանչյուր նախարար իր սեփական երկրում:

Այս դարաշրջանի միակ աղբյուրները մեր մատենագիրներն են, որոնք, սակայն, մի քանի թուղթիկ և կողմնակի տեղեկու-թյուններ են հագորդում այդ մասին:

Շիշենք գրանցից մի քանիսը:

Տիրան թագավորը (131—152) հողեր է պարգևում իր բարեկամ պարսիկ Դրուասպին: Նրան է նվիրում նաև Տատեոն ավա-նը, ագարակներ և մեծ այգի, որի միջից էր հոսում Գայլատվա լճից հանված առուն և ոռոգում դաշտերը<sup>2</sup>:

Խորենացին տեղեկություններ է հաղորդում նաև արքունական այնպիսի շինարարությունների մասին, որոնք տեղի կլիմայական պայմաններում անհնարին կլինեին առանց ջրաշինարարական կառուցումների, այսպես.

Երվանդ թագավորը Բագարան ավանի մոտ, Ախուրջանի հով-տում, մեծ անտառ է տնկում<sup>3</sup>, ապա Երվանդակերտ քաղաքը շրջ-ջապատում ծաղկանոցներով և այգեստաններով<sup>4</sup>:

<sup>1</sup> Սակայն այս բոլոր փաստերի առկայությամբ հանգերձ ջրանցքաշինու-թյան փաստերի բացակայությունն այդ դարերում կարող է նշանակություն ունենալ վաղ շրջանի հայդական պետականության ներքին կյանքի կազմակերպ-ման խնդիրները լուսաբանելու առնչությամբ:

<sup>2</sup> Մ. Խորենացի, Պատմություն, 2, գլ. ԿԲ:

<sup>3</sup> Նույն տեղում, ԽԱ:

<sup>4</sup> Նույն տեղում, ԽԲ:

Այս կարգի կողմնակի տեղեկություններ է հաղորդում նաև Փ. Բուզանդը՝ խոսարով թագավորի շինարարական աշխատանքների նկարագրության բաժնում: Այս թագավորը Գառնից մինչև Դվին կաղնիներով անտառապատում է մի ընդարձակ տարածություն՝ որսատեղիի նպատակով, որը կոչվել է «տաճար մայրի» և ուրիշ նման անտառ էլ դեպի հարավ, որը կոչվել է խոսրովակերտ<sup>1</sup>:

Նկատի ունենալով Արարատյան դաշտի և Ախուրջանի հովտի կլիմայական պայմանները, ուր կատարվել են անտառապատման և ծառատնկման աշխատանքները, բնական է ենթադրել, որ դրանց աճեցնելու համար անպայման ջրանցքներ պետք է կառուցված լինեին:

Ներսես շինարար կաթողիկոսը, Զվարթնոցի կառուցման գուգրնթաց՝ «Ածեալ ջուր ի Քասաղ գետոյ՝ ղամենայն աւազախիտ առապար դաշտավայրն ի դործ արկաներ, տնկէր այգիս և բուրաստանս ծաղկոցած»<sup>2</sup>:

Հավանական է, որ այս դեպքում Ներսեսը օգտագործել է ուրարտական դարաշրջանում շինված, բայց հետո խանդարված մի ջրանցք: Խաչիկ Դադյանը նույնպես զբաղվեց այդ ջրանցքի վերանորոգումով՝ ջուր բերելով Զվարթնոցի շուրջը:

Հետագա շրջանների համար գրավոր աղբյուրները հարստանում են մի նոր ճյուղով: Դրանք վրմական արձանագրություններ են, նվիրված ղանաղան նշանավոր դեպքերի և շինարարության փաստերի, ի թիվս որոնց և ջրաշինարարական աշխատանքների:

Քարերի վրա արձանագրելու սովորության վերականգնման ենք պարտական այժմ ջրանցքաշինարարության և նման երևույթների մասին մեր ունեցած փաստական տեղեկությունների համար<sup>3</sup>:

Արժե այս առիթով նշել, որ հայկական թվականությունը դործածած առաջին արձանագրությունը վերաբերում է Թալին գյուղի համար Սարկապանու դաշտից աղբյուրի ջուր բերելու փաստին, այն գրված է հայոց ՄԼԹ—783 թվականին:

Շնորհիվ լիմապիր արձանագրությունների, բազմաթիվ տե-

1 Փ. Բուզանդացու պատմություն Հայոց, 3, դ. Ը:

2 Գրասխանակերտցի, էջ 88, Համեմատել նաև Սերևոս, Բ, 19, էջ 102:

3 Այդ երևույթը պայմանականորեն ենք համարում՝ «վերականգնված» նկատի ունենալով ուրարտական շրջանից հետո նրանց խիստ սակավությունը, բայց այդ հանգամանքն, բոտ երևույթին, պետք է բացատրել նախաքրիստոնեական շրջանի նման հուշարձանների ոչնչացմամբ՝ Լուսավորչի կողմից:

ղեկություններ ունենք Հայաստանի շատ վայրերում կատարված ջրաշինարարական աշխատանքների մասին, ինչպես նաև ոռոգման և խմելու ջրի, գյուղերի, կալվածների, վանքերի, քաղաքների մասին:

Արձանագրություններից բացի այդ շրջանի մասին կան տոհմային պատմագրեր՝ Թ. Արծրունու և Ստ. Օրբելյանի վկայությունները, որոնք տեղեկություններ են հաղորդում իրենց նախարարական տների սահմաններում կատարված ջրաշինարարական մի շարք աշխատանքների մասին:

Փաստերի առատության շնորհիվ այժմ արդեն կարելի է ոչ միայն համառոտ քարտեզ կաղմել Հին Հայաստանի այն վայրերի, ուր ջրաշինարարական աշխատանքներ են կատարվել, այլև որոշ եղրակացություններ անել միջնադարյան ջրանցքաշինության կազմակերպման, ջրօգտագործման կարգի և դրա հետ կապված տրնտեսական մի շարք խնդիրների մասին:

Նախ՝ ջրանցքաշինության մասին:

Եղած փաստերի հիման վրա ջրանցքաշինության աշխատանքների շորս կարգ կարելի է մասնանշել:

Ա. Պետական.—1. 981 թվ. Բյուրական գյուղի հանգերի ոռոգման համար ջրանցք է շինում ոմն հայր Գրիգոր՝ Տերունի հրամանով<sup>1</sup>:

2. Բագրատունի թագավորներից Աշոտ ողորմածը կառուցել է Անի քաղաքի ջրմուղը, որն սկիզբ է առնում Ալաջա լեռան ստորոտից, իսկ Սմբատը հանում է մի մեծ առու, որի ջրերն օգտագործվել են քաղաքի հյուսիսային կողմի խրամները լցնելու, Գլիծորի աչքիները ոռոգելու ու ջրաղացները բանեցնելու եռակի նպատակներով<sup>2</sup>:

3. Վասպուրականի Գաղիկ թագավորը շրջապատում է իր շինած բերդերն ու դղյակները աչքեստաններով, հեռու տեղերից, ստորերկրյա ջրմուղներով խմելու և ոռոգման ջուր է հասցնում իր ձեռակերտները, օրինակ, Վարազա լեռան ստորոտի աղբյուրներից ջուրը բարձրանում է մինչև Ամրական ամրոցը: Ըստ Թ. Արծրունու նկարագրության, այդ ջրմուղի համար օգտագործ-

1 Մխիթար վրդ., Հանդես Հայագիտութեան, II, Գ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, 9: Բյուրական գյուղն այդ ժամանակ պատկանում էր էջմիածնին, հետևաբար «Տերունի հրամանով» արտահայտությունը կարող է վերաբերել հոգևոր իշխանությանը կամ կաթողիկոսին:

2 Թ. Թորամանյան, նյութեր..., 334:

վել են քարից շինված խողովակներ, որոնց միջով Վարազա լեռան ջրերը հոսում էին ցածրադիր դաշտավայրերով և բարձրանում ու թափվում բարձրադիր դղյակի քար ու կրով շինված ջրամբարները<sup>1</sup>:

Բ. Իշխանական և վանական.— Նկատի ունենալով, որ միջին դարերում վանքերն իրենց մեծ կալվածքներով և տնտեսությամբ կազմում էին շահագործման նույն տիպը, ինչ-որ աշխարհիկ ֆեոդալները, մենք հարմար ենք գտնում այդ երկու դասերի կողմից կատարված ոռոգման աշխատանքները քննարկել միասին, մանավանդ, որ վանքերի ջրաշինարարական աշխատանքները մեծ մասամբ կանաված են եղել իշխանների անունների հետ և օրինակներն էլ ավելի բազմաթիվ ու ցայտուն են:

1. Վանքական ջրաշինարարության ամենամեծ և մեծածախս ձեռնարկությունը, որի մասին ընդարձակ տեղեկություններ են պահպանվել, դա Տաթևի վանքի կառուցածն է: Համաձայն Ստ. Օրբելյանի հաղորդման, Տաթևի վանահայր և Սյունյաց եպիսկոպոս Յակոբը երկրի իշխան Փիլիպպեից զնում է Վարարակ կոչվող աղբյուրների ջրերը՝ 12.000 դրամով և մի թանկարժեք գոհարով, մոտ 30 կիլոմետր երկարությամբ ջրանցք կառուցելով՝ նա դժվար տեղերով ջուրը բերում հասցնում է վանքի դիմացի առապարները: Ժամանակակից հաշիվներով այդ ջուրը կարող էր ոռոգել 150—200 հեկտար տարածություն: Շինարարությունը կատարվել է 932 թվականին:

Ջրանցքը հետագայում խանդավիլ է. Տաթևի վանականներից Հովհաննեսը այն վերանորոգել է 1274 թ., և այդ առթիվ արձանագրություն փորագրել Գորիսի հովտից դեպի Ուշթափանների հովիտը թեքվող ջրբաժան կետում՝ մի մեծ և բնական ժայռաբեկորի վրա, որը գտնվում է իր նախկին տեղում<sup>2</sup>:

2. Նման բարդ կառուցվածք է ունեցել նաև Գնդեանքի ջրանցքը՝ կառուցված 1008 թվականին, որի երկարությունը եղել է մոտ 24 կիլոմետր, ունեցել է երեք ջրամբար և ոռոգել է մեծ տարածություն<sup>3</sup>:

1 Թովմայի վրդ. Արժրունոյ, Պատմութիւն տանն Արժրունեաց, էջ 406, 475 և այլն, Թիֆլիս, 1913:

2 Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, 253—256, Թիֆլիս, 1911: Տե՛ս նաև Գ. Շիրմազան, Ակների և Գնդեազի ջրանցքները, Նյութեր Հին Հայաստանի պատմության, էջ 116—122, Երևան, 1935:

3 Ստ. Օրբելեան, Անդ, 262—263, Գ. Շիրմազան, Անդ, 122—124:

3. Զրաշինարարական աշխատանքների նման փաստերի հիշատակութիւններ են պահպանուել բազմաթիւ վանքերի վերաբերյալ, օրինակ, Հոռոմոսի վանքի՝ 1198, Լմբատավանքի՝ 1251 թ., համանաբար XIII դարում, 1329 թ. Կորդան գյուղի մասին և այլն:

Գ. Համայնական.— Գյուղական համայնքները միացյալ ուժերով ու միջոցներով ջրանցքներ էին շինում և հերթականութեամբ ոռոգում իրենց հողերը: Բերենք այս կարգի շինարարութեան մի օրինակ Մարտունու շրջանից:

Գեղամա լեռներից իջնող վտակները միանում են Վերին Ալուչալու և Վերին Քուլալուան գյուղերի տակ և հոսում խոր ձորի միջով՝ մինչև ներքին. Ալուչալու գյուղը, որտեղ օգտագործվելով բանջարանոցների համար, ամռանը սպառվում են: Գետակը գյուղի անունով կոչվում է Ալուչալու շայ: Ներքին Ալուչալուն գտնվում է ձորամիջին, գյուղի հարավ-արևելյան կողմերում տարածված է մի ընդարձակ բարձրադիր հարթավայր, որը արևելքում հատվում է Մաքինացոց գետակով (կամ Նարփուղլու): Այս ընդարձակ բարեբեր դաշտավայրում այժմ շին գյուղեր չկան, բայց հնում այսպիսիները եղել են և նրանց ավերակները մնում են: Դաշտավայրերի որոշ մասերն այժմ էլ ոռոգվում են Ալուչալու գետակի վերին հոսանքից հանված առունների միջոցով, որոնք հին ջրանցքի մնացորդներ են:

Ներքին Ալուչալուից դեպի հարավ, մոտ 3 կիլոմետր հեռու (գետակի աջ մասում), դաշտավայրի մի բարձրադիր կետում, XIII դարի վերջերում կանգնեցրել են մի պարզ խաչքար, որի երեսին փորագրել են ընդարձակ արձանագրություն—որոշում՝ շրջակա գյուղերի միջոցներով կառուցված ջրանցքի շինարարութեան և ջրից օգտվելու հերթականութեան մասին: Խաչքարը դժբախտաբար այժմ կոտրված է, նրա ստորին մասը կանգնած է իր տեղում, պատվանդանի վրա, իսկ վերին մասը ընկած է կողքին: Կոտրված է շեղակի գծով, որն անցնում է տառերի վրայով այն տեղում, ուր գյուղերի անուններն են սկսվում: Ինչպես այս, նույնպես վատ գրչութեան և անունների անժանոթութեան պատճառով 2—3 գյուղի անուններ դժվար են վերծանվում:

Այս ջրանցքի մասին տեղեկութիւններ չեն պահպանուել, հրատարակված չէ նաև նրան վերաբերող միակ փաստագիր-արձա-

Նագրութիւնը, այդ պատճառով մենք բերում ենք այն ամբողջութեամբ<sup>1</sup>.

ԿԱՄԱԻ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ ԿԱՆԳՆԵ-  
ՅԱԻ ԱՄԵՆԱՅՓՐԿԻՉՍ ՁԵՈՒԱՄԲ  
ԴԱԻԹԻ, ՅԻՇԽԱՆՈՒԹԻ ՏԱՐՍԱԻ-  
ՃԻՆ ԵՒ ՈՐԴՈ-  
Յ ԻԻՐ ԼԻՊԱՐՏԻ ԵՒ  
ՋԱԼԱԼԻՆ Ի ՍԱՀՄ  
ԱՆԻ ՀՈՂՈՅ ԵՒ Ջ-  
ՐՈՅ :Բ: ԳԵՂԻՅ,  
ՈՐ Ի ԳԼՈՒԽՍ ԿԱՆ Վ-  
ԱՆԱՅՍ ՎԱՆԵԻ-  
ԱՆԻՅ, ՇԱԻՀԱԻՐՎ-  
ՈՎՆ ԵՒ ԱՆՄԵՈՒ ԵՒ ՍԼԾԱԼ-  
Ն ԵՒ ՍԱԼԿՈՒՏԵՆ ԵՒ  
ՍԵՆԵԿՆ, ԱԽԵՆ-  
ԵՅ ՃԱՆԱՊԱՐՀ ԵՒ ԾԱՄԱԼԻՆ  
ՓՈՍՆ՝ ՋՈՒՐՆ ՈՒՐԲԱԹՆ ԱԻ-  
Ր ԵՒ ԳԻՇԵՐՆ. ՄԻՋՆԱՏԱ  
ՓԻՆ՝ ՇԱՐ/ԱԹ/ ԿԻՐ/Ս.ԿԻՆ/, ՋՈՐ ԿՈՅՐ ԳԱ-  
ԳՐԱՃ ԵՒ ԱՅԼ ՏԱՆՈՒՏԷՐ—  
ԱԻՔ ԿՏՐԵՅԻՆ, ԹԻ :ՁԼԴ:=(1285 թ.)

Դ. Անհատական.— Այս կարգի ջրաշինարարական աշխատանքներում, ըստ աղբյուրների, կրկու կարգ է նկատվում. մեկին այն է, որ որևէ իշխան կամ հարուստ մարդ զլխավորապես իր ծախսով (և հավանաբար ուրիշների էլ օժանդակութեամբ) ջրանցքներ և աղբյուրներ է շինում բարեգործական նպատակով՝ վանքերի և գյուղերի համար: Նման գործունեութեան շատ օրինակներ ունենք: Նախորդ էջերում հիշատակված ամենահին թվականը կրող արձանագրութեան մեջ հենց նման փաստ է արձանագրված: Ուխտատուր վանականը և իր եղբայր Տոտիկը Սարկապանու դաշտեն աղբյուրի ջուր են բերում Թալինի համար<sup>2</sup>: Առյուծ Հոգեվորչանցը իր կին Սեդայի հետ միաբանում է Հոռոմոսի վանքին, նա նորոգում կամ շինում է վանքի ջրանցքը՝ 1251 թ.: Ումեկը

<sup>1</sup> Այս հուշարձանը հայտնաբերվեց 1957 թվականին, պատմության ինստիտուտի հնագիտական-վիճակագրական դիտարկումի կողմից:

<sup>2</sup> Ալիշան, Այբարատ, 189: Կոստանյան, վիճական տարեգիր, էջ 2:

ջուր է բերում Կորպան գլուղի համար՝ 1329 թ.: Փշրկանց խոջա Սահակը և Զաքարիան աղբյուրի ջուր են բերում Շոռութ գյուղի համար և այլն:

Անհատական ջրաշինություններ կարգն այն է, երբ սրևէ մեկը իր դաշտերը ոռոգելու կամ ոռոգման միջոցով խոպան հողեր յուրացնելու համար սեփական միջոցներով ջրանցք է կառուցում: Այս կարգի ջրաշինության ապացույց է հետևյալը, որը համապատասխանում է ժողովրդական սովորույթին և օրենքի ուժ ստացած նորմաներին:

Գորիսի շրջանի Շնհեր և Հալիձոր գյուղերի արանքում լեռնային մի բազուկ ձգվում է դեպի Որոտան գետը և ընդհատվում նրա գլխին պարսպանման ժայռերով: Այդ բազուկի վրա կան մատուռի և գյուղի ավերակներ, զերեղմանոց և կանգնած են երկու խաչքար, այդ պատճառով էլ տեղացիք այդ վայրն անվանում են «խաչին խութ»: Խութի վերին մակերեսը քարքարոտ, անհող տարածություն է և անօգտագործելի մշակման համար: Խութի երկու՝ արևելյան և արևմտյան կողմերում խոր ձորեր են՝ ծածկված պտղատու այգիներով, որոնք հասնում են մինչև Որոտանի ափը: Գետի ափի մոտ, խութի ապառաժների տակ, փոքր բարձրության վրա, որը կոչվում է «Շրջիկ», կանգնած է մի մեծ խաչքար, ամբողջովին ծածկված թփերով և ծառերով: Խաչքարի թիկունքին և կողին գրված է հետևյալ հետաքրքիր արձանագրությունը.

Ի ԹՎԻՆ :ՁԺԴ: (—1265). ԵՍ ԳՐԳՈ-  
ՐԻԿ, ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱ-  
ՏՈՒԹԲ ԲԵՐԻ ԶԱՌՈՅ-  
Ս ԵՒ ՏՆԿԵՑԻ ԶԲՈՆՈՒ-  
ՌԱՅ ԿԵՍՍ ԻԳԻՍ ՎԱ-  
ՅԵԼՈՒԶՍ, ՅԻՇԽԱՆ-  
ՈՒԹԵ ԱՄԱՍԷՐ ՊԱՐ-  
ՈՆԱՅՆ ՍՆՊԱՏԱՅ  
ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻ ԻԻՐՈ-  
Յ ՏԱՐՍԱՅԻՃԻՆ: ԵՍ  
ՏԱՐՍ/Ա/ԻՃՍ ԴԻՐ ՏՎԻ Հ-  
ԱՅՐԵՆԵՑ ԱԶԳԷ Ա-  
ԶԴ :Յ: (—300) ԱՄ ԷՐ ՈՐ ԱԻ-  
ԵՐ ԷՐ: ԹԷ ՈՔ Ի  
ՀԱՅՈՅ ԿԱՄ

Այս արձանագրութեան բովանդակութիւնը կարևոր է ոչ միայն նրանով, որ մատնացուցց է անուամբ ջրի ու հողի սեփականացման կարգի մի փաստ, այլև տալիս է այդ փաստի իրավական-հասարակական պատճառարանութիւնն ու հիմքը: Գրանք երկուան են: Նախ, որ Գրգորիկը առու է հանել ու այգի տնկել «բազում աշխատութեամբ» և ապա այն, որ այդ վայրը 300 տարի ավեր ու խոսպան է եղել: Այս փաստարկները ներկա դեպքի համար պատահական երևույթներ չեն: Հայաստանում դրանք սովորութեամբ սրբազործված օրենքներ են եղել և ի վերջո հստակորեն ձևակերպվել Գոշի կողմից և մտել նրա «Գատաստանագրքի» մեջ, որի համապատասխան հոդվածը հետևյալն է.

«Բագաւոր իշխանի տուեալ դաւառ՝ եթէ շինէ ըստ հրամանի նորա բերդ և կամ աւան և կամ աւերակս ի նոյն սահմանսն ի ժառանգութիւնս համարեսցի նմա. մի լիցի փոխել առանց մեծի և իրաւացի յանցանաց. և ղինի մահու նոցա՝ որդոց նորա լիցի հրամանաւ թագաւորի: Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց ազատ լիցեն և ընդ ազատաց ձեռամբ շինականք. յոք ժամ աւերս շինեսցեն և հողս հատակիցեն ի մայրեաց, ստացուած լիցի անփոփոխ և որդոց նոցա յետ մահու. այլ փոփոխումն ի վերա մեծի յանցանաց և իրաւացի լիցի, և մի ի պատճառս զրոյարտութեան փոփոխիցեն»<sup>2</sup>:

Օրենքի թեւագրութեան համաձայն երկրի իշխան Տարսայիճ Օրբելյանը հաստատել է Գրգորիկի զրկել տված կալվածադիր-արձանագրութիւնը, կանգնեցրած հենց կալվածի մեջ, նաև հատուկ «Գիր» է տվել, ինչպես հիշատակված է նույն տեղում:

Զրանցքաշինութեան վերը նկարագրված բոլոր ձևերի կիրառման ընթացքում նկատվում է երկու հանդամանք: Նախ այն, որ ջրանցքը և նրանով հոսող ջուրը դառնում են ջրանցք շինողի ժառանգական սեփականութիւնը: Այս ցայտուն կերպով արտա-

<sup>1</sup> Արձանագրութիւնը հրատարակել է Ե. Լալայանը, բայց այնպիսի ազճատված ձևով, որ իմաստը կորել է: Տե՛ս «Ազգագր. Հանդես», IV, 41. արտատպել է նույնութեամբ Կոստանյանցը, «Վիմական տարեգիրք», էջ 108, Մենք ստուգել ենք տեղում. արձանագրութիւնը պահպանված է շատ լավ, ջարդվածքներ չունի, միայն որոշ մասեր ծածկված էր մամուռով (Ս. Բ.):

<sup>2</sup> «Գատաստանագիրք», II, էջ 317:

հայտնված է մեր բերած երկու օրինակների մեջ: Սեփական միջոցներով ջրանցք կառուցած և երեք հարյուր տարվա խոպանը մշակելի դարձրած Գրգորիկը դառնում է ժառանգական տեր այդ ջրին ու հողին:

Տաթևի վանքի համար դնված վարարակի աղբյուրների ջուրն անցնելով մոտ հրեասուն կիլոմետր տարածություն, հասնում է մինչև Ցարուտ կոչված վայրը, ուր վանքի տնտեսությունն էր: Իր ընթացքով ջրանցքն անցնում է մի շարք գյուղերի հանգերի միջով՝ Խոտի, Շնհերի, Հալիձորի և Նորիքի, բայց այդ գյուղերը ոռոգման նպատակով ջրից օգտվելու ոչ մի իրավունք չունեն. «Եւ շկայ նորեցեաց կամ Խոտանեցեաց կամ Շնհէրայ և Հալեցեաց յայդ ջրոյդ հաշիւ ոչ շատ և ոչ սակաւ, ոչ յարտ հատանել և ոչ ի մարդ վատել, որ մարդ և անասուն ջուր ըմպեն ի մատակէդ»<sup>1</sup> և նույնիսկ այն դեպքում, երբ այդ գյուղերը պատկանում էին Տաթևի վանքին:

Երկրորդ հանգամանքն այն է, որ մեկ անգամ ջուր ստացած և ջրովի դարձած հողաբաժինն իր մեջ միացնում է «հող ու ջրի» միացյալ և ամբողջական իրավական հասկացությունը և եթէ հետագայում այդ հողաբաժինը վաճառվում, նվիրվում և կամ որպես ժառանգություն անցնում է մեկ ուրիշին, այդ առթիվ գրված փաստաթղթերում կամ արձանագրության մեջ անպայման հիշատակվում է «հողով և ջրով» ձևակերպումը:

Զրօգտագործման այս երկու երևույթները վերաբերում են այն դեպքերին, երբ ջրանցք կառուցողներն ունեն իրենց սեփական կալվածքներն ու տնտեսությունները: Այսպես, մի դեպքում Տաթևի վանքը իր կառուցած ջրանցքի ջրով ոռոգելի է դարձնում խոպան հողերը և ստեղծում սեփական տնտեսություն, նույնը և անհատ ջրանցքատեր Գրգորիկը: Մյուս դեպքում, երբ թագավորը կամ ֆեոդալը ջրանցք է կառուցում իր տիրույթում, ոռոգման միջոցով նա կրկնակի չափով բարձրացնում է իր հասույթները, սակայն կրկին կապված հողի հետ: Այդ մասին ունենք Գոշի «Դատաստանագրքում» ձևակերպված պարզ ցուցումը:

«Բայց անդատանք ջրարբիք՝ լիցին ընդ հնդեկաւ, այլ ոստինք տասանորդեկսցին. զի հող միայն է թագաւորի և իշխանի, և ոչ ջուր. սոյնպէս ոստինք, այգիք և ծառաստանք»<sup>2</sup>:

«Դատաստանագրքի» այս կանոնի մեջ գործմանալի վարպե-

1 Սո. Օրբելյան, Պատմութիւն, 256:

2 «Դատաստանագիրք», 2, էջ 314—315:

տուժյամբ խտացված են խնդրի իրավական և տնտեսական բոլոր ասպեկտները: Եթե փորձենք տարրալուծել դրանք՝ կստացվեն հետևյալ դրույթները.

1. Զրարբի հողերը հարկազրվելու են  $\frac{1}{5}$ , իսկ ոստինները՝  $\frac{1}{10}$ , այսինքն ջրովինների կեսի շափով:

2. Արգելվում է ոռոգելի հողերից սահմանված այս շափից ավելի հարկ վերցնել, որով հասկացնել է տալիս, որ նման հողերից ստացված արդյունքն իրականում ավելին է, քան անջրդինների կրկնապատիկը:

3. Ոռոգման նպատակներով օգտագործվող ջուրը համարելով թագավորի և իշխանի սեփականությունից դուրս, օրինականացնում և լայն հնարավորություններ է ստեղծում ոռոգման նպատակով համայնական և անհատական ջրանցքաշինության գործում:

4. Կանոնի այս հետևությունների հիման վրա պարզվում են նաև ջրանցքաշինության խնդրում հասարակական հակադարձ խավերից երկուսի՝ ֆեոդալների և գյուղացիության, շահագրգռվածության տնտեսական հիմունքները: Այսպես, ֆեոդալ կալվածատերը ջրանցքների միջոցով նախ կրկնապատկում է գյուղացիների կողմից մշակվող իր հողերից գանձվող հարկը և ապա, խոսքի հողերը, որոնք ոչ մի եկամուտ չէին բերում, ոռոգման շնորհիվ դառնալով մշակելի, դառնում են նաև հարկադրման ենթակա և օգտաբեր:

Գյուղացիության շահագրգռվածությունը կայանում է նրանում, որ կանոնը արգելելով ջրարբի հողերից  $\frac{1}{5}$ -ից ավելի հարկ վերցնել, հասկացնում է, որ իրականում նրա բերքատվությունը ավելի է, քան ոստինի կրկնակին, և հենց այդ հանգամանքն էլ խթան է հանդիսանում գյուղական համայնքների համար՝ համայնական ուժերով ջրանցքներ կառուցելու:

Մրան որպես լրացում, եթե վերհիշենք նախկինում «Դատաստանագրքի» մեջ բերած կանոնը, ուր խոսքի հողերը սեփական դարձնելու մի միջոց էլ համարվում էր նման հողերը ոռոգման միջոցով յուրացնելը, ինչպես տեսանք Գրգորիկի օրինակով, ապա պարզ կդառնա, որ միջին դարերում ոռոգման ցանցի ընդարձակման և զարգացման համար ստեղծվել էին տնտեսական և իրավական շափազանց բարենպաստ պայմաններ:

Զրանցքաշինությունը քաջալերող օրենքների մասին են խոսում նաև հայկական դատաստանագրքերը: Մ. Գոշի «Դատաստանագրքի» այդ կետը, հավանաբար արտագրող գրիչների մեղքով, շատ

պարզ չէ, բայց ընդհանուր միտքն այն է, որ գետերի և աղբյուրների ակունքներն են միայն պատկանում այն կալվածատիրոջը, որի հողամասում նրանք գտնվում են, իսկ հոսանքի ամբողջ ընթացքում նրանցից ամեն ոք ազատ է օգտվելու<sup>1</sup>։ Սմբատ Սպարապետի «Դատաստանադիրքը» շատ պարզ հրահանգում է, որ ամեն ոք ազատ իրավունք ունի առուներ հանելու, ուրիշի հողամասերից այն անցկացնելու մինչև իր ցանկացած տեղը, այսպես՝

Եւ ջուր հանեալ ի գետոց ջրելոյ կամ ջաղացնոյ՝ չկարե ոք արգելուլ կամ ասել թե՛ սինաւոս իմ է, մի հանել ջուր, քանց կարեն հանել ու տանել խանդկով ընդ ամեն մարդոյ գետններ ի յիր հողն և շինել զինչ իւր պիտեհնայ. և չէ այն ջուրն՝ քանց այնոր որ տարաւ զայն ջուրն՝ հայրենիք իւր սեփականն<sup>2</sup>։

Համեմատութեան նպատակով հիշենք, որ մեր հարեան երկրորդից պարսկական իրավունքը պատկերավոր ձևով թելադրում է, որ եթե հարկը պահանջում է, պետք է պատուել հղի կնոջը և նրա միջով անցկացնել ջրանցքը, իսկ վրացական «Դատաստանադիրքը» (Վախթանգի) սահմանում է, որ անհրաժեշտութեան դեպքում եկեղեցու միջով էլ պետք է անցկացնել ջրանցքը։

Սակայն իրավաբանական գրականության մեջ բացակայում է մի կետ, որը բնական հետևությունը պիտի լիներ այս բոլորի, դա այն է, թե ինչպիսի վերահսկողություն ուներ պետական կամ տեղական իշխանությունը ջրօգտագործման կանոնավորման, այդ առթիվ ծագած վեճերի և նման բազմաթիվ այլ խնդիրների վերաբերյալ, որոնք հաճախակի տեղի են ունեցել, ինչպես ցույց են տալիս փաստերը։

Պրոֆ. Խ. Սամվելյանը, առանց փաստեր նշելու, սակայն, հանգում է ճիշտ եզրակացության, որ «նա (ջրի իրավունքը—Ս. Բ.) պետության առանձնաշնորհությունն էր հանձին թագավորի գերագույն իշխանության և կրում էր հանրային բնույթ։ Ուստի ջրատիրությունը պետության սահմաններում համարվում էր սոսկ օգտագործման իրավունք, որ հղում էր կենտրոնական իշխանությունից»<sup>3</sup>։

Թեև իրավաբանական կարգի աղբյուրներում այս առթիվ ցուցումներ չկան, բայց արձանագրական նյութի մեջ շատ որոշակի

1 Մ. Գոշ, Դատաստանադիրք, էջ 147։

2 Սմբատ Սպարապետ, Դատաստանադիրք, 1958, Երևան, էջ 16։

3 Պրոֆ. Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, հատ. 1, Երևան, 1939, էջ 205։

ղեպքեր են փաստագրված վերադաս օրգանների՝ այս առթիվ գործադրած միջամտության վերաբերյալ:

Հիշենք նման երկու փաստ.

XII դարի վերջերին Իվանեն և Զաքարեն Գեղարդա վանքին են վերադարձնում խլված երկու օրվա ոռոգելի ջրի իրավունքը և այդ առթիվ հատուկ որոշում—արձանագրություն փորագրել տալիս վանքի պատին<sup>1</sup>:

1036 թ. վեճ է ծագած եղել Տեկորի և Ազարակ գյուղերի միջև՝ ջրօգտագործման վերաբերյալ: Իշխանության ներկայացուցիչները նշանալուր վանականների հետ միատեղ լուծում են վեճը և արձանագրության մեջ որպես հաստատություն այդ բանի հիշատակում՝ «չինչ առաջի թագաւորացն լէլ է»<sup>2</sup>:

Այս կարգի ամենաբնորոշ կանոն-արձանագրությունը մի արյունահեղ վեճի մասին, զրված է Արուճի եկեղեցու պատի վրա, որը օգտագործելի գրականության մեջ աղճատված և անիմաստ է դարձած, այդ պատճառով էլ մեջ ենք բերում մեր ստուգումներով և ամբողջությամբ.

:ՅԺԶ /—867) ԹՈՒԱԿԱՆԻՆ ՆԱՅՈՅ,  
ԻՇԽԱՆՈՒԹԻ ԱՇՈՏՈՅ ԵՒ Ի ՏԷՐՈՒԹԻ  
ՍՄԲԱՏԱ/ ՆԱՅՈՅ ԱՍՊԱՐԱՊԵՏԻ ԲԱԳՐԱ-  
ՏՈՒՆՈՅ ԵՒ Ի ԿԱԹԱՂԻԿՈՍՈՒԹԻ ԶԱՔԱՐԻ —  
ԱԻ ԷՂԵԻ ԿՈՒԻ ԸՆԿ ՅԱՐՈՒՃ/ԵԻ  
ԸՆԿ ԿՈՇ ԵՒ /ԸՆԿ ԳԱԻԱՌՆ. ԷՂԱՐ  
ԱՐՈՒՃ ԶԿՈՇԱ. ԶԳԱԻԱՌՆ ԵՒ ԿԱՄԱԻ/  
ԶԿՈՇԱ. ՎԱՆԱԿԱՆՆ ԵՒ Ի ՔՐԹԱՎԱՆԻՆ  
ԸՆԿ ԱՆԿԻՆ ՄԻՆԹԱ/ՆԻ ՎԱՃԱՌԵՅԻՆ.  
ԵՍ ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ ՎԱՌԱՄԱ ԾԱՌԱ  
Ս/ՄԲԱՏԱ. ԲԱԳՐԱՏՈՒՆՈ ԵԿԻ ՀՐԱՄԱՆԱԻ  
ՍՄԲԱՏԱ ԵՒ ԵՍ/ ՆԱԻԱՍԱՐԵՅԻ ԶԶՈՒՐՆ  
ԸՆԿ ԿՈՇ ԵՒ ԸՆԿ ՅԱՐՈՒՃ, ԶԻՆ/Չ ԻԻՐԵԱՆՅ  
ԲՆԻԿ ՌԱՍՄ ԷՐ ԼԵ՛ /Ա. ԵՒ ԿԷՍ ԿՈՇԱ.  
ԵՒ :Ա.: ԱՐՃ/Ո. ԱՐԴ ԷԹԷ ԱՅԼ ՈՔ ՀԱԿԱ-  
ՌԱԿԵԼ ԶԱՆԱ ԱՅԼ ԱԻԵԼԻ Ռ/ՍՍՄ ՅՈՒԶԷ  
:ՅԺԸ: ՍՈՒՐՐ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՆԶՈՎԵԼ  
ԼԻՅԻ ԵԻ/Ի ՍՄԲԱՏԱ ՄԱՀՈՒԱՄԲ  
ՊԱՏՈՒՀԱՍԻ:

1 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, 47.

2 Անդ, 20.

Ջրանցքաշինութեան և ջրօգտագործման այն բոլոր դեպքերը, որոնց մասին վերևում խոսվեց, վերաբերում են նրան, երբ ջուրն, առանձին վերցրած, շահագործման և ռենտայի աղբյուր չէ ջրանցքատիրոջ համար, այլ օժանդակ միջոց նոր հողերի յուրացման կամ արդեն յուրացված հողերի բերքատուութունը բարձրացնելու, հետևաբար անուղղակի միջոց ռենտան ավելացնելու համար: Ջրանցքատիրոջ համար ոռոգելի ջուրը շահագործման ուղղակի և անմիջական աղբյուր չինելու վերաբերյալ փաստական նյութեր մինչև այժմ հայտնի չեն եղել Հայաստանում: Արևելյան երկրներում հայտնի են, սակայն, ջրի շահագործման ուրիշ ձևեր ևս, որոնցից մեկն էլ այն է, երբ սեփականությունը կամ մասնավոր մարդիկ ջրանցքներ են կառուցում ոչ միայն սեփական հողերը ոռոգելու, այլև այն ուղղակի կիրառվելու և կամաքի աղբյուր դարձնելու նպատակով: Այս դեպքում ջուրը վարձով է տրվում գյուղացիներին կամ ամբողջ տարվա համար, որը տարեկան հարկի բնույթ է կրում, կամ յուրաքանչյուր անգամ ոռոգման համար որոշ վարձ է վերցնում՝ համաձայն ոռոգելի տարածության չափի: Օրինակ, Պարսկաստանի մասին Շարդենը գրում է, որ անհիշատակ ժամանակներից մինչև օրս օգտագործվում են թե՛ վերերկրյա և թե՛ ստորերկրյա ջրերը, որոնք դառնում են ջրանցք կառուցողի սեփականություն. երկրագործներին և այգեգործներին վարձու տալու միջոցով ջրանցքատերերն ստանում են մեծ հասույթներ: Պետական գանձարանի հասույթների ցանկի մեջ իր մեծությամբ հինգերորդ տեղը գրավում է ջրի հարկից գոյացածը<sup>1</sup>:

Որպեսզի ոռոգելի ջուրը ջրանցքատիրոջ համար շահույթի աղբյուր դառնա, առաջին հերթին պետք է այն իրավաբանորեն նրա կատարյալ սեփականությունը համարվի: Նախորդ էջերում տեսանք, որ առանձին կալվածատերերի և անհատների միջոցով կառուցված ջրանցքներն իրոք որ այդպիսին էին, ինչպես Տաթևի վանքի և Գրգորիկի կառուցումները: Այդ կանոնը հստակորեն ձևակերպված է Գունդատաբլի «Դատաստանագրքի» մեջ, ինչպես տեսանք:

Վերջին տարիներում մեր կողմից հավաքած արձանագրական նյութերի մեջ երևան եկան այնպիսիները, որոնք հաստատում են

<sup>1</sup> Voyages du Chevalier Chardin en perse Nouvelle ed par Langles, V 398—99, Paris. 1811 p.

միջնադարյան Հայաստանում ջրի ուղղակի շահագործման առարկա լինելու, հատուկ ջրային հարկ և այդ հարկի համար հատուկ տերմին գոյություն ունենալու փաստերը:

Ջրի հարկ նշանակող այս նորահայտ բառը արձանագրությունների մեջ գրված է երկու ձևով՝ Ալվգան և Աբգան. հեշտությամբ հասկացվում է, որ բառը պարսկերեն է և արմատն է Ալկամ Աբ, որը իրաներենում ճիշտ այդ երկու ձևով է գործածական և երկու դեպքում էլ կնշանակի ջուր. բառի երկրորդ մասը գան, ծանց է, որը իրաներենում գան է անէ ձևն ունի, հետևաբար Աբիգանն կնշանակի ջրային, ջրի համար տրվող վարձ կամ տուրք, ճիշտ այնպես ինչպես մալիք-սեփականատեր և մալիֆանէ—ռենտա:

Նկատի ունենալով այս բառ-տերմինի նորահայտությունը և այն, որ հրատարակված արձանագրություններում նրա իմաստը չի բացատրված, ինչպես և այն պարունակող արձանագրություններից շատերի շեղումներով լինելը, մեջ ենք բերում բոլոր արձանագրությունները:

Դրանցից ամենահինը գտնվում է Սանահնի վանքի մեծ դավթի միջին թաղի վրա, 10 տող.

1. ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՎԱՍԱԿ ԵՒ ԱՄՈՒՄԻՆ ԻՄ ԽԱՔՈՒՆ
2. ՏՈՒԱՔ ՅԱՍԱՍԻՆՍ ՄԵՐ ՈՐԴՈՅՆ՝ ՔՈՒՐԴԱՇԱՀԻ —
3. Խ/Ն ՀՈԳՈՅՆ՝ ՋՄՈՒՍԷՍ, ՋՄԱՐԳԱՐԷԻՆ ՈՐԴԻՆ, ԻԻՐ
4. ՇԱՀ ՈՒ ԶՆՆՈՎ ԵՒ Ժ: ԱԻՐԱՎԱՐ ՀՈՂ ԼԱԻ ԱՂԲՈՅՆՔ Ա-
5. ԶԱՏ ՅԱՄԷՆ ՀԱՐԿԷ: ՄՈՒՍ ԷՍՆ ԻԻՐ ՏԱՄԲՆ, ՈՐ ԿՈՒԻՆ՝ Զ-
6. ՀՈՂՆ ԲԱՆՅՅԷՆ՝ ՈՒ ԱՐԳԱՆԻՆ ՀԱՇՈՒԻՆ ԱՂ ԲԵՐԷԼ:
7. ԵՍ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ, ԱՄԷՆ ՄԻԱԲԱՆԱԻՔՍ ԷՏՈՒԱ-
8. Ք ԶՈՒՐԲԱԹՆ ԱԻՐՆ ԶԱՄԷՆ ԷԿԵՂԵՅԻՔՍ ՆԱՅԱ ԱՅԼ
9. ԳՐԻՆ ՅԵՏ ԵՒ ՔՈՒՐԴԱՇԱՀԻՆ ՀՈԳՈՅՆ. ՈՎ ԽԱՓԱՆԷՆ՝ Ն-
10. ԶՈՎԱՍ Է ՅԱՅ ԵՒ Ի ՍՐԲՈՅ ՆՈՐԱ, ՈՎ

ՀԱՍՏԱՏ ՊԱՀԷ ԱԻՐՀՆԻ ՅԱՅ<sup>2</sup>:

<sup>1</sup> Այսինքն ջրի վարձի կամ հարկի փոխարեն պարտավոր է աղ կրել: Այս աղ կրելու իմաստը բացատրված է Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի մեջ, բոս որի ձին, ջորին և էջը տաանձին հարկատվության շեն ենթարկվում, որովհետև նրանց տերերը տարվա 12 գլխավոր տոներին պարտավորվում են ծառայել իշխանի համար, այն է՝ երկու անգամ (ոտքի) հաց կրել բերդը և երկու անգամ՝ աղ:

Տե՛ս «Դատաստանագիրք», էջ 13, Երևան, 1958 թ:

<sup>2</sup> Զալպեան, Ա, 21—22: «Վիմական տարեգիրք», 248, Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը, 123 (4 ծ. Ն՝ 46, էջ 83), Ըստ ընկ. Կ. Ղաֆաղարյանի հաշվում-

Նրկորորդը գտնվում է Սիսիանի շրջանի Աղուտի գյուղի կենտրոնում կանգնած VII դարի դամբարան-հուշարձանի հարավային կողին՝ և ունի հետևյալ բովանդակությունը.

1. [ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՓԱԽՐԱՅԴԱԻԼԷՍ, ՏԱՐՍԱՏԻՃԻՆ Ո-
2. [ՐԴԻ, Զ]ԱՎԳՍՆՆ ԹՈՂԻ ԻՄ ՄԱԻՐՆ ՀՈԳՈՅՆ ՀԱՄԱՐ
3. [ԵԻ ՀՄՍ]ՏԱՏԵՅԻ, ՈՎ ԽԱՓԱՆԵԼ ԶԱՆԱՅ ՅԻՄՈՅ
4. [ԿԱՄ ԱԻՏ]ԱՐԱՅ ԻՇԽԱՆԱՅ, ՈՎ ԻՅԷ ՈՐ Լ :ԳՃԺԸ: | = 318 |
5. [ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՆՁՈՎ] Ի ԵԻ ՄԱՍՆ ՈՒ ԲԱԺԻՆ ԸՆԴ Յ-
6. [ՈՒԴԱ] Ի ԵԻ ԸՆԴ ԽԱԶ[ԱՀԱՆՈՒԱՅՆ ԵՂԻՅԻ]:

Արձանագրության սկզբի երեք տողերը գրված են քիվին, վերջին երեքը՝ նրա տակի խորություն մեջ, Պրոնք քիվի ստվերի մեջ են և շին երևում լուսանկարի վրա: Սկզբի երեք տողերի սկզբի մասում քարը կտրված է, բայց հեշտությամբ վերականգնվում են պակաս բառերն ու տառերը:

Արձանագրության ժամանակը, մի քանի տարվա մոտավորությունը, որոշվում է Փախրադուլա անձնանված շնորհիվ, նա Տարսայիճ Օրբելյանի որդին է, պատմագիր Ստ. Օրբելյանի կրթասեր եղբայրը, որը երիտասարդ հասակում վախճանվել է և թաղվել իր հոր կողքին՝ Նորավանքում: Գերեզմանաքարի վրա նրա մահվան թիվը նշանակված է ԶԽԾ—1296 թ., պարզ է, որ արձանագրությունը պիտի փորագրված լինի նրա մահվանից 1—2 տարի առաջ<sup>1</sup>:

Նրորդը գրված է Կեչառիսի վանքի գավթի հարավային պատին ներքուստ, չորս տողով.

ԱՅ ԿԱՄԱԻՆ ԵՍ ՊԱՊԱՔ, ՈՐԴԻ ՊՌԱԻՇԱՅ, ԹՈՌՆ ՀԱՂԲԱԿԵՆՅ,  
ԷՏՈՒ ԶԻՄ ԿԱԻԱՆՈՅԻ ՆՈՐՔՆ ՈՒ :Մ: ՍՊԻՏԱԿ յՍԲ  
ԳՐԻԳՈՐԻՍ ԵԻ ԿԱԹՈՂԻԿԷԻՍ ԼՈՒՍՈՅ. Ի ՅԻՇԱՏԱԿՍՆ ԸՆԴ  
ԸՆԿԵՐ ԱԶԳԱԿԵՆԻՆ ԻՄՈՅ ԳՐԻԳՈՐՈՅ, ԱԶԱՏ/ՅԱՄԷՆ  
ՀԱՐԿԷ Ի ՅԱՐԳՆՈՒ ԵԻ Ի ՁԵՌՆԱԻՈՐԷ ԵԻ ՅԱՄԷՆ ԻՇԽԱ-  
ՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԻ, ԻՐԻԱԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՅԻՆ :Զ: յԺԱՍ

ների արձանագրությունը վերաբերում է XIII դարի առաջին տասնամյակին, հետևաբար ամենահինը մեր բերած փաստագրերից, տե՛ս Կ. Ղաֆաղաբյան, Սանահնի վանքը, էջ 123:

<sup>1</sup> Ալիշան, Սիսական, 192.

Ի ՏԱՐԻՆ Ի ՏԱՒՆԻ ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԶԱՆՈՒՆ  
ԳՐԻԳՈՐՈՅ, ԿԱՏԱՐԻԶՔՆ ԱԻՐՂՆԻՆ ՅԱՅ. ԱՄԷՆՆ՝:

Արձանագրութեան ժամանակը որոշվում է Պատար Խաղբակ-  
յանի անվան հիշատակումով: Նա մահացել է 1298—1299 թվա-  
կաններին, հետևաբար արձանագրությունը վերաբերում է XIII  
դարի վերջին տասնամյակներին:

Չորրորդ արձանագրությունը գտնվում է Եղեգնաձորի շրջանի  
(Վալոց ձոր) Թանհատի վանքում (այժմ Ղարա վանք): Արձանա-  
գրված քարը պատի երեսի սրբատաշ քար է՝ այժմ ընկած և  
աջ մասը շարդված: Բնագիրը ամբողջությամբ վերականգնել զբ-  
վար է, բայց ընդհանուր բովանդակությունը հասկանալի է. նվի-  
րատուն վանքին է նվիրել հողամաս կամ այգի Շղուտուն, որը  
գտնվելիս է եղել Շահմարդինց հողի մոտ և թողել է Աբգանը՝ ջրի  
հարկը, վանականները դրա դիմաց սահմանել են տարին՝ չորս  
պատարագ. ժամանակը համարում ենք XIV դարի սկիզբը:

Հինգերորդ արձանագրությունը գտնվում է նույն Թանհատի  
վանքում, հարավային պատի վրա՝ արտաքուստ. սկզբի մասից մի  
քար ընկած-կորած է, բայց նախկին հրատարակությունների ժա-  
մանակ նա լրիվ է եղել և հեշտությամբ վերականգնվում է. հրա-  
տարակիչները նրա վերջին տողի բովանդակությունն ազավաղել  
են՝ հատկապես մեզ հետաքրքրող տերմինը. ԱԻԳԱՆ Է՛Լ ՏՎԱՔ —  
նախադասությունը դարձրել են՝ ՍԻԳՆԵԼ ՏՈՒՍՔ, որ անիմաստ է:  
Արձանագրության ստույգ բնագիրը հետևյալն է.

[ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՍՂԱՆՃԱՐՍ ՈՒ ԹԱՃՄԼԸՔՍ ՄԻԱԲԱՆԵՅԱՔ ՄԲ  
ՍՏԵՓԱՆՈՍԻՍ, ՏՈՒՍՔ, ԶԿԿՈՒՍՔԱՐԻՆ ՀՈՂՆԶՈՎԱԵՆՅ ՀՈՂՈՎՆ.  
ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ

[ՀԻՆԳ ԺԱՄ ՎԱՐԱԳԱՅ ԽԱՉԻՆ] ՏԱԻՆԻՆ: ԿԱՏՎՀԱՏԻՆ ԱԻԳԱՆ Է՛Լ  
ՏՎԱՔ<sup>2</sup>:

Հիշատակված նվիրատուներն ունեն և այլ արձանագրություն-  
ներ, որոնք թվագրված են XIII դարի վերջի և XIV սկզբի տասնամ-  
յակներով:

<sup>1</sup> Արձանագրությունը հրատարակել է Գ. Հովսեփյանը — Խաղբակյանք, Գ. 10. և ծանոթագրել — «Եյարնդաա» փակագիր է և շեմ կարողացել կարգալ, որոշ հարկի անուն պիտի լինի»:

<sup>2</sup> Ս. Զալալյան, Ճանապարհորդություն, 208, Ալիշահ, Սիտական, 123:

Վեցերորդ արձանագրությունը գտնվում է Սիսիանի շրջանի Հոր գյուղի հյուսիս-արևմուտքում, ձորակի մեջ գտնվող կիսա-գեանափոր, այժմ ս. Սարգսի խաչեր կոչվող եկեղեցու ներսում՝ նրա հարավային պատի վրա. ունի հետևյալ բովանդակությունը.

ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ ՍԱՐԳԻՍ ՈՒ ԱՄԻՐ  
ՀԱՍԱՆ, ՆԱՀԱՊԵՏԱՅ ՈՐԴԻ —  
ՔՍ, ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԱՆ-  
ՈՒՆ ՍԲ ԱԾԱԾՆԻՆ Ի ՓՐԿՈՒԹԻ ԼՈԳ-  
Ո ՄԵՐՈ ԵՒ ԾՆՈՂԱՅ ՄԵՐՈՅ ԵՒ Ա-  
ԶԳԱԿԱՆԱՅ. ՈՒ ՏՎԱՔ ԶՄԵՐ ՀԱՐ  
ՆԱՀԱՊԵՏԱ ՀԱՂԱՂ ԱՐԴԵՄՔ ԳՆԱԾ ԼՈՂ-  
Ն ՍԲ ԱԾԱԾՆԻՍ. ՈՎ ՈՐ ՀԱԿԱՌԱԿ ԼԻՆԻ  
ԴԱՏԻ ԱՅ: ԵՍ ԴԱԻԹ ՈՒ ՄԻՐԱՆ  
ԶԱԻԳԱՆՆ ՏՎԱՔ. ՈՎ ՈՐ ԷՂ ՈՒԶԷ ՄԱ-  
ՍՆ ԶՈՒԴԱԻ ԱՌՆՈՒ. ԹԻՎ : ԶՂԴ: (1445):

Յոթներորդ արձանագրությունը գտնվում է Վեդու շրջանի Մանկուկ գյուղում: Այն գրված է խաչքարի վրա; որն այժմ բն-կած է գյուղի արևելյան մասում գտնվող կիսավեր մատուռի մոտ: Այդ բնդարձակ արձանագրությունը գրվել է խաչքարի արևմտյան երեսին վերից-վար, զժբախտաբար խաչքարի վերին մասը կտար-ված-կորած է, այն փորձել են կիսել երկու մասի, այդ նպատակով վերից վար աղոս են փորել զբերի վրայով, որով խիստ վնասվել է արձանագրությունը, մնացած մասերից հնարավոր է մակարերել, որ ոմն Դավիթ, աեր Սակուարերդի (կամ Սակուարերդում) թողել է Արգանը. պայմանագիր-արձանագրությունը որպես վկա հաստա-տել է Բջնիի Լպիսկուպոս Գրիգորը:

Ըստ երևույթին ջրի հարկը վերցվել է մի ամբողջ գյուղից, ալլապես Լպիսկուպոսի հաստատությունը անիմաստ կլիներ:

Արձանագրության ժամանակն էլ որոշվում է հենց այդ Լպիս-կուպոսի անվան շնորհիվ: Գրիգոր Լպիսկուպոսը XIII դարի կեսերի նշանավոր գործիչ է, Արարատյան նահանգի թեմակալ, ստորա-գրել է Ասի ժողովի կանոնները՝ 1246 թ., գումարել է Հաղավանի ժողովը՝ 1270 թ., եղել է Գևորգ Սկևռացու ուսուցիչը:

Ութներորդ արձանագրությունը գտնվում է Բասարգեչարի շրջանի Տաչքենդ գյուղում. այդտեղ, ս. Աստվածածին կոչվող եկեղեցու արևմտյան պատի վրա արտաբուստ գրված է.

ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ ՄԱՄՔԱՆ, ԳՐԻԳՈՐ  
 ԶԺՈՐԻՆ ԶԱՂԱՅՆ, ԶՃԱԼԻՆ ՀՈՂՆ, ՍՏԵՓԱՆՈՍԻ  
 ԶՍԱՂԱՅԱԴՌԱՆ ԽՈՏՆ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՍ  
 ՏՎԱՔ. ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱՀՄԱՆԵՑ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ  
 ՃՐԱԳԼՈՒԾԻՆ :Գ:  
 ԺԱՄ ՊԱՐՈՆ ՀԱՍԱՆԱ:  
 ԶԻՆԶ ԳՐԱԾ Է  
 ՈՎ ԻԾԷ: ՅԵՏ ԱՌՈՒ ԿԱՄ Ի  
 ՆԱԾԱՆԷ: ԱՐԳԱՆ ԱՌՈՒ :ՅԺԸ: ՀԱՅՐԱ-  
 ՊԵՏԱՅՆ ԿԱՊԱԾ Է՛:  
 ԱՐԳԱՆ ԱՌՈՒ :ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ԿԱՊԱԾ Է՛:

Արձանագրութեան ժամանակը որոշվում է Արցախի իշխան-  
 ներ Հասանի, Մամբանի և Գրիգորի անունների հիշատակումով,  
 նվիրատուները Մամբանն ու Գրիգորն են՝ մայր ու որդի: Նվեր-  
 ները տրվել են Հասանի հիշատակին, որը Մամբանի ամուսինն է  
 և Գրիգորի հայրը: Նա մահացել է 1287 թվականին:

Բացի արձանագրական այս փաստերից, Աբգաճ հարկի վե-  
 րաբերյալ գոյություն ունի նաև ձեռագրական մի հիշատակա-  
 գրություն: Այն գրված է 1322 թ. Մատենադարանում պահվող  
 № 2930 ձեռագիր ավետարանի ծք և 13ա էջերի բաց տեղերում և  
 ունի հետևյալ բովանդակությունը. Ելեզատպատի տանուտերեր  
 Սարգիսն ու Փիլիպոսը նվիրում են սբ. Սարգիս եկեղեցուն կովա-  
 հանի, իրիցահող և աղբիճ կոշվող հողամասերը՝ Անաբգաճ—ա-  
 ռանց ջրային հարկ զանձելու իրավունքի. պայմանագրին որպես  
 վկաներ ստորագրել են 6 հոգի, Դավիթը, Նետարար խոցադեղը և  
 ուրիշներ<sup>2</sup>:

Թվականը, ինչպես և վաչրը որոշվում են Սյունյաց եպիսկո-  
 պոս Հովհաննես Օրբելյանի անվան հիշատակումով, որը գահա-  
 կալել է 1303—1324 թվականներին: Տեղի անշուշտ Սյունիքն է,  
 վաչոց ձոր դավառը. հիշատակված Ելեզատպատ գյուղը հավանա-  
 րար հին Եղեգիս ավանն է, այժմյան Ալայազ գյուղը:

<sup>1</sup> Արձանագրությունն արտագրվելով ունեցել է շատ հրատարակություններ՝  
 բոլոր դեպքերում էլ աղճատված և միշտ էլ առանց այն տողի, որի մեջ ԱՐԳԱՆ  
 բառն է գրված: Համեմատիր. Զալալեան, Բ, 115, Սմբատեան, Գեղարքունիք, 629:  
 Լալախան, Աղղ. Հանդ., XIX, 17:

<sup>2</sup> Այս հիշատակագրությունն ստացանք Մատենադարանի գիրեկտոր՝ քնկ-  
 Լ. Խաչիկյանից, որին և հայանում ենք խորին շնորհակալություն:

Նշենք նախ, որ վիմական արձանագրությունների մեջ երբ թՈՂԻ բայը զուգորդվում է որևէ հարկային տերմինի հետ, նշանակում է, որ վերացվել կամ ղիջվել է այդ հարկը. հետևաբար բերված արձանագրությունների մեջ ՉԱԻԳԱՆՆ ԹՈՂԻ ոճը նշանակում է ղիջել կամ վերացրել է ջրի հարկը:

Նշանակալիցն այն է, որ այս փաստերի մեծ մասն այնպիսի ոճով է գրված, որ ջրային հարկը չի միացվում ընդհանրապես հողից դանձվող հարկի հետ: Հիշատակված առաջին՝ Սանահնի արձանագրության մեջ հողային նվերներից առանձնացված է ավագանը՝ ջրային հարկը, որի դիմաց Մուսեսը պարտավորվում է ազ կրել:

Երկրորդ, Աղուտի գյուղի արձանագրությամբ, Փախրաղուլան թողել է, այսինքն ղիջել--նվիրել է գյուղից դանձվող ջրային հարկը՝ ավագանը միայն: Այս փաստը կարևոր նշանակություն ունի, Փախրաղուլա Սրբելյանը Սյունիքի ժառանգական իշխանն էր, որին էր պատկանում նաև Աղուտի գյուղն ամբողջովին: Նա իր մոր հիշատակին նվիրում է միայն ջրային հարկը, դա ապացույց է այն բանի, որ Աղուտի գյուղը ուներ ջրովի հանդեր և որ այդ ջրանցքը պատկանում էր հողատեր իշխանին, բայց այդ իշխանը ջրանցքից դանձում էր հատուկ և առանձին հարկ, և ոչ թե միացած ջրվիժի հողաբաժնի ընդհանուր ռենտային:

Երրորդ, Կեչառիսի արձանագրության բովանդակությունից պարզ երևում է, որ Ավգանը ինքնուրույն հարկ է, արձանագրության մեջ ասված է, որ նվիրված հողաբաժինը ազատվել է ամեն տեսակի հարկատվությունից, և դրանցից հիշված է երկուսը, ձեռնավորի հարկը և Արգանը:

Հինգերորդ, Թանհատի վանքի արձանագրությունից պարզվում է, որ կալվածատերեր Սանճարն ու Թաճմեխիքը երկու կտոր հողամաս են նվիրել վանքին՝ Կլուաքարի հողը և Հովվենց հողը. դրանից բացի, մի այլ հողաբաժնի՝ Կատվահատի՝ Ավագանը, այսինքն կտավհատ ցանվող հողամասից ոռոգման համար զանձվող վարձը կամ հարկը միայն:

Վեցերորդ, Լոր գյուղի արձանագրությամբ նահապետի որդիներ Սարգիսն ու Ամիրհասանը հողաբաժին են նվիրում եկեղեցուն, իսկ Դավիթն ու Միրանը՝ ջրի հարկը: Այս կրկնակի նվիրատվությամբ միանգամայն որոշ և ակնառու է դառնում, որ հողից անջատ, գոյություն են ունեցել ջրանցքի առանձին սեփականատերեր, որոնց համար ոռոգման համար հանված ջրանցքը և նրանով հոսող ջուրը դարձել են ռենտային աղբյուր:

Ութներորդ, Տաշքենդի արձանագրությունից երևում է, որ Մամբանն ու Գրիգորը (մայր և որդի) եկեղեցուն հող և ջուր են նվիրել և անիծում են նրանց, ովքեր հողը կա կվերցնեն կամ աբգան կառնեն, այսինքն. միասին կատարված հողի և ջրի նվերը կարող է եկեղեցուց օտարացվել առանձին-առանձին, այդ պատճառով էլ յուրաքանչյուրի օտարացնողն առանձին է ենթարկվում անեծքի:

Մեջբերված այս բազմաթիվ փաստերը անառարկելիորեն հաստատում են ջրալին հատուկ հարկի և նրա տերմինի գոյությունը Միջնադարյան Հայաստանում: Այդ առթիվ մեր ձեռքի տակ եղած փաստերը ընդգրկում են XIII դարի երկրորդ կեսից մինչև XV դարի կեսերը. սակայն պարզ է, որ այդ հարկը գոյություն է ունեցել թե՛ ավելի վաղ և թե՛ ուշ շրջաններում (ուշ շրջանների մասին խոսելը մեր նպատակից դուրս է): Ավելի վաղ շրջանների մասին թեև ուղղակի ապացույցներ չեն հայտնաբերված առայժմ, բայց այդ հարկի հենց պարսկական անունը՝ ավզան, մատնացույց է անում մոնղոլա-թուրքական տիրապետութայնից առաջ նրա փոխ առնելու հանդամանքը:

Այդ հարկի ընդհանուր լինելը, Միջնադարյան Հայաստանում, պարզ երևում է մեջբերված արձանագրությունների տեղագրումից՝ Լոռի, Հրազդանի շրջան, Բասարդեշար, Վեդու շրջան, Վայոց ձոր՝ մինչև Զանգեզուր:

Ջրալին հարկի գոյության հաստատման փաստը հնարավորություն է տալիս միաժամանակ, ավելի կոնկրետ հասկանալ, թե արձանագրությունների և թե պատմագրության մեջ հանդիպող հող և ջուր ընդհանուր հասկացողությունը: Խնդիրն այն է, որ նրման արտահայտության տակ հասկացվում էր կալված, հողամաս (մեծ և փոքր) ընդհանրապես, մինչդեռ այժմ որոշ դեպքերում ջուրը պետք է ըմբռնել հողից անկախ, որպես ռենտայի ինքնուրույն աղբյուր. բերենք երկու օրինակ.

Անիի Աբղարիբ Պահլավունու եկեղեցու պատին 1036 թ. գրված Պետրոս կաթողիկոսի ընդարձակ արձանագրության մեջ հողալին նվերները հիշված են այսպես.

«...արդ տուա՛մ որմով և ծառով՛ պաղաբերով՛ և անպողա՛ւք և խոտագե՛տնով՛ և :Գ: ար ջուր ազատ ի խալայէ և ի գեղէ՛ յամենայն հասուց...»<sup>1</sup>:

<sup>1</sup> Կ. Կոստանյանց, Վրմական տարեցիր, 26:

*Ստեփանոս Օրբելյանը նորավանքի ստացած արտոնությունները Ելտիուզ Աթաբեկից նկարագրում է այսպես.*

*...«Եւ դամենայն որ ինչ էր վանիցն արար: ազատ լամենայն աշխարհական հարկաց՝ գճող և զջուր, զայգի, զգիւղ և զագարակ և զբերդն իսկ Անապատայ»<sup>1</sup>:*

С. Бархударян

Некоторые данные по орошению в древней Армении

### Р е з ю м е

Климатические условия Армении таковы, что нормальная экономическая жизнь невозможна здесь без системы искусственного орошения.

Древнейшие каналы Армении сооружены в эпоху первобытнообщинного строя; они находятся на склонах гор, базой их служили талые воды и воды горных источников. Вода этих каналов использовалась для орошения горных пастбищ и посевных площадей на склонах гор. Техника этих каналов весьма своеобразна, они составляют обширную сеть мелких прудов, соединенных канавами. Остатки этой системы орошения сохранились на склонах Арагаца и Гегамских гор.

В рабовладельческую эпоху—в период Урартского государства в Армении широко возделывались полеводческие культуры, развивалось садоводство. Потребность в воде возрастала, поэтому для целей орошения стали использовать воду больших и малых рек. При наличии центральной власти и большого количества рабов стало возможным сооружение каналов огромных размеров (длина одного из них—канала Шамирам—превышала 70 км). Стены этих каналов облицовывались большими базальтовыми глыбами, причем применялась система акведуков, сооружались большие пруды-водохранилища и т. д. Остатки этих каналов (многие из которых действуют и в настоящее время), а также клинописные стелы, воздвигнутые в честь сооружения каналов, сохранились до наших дней.

Остатки каналов, восходящих к периоду армянской госу-

<sup>1</sup> Ստ. Օրբելյան. Պատմություն, Թիֆլիս, 1911, էջ 352:

дарственности рабовладельческой эпохи, не сохранились; по-видимому старые каналы еще удовлетворяли экономическим потребностям страны.

В эпоху феодализма страна была разделена на большие и малые нахарарства, поэтому сооружаемые каналы были небольшими и имели узко местное значение. Нашими источниками для этого периода являются армянские рукописные памятники и особенно армянские надписи, сделанные с целью увековечивания сооружений.

Строительство каналов в средневековой Армении можно разделить на четыре категории:

1. **Государственные каналы**, которые сооружались по приказу царей. Таковыми являлись каналы, сооруженные в окрестностях Ани для орошения и снабжения города питьевой водой, а также каналы царя Васпуракана Гагика, проведенные в окрестностях сооруженных им крепостей и городов для орошения полей и снабжения населения питьевой водой.

2. **Княжеские, монастырские.** Отдельные феодалы, а также крупные монастыри сооружали большие и малые каналы для орошения «собственной» территории. Наиболее значительными из них являются канал **Варарака**, сооруженный Татевским монастырем, длина которого достигала десятков километров, орошая около 200 гектаров, а также канал **Гидеваза** и другие.

3. **Общинные.** Одно или несколько сел объединенными силами сооружали канал для орошения земель своих общин. Примечателен канал, сооруженный близ села Аличалу Мартунинского района, орошавший земли четырех сел. Надпись, сделанная по этому поводу, обнаружена нами и публикуется впервые.

4. **Частновладельческие.** Отдельные лица сооружали каналы для орошения своих полей или с целью освоения целинных земель. Лучшим образцом является надпись на хачкаре, поставленном между селами Шнер и Алидзор Горисского района. Надпись сделана владельцем канала Гргориком и утверждена князем и другими. Эта надпись также публикуется впервые.

Обнаруженный нами новый материал надписей подтвер-

ждает, что в средневековой Армении существовал особый налог за пользование оросительной водой, который назывался «а в г а н». Термин этот персидского происхождения, он состоит из корня «аб»—вода и префикса «гане», что означает «для воды», «водный». Часть надписей, подтверждающих этот новый факт, публикуется впервые, а в остальных слово «абган» восстановлено нами.

В средневековой Армении существовали обычные и писанные законы, поощрявшие строительство каналов и упорядочившие их использование. Согласно этим законам:

А. Каждый имел право отводить от любой реки канал и проводить его через чужие земли до своих полей.

Б. Князья и помещики имели право взимать налоги с орошаемых земель в двукратном размере.

В. Строго определялось количество воды для каждой общины.

Г. Тот, кто путем орошения осваивал целинные земли, признавался их наследственным владельцем.

Д. Высшее право контроля над исполнением этих законов принадлежало центральной власти; нарушители подвергались строгой каре, вплоть до смертной казни.

**ԳՐԱՎՈՐ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ ՈՒՐԱՐՏՈՒԻ  
ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ուրարտուի դշուղատնտեսության մեջ խաղողագործությունը և նրա հետ կապված գինեգործությունը հանդիսացել են արտագրության հիմնական ճյուղերից մեկը: Հաշիական լեռնաշխարհի և մասնավորապես Արարատյան դաշտի երկրագործության և բուսականության մասին եղած ուսումնասիրություններից երևում է, որ կլիմայական-աշխարհագրական պայմանները հնարավորություն են տվել դարերի ընթացքում մշակել այստեղ վայրի վիճակում աճող խաղողի վազը:

Ուրարտուն, իսկ հետագայում Հայաստանը հանդիսացել են աշխարհի խաղողագործական կենտրոններից մեկը և դարեր շարունակ բազմաթիվ գինիներ են արտահանել Բաբելոն, Ասորեստան, Պարսկաստան և Միջագետքի հարավ-արևելյան շրջանները<sup>1</sup>: Պատմական Հայաստանում խաղողի վազի մշակումը և նրանից գինի պատրաստելու եղանակը այնքան հին է, որ ավանդաբար կապվում է առասողեղական Նոյի հետ, որը իբրև Արարատից իջնելով, տնկել է խաղողի որթը. «Եւ սկսաւ Նոյ այր հողագործ, վերկիր գործիլ եւ անկեաց այգի. եւ արբ ի գինւոյն 2:

Գիտական ուսումնասիրություններից պարզվում է, որ խաղողի վազը թե՛ վայրի և թե՛ մշակված վիճակում հանդես է եկել

<sup>1</sup> Հույն հեղինակների մոտ հիշատակվել է Հայաստանի գինիների արտահանումը Եփրատի և Տիգրիսի վտայով դեպի հարավ:

<sup>2</sup> «Մեռնագր», Թ. 20—21,

աշխարհի տարրեր վայրերում՝ մարդկային հասարակության վաղ արշալույսին: Հին Արևելքի շատ ժողովուրդներ մշակել են այդ կուլտուրան: Հին Եգիպտոսում խաղողագործությունը հանդես է եկել դեռևս երրորդ հազարամյակում (մ. թ. ա.): Ուշագրավ է, որ ինչպես Արարատյան դաշտում, այնպես էլ բոլոր հին ժողովուրդների մոտ այդ մշակույթի հանդես գալը պայմանավորված է դիցաբանական ավանդություններով: Ըստ հին եգիպտական դիցաբանության, Օզիրիսը՝ արևի աստվածը և աստվածների շարքում գլխավորը, սովորեցրել է մարդկանց խաղողի վազի մշակելը և նրանից զինի պատրաստելը<sup>1</sup>:

Հրեական ավանդությունը շար սգու աճեցրած դրախտի կենաց ծառը խաղողի վազն է համարում, որ ջրհեղեղի ժամանակ փրկվեց Նոյի կողմից<sup>2</sup>:

Նույնպիսի բացատրությունների ենք հանդիպում ինչպես հին հույների և հռոմեացիների, այնպես էլ հնդիկների և ասորեստանցիների մոտ: Հույները խաղողագործության և զինեգործության աստվածը համարում են Դիոնիսիոսին, իսկ ասորեստանցիները խաղողագործության և զինեգործության հայրն են համարել Սարգոն 1-ին Ակադացուն (մ. թ. ա. 2-րդ դարում): Ըստ ավանդության նախքան Թագավոր դառնալը նա այգեպան է եղել: Իր Թագավորության երրորդ տարում Կապադոկիայի սեմիտական գաղութի կոչով արշավել է այնտեղ և վերագործել, իր հետ բերելով թղենու երկու տեսակներ, խաղողի վազը և վարդ<sup>3</sup>: Խաղողագործությունը և զինեգործությունը մ. թ. ա. երկրորդ հազարամյակում բարձր զարգացման են հասնում Փյունիկիայում, Պաղեստինում, մի քիչ ավելի ուշ՝ Հայկական լեռնաշխարհում և Հունաստանում: Այդ ժամանակաշրջանի վերաբերյալ կան բազմաթիվ գրավոր վկայություններ: Հնագիտական նյութերն էլ հաստատում են սկզբնաղբյուրներում հիշատակված տեղեկությունները և թույլ տալիս եզրակացնել, որ մարդը իր հասարակական կյանքի սկզբին կլիմայական-աշխարհագրական այն գոտում, որտեղ վայրի վիճակում աճել է խաղողի վազը, ժանոթացել է նրա պտուղների հետ որպես սննդամթերք, իսկ հյութից պատրաստել է հաճելի

1 К. С. Кропоткин. Исторический очерк производства охмеляющих напитков, СПб, 1899, стр. 1.

2 М. А. Ховренко, Общее виноделие, М., 1909, стр. 3.

3 Н. Лурье, К. Ляпунова, М. Матье, Б. Пиотровский, Н. Флиштер, Очерки по истории техники Древнего Востока, Л.—М., 1940, стр. 13.

խմիչք: Մյուս կողմից բացառված չէ այն հանգամանքը, որ երկրագնդի որոշ վայրերում, որտեղ վայրի խաղող չի եղել, բայց կլիմայական պայմանները նպաստավոր են եղել նրա մշակման համար, փոխանցվել է այլ երկրներից: Դրա օրինակ կարող են ծառայել Ասորեստանը և Միջագետքի հարավը: Ահա թե ինչու մենք հնարավորություն չունենք պնդելու, որ խաղողագործության նախահայրենիքը եղել է այս կամ այն երկիրը, քանի որ այն հանդես է եկել բազմաթիվ երկրներում միաժամանակ կամ ժամանակի որոշ տարբերությունը:

Ինչ վերաբերում է գինեգործությանը, ապա լինել դա Ասիայում, Եվրոպայում կամ Աֆրիկայում, մարդու ծանոթությունը խաղողի հետ, նրան անպայման կհասցնել դրան:

Մորտիլեն հաղորդում է, որ մեր նախնիները դեռ քարե դարում ծանոթ են եղել զանազան պտուղների հյութից խմիչքներ պատրաստելուն, ինչպես մորենուց, մոշից, իսկ ավելի ուշ ժամանակաշրջանում հոնից<sup>1</sup>: Վաղ բրոնզե դարին է վերաբերում Խանլարի պեղումներից Հումելի կողմից հայտնաբերված խաղողի կորիզը (oitis vinifera), որը հիմք է տալիս ասելու, որ Անդրկովկասում խաղողագործությունը գոյություն է ունեցել դեռևս երկրորդ հազարամյակում (մ. թ. ա.):

Անդրկովկասի և հայկական բարձրավանդակի մասին ավելի մանրամասն տեղեկություններ են հաղորդում մ. թ. ա. առաջին հազարամյակին վերաբերող ասորեստանյան և ուրարտական արձանագրությունները:

Արձանագրություններում խաղողը, խաղողի վազը և գինին ունեն նույն արտասանությունը. Gisuldie 𐎠𐎺𐎠𐎵 (Cis) GEsTLM գաղափարադիրը փոխ է առնված ակկադերենից<sup>2</sup>: Հին աշխարհում, այդ թվում նաև Ուրարտուում, խաղողի այգիները անվանել են թագավորների, փոխարքաների և այլ սեփականատերերի անուններով: Օրինակ. «Սինախերիբի այգի», «Մենուայի այգի», «Տարիրայի այգի» և այլն: Խաղողի տեսակները նույնպես անվանել են սեփականատիրոջ կամ որևէ բանաստեղծական անունով, ելնելով խաղողի տեսակից, որակից և համից: Ինչ վերաբերում է այգիների մշակման և գինեգործության եղանակներին,

<sup>1</sup> Gabriel de Mortillet, Le préhistorique antiquité de l'homme, Paris, 1883, p. 578—579.

<sup>2</sup> Г. А. Меликишвили, Урартские клинописные надписи (այսուհետև УКН), М., 1960, стр. 411.

ապա եգիպտականի և ասորեստանյանի միջև տարբերություն համարյա չի եղել<sup>1</sup>, իսկ վերջինի և ուրարտականի միջև՝ բոլորովին չի եղել:

Ուրարտուի խաղողագործության և գինեգործության մասին առաջին տեղեկությունները վերաբերում են IX դարին մ. թ. ա.: Ինչպես Ուրարտուի քաղաքական կյանքի պատմության, այնպես էլ տնտեսական կյանքի ու նրա հետ կապված խաղողագործության վերաբերյալ առաջին տեղեկությունները հաղորդում են ասորեստանյան աղբյուրները: Այդ տեղեկությունները չափազանց կցկրտուր են: Ավելի մանրամասն տվյալները վերաբերում են VIII դարին (մ. թ. ա.) հենց իրենց ուրարտական թագավորների կողմից թողած արձանագրություններում, որոնք հաստատվում են հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութերով:

Թեյշեբաինիի (Կարմիր բլուրի) հնագիտական պեղումների շնորհիվ մենք սյարզ պատկերացում ունենք տնտեսության բազմաթիվ ճյուղերի և նրանց զուգահեռ խաղողագործության ու գինեգործության մասին: Անուղղակիորեն նույն ժամանակաշրջանին են վերաբերում հույն պատմիչների հաղորդումները հին Հայաստանի տնտեսական կյանքի վերաբերյալ, իսկ հայ պատմիչներից Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու տվյալներն ավելի պարզ են դարձնում մեր պատկերացումները Արարատյան դաշտի, Վասպուրականի և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի խաղողագործության ու գինեգործության մասին:

Արձանագրություններում և գրավոր աղբյուրներում առանձնապես ընդգծվել է ռոտոման սիստեմի հսկայական դերը խաղողագործության ու այգեգործության և ընդհանրապես երկրագործության համար:

Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական-կլիմայական պայմաններն աչքի են ընկնում սակավ մթնոլորտային տեղումներով և ամառային չոր ամիսներով. Այդպիսի պայմաններում Ուրարտուի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի երկրագործությունը կարող էր հիմնվել միայն արհեստական ռոտոման վրա, օգտագործելով լեռնային ջրառատ գետերն ու լճերը: Ահա թե ինչու Ուրարտուում երկրագործությունը բարձր զարգացման հասավ եփրատ, Արածանի, Արաքս, Հրազդան գետերի և Վանա, Ուրմիո,

<sup>1</sup> Charles Singer, E. J. Holmyard and R. Hall, A History of Technology, Oxford, 1955, P. 282.

Սեանա լճերի շուրջը գտնվող հովիտներում ու դաշտավայրերում:  
Այդ գետերի և լճերի շուրջը առաջացան տնտեսական, վարչական  
ու ռազմական խոշոր կենտրոններ:

Ուրարտացիներն այդ գետերի և լճերի ջրերը ավելի ռացիո-  
նալ օգտագործելու համար կառուցել են ոռոգման ցանց և հնարա-  
վորութիւն ստեղծել չոր ամիսներին անջրգի տարածութիւննե-  
րում և դաշտավայրերում ջուրը բաշխել ըստ պահանջի: Այդ աշ-  
խատանքների համար հարկավոր է եղել հսկայական քանակու-  
թյամբ մարդկային ուժ, իսկ կազմակերպելու համար՝ կենտրոնա-  
կան ուժեղ պետականութիւն:

Ուրարտուն մինչև IX դարի սկիզբը (մ. թ. ա.) դեռ հանդես  
չէր եկել որպէս միասնական կազմակերպված պետութիւն: Վա-  
նա լճի շրջակայքում ապրել են բազմաթիւ ցեղեր և ցեղային  
խմբավորումներ (նաիրյան ցեղեր), որոնք լինելով նստակյաց  
երկրագործներ, անասնապահներ և մետաղագործներ, նկատելի  
վարգացման էին հասցրել նաև բազմաթիւ արհեստները: Այդ ցե-  
ղերի միավորման շնորհիւ IX դարում ստեղծվում է Ուրարտա-  
կան ուժեղ պետականութիւնը: Երկրի դիրքը, բնական պայման-  
ները, կլիման, ընդերքը նպաստավոր էին նրա տնտեսական և  
կուլտուրական զարգացման համար: Մետաղագործութեան և այլ  
արհեստների վարգացումը, հատկապես երկաթի մշակումը հնա-  
րավորութիւն էին տալիս պատրաստել բազմազան զենքեր և զոր-  
ծիքներ, որոնց հետ կապված զարգանում էր նաև երկրագործու-  
թիւնը և նրա կարևոր ճյուղերից մեկը՝ խաղողագործութիւնը:

Խաղողագործական շրջանները արձանագրութիւններում հի-  
շատակվում են ջրանցքների անցկացման, ռազմական արշա-  
վանքների, քաղաքների զրաւման, ցանքատարածութիւնների,  
այգիների հրկիղման և այլ դեպքերի հետ կապված: Ըստ այդ տե-  
ղեկութիւնների Ուրարտուի հիմնական խաղողագործական շր-  
ջանները հետևյալներն էին՝ Այգի-Արդան, Խարխի, Մանա, Գիլ-  
զան, Արմարիլի, Այագի, Ադա, Կուարլինի: Այս շրջանների շար-  
քում պետք է հիշատակել նաև Մանաղկերտի դաշտը, որը եղել է  
խոշոր խաղողագործական կենտրոն, սակայն արձանագրութիւն-  
ներում կոնկրետ չի նշված, որ այդ ուրարտական երկիր է:

Նշված շրջանների վերաբերյալ առաջին տեղեկութիւնները  
հաղորդում են ասորեստանյան աղբյուրները: Մինչև ուրարտական  
ուժեղ պետականութեան կազմավորումը այդ երկրները հաճախ  
հարձակման ենթարկվելով հարկ են վճարել Ասորեստանին՝ ա-

նասուններով, գյուղատնտեսական մթերքներով և մետաղյա առարկաներով: Հարկի մի մասը լրացվել է զինիով:

## ԱԼՂԻ—ԱՐՁԱՆ ԵՐԿԻՐ

Ալզի-Արզան (հայերի մոտ Աղձնիք) գտնվում է Տիգրիսի վերին հոսանքի և հայկական Տավրոսի միջև ընկած հարթավայրում: Ասորեստանյան և ուրարտական արձանագրություններում հիշատակվում է որպես Ալզի երկիր: Այստեղ Թիկլաթպայասար I-ի ժամանակ (1115—1077 թթ. մ. թ. ա.) հաստատվել էին մուշկերը և գրավել Տիգրիսի աջ ափին Կատմուխի երկիրը<sup>1</sup>: Երկրում բնակվող ցեղերն ու մուշկերը, լինելով նստակյաց երկրագործներ, զբաղվել են նաև խաղողագործությամբ և զինեգործությամբ: Ասորեստանին արվող հարկի մի մասը լրացրել են զինիով: Աշուրնասիրպալ II-ի (884/3, 859 մ. թ. ա.) տարեգրության մեջ հաղորդվում է հետևյալը.

«Ես արշավեցի Նիպուր և Պացատե լեռների ստորոտում գրանրվող բնակավայրերից. անցա Տիգրիսի վրայով և մոտեցա Կատմուխի երկրին, վերցրի Կատմուխի և մուշկերի երկրների հարկը—խոշոր և մանր եղջերավոր անասուններ, բրոնզե անոթներ և զինի»<sup>2</sup>: Այնուհետև տարեգրության մեջ շարունակում է.

«...Երբ ես եղա Տուշխանում... Երկիր Նիրիգուն, նույնպես և Ներքին Ուրումե և Նաիրյան երկրի թագավորներից—մարտակառքեր, ձիեր, ջորիներ, արծաթ, ոսկի, բրոնզե անոթներ, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, զինի. հարկը ես նրանցից վերցրի, հարկահանները նշանակեցի Նաիրի երկրի վրա»:

Վերին Տիգրիսի աջ ափին գտնվող Տուշխանում մենաքարի վրա գրած արձանագրության մեջ նույն Աշուրնասիրպալ II-ը հաղորդում է.

«...Երբ Աշուրը տվեց իմ անունը ինձ սովորեցրեց և հրամայեց երկրորդ անգամ արշավեմ զեպի Նաիրի... ուղևորվեցի Տիգրիսի վրայով, զիշերեցի Կիբակում, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, զինի և բրոնզե անոթներ Կիբակի հարկը ես այստեղ վերցրի...»<sup>3</sup>:

<sup>1</sup> И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև АВНИУ), ВДИ, 1951, № 2, էջ 270:

<sup>2</sup> АВНИУ, № 23 (ВДИ, 1951, № 2, էջ 286):

<sup>3</sup> АВНИУ, № 26 (ВДИ, 1951, № 2, էջ 291):

Արձանագրություններից պարզվում է, որ Տիգրիսի վերին հոսանքի երկու ափերին՝ Կատմուխի և Ալզի երկրներում բնակվող ցեղերը զբաղվել են անասնաբուծությամբ, երկրագործությամբ և մետաղագործությամբ: Դաշտերում մշակել ու աճեցրել են խաղողի վաղը և գյուղատնտեսության մեջ խաղողագործությունը ունեցել է իր պատշաճ տեղը: Այս երկրները առաջիններն են, որ ասորեստանյան արձանագրություններում հիշատակվում են որպես խաղողագործական կենտրոններ, որոնք հետագայում Մենուայի և նրա որդի Արգիշտիի ժամանակ միացվեցին Ուրարտուին:

### ԽԱՌԽԻ ԵՐԿԻՐ

Այս երկիրը հիշատակվում է միայն ասորեստանյան արձանագրություններում<sup>1</sup>: Իր մեջ ընդգրկել է Զերմ (Բոհաման) գետի ներքին հոսանքի շուրջը Տիգրիսի ձախափնյա տերիտորիան: Այս երկրի բնակիչները Ասորեստանին վճարվող հարկի մի մասը նույնպես լրացրել են զինիով: Տուշխանի արձանագրության մեջ Աշուրնասիրպալ II-ը շարունակում է.

«...Մատիատուից արշավեցի, դիշերեցի Զաղա Բուխամ և Խաբխի երկրից հարկը ես վերցրի, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, զինի, բրոնզե անոթներ...»<sup>2</sup>:

### ԳԻՆՁԱՆ, ՄԱՆԱ, ՍԱՆԳԻՖՈՒՏՈՒ ԵՐԿՐՆԵՐ

Այս երեք երկրներն էլ գտնվում են Ուրմիո լճի ավազանի արևմտյան, հարավային և հյուսիսային ափերին տարածված շրջաններում: IX դարի առաջին կեսից սկսած ուրարտական թագավորների արշավանքների ուղղություններից մեկն էլ Ուրմիո լճի շրջակայքն էր: Այդ երկրների տերիտորիաները միացվել էին Ուրարտուին մինչև VII դարի վերջը (մ. թ. ա.) և հանդիսանում էին կովախնձոր Ասորեստանի և Ուրարտուի միջև, հատկապես Մանա երկիրը<sup>3</sup>:

Սալմանասար III-ը (859—824 թ. մ. թ. ա.) Տուշխանի արձանագրության մեջ հաղորդում է. «Խուբուշկիայից դուրս եկա, մոտեցա Սուգունիային, Արամ ուրարտացու ամրացած քաղաքին,

1 Г. А. Меликишвили, Нагри-Урарту, Тбилиси, 1954, стр. 24.

2 АВИИУ, 26 (ВДИ, 2, 1951, էջ 291):

3 Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1960, էջ 62:

պաշարեցի և գրափեցի քաղաքը... Սուգունիացից դուրս եկա և գնացի դեպի ծովը Նաիրցան, լվացի իմ վեները, զսճեր մատուցեցի իմ աստվածներին: Ծովից իմ վերադարձի ժամանակ ես ընդունեցի բազմաթիվ հարկեր Ասու Գիլզանացուց—ձիեր, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, գինի, երկու երկսապատ ուղտեր»<sup>1</sup>: Այնուհետև շարունակում է. «...Մոտեցա դեպի Գիլզան: Ինձ գիմավորեց Գիլզանի թագավոր Ասուն իր եղբայրներով և որդիներով և ես ընդունեցի նրանից հարկը և տուրքը իմ թագավորության լծկան ձիեր, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, գինի և 7 երկսապատ ուղտեր»: Անասնապահական և երկրագործական նույնպիսի հարուստ երկիր էր Մանան: 714 թ. մ. թ. ա. Սարգոն II-ը մեծ զորքով արշավում է դեպի Ուրարտու: Այդ արշավանքը պատմության մեջ հայտնի է որպես 8-րդ արշավանք: Արշավանքի նկարագրությունից հնարավորություն ենք ստանում ծանոթանալու բազմաթիվ քաղաքների և բնակավայրերի տնտեսական կյանքի, աշխարհագրական միջավայրի, զբաղմունքի, ցանքատարածությունների և խաղողի այգիների մասին, հատկապես Մանա, Սանգիրուտու և Արմարիլի երկրների վերաբերյալ:

Սարգոն II-ը Կալխուսից անցնելով լեռնային դժվարին ճանապարհներով, մտնում է Մանա երկիր: Այն հեշտությամբ գրավելուց հետո մտնում է Սանգիրատու երկիրը: Աշուրին ուղղված նամակի մեջ Սարգոնը մանրամասն նկարագրում է իր բանակի շարժման ընթացքը: «Աշուրի բազմաթիվ բանակներով ես ողողեցի քաղաքները, ինչպես մորիխները... նրանք բերեցին իրանց կուտակած հարստությունները: ...խոշոր պաշարներ գարի և ցորեն, որոնք երկար ժամանակ նա (Ռուսան) լցրել էր շտեմարաններում երկրի մարդկանց կյանքը սպահովելու համար, իմ բանակին ստիպեցի բառնալ ձիերով, ջորիներով, ուղտերով, էշերով և դիզեցի իմ ճամբարում որպես սարեր: Իմ մարդկանց կերակրեցի կուշտ կերպով: Նրա ծաղկուն այգիները ես կտրատեցի, բազմաթիվ խաղողի այգիներ կտրատեցի, զրկեցի նրան խմիչքից»<sup>2</sup>:

Ավելի պատկերավոր է նկարագրված Սանգիրատու երկրում Ուլխու (այժմյան Մարանդի մոտ) քաղաքի գրավումը: Նկարագրությունից մենք լրիվ պատկերացում ենք ստանում ուրարտական քաղաքի կառուցվածքի, շրջակայքի, այգիների ու ցանքա-

1 АВИИУ, 27 (ВДИ, 1951, № 2, էջ 299),

2 АВИИУ, 233, 280 (ВДИ, 1951, № 2, էջ 328, 329),

տարածությունների, ուսումնական ջրանցքների և ժողովրդի զբաղմունքի մասին: Ահա թե ինչ է հաղորդում Սարգսնը.

«Ես ուղևորվեցի Տարմաքսիից, հասա Ուլխու քաղաքը, որ դառնվում էր լեռան ստորոտում: ...Ես որպես տիրակալ մտա Ուլխու, Ուրսալի պաշարների քաղաքը: Ես բացեցի նրա լեցուն շտեմարանները, առատ պաշարներով կերակրեցի իմ անհամար բանակը: Ես մտա նրա թաքցրած գինու մառանները և Աշուրի բազմաթիվ զորքը քաշում էին մեծ և փոքր տկերից անուշահամ գինին, ինչպես ջուրը գետից: Զրանցքը, որ ջուր էր մատակարարում, ես խցանեցի ճանապարհը և նրա զուլալ ջրերը ես վերածեցի ճահիճների: Նրա հիասքանչ աչգիները, նրա քաղաքի վարդը, մրգատու ծառերով և խաղաղի աչգիներով, որպես երկնային հեղեղ... Խուժեցին իմ զորեղ մարտիկները և թնդացնում էին երկաթյա կացիններով ինչպես Ադաղը: Նրանց անթիվ մրգատու ծառերը կտրատեցի»...<sup>1</sup>:

Այսպիսի խոշոր տնտեսական ռազմավարչական կենտրոն է հանդիսացել Ուլխու քաղաք-ամրոցը, որը միջնաբերդի հացահատիկների շտեմարաններով, գինու մառաններով, բազմաթիվ գյուղատնտեսական մթերքներով ու շրջակայքով հիշեցնում է Արարատյան դաշտում Կարմիր բլուրի Թեյշեբախնի քաղաքը: Սանգիբուաու երկրից Սարգոն II-ը շարժվում է դեպի Արմարիլի երկիրը:

### ԱՐՄԱՐԻԼԻ ԵՐԿԻՐ

Արմարիլի կամ Արամալի<sup>2</sup> երկիրը Ուրարտուի կենտրոնում գտնվել է Վանա լճից արևելք մինչև Ուրմիտ լճի հյուսիսային ափերը: Հարավում հասնում էր մինչև Խուրուշկիա և Խարխի երկրները: Այս տերիտորիան հիշատակվում է ասորեստանյան թագավորներ Սալմանասար 3-րդի և Սարգոն 2-րդի կողմից<sup>3</sup>: Այս համընկնում է հայկական Վասպուրականի տերիտորիայի հետ: Արմալին եղել է ամենահարուստ երկիրը, որտեղ գտնվել են ուրարտական երկու մայրաքաղաքներ Արղաշկուն և Վանը (Տուշպա): Այստեղ են կուտակվել հյուսիսային և հարավային արշավանքների ժամանակ կողոպտված բոլոր հարստությունները, բազմատեսակ գյուղատնտեսական մթերքներ, խոշոր և մանր եղջերավոր անասուն-

<sup>1</sup> АВИИУ, 199, 213 (ВДИ, 1951, № 2, стр. 327).

<sup>2</sup> Г. А. Меликишвили, Нагри-Урарту, Тбилиси, 1954, стр. 31.

<sup>3</sup> Там же.

ներ, հացահատիկներ, բուրդ, մետաղներ, քարեր, շինարարական նյութեր: Այս երկրում Վանը մայրաքաղաք դառնալուց հետո, Մենուան (810—781) մ. թ. ա. նախաձեռնեց հսկայական ջրանցքի անցկացման աշխատանքները՝ մայրաքաղաքից 70 կմ հեռավորության վրա, ոչ միայն քաղաքին խմելու ջուր մատակարարելու, այլև դաշտերը և այգիները սոռգելու համար: Այս ջրանցքի աղբյուրները խոշաբ գետից հարավ, դուրս են գալիս ժայռերից 30—40 մետր տարածության վրա: Զրեբը ջրվեժի նման թափվում են ներքև դեպի խոշաբ գետը: Զրանցքի հսկեր ունի 4,5 մետր լայնություն և 1,5 մետր խորություն: Անցնելով գերաններով պատրաստած կամուրջի միջով, խոշաբի վրայով, ջրանցքը լեքվում է գետի արևմուտք: Մինչև այժմ հայտնի են շորս արձանադրություններ կապված այդ ջրանցքի հետ<sup>1</sup>: Կատապանց գլուղում, Արտամետի մոտ, Վանա լճի արեհեյան ափի ժայռի վրա թողած արձանադրության մեջ Մենուան հաղորդում է. «Խալդ աստուծո հղորությունամբ, Մենուան Իշպուլինիի որդին այս ջրանցքը անցկացրեց «Մենուայի ջրանցք» է անունը»<sup>2</sup>:

Մովսես Խորենացին հետևյալ խոսքերով է նկարագրում Շամիրամի (Մենուայի) ջրանցքի կառուցումը. «Եւ վաղվադայի արձեալ լինէին բազմութիւն խառնադանձից գործաւորացն և բազմարուեստից հանճարեղաց իմաստնոցն: Եւ հրամայէ նախ դամբարտակ գետոյն ապառաժիւր և մեծամեծ վիմօք շինել, կրով և աւաղով մածուցեալ, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ, որ կայ հաստատուն, որսլէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի»<sup>3</sup>:

Այս ջրանցքը Արմարիլի տերիտորիայի համար ուներ բացառիկ նշանակություն, առանց որի մայրաքաղաքի և նրա շրջակայքի խաղողի այգիներն ու մրգաստանները չէր կարելի պատկերացնել:

Այն ժամանակ, երբ Ուրարտուին միացված հարավի և հարավարևելյան երկրների գյուղատնտեսության մասին տեղեկություններ հաղորդում են ասորեստանյան թագավորների արձանադրությունները, երկրի կենտրոնական և հյուսիսային շրջաններին, առանձնապես, խաղողագործության մասին մանրամասն հաղորդում են հենց ուրարտական թագավորները:

1 Б. Б. Пиотровский, *взгл. աշխ.*, էջ 63:

2 УКП, 43, М., 1959, стр. 168—169.

3 Մովսես Խորենացի, Գլ. Ժ Զ.:

Վանա ժայռի Մհերի դռան վրա Սարգուրի որդի Իշպուլինին և Իշպուլինիի որդի Մենուան թողել են հեռեկալ արձանագրությունը: «...հրամայեցին խաղողի այգու բարեկարգումը: Խալդ աստուծո համար այգու բարեկարգումը հրամայեցին նրանք: Այնտեղ նախկինում ոչինչ չի եղել կառուցված... Երբ խաղողի այգին... Խալդ աստուծո համար թող զոհաբերվեն 3 ոչխար և 3 ոչխար մյուս աստվածներին: Գինի...»<sup>1</sup>:

«Մենուայի աղջկա Տարիրային է պատկանում այս խաղողի այգին, «Տարիրախինիլի է անունը»: Վանա լճի արևելյան մասում գտնվող թողած արձանագրության մեջ հաղորդում է. «Խալդի աստուծո համար Իշպուլինի որդի Մենուան կառուցեց, երբ նա Խալդի աստուծո դռները շինեց ...գցեց նուշնպես այս խաղողի այգին «Մենուայի խաղողի այգի» է նրա անունը»<sup>2</sup>:

Մովսես Խոբեկնացին գրում է.

«Եւ զմասն ինչ զետոյն ընդ մեջ քաղաքին բաշխեալ անցուցանէ ի սպաս տմենայն պիստոյից և յարբուցմունս բուրաստանաց և ծաղկոցաց. և զայլն զեղերք ծովակին յաջմէ քաղաքսին և բովանդակ շրջակային յարբուցումն: Եւ զամենայն արևելեան և զհիւսիսային և զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք և սաղարթիւք ծառոց վարսատրաց, զանազանեալք ի պտուղս և ի տերևս և բազումս բազմաբերս և զինեբերս ի նմա տնկեաց ուրիտս»<sup>3</sup>:

VIII դարի վերջին մ. թ. ա. Արմարիլի երկրում, Վանի շրջակայքում, սոողման ջրանցքները, ցանքատարածությունները և խաղողի այգիները էլ ավելի են ընդլայնվում:

Արճեշից արևելք, «Սև քարի» արձանագրության մեջ Արգիշտիի որդի Սարգուրը հայտարարում է.

«Խալդ աստուծո հպրությամբ Արգիշտի որդի «Սարգուրը այս խաղողի այգին բարեկարգեց...»<sup>4</sup>:

Սարգուրի որդի Ռուսա I կողմից Թոփրաք-Վալեի (Ռուսախինիլիի) կառուցման ժամանակ, նրա արևելյան մասում, ստեղծել է արհեստական լիճ (Բեշիշ գյուլ), որտեղից նորակառույց քաղաքը մատակարարվել է ջրով:

Ռուսան ասում է, երբ ևս Ռուսախինիլին կառուցեցի, երբ ևս

1 ՆԿԻ, 27, Մ., 1959, էջ 148:

2 ՆԿԻ, 65, Մ., 1959, էջ 181:

3 Մովսես Խոբեկնացի, Գլ. ԺԶ:

4 ՆԿԻ, 167, Մ., 1959, էջ 313:

այս լիճը ստեղծեցի ...դցեցի ևս այս հողերի վրա խաղողի այգի և այգեստան»<sup>1</sup>:

Արմարիլիի, նրա դաշանրի, ցանքատարածությունների և խաղողի այգիների մասին ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում «Սարգոն»-ը՝ Աշուրին ուղղված նամակում. «...Ես ուղևորվեցի Սանդիբուտուի. ամրացած քաղաքներից հասա Արմարիլի երկիրը... 7 ամրացած քաղաքներ շրջակայքի 30 բնակավայրերի հետ Ուբիանդա լեռան ստորոտում: Բոլորը ավերեցի, գետնին հավասարեցրի... նրանց լեցուն պահեստները ևս բացեցի և առատ գոթիով իմ բանակը հերակրեցի, մրգաստաններն ու այգիները կտրատեցի»<sup>2</sup>:

Արգիշտինա և Կալանիա բերդերը գրավելուց հետո Սարգոնը շարունակում է. «...նրանց լեցուն շտեմարանները ևս բացեցի և կերակրեցի իմ բանակը... նրանց այգիները կտրատեցի, նրանց այգիների վազերը հավաքեցի և կրակների մեջ վառեցի»<sup>3</sup>: Այստեղ է, որ Սարգոն II-ը արշավանքից հետո Ռուսայի որդի Արգիշտին Արճեշից ոչ հեռու՝ Չելեբի—Բաղի արձանագրության մեջ, որը շատ վատ է պահպանվել, հաղորդում է. «Արգիշտին ասում է. քաղաք Տակուտմնիա asuni հողերը ամայի էին, ոչինչ այնտեղ չկար. ոչ գաշտեր հացահատիկներով, ոչ խաղողի այգիներ, ոչ էլ մրգաստաններ. ջրանցք նույնպես չկար, ինչպես Խալոն ինձ հրամայեց, ևս լիճը ստեղծեցի asuahina»<sup>4</sup>:

Սարգոնը անցնելով Արմարիլիից մտնում է Այադի երկիրը. «Եղա Ուայաիս նրա ամրացած քաղաքը, մեծ բերդը, ամենաուժեղը բոլոր նրա բերդերից, ղեղեցիկ կառուցված... մրգաստանները նրա կտրատեցի և նրա այգիները կտրատեցի, նրա խաղողի բույր վազերը հավաքեցի և կրակների մեջ այրեցի»<sup>5</sup>: Այս շրջանը նույնպես հանդիսացել է խաղողագործական խոշոր կենտրոն: Ուայաիսից, Վանա լճի հարավ-արևմուտքից Սարգոնը իջնում է գեպի հարավ, ճանապարհին որոշում է հարձակվել Մուսասիրի վրա և այն թալանելուց ու ավերելուց հետո ավարտում է իր արշավանքը:

Սարգոնի բանակը իր առաջխաղացման ընթացքում Ուրմիո

1 УКН, 268, М., 1959, т. 2, с. 332:

2 АВИИУ, 269 (ВДН, 1951, № 2, т. 2, с. 324):

3 АВИИУ, 280 (ВДН, 1951, № 2, т. 2, с. 329):

4 УКН, 276, М., 1959, т. 2, с. 338:

5 АВИИУ, 280 (ВДН, 1951, № 2, т. 2, с. 329):

լճի հարավային շրջաններից մինչև Վանա լճի հարավ-արևմտյան ափերը մոտավորապես 600 կմ ճանապարհի վրա, քաղաքների ավերման հետ արմատախիլ է անում և հրկիզում խաղողի այգիները:

Սարգոնի արշավանքից հետո դանդաղեց Ուրարտուի տնտեսական վերելքը, քայքայվեց գյուղատնտեսությունը, ավերվեցին բազմաթիվ բնակավայրեր, ցամաքեցին ջրանցքներն ու ջրամբարները, վերածվելով հսկայական ճահիճների, առանձնապես տուժեց այգեգործությունը: Սակայն այդ արշավանքից դուրս էին մնացել Արարատյան դաշտը և Վանի շրջակայքը: Ահա թե ինչու թեև եփրատի արևմտյան ափին մի քանի շրջաններ անշատվել էին Ուրարտուից և Մուսասիրի հետ միացվել Ասորեստանին, այնուամենայնիվ Ուրարտուն պահպանվեց և շուտով վերականգնեց իր հզորությունը:

Արարատյան դաշտը և Վանի շրջակայքը այդ գործում վճռական դեր խաղացին: Երկրի տնտեսությունը վերականգնվեց կարճ ժամանակամիջոցում, իսկ Սարգոն II-ից հետո Ասորեստանի վաղեմի հզորությունը ապրում էր իր վայրէջքը: Ասորեստանը և ընդհանրապես Միջագետքը զրկվել էին մի շարք մթերքների և հումքի աղբյուրներից: Տուժել էին հյուսիսի հացահատիկային, գինեգործական և այլ տնտեսական նշանակություն ունեցող շրջանները: Սարգոնի մահից հետո պատահական չէր, որ Սինախերիբը նախաձեռնում է Ասորեստանում խաղողի այգիների տարածությունների ընդլայնումը՝ հյուսիսից վազեր ներմուծելով<sup>1</sup>:

Ուրարտուում Ռուսա II-ը, բացի նախկին այգիների ու մրրգաստանների վերականգնումից, ստեղծում է նորերը: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Արարատյան դաշտի հյուսիսային տարածություններին:

### ԱԶՍ. ԵՐԿԻՐ ԵՎ ԿՈՒՍԱՐԼԻՆԻԻ ԿԱՇՏՐ

Ազա երկիրը համընկնում է Արարատյան դաշտի Արաքսի ձախափնյա մասի հետ: Մենուայի որդի Արգիշտին (781—760) ութերորդ դարի սկզբներին հյուսիսային արշավանքների ժամանակ այդ երկիրը գրավեց և միացրեց Ուրարտուին: Արաքսի ձախափին (Արմավիրի բլուրի վրա՝ Հոկանմբերյանի շրջան) կառուցեց բերդ ամրոց Արգիշտիխինիլին: Այդ բաղաբի շրջակայքից հայտ-

<sup>1</sup> Ch. Singer, E. J. Holmyard and R. Hall, A History of Technology, Oxford, P. 282.

նաբերվել են միայն ուրարտական տասնհինգ արձանագրություններ, որոնք տեղեկություններ են հաղորդում Ադա երկրում կատարված շինարարական աշխատանքների մասին: Այստեղ, բացի տեղում բնակվող ցեղերի կողմից կառուցված ջրանցքից, բազմաթիվ նոր ջրանցքներ են անցկացվել: Արձանագրություններից մեկում Արգիշտին հաղորդում է. «Խալդի աստուծո հղորությամբ Մենուայի որդի Արգիշտին ասում է: Հոյակապ բերդ ես կառուցեցի, Արգիշտիխինիլի է նրա անունը: Երկիրը ամայի էր, այնտեղ ոչինչ չկար կառուցած: Ես դետից շորս ջրանցք անցկացրի, խաղողի այգիներ և մրգաստաններ տնկեցի, սխրագործություններ այնտեղ կատարեցի»<sup>1</sup>:

Արգիշտիից հետո նրա որդի Սարգուրը նույն Արգիշտիխինիլիի մասին գրում է. «...Նոր խաղողի այգի և մրգաստան քաղաքի... ևս կարգի բերեցի, սխրագործություններ այնտեղ ես կատարեցի»<sup>2</sup>:

Ուրարտական թագավորները VII դարից սկսած (մ. թ. ա.) առանձնահատուկ ուշադրություն են նվիրում խաղողագործությունը: Ինչպես ցույց են տվել վերջին տասնամյակում Կարմիր բլուրում կատարված պեղումները, խաղողագործությունը է՛լ ավելի է բնդլայնվում: Կարմիր բլուրում հայտնաբերված ութ հսկայական զինու պահեստներում պահվել է մոտավորապես 500000 լիտր գինի: Դա գերազանցել է մինչև այժմ հայտնի ուրարտական բնակավայրերի զինու պահեստներին՝ Մանագլիերտի մոտ Բոստան-կայայի՝ Մենուայի թողած արձանագրության մեջ հիշված 900 աղարկի (մոտ 216000 լիտր) տարողությամբ զինու պահեստներին<sup>3</sup>:

Կարմիր բլուրում պահվել է 1500 աղարկիից ավելի զինի, որը 600 աղարկիով գերազանցել է Մենուայի պահեստին: Ռուսա 11-ը (685—645 թ. մ. ա.) Կուարլինի դաշտը՝ Իլդարունիա (Հրադղան) գետի աջ ափը ծածկում է նորանոր խաղողի այգիներով: Այդ այգիների խաղողի և բնահարկից ստացվող գինին կուտակվել է Կարմիր բլուրի պահեստներում:

Չվարթնոցի արձանագրության մեջ հաղորդում է.

«...Խալդի աստուծո հղորությամբ Ռուսան ասում է. Կուարլինի դաշտի հողերը անմշակ էին, այնտեղ ոչինչ չկար: Ինչպես

1 УКН, 137, М., 1959, էջ 263:

2 УКН, 172, М., 1959, էջ 318:

3 Б. Б. Пиотровский, Кармир-блур, II, Ереван, 1952, էջ 7:

խալդիին ինձ հրամայեց այս խաղողի այգին դցեցի. հրամայեցի դաշտերը ցանել, մրգաստաններ տնկել և նախաձեռնեցի բազաբի կառուցման աշխատանքներին: Իլդարունիա (Հրադղան) գետից ջրանցք անցկացրի. «Ումեհշինի է նրա անունը»<sup>1</sup>: Վերոհիշյալ շինարարական աշխատանքները վերաբերում են Կարմիր բլուրի (Թեյշեբաինի) ուրարտական բազաբին:

Քաղաքը գոյություն է ունեցել մինչև Ուրարտուի անկումը 590—585 թ. (մ. թ. ա.):

Ուրարտական պետության փլատակների վրա բարձրացավ հայկական պետականութունը: Հայերը ավելի բարձր մակարդակի հասցրին Հայկական լեռնաշխարհի, հատկապես Արարատյան դաշտի զինեղործության հինավուրց հուշահն ու համբավը:

Վանա լճի շրջակայքում հանդես եկան վարչական նոր կենտրոններ: Այս շրջանը և Արարատյան դաշտը դարձան հայկական պետականության կորիզը, վերականգնվեց գյուղատնտեսությունը, նոր թափ ստացան արհեստներն ու զինեղործությունը: Աշխուժացավ նավարկությունը Եփրատի և Տիգրիսի վրայով դեպի հարավ: Հայկական գինիները բարձր զնահատականի արժանացան Բաբելոնի և Միջագետքի մյուս քաղաքների շուկաներում: Այդ մասին Հերոդոտը գրում է. «Նրանց (արմենների) նավերը, որ լողում էին գետերի հոսանքով դեպի Բաբելոն, վահանների նման կլոր էին, ամբողջապես կղկղով և բեռներով բառնալուց հետո, բաց էին թողնում գետի հոսանքով: Նավերը բարձրված էին լինում հատկապես գինիով՝ կավի կարմիր անոթների մեջն լցված»:

<sup>1</sup> VKH, 281, M., 1959, էջ 362.

<sup>2</sup> Herodoti, Historiarum libri IX, Zipsiae, 1899, liber I cap. 194. Հերոդոտի հաղորդման վերջին տողերը, այսինքն՝ «կավե կարմիր անոթների մեջ» մինչև այժմ հեղինակների կողմից, որոնք թարգմանել են Հերոդոտը, գրել են «արմավենուց պատրաստած տակառների մեջ» (Փ. Мещенко, է. Մառաշադյան): Վերջինների թարգմանությունը ճիշտ չէ հետևյալ պատճառներով. ա) նախ՝ «Bikous ποτικηϊου» բառերը նշանակում են «կարմիր կավե անոթներ».

բ) արմավենուց տակառներ պատրաստելը մ. թ. ա. VI—V դարերում Հայաստանում բացառված է, բանի որ նախ արմավենին Հայկական լեռնաշխարհի ոչ մի վայրում չի աճում և եթե որևէ շրջանում աճում էր, այս այն կրիք չէին օգտագործի ատողձ պատրաստելու համար, մի բան, որ նույնիսկ տեխնիկապես հնարավոր չէ, առավել ևս տակառներ պատրաստելու: Նույնիսկ Ասորեստանում, որտեղ այն աճում էր, օգտագործում էին որպես դեկորատիվ ծառեր.

գ) նույն Հերոդոտը նվիրաբերում մասին գրում է. «Տարին երկու անգամ Ատ-

Քսենոֆոնը Հալիկան լեռնաշխարհի մասին հաղորդում է. «Եփրատը անցնելուց հետո հիսուն փարսախ հեռավորության վրա հասնում են Արաքս գետը: Այնտեղ կային բազմաթիվ գյուղեր, լի հացով և գինիով: Նրանց մոտ կային բազմատեսակ մթերքներ և բոլոր տեսակի բարիքներ, հաց, բուրավետ գինիներ, շամիչ, բազմատեսակ բանջարեղեններ»<sup>1</sup>:

Ստրաբոնը հետևյալ խոսքերով է նկարագրում Հայաստանի բնությունը, շեշտելով երկրի բերրիությունը. «...Հայաստանում կան բազմաթիվ լեռներ և սարահարթեր, որտեղ խաղողը զփվարությամբ է աճում, սակայն կան նաև բազմաթիվ դաշտեր միջին բերքատվությամբ, դաշտեր արտակարգ առատությամբ, օրինակ, Արաքսի հովիտը... Այս ամբողջ երկիրը առատ է մրգերով, այգիներով և մշտադալար բուսականությամբ, որտեղ նույնիսկ ձիթապտուղն է աճում»<sup>2</sup>: Մովսես Խորենացին Գողթան գավառը նմանում է «Գողթն գինեւէտ»<sup>3</sup>: Ղազար Փարպեցին հետևյալ խոսքերով է գովաբանել բերքառատ Արարատյան դաշտը. «...զգաւառն Այրարատու, զհալիական և զհոչակատրն, և զհոչականաւորն, դամենարոյն, դամենաբուղխն, դամենալին, դամենադիւտն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս, կենաց և վալելչութեան և սխափութեան, զդաշտս մեծատարած... յորոց ի վերուստ ի կատարածն ջրոց հոսմունք անկարօտ սուղման, արբուցանելով զդաշտս մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն կանամբք, արամբք և ընտանեօք զանպակասութիւն հացի և գինւոյ. զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարաց, և զզանազանեւմն իւզարուղխ սերմանաց»<sup>4</sup>:

ախլայից և Փյունիկիայից հույները գինին կավն անոթներով տանում էին Եգիպտոս վաճառելու համար»: Եվ, հույները գինին արտահանում էին կավն անոթներով, կասկած չկա, որ հայերը նույնպես կավն անոթներով էին արտահանում և Հերոդոտի ուշադրությունն էին գրավել միայն կլոր նավերը և կարմիր գույնի կավն անոթները, մի երևույթ, որը հույների մոտ չկար: Եվ վերջապես փայտյա տակառները որպես տարա առաջին անգամ օգտագործել են (Պլինիոսի և ուրիշ հռոմեական պատմիչների հաղորդման համաձայն) գալլերը՝ գինին գեպի Հռոմ արտահանելու համար, սկսած մեր թվագրության երկրորդ դարից:

1 Ксенофонт, Анабасис, перевод М. И. Максимовой, М.—Л., 1951, стр. 107.

2 Перевод В. В. Латышева, Известия древних писателей, греческих и латинских, о Скифии и Кавказе, том I, СПб, 1893, стр. 154.

3 Մովսես Խորենացի, Գլ. 1:

4 Ղազար Փարպեցու, Վեներիկ, 1793, էջ 18:

*Այսպիսով, Ուրարտական խաղողագործական կենտրոնները հետադարձական ժամանակաշրջանում ևս, մինչև մեր օրերը, պահպանեցին իրենց վաղեմի փառքը:*

*Ալզի-Արզան, Խաբխի, Մանա, Գիլզան, Արմարիլի, Այադու, Ադա, Կուարլինի երկրների փոխարեն Աղձնիքը, Մոկքը, Պախկահայքը, Վասպուրականը, Արարատյան դաշտը այժմ էլ մնում են որպես խաղողագործական խոշոր կենտրոններ:*

З. М. Касабян

## ПИСЬМЕННЫЕ ИСТОЧНИКИ О ВИНОГРАДАРСТВЕ И ВИНОДЕЛИИ В УРАРТУ

### Р е з ю м е

В сельском хозяйстве Урарту виноградарство и связанное с ним виноделние являлись одной из основных отраслей производства. Исследования земледелия и флоры Армянского нагорья, в частности Араратской равнины, свидетельствуют о том, что климатические и географические условия сделали возможным окультивировать здесь в течение веков дикорастущую виноградную лозу и превратить ее в один из основных источников материального благосостояния населения.

Урарту, а затем Армения, являлись одним из центров виноградарства Древнего мира и в течение веков вывозили в Вавилон, Ассирию и южно-восточные районы Междуречья разнообразные сладкие и ароматные вина<sup>1</sup>.

Выращивание виноградной лозы и изготовление вина распространилось через урартов, а впоследствии армян, в соседние страны. Вот почему некоторые авторы считали Араратскую равнину прародиной виноградной лозы, связывая ее с легендарным библейским Ноем. Согласно древней египетской мифологии бог солнца и главный бог Озирис научил людей выращивать виноградную лозу и изготавливать из нее вино<sup>2</sup>.

<sup>1</sup> У греческих авторов неоднократно подчеркивается факт вывоза армянских вин по Евфрату и Тигру к югу.

<sup>2</sup> К. С. Кропоткин, Исторический очерк производства охмеляющих напитков, СПб, 1899, стр. 1.

Подобные объяснения встречаем как у древних греков, римлян, так и у индийцев и ассирийцев. К раннему бронзовому веку относится виноградная косточка, обнаруженная Гуммелом при раскопках Ханлара, это дает основание утверждать, что в Закавказье виноградарство существовало еще во втором тысячелетии до н. э. Более подробные сведения о Закавказье и Армянском нагорье сообщают ассирийские и урартские надписи, относящиеся к первому тысячелетию до н. э.

Первые сведения об урартском виноградарстве и виноделии относятся к XIII веку до н. э. Более подробные сведения относятся к VIII веку до н. э., что подтверждается материалами археологических раскопок.

Благодаря археологическим раскопкам Тейшебаини (Кармир-блур) мы имеем четкое представление о виноградарстве и виноделии в Урарту. К этому же периоду косвенно относится сообщение греческих источников об экономической жизни древней Армении, а данные армянских историков Мовсеса Хоренаци и Газара Парбеци делают еще более ясными наши представления о виноградарстве и виноделии в Васпуракане и вообще на Армянском нагорье.

Письменные источники позволяют установить, что центрами виноградарства и виноделия Урарту являлись: страна Алзи-Арзан (армянский Алдзник) между верховьями р. Тигр и Армянским Тавром, страна Хабхи в нижнем течении р. Джерм (Бохтан), левобережье верхнего течения р. Тигр, страна Гильзан, Манна и Сангибуту, охватывающие западный южный и северный бассейны оз. Урмия.



Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

1-ԻՆ ՍԵՍԻԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԸ

Վ. Հ. Համբարձումյան—Ներածական խոսք . . . . .	7
Ս. Տ. Երեմյան—Վարկաճողագործության որոշ գործիքների ծագումը հին Հայաստանում . . . . .	9
Ն. Վ. Հարությունյան—Երկբազործության մի քանի հարցեր Ուրարտական պետության կենտրոնական մարզերում . . . . .	28
Գ. Վ. Շիրմազան—Էջեր Հայաստանի սոսոզման պատմությունից (Ուրարտական ջրային անտեսության շինարարությունը և էջմիածնի առուն)	60
Վ. Հ. Բղոյան—Հայկական բրիչնիքը և վարող գործիքները XIX դարում.	103
Բ. Ն. Առաքելյան—Խաղողի վերամշակումը միջնադարյան Հայաստանում	147

2-ՌԳ ՍԵՍԻԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԸ

Մ. Պ. Աղայան—Հայ դշուղացիության վիճակը Հայաստանը Ռուսաստանին միանալու նախօրյակին . . . . .	173
Խ. Ա. Ավետիսյան—Բամբակադործության զարգացումը Հայաստանում XIX դարում և XX դարի սկզբներին . . . . .	194
Հ. Հ. Մնացականյան—Բրոնզեդարյան անասնապահության զարգացումը Սևանի տվազանում . . . . .	226
Գ. Կ. Ափինյան—Ձխարծությունը Հին Հայաստանում . . . . .	236
Ս. Գ. Բախուդարյան—Գիտողություններ և նոր նյութեր հին Հայաստանի սոսոզման գործի վերաբերյալ . . . . .	259
Ջ. Մ. Ղասարյան—Գրավոր արվեստի Ուրարտուի խաղողագործության և գինեգործության մասին . . . . .	286

## МАТЕРИАЛЫ I СЕССИИ

В. А. Амбарцумян — Вступительное слово . . . . .	7
С. Т. Еремян — Происхождение некоторых орудий пашенного земледелия в древней Армении . . . . .	9
Н. В. Арутюнян — Некоторые вопросы земледелия в центральных областях государства Урарту . . . . .	28
Г. В. Ширмазан — Страницы из истории орошения Армении (Урартское водохозяйственное строительство и Эчмиадзинский канал)	60
В. А. Бдоян — Армянские мотыги и пахотные орудия в XIX веке	103
Б. Н. Аракелян — Переработка винограда в средневековой Армении	147

## МАТЕРИАЛЫ II СЕССИИ

Ц. П. Агаян — Положение армянского крестьянства накануне присоединения Армении к России . . . . .	173
Х. А. Аветисян — Развитие хлопководства в Армении в XIX и в начале XX веков . . . . .	194
А. О. Мнацаканян — Развитие животноводства в Севанском бассейне в эпоху бронзы . . . . .	226
Г. К. Апинян — Коневодство древней Армении . . . . .	236
С. Г. Бархударян — Заметки и новые материалы по орошению в древней Армении . . . . .	259
З. М. Касабян — Письменные источники о виноградарстве и виноделии в Урарту . . . . .	286



ՆՅՈՒԹՆՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ  
ՀԱՏՈՐ 1

Տպագրվում է ՀՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի գիտակազմ  
խորհրդի հունձնաբարձությամբ

Հրատ. խմբագիրներ Վ. Բ. Անդրեասյան,  
Ա. Հ. Շաղաթյան  
Կազմը Կ. Հ. Յուրաբեկյանի  
Տեխն. խմբագիր Հ. Լ. Գորոյան  
Սրբագրիչներ Զ. Կ. Ստեփանյան,  
Փ. Հ. Մաղանյան

---

ՎՅ 06237    էջ 734    հրատ. 1974    պատվեր 354 տպաքանակ 1000

Հանձնված է արտադրութան 7/XII 1962 թ., ստորագրված է տպադրութան  
27/VII 1964 թ., թուղթ 60×92<sup>1</sup>/<sub>16</sub> տպագր. 10,25 մամուլ, հրատ. 16 մամ.  
Գինը կազմով 1 ու. 16 կ.

---

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան  
Երևան, Բարեկամության, 24:







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035230

A II  
35230